



ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ 2017

ԱՐԺԵՎՈՐԵԼ

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԺԱՄԱՆԱԿԸ՝ ՆՇԱՆԱԿԵՏԻՆ
ՀԱՍՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ



Հայաստանի բանկային ոլորտի առաջատար՝

Ակտիվներ

677,722 մլն ՀՀ դրամ



Կապիտալ

69,902 մլն ՀՀ դրամ



Շահույթ

7,650 մլն ՀՀ դրամ



Վարկեր

475,519 մլն ՀՀ դրամ



Պարտավորություններ

607,820 մլն ՀՀ դրամ





Հարգելի հաճախորդներ, բաժնետերեր և գործընկերներ

Ահա և անցավ ևս մեկ հիշարժան տարի, որի ընթացքում մենք ամրապնդեցինք առաջատարի մեր դիրքը բոլոր հիմնական ֆինանսական ցուցանիշներով: Բանկն զգալիորեն ավելացրեց շուկայի իր մասնաբաժինը և արձանագրեց շահույթի երկնիշ աճ՝ շնորհիվ արդյունավետությանն ու շահութաբերությանն ուղղված մեր շարունակական ջանքերի:

Ընդհանուր առմամբ, տարին բավականին լավն էր Հայաստանի տնտեսության համար. 2016թ. լճացումից հետո արձանագրվեց վերականգնման զգալի տեմպ: Մասնավորապես, գնալիորեն ավելացավ ՀՆԱ-ն՝ ի հաշիվ արդյունաբերության և արտաքին առևտրի հատվածների: Արտարժույթի շուկան համեմատաբար կայուն էր, սպառողական գների ինդեքսը մի փոքր ավելացավ՝ վերջ դնելով 2016թ. գերակայող գնանկումային միտումներին:

2017թ. Հայաստանը և Եվրամիությունն ստորագրեցին Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագիրը՝ վերահաստատելով Եվրոպայի հետ տնտեսական կապերն ամրապնդելու մեր մտադրությունը: Լիաժույս ենք, որ նոր համաձայնագիրը կնպաստի Հայաստանի արտահանման աճին և բազմազանությանը:

2018թ. ապրիլին կկազմավորվի նոր կառավարությունը, և Հայաստանը կդառնա խորհրդարանական հանրապետություն: Ենթադրում ենք, որ աշխարհաքաղաքական ընդհանուր

ուղղվածությունը կմնա անփոփոխ, և մենք կշարունակենք շահավետ համագործակցությունը թե՛ Եվրամիության, թե՛ Մաքսային միության հետ:

Այո՛, մակրոտնտեսական միջավայրն ընդհանուր առմամբ բարենպաստ էր, բայց այդուհանդերձ բանկային հատվածի համար տարին լի էր մարտահրավերներով: Մասնավորապես, 2015-2016թթ. բանկերը, հետևելով Կենտրոնական բանկի պահանջին, ակտիվորեն նոր կապիտալ էին ներգրավում, և 2017թ. արդեն իրեն զգացնել էր տալիս գերիբացվելիության խնդիրը: Բանկերի միջև թեժ մրցակցության արդյունքում կտրուկ իջան տոկոսադրույքները՝ մեծ ճնշման տակ դնելով մարժան և համակարգի ընդհանուր եկամտաբերությունը: Այդուհանդերձ, Ամերիաբանկը կարողացավ արձանագրել զուտ շահույթի զգալի աճ՝ գերազանցելով եկամտաբերության միջին շուկայական ցուցանիշը՝

ևս մեկ քայլով էլ մոտենալով միջազգային շուկաներում բաժնետոմսերի առաջնային հրապարակային տեղաբաշխում իրականացնելու մեր նպատակին: 2018թ. մենք անշեղ հետևելու ենք այս նպատակին և ըստ այդմ քայլ առ քայլ սահմանելու և լուծելու ենք մեր ռազմավարական խնդիրները: Մեր նպատակն է պահպանել առաջատարի դիրքը հայկական շուկայում և շարունակաբար բարելավել արդյունավետությունը: 2018թ. մեկ այլ ռազմավարական խնդիր է ՓՄՁ և մանրածախ վարկավորման աճը: Մինևույն ժամանակ, մենք պատրաստ ենք դիտարկել նաև ոչ օրգանական աճի տարբերակներ, մասնավորապես՝ միաձուլումների և ձեռքբերումների հնարավորությունները հայկական շուկայում: Մենք վստահ ենք, որ միջազգային ասպարեզում բաժնետոմսերի առաջնային հրապարակային տեղաբաշխում իրականացնելու կարևորագույն նախապայմաններն են շուկայում բացարձակ առաջատար լինելը, կայուն աճը և արդյունավետությունը:

Ամերիաբանկը միշտ հավատարիմ է եղել SS ենթակառուցվածքը, թվային բանկային ծառայություններն ընդլայնելու և կատարելագործելու իր քաղաքականությանը, և 2017թ. մենք ևս մի քայլ կատարեցինք այդ ուղղությամբ՝ հանդես գալով թվայնավման համապարփակ ծրագրով, որի նպատակն է դառնալ լավագույն թվային բանկը Հայաստանում: Ակնկալում ենք, որ այս ծրագիրը մեծապես կնպաստի մեր արդյունավետությանը և մրցունակությանը երկարաժամկետ հեռանկարում, և սա շատ կարևոր է, որովհետև մեր խորին համոզմամբ՝ թվայնացումն անբաժանելի է ապագայի բանկից:

Մեր առաջնային սկզբունքներից է նաև կորպորատիվ կառավարման լավագույն փորձի ներդրումը: Այս ուղղությամբ մենք ևս քայլեր ձեռնարկեցինք՝ վերանայելով և բարեփոխելով կորպորատիվ կառավարման կառուցվածքը, ստեղծելով խորհրդին կից կոմիտեներ, մշակելով և հաստատելով դրանց կանոնակարգերը և ներդնելով լավագույն փորձի վրա հիմնված՝ խորհրդի գործառույթների և որոշումների ընդունման արդյունավետ ընթացակարգեր: Ղեկավարության մակարդակով որոշումների ընդունման գործընթացները բարելավելու, գործունեությանառավելագույն արդյունավետություն և ճկունություն ապահովելու նպատակով մենք նաև նախաձեռնել ենք

մեր բիզնես-մոդելի ամբողջական վերանայումը, վարկավորման գործընթացի կատարելագործումը և արդյունավետության բարձրացման ծրագիրը, որի առաջին արդյունքն ակնկալում ենք տեսնել արդեն 2018թ. սկզբում:

Ի մի բեղերով մեր բոլոր ձեռքբերումները՝ ցանկանում եմ շեշտել, որ դրանք հնարավոր դարձան միայն ու միայն մեր արհեստավարժ, տաղանդավոր անձնակազմի շնորհիվ: Մարդիկ մեր գլխավոր ակտիվն են, որի շնորհիվ մենք պահպանում ենք առաջատարի դիրքը: Մարդկային ռեսուրսների կառավարման մեր ռազմավարության անկյունաքարն է խրախուսման՝ արժանիքների վրա հիմնված համակարգը: Խորին շնորհակալությունս եմ հայտնում յուրաքանչյուր ստորաբաժանման ղեկավարներին և անձնակազմին՝ քրտնաջան աշխատանքի և մեր նպատակների իրագործմանը նպաստելու համար:

Եվ իհարկե, մեր ձեռքբերումներում անգնահատելի է նաև մեր հաճախորդների և գործընկերների դերը, որոնց վստահությունը և հավատարմությունը մեր հաջողության կարևորագույն գրավականներից են: Ի նշան երախտագիտության մենք պարտավորվում ենք ապահովել սպասարկման գերազանց որակ, քանի որ մեր հաճախորդներն արժանի են առավելագույնին:

Խոսքիս ավարտին ցանկանում եմ շնորհակալություն հայտնել նաև մեր բաժնետերերին՝ շարունակական աջակցության համար: Մենք հավատարիմ ենք մնում մեր ռազմավարությանը և ջանք չենք խնայում՝ ապահովելու համար մեր բաժնետերերի ակնկալած բարձր արդյունքը, կատարողականն ու արժեքը:

Անդրեյ Մկրտչյան

Տնօրենների խորհրդի նախագահ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱԿՆԱՐԿ

Գլխավոր տնօրենի ուղերձը

2017թ. Ամերիաբանկը շարունակեց իր հաղթարշավը ՀՀ բանկային համակարգում՝ զգալի արդյունք արձանագրելով բոլոր հիմնական բիզնես-նպատակների ուղղությամբ: Բանկը պահպանեց առաջատարի իր դիրքը բոլոր հիմնական ցուցանիշներով՝ ակտիվներ, հաճախորդների նկատմամբ պարտավորություններ, վարկեր, սեփական կապիտալ և զուտ շահույթ: Տարվա ընթացքում մենք արձանագրեցինք զուտ շահույթի երկնիշ աճ և զգալիորեն բարելավեցինք եկամտաբերության ցուցանիշը:

Մակրոտնտեսական ցուցանիշների առումով ևս տարին բարենպաստ էր՝ ՀՆԱ-ի զգալի աճ, արտաքին առևտրի երկնիշ աճ և արդյունաբերության աճ: Ակնկալում ենք, որ այս դրական միտումները կպահպանվեն նաև 2018թ.: Նպաստավոր արտաքին պայմանների շնորհիվ բարելավվեցին նաև բանկային համակարգի ցուցանիշները, չնայած՝ դեռ չեն հաղթահարվել 2016թ. համակարգի առջև ծառայած խնդիրները, որոնք էին նոր ներգրավված կապիտալի տեղաբաշխումը, տոկոսադրույքի նվազումը, թեժ մրցակցությունը և նշվածների արդյունքում առաջացած գնային պատերազմները: Ավելին, բանկերը շարունակում են ծախսեր կատարել՝ կապված Կենտրոնական բանկի դրամավարկային քաղաքականության և պահուստավորման չափի բարձրացման հետ: Եվ անգամ



այս պայմաններում Ամերիաբանկի զուտ շահույթն ավելացավ 23.2%-ով, իսկ շահույթի մեր մասնաբաժինն ավելացավ է 2.5 տոկոսային կետով՝ կազմելով եկամտաբեր բանկերի ընդհանուր շահույթի 15.2%-ը: Վերջին 12 ամսվա կտրվածքով կապիտալի եկամտաբերությունն ավելացավ 1.2 տոկոսային կետով և կազմեց 11.4%՝ 7.5 տոկոսային կետով գերազանցելով միջին շուկայականը: Մենք շարունակելու ենք լինել միտված Բանկի շահութաբերության հետագա բարձրացմանը:

2017թ. ընթացքում Ամերիաբանկը շարունակեց իր ակտիվ աշխատանքն՝ ուղղված ռիսկերի կառավարմանը մեծ ուշադրություն դարձնելով ակտիվների որակի բարելավմանը: Չաշխատող (1+ օր ժամկետանց) վարկերը տարեվերջի դրությամբ կազմում էին 3.5%, ինչն զգալիորեն ցածր էր 7.4% շուկայական միջին ցուցանիշից, իսկ 90+ օր ժամկետանց վարկերը կազմում էին 2.9%:

Մենք նաև հաջողությամբ շարունակեցինք արդյունավետ համագործակցությունը տարածաշրջանում ակտիվ բոլոր հիմնական միջազգային ֆինանսական հաստատությունների հետ, մասնավորապես, 2017թ. կնքվեցին հետևյալ խոշոր գործարքները՝ 30 մլն ԱՄՆ դոլարի վարկային պայմանագիր ResponsAbility Investments կազմակերպության Կլիմայի գործընկերության գլոբալ հիմնադրամի հետ՝ վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության ֆինանսավորման համար, 30 մլն ԱՄՆ դոլարի վարկային պայմանագիր Նիդերլանդների զարգացման բանկի (FMO) հետ՝ երիտասարդ ձեռներեցների մանրածախ բիզնեսի ֆինանսավորման համար: 2018թ. մենք շարունակելու ենք ակտիվորեն համագործակցել միջազգային ֆինանսական հաստատությունների հետ՝ նպատակ ունենալով ապահովել բազմազան և հավասարապես բաշխված ռեսուրսային բազա: Մենք նախատեսում ենք համալրել մեր կապիտալը ևս 30 մլն ԱՄՆ դոլարով. գործարքը նախատեսվում է կնքել Ասիական զարգացման բանկի հետ 2018թ. սկզբում: Ակնկալում ենք, որ կապիտալի համալրումը կարտացոլվի 2018թ. առաջին եռամսյակի ֆինանսական հաշվետվություններում:

Որպես իր ձեռքբերումների ապացույց 2017թ. Ամերիաբանկն արժանացավ մի շարք մրցանակների. Financial Times հեղինակավոր կազմակերպության The Banker ամսագրի՝ «Հայաստանի տարվա լավագույն բանկ 2017» մրցանակ՝ արդեն 3-րդ տարին անընդմեջ, Euromoney ամսագրի գերազանցության մրցանակ 2017՝ 5-րդ անգամ վերջին 7 տարվա ընթացքում, Global Finance ամսագրի «Հայաստանում տարվա լավագույն բանկ 2017» և «Լավագույն ներդրումային բանկ 2017» մրցանակներ: Global Finance-ն Ամերիաբանկը ճանաչեց Հայաստանում տարվա բանկ 6-րդ տարին անընդմեջ և լավագույն ներդրումային բանկ՝ 2-րդ տարին անընդմեջ: Մենք պահպանեցինք մեր դիրքը՝ որպես ամենաակտիվ ներդրումային բանկը և Հայաստանի ներքին շուկայում պարտատոմսերի տեղաբաշխման կազմակերպիչների վարկանշային աղյուսակի առաջատարը: Ամերիաբանկը պարտատոմսերի խոշորագույն թողարկողն է հայկական շուկայում՝ 64.4 մլն ԱՄՆ դոլար ընդհանուր արժեքով տեղաբաշխված պորտֆելով և 30% մասնաբաժնով 2017թ. վերջի դրությամբ: 2018թ. Բանկը մտադիր է շարունակել պարտատոմսերի թողարկումը՝ ֆինանսավորման միջոցներն էլ ավելի բազմազան և հասանելի դարձնելու նպատակով:

Մենք մտադիր ենք պահպանել բացարձակ առաջատարի մեր դիրքը՝ շարունակաբար ավելացնելով մեր մասնաբաժինն օրգանական և ոչ օրգանական աճի միջոցով: Ակտիվների միջին տարեկան աճը վերջին 5 տարիների ընթացքում կազմել է 23.0%, որի շնորհիվ Բանկի շուկայական մասնաբաժինը 10.2%-ից ավելացել է մինչև 15.5%:

2017թ. Բանկի համար հիշարժան տարի է խոշորամասշտաբ ծրագրերի առումով: Այժմ մեր նպատակն է ընդլայնել մանրածախ բանկային ծառայությունները, որն իրագործելու համար մենք աշխատում ենք արդյունավետության բարձրացման և գործառնությունների թվայնացման ուղղությամբ՝ սպասարկման անհրաժեշտ արագությունն ցանկացած պահի, ցանկացած վայրում ծառայությունների հասանելիություն ապահովելու համար: Արդեն 2018թ. կարձանագրենք այս ուղղությամբ կատարվող քայլերի առաջին դրական արդյունքը:

Եվ վերջում կցանկանամ անդրադառնալ ապագային և կրկին շեշտել, որ մեր նպատակն է լինել բացարձակ առաջատար, և այդ նպատակին մենք մտադիր ենք հասնել՝ մշտապես ընդլայնելով և բազմազանեցնելով մեր ծառայությունները, ապահովելով սպասարկման գերազանց որակ և ներդնելով ամենաառաջադեմ տեխնոլոգիաները:

Արտակ Հանեյան
Տնօրինության նախագահ, գլխավոր տնօրեն

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱԿՆԱՐԿ

ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՓՈԻԼԵՐԸ

1910 – 2007

1910 թվականին Տեր-Ղուկասյան փողոցում կառուցվեց Թիֆլիսի առևտրային բանկի Էրիվանյան մասնաճյուղը: 1916թ. Թիֆլիսի առևտրային բանկը վերանվանվեց Կովկասյան բանկ: Արխիվային տվյալները վկայում են, որ Հայաստանի առաջին հանրապետության տարիներին Հայաստան մտնող դրամական հոսքերը հիմնականում անցնում էին Կովկասյան բանկի Էրիվանյան մասնաճյուղով: Հեղկոմի՝ 1920թ. դեկտեմբերի 18-ի որոշմամբ բանկն ազգայնացվում է: 1921թ. փետրվարից մինչև 1922թ. մարտը բանկի շենքն զբաղեցնում էր Հայկական հեռագրային գործակալությունը: 1922թ. մարտի 24-ին այստեղ տեղափոխվեց Հայաստանի Պետբանկը, իսկ 1924թ. մարտին հիմնադրվեց Հայաստանի Կոմունալ բանկը, որը նույն թվականին սկսեց գործել Նալբանդյան 2 (նախկին Տեր-Ղուկասյան փողոց) հասցեում: 1959թ. Կոմունալ բանկը լուծարվեց, և նրա ակտիվներն ու պարտավորությունները փոխանցվեցին Ստրոյբանկի հայաստանյան գրասենյակին, որը տեղակայված էր նույն վայրում՝ Նալբանդյան 2 հասցեում գտնվող պատմական բանկային շենքում: 1974թ. նույն շենքում հիմնադրվեց ԽՍՀՄ Վնեշտորգբանկի հայաստանյան մասնաճյուղը, իսկ Ստրոյբանկի մասնաճյուղը տեղափոխվեց այլ տարածք: 1988թ. նշյալ շենքում ձևավորվեց ԽՍՀՄ Վնեշէկոնոմբանկի հանրապետական մասնաճյուղը, որը 1992թ. վերակազմավորվեց և դարձավ Հայնեռարտբանկ: 1995թ. տեղի է ունենում օտարերկրյա կապիտալի ներգրավում. բանկի բաժնետոմսերի հիմնական փաթեթը ձեռք է բերում «Քոմփոթրոն Ինդասթրիզ Իսթեբլիշմենթ» ընկերությունը:

2007 – 2009

2007թ. Հայնեռարտբանկի բաժնետոմսերի հիմնական փաթեթը՝ 96%-ը, ձեռք է բերում Թի Դի Էյ Հոլդինգս Լիմիթեդ ընկերությունը: Սկսվում է Հայաստանի ամենահին բանկի պատմության բեկումնային փուլը, որն ազդարարվում է ռեսուրսների շեշտակի համալրմամբ ու ծառայությունների արդիականացմամբ՝ համաշխարհային և հայաստանյան լավագույն չափանիշներին համապատասխան: 2008թ. «Հայնեռարտբանկ» ՓԲԸ-ն վերանվանվում է «Ամերիաբանկ» ՓԲԸ:

Մրցանակներ և հավաստագրեր

2009թ. բանկն ստացավ ISO 9001:2008 որակի միջազգային չափանիշներին համապատասխանության վկայագիր:

Նորամուծություններ և ենթակառուցվածք

- 2009թ. բացվեց 2 մասնաճյուղ՝ Հայաստանի լեռնահանքային արդյունաբերության կենտրոն Քաջարանում (Սյունիքի մարզ) և Երևանում («Կենտրոն» մասնաճյուղ), իսկ գլխամասային գրասենյակը տեղափոխվեց նոր տարածք:
- Նույն թվականին Ամերիաբանկը դարձավ Visa International-ի հիմնական անդամ և Հայկական ֆոնդային բորսայի անդամ: Բանկն այնուհետև հանդես եկավ նոր առաջարկով ՀՀ բանկային համակարգում՝ Visa Gold և MasterCard Gold քարտերի ամբողջական փաթեթով, որը ներառում է լրացուցիչ ծառայությունների տրամադրում՝ IAPA միջազգային զեղչային քարտ և ճանապարհորդական ապահովագրություն:
- Ամերիաբանկը նաև միացավ Միջազգային ֆինանսական կորպորացիայի (ՄՖԿ) Առևտրի ֆինանսավորման համաշխարհային ծրագրին (GTFP)՝ որպես թողարկող բանկ:

Ֆինանսական գործարքներ

- ՄՖԿ՝ 5 մլն ԱՄՆ դոլարի առևտրավարկային երաշխիք առևտրի ֆինանսավորման համաշխարհային ծրագրի շրջանակներում և 15 մլն ԱՄՆ դոլարի վարկ Հայաստանում վերականգնվող էներգետիկայի ֆինանսավորման համար (2009)
- 2009թ. դեկտեմբերին Նիդերլանդների զարգացման բանկի (FMO) և Գերմանիայի ներդրումների և զարգացման ընկերության հետ (Deutsche Investitions und Entwicklungsgesellschaft mbH, DEG) կնքվեց 30 մլն ԱՄՆ դոլարի ֆինանսավորում ներգրավելու պայմանագիր, որից 20 մլն ԱՄՆ դոլարը ՓՄՁ, իսկ 10 մլն ԱՄՆ դոլարը՝ վերականգնվող էներգետիկայի վարկավորման նպատակով:

2010 – 2011

2010թ. հունիսին հաստատվեց և գրանցվեց «Ամերիաբանկ» ՓԲԸ և «Կասկադ Բանկ» ՓԲԸ միացման պայմանագիրը: 2011թ. նոյեմբերին Ամերիաբանկի միակ բաժնետեր «Թի Դի Էյ Հոլդինգս Լիմիթեդ» ընկերությունն անվանափոխվեց «ԱՄԵՐԻԱ ԳՐՈՒՊ (Սի Ուայ) ԼԻՄԻԹԵԴ» ընկերության: 2007-2013թթ. ընթացքում «ԱՄԵՐԻԱ ԳՐՈՒՊ (Սի-Ուայ) ԼԻՄԻԹԵԴ» ընկերությունն աստիճանաբար ավելացնում էր բանկի կանոնադրական կապիտալը:

Մրցանակներ և հավաստագրեր

- Կոմերցբանկն Ամերիաբանկին շնորհեց հետևյալ մրցանակները՝ միջազգային գործառնությունների որակի գերազանցության մրցանակ և առևտրի ֆինանսավորման ոլորտում անթերի համագործակցության մրցանակ 2010, ինչպես նաև STP Award 2011

մրցանակը միջազգային փոխանցումների բնագավառում վճարման հանձնարարականների ավտոմատ կատարման 99.85% արդյունք ապահովելու համար:

- Ամերիաբանկն FMO-ի և DEG-ի աջակցությամբ ավարտին հասցրեց շրջակա միջավայրի և սոցիալական ռիսկերի կառավարման համակարգի ներդրման գործընթացը: FMO-ն և DEG-ն Ամերիաբանկին շնորհեցին գնահատանքի հավաստագիր և իջեցրին 2009թ. դեկտեմբերին կնքված պայմանագրի ներքո Ամերիաբանկի կողմից ներգրավված միջոցների տոկոսադրույքը:
- ՄՖԿ-ն Ամերիաբանկին շնորհեց «Առևտրի ֆինանսավորում 2010» մրցանակը՝ որպես առևտրի ֆինանսավորման համաշխարհային ծրագրի շրջանակներում Կովկասյան տարածաշրջանում ամենաակտիվ թողարկող բանկը, և GTFP Award 2011 մրցանակը՝ որպես լավագույն թողարկող բանկը Կովկասում:
- Գերմանական TÜV Rheinland ընկերությունը վերահաստատեց Ամերիաբանկին շնորհված՝ ISO 9001:2008 որակի կառավարման միջազգային չափանիշներին համապատասխանության վկայականը և երեք տարով երկարաձգեց դրա ժամկետը:
- Financial Times-ի The Banker ամսագրի «Հայաստանում տարվա լավագույն բանկ 2010» մրցանակ
- Euromoney ամսագրի «Հայաստանի տարվա լավագույն բանկ 2011» գերազանցության մրցանակ

Նորամուծություններ և ենթակառուցվածք

- Բանկը բացեց 5 նոր մասնաճյուղ՝ 2-ը մարզերում («Դիլիջան» և «Վանաձոր»), 3-ը մայրաքաղաքում («Կասկադ», «Կոմիտաս», «Մոսկովյան»):
- Ստացավ միջնաժամկետ և երկարաժամկետ պետական (գանձապետական) պարտատոմսերի գործակալի կարգավիճակ:
- ՄՖԿ-ն և Ամերիաբանկը ստորագրեցին Միջազգային սվոփների և ածանցյալ գործիքներով գործառնությունների հիմնական համաձայնագիրը, որը ռիսկերի կառավարման գործարքների միջազգային չափանիշ է:

Ֆինանսական գործարքներ

- Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկը (ՎՋԵԲ) Ամերիաբանկին տրամադրեց 10 մլն ԱՄՆ դոլարի վարկ՝ Հայաստանում մասնավոր հատվածի զարգացման համար:

- Պայմանագիր Եվրասիական զարգացման բանկի (ԵԶԲ) հետ՝ փոքր և միջին ձեռնարկությունների ֆինանսավորման համար Ամերիաբանկին 30 մլն ԱՄՆ դոլարի վարկային գիծ տրամադրելու մասին:
- Ասիական զարգացման բանկ (ԱԶԲ)՝ փոքր և միջին ձեռնարկությունների ֆինանսավորման համար Ամերիաբանկին 20 մլն ԱՄՆ դոլարի վարկային գիծ տրամադրելու պայմանագիր:
- Առաջին անգամ միջազգային ֆինանսական կառույցը՝ ի դեմս Կոմերցբանկի, հայկական բանկի (Ամերիաբանկի) համար հաստատեց բանկային երաշխիք ազգային արժույթով և խոշոր գումարի վարկ՝ առանց որևէ ապահովվածության:
- Սիթիբանկ Ամերիաբանկը Սիթիբանկի հետ կնքեց 4 մլն ԱՄՆ դոլարի սահմանաչափով CARTA՝ Առևտրի ֆինանսավորման կանխավճարների փոխհատուցման շարունակական համաձայնագիրն առևտրի ֆինանսավորման համար: Առաջին անգամ Սիթիբանկը հայկական բանկի տրամադրեց դրամական միջոցներ՝ հիմք ընդունելով միայն բանկի ֆինանսական կայուն վիճակը և վստահություն ներշնչող գործունեությունը:

2012 – 2013

Ամերիաբանկը դարձավ Հայաստանի խոշորագույն բանկն ըստ ընդհանուր ակտիվների և հաճախորդների նկատմամբ պարտավորությունների:

Մրցանակներ և հավաստագրեր

- Կոմերցբանկ՝ «Առևտրի ֆինանսավորման ոլորտում լավագույն գործընկեր 2012», «Առևտրի ֆինանսավորում 2013» գերազանցության մրցանակ, ինչպես նաև մրցանակ միջազգային փոխանցումների բնագավառում վճարման հանձնարարականների կատարման 99% արդյունքի ապահովման համար (STP Award 2012):
- Ամերիաբանկը ճանաչվեց լավագույն թողարկող բանկ Եվրոպայում և Կենտրոնական Ասիայում՝ ՄՖԿ-ի կողմից:
- Լավագույն թողարկող բանկ Եվրոպայում և Կենտրոնական Ասիայում՝ Առևտրի ֆինանսավորման GTFP ծրագրի ներքո էներգիայի արդյունավետ օգտագործման նախագծերում (ՄՖԿ):
- ՎԶԵԲ-ի՝ «Հայաստանում առևտրի ֆինանսավորման ոլորտում տարվա լավագույն թողարկող բանկ 2012» մրցանակ:

- Գերմանական TÜV Rheinland ընկերությունը վերահաստատեց Ամերիաբանկին շնորհված՝ ISO 9001:2008 որակի կառավարման միջազգային չափանիշներին համապատասխանության վկայականը:
- 2012-2013 Global Finance ամսագիրն Ամերիաբանկին շնորհեց «Տարվա լավագույն բանկ», «Առևտրի ֆինանսավորման ոլորտում տարվա լավագույն բանկ», «Արտարժույթ փոխանակող լավագույն բանկ» մրցանակները:
- Euromoney ամսագրի «Հայաստանի տարվա լավագույն բանկ 2012» գերազանցության մրցանակը՝ երկրորդ տարին անընդմեջ
- Financial Times-ի The Banker ամսագրի «Հայաստանի տարվա լավագույն բանկ 2013» մրցանակը:

Նորամուծություններ և ենթակառուցվածք

- Բացվեց 2 մասնաճյուղ Երևանում («Շենգավիթ», «Սայաթ-Նովա»):
- 2013թ. բանկը դարձավ ֆակտորների խոշորագույն միջազգային միության՝ «Ֆակտորգ Չեյն Ինթերնեշնլ»-ի անդամ:
- Ամերիաբանկն առաջինը Հայաստանում իր հաճախորդներին ընձեռեց հնարավորություն՝ ձեռք բերելու միջազգային կապիտալի շուկայում շրջանառվող՝ Հայաստանի առաջին սուվերեն, ԱՄՆ դոլարով թողարկված եվրապարտատոմսերը:
- Ներդրվեց VISA ինտերնետ էքվայրինգի ծառայությունը:
- Առաջինը հայկական բանկերից ՎՋԵԲ-ից ստացավ հաստատող բանկի կարգավիճակ առևտրի աջակցման միջազգային ծրագրի (Trade Facilitation Program, TFP) շրջանակներում:

Ֆինանսական գործարքներ

- Ամերիաբանկը 15 մլն ԱՄՆ դոլար հատկացրեց Անդրկովկասում առանձնահատուկ նշանակության նախագծի՝ Չարենցավանում մետաղաձուլական գործարանի կառուցման համար՝ ՄՖԿ-ի առևտրի ֆինանսավորման համաշխարհային ծրագրի շրջանակներում:
- DEG՝ 20 մլն ԱՄՆ դոլարի վարկային գծի պայմանագիր փոքր և միջին ձեռնարկությունների ֆինանսավորման համար:
- ՎՋԵԲ՝ 12 մլն ԱՄՆ դոլարի վարկային պայմանագիր փոքր և միջին ձեռնարկությունների, վերականգնվող էներգետիկայի և էներգաարդյունավետության նախագծերի ֆինանսավորման համար:

- Պրոպարկո՝ Ֆրանսիական «Պրոպարկո» զարգացման ֆինանսական գործակալությունը և Ամերիաբանկը ստորագրեցին պայմանագիր Ամերիաբանկին 15 մլն ԱՄՆ դոլարի չափով վարկ տրամադրելու մասին՝ ուղղված Հայաստանում գյուղատնտեսության ոլորտի և սննդի վերամշակման փոքր և միջին ձեռնարկությունների ֆինանսավորմանը: Սա Պրոպարկոյի առաջին ֆինանսական ներդրումն էր Հայաստանում:
- Ավստրիական զարգացման բանկ (OeEB)՝ 15 մլն ԱՄՆ դոլարի վարկային պայմանագիր փոքր և միջին ձեռնարկությունների, վերականգնվող էներգետիկայի և էներգաարդյունավետության նախագծերի ֆինանսավորման համար:
- Առաջին անգամ Հայաստանում բանկը հաստատում է ակրեդիտիվ հայկական արտահանող ընկերության համար՝ հոգուտխոշոր բանկային խմբի անդամ հանդիսացող դազախական բանկի:

2014 – 2015

Բանկը պահպանեց առաջատարի դիրքը՝ առաջին անգամ Հայաստանի բանկային ոլորտի պատմության մեջ հատելով ակտիվների 1 մլրդ ԱՄՆ դոլար շեմը:

Մրցանակներ և հավաստագրեր

- 2015թ. Fitch միջազգային վարկանշային կազմակերպությունը վերահաստատեց Ամերիաբանկի արտարժույթով երկարաժամկետ պարտավորություններ թողարկողի «B+» վարկանիշը (բացասական հեռանկարով)՝ որպես հինք ընդունելով բանկի կենսունակության «B+» վարկանիշը: Առաջին անգամ հայկական ընկերությանը տրվեց իր երկրի վարկանշային մակարդակին հավասար վարկանիշ, որը համաշխարհային պրակտիկայում համարվում է ընկերության վարկանիշի գնահատման լավագույն ցուցանիշը:
- Միջազգային Corporate Intl ամսագիրը 2014թ. համաշխարհային մրցանակաբաշխության արդյունքում Ամերիաբանկը ճանաչեց Հայաստանում 2013թ. ֆակտորինգային ծառայությունների ոլորտում լավագույն բանկը:
- Ամերիաբանկն արժանացավ ՎՋԵԲ-ի «Տարվա գործարք 2013» մրցանակին: «Տարվա գործարք 2013»-ն Ամերիաբանկի և Կոմերցբանկի միջև կնքված գործարքն է, որը երաշխավորվել է ՎՋԵԲ-ի կողմից:
- Կոմերցբանկն Ամերիաբանկին շնորհեց միջազգային գործարքների իրականացման «Որակի գերազանցության STP Award 2013» մրցանակը:

- Ամերիաբանկը «ՆԱՄԴԱՔ ՕԷՄԷՔՍ Արմենիա»-ի կողմից հաղթող ճանաչվեց «Բորսայի լավագույն անդամ արտարժույթի շուկայում» անվանակարգում և նոր սահմանված «Բորսայի լավագույն անդամ ռեպո և սվոփ գործառնությունների» անվանակարգում: Դեպոզիտար գործունեության մասով Ամերիաբանկը դարձավ Դեպոզիտար համակարգի լավագույն հաշվի օպերատոր-պահառու օտարերկրյա արժեթղթերի շուկայում:
- Գերմանական TÜV Rheinland ընկերությունը վերահաստատեց Ամերիաբանկին շնորհված՝ ISO 9001:2008 որակի կառավարման միջազգային չափանիշներին համապատասխանության վկայականը և երեք տարով երկարաձգեց դրա ժամկետը:
- Ամերիաբանկն արժանացավ Global Finance հեղինակավոր ամսագրի հետևյալ մրցանակներին՝ Հայաստանում «Տարվա լավագույն բանկ 2014 և 2015», «Լավագույն ենթապահառու բանկ 2015», «Լավագույն բանկ առևտրի ֆինանսավորման ոլորտում 2014 և 2015» և «Արտարժույթ փոխանակող լավագույն բանկ 2014 և 2015»:
- Euromoney ամսագիրն Ամերիաբանկին շնորհեց 2014 Գերազանցության մրցանակը:
- Financial Times հեղինակավոր կազմակերպության The Banker ամսագրի Հայաստանում «Տարվա լավագույն բանկ 2015» մրցանակը:

Նորամուծություններ և ենթակառուցվածք

- Բացվեց 3 մասնաճյուղ՝ «Արշակունյաց» և «Արշակունյաց պյուս» մասնաճյուղերը Երևանում, «Կապան» մասնաճյուղը ՀՀ Սյունիքի մարզում:
- Գործարկվեց նորագույն տեխնոլոգիաներով հագեցած կոնտակտային կենտրոնը՝ ապահովելով վճարային քարտերի շուրջօրյա սպասարկում:
- Առցանց բանկային ծառայություններից օգտվող հաճախորդների համար ներդրվեց նոր համակարգ՝ մեկանգամյա գաղտնաբառ գեներացնող AmeriaToken հեռախոսային հավելվածը՝ առաջին անգամ հայաստանյան բանկային համակարգում:
- Ներդրվեց նոր՝ Ameria Mobile Banking հավելվածը, որը հնարավորություն տվեց սմարթֆոնների և պլանշետների միջոցով օգտվել բանկային հիմնական ծառայություններից և շուրջօրյա ռեժիմում կառավարել հաշիվները:

- Ներդրվեց քարտով օնլայն փոխանցումների կատարման նոր համակարգ, որի շնորհիվ քարտից քարտ և քարտից բանկային հաշվին օնլայն փոխանցումները հնարավոր է իրականացնել Ամերիաբանկի կայքի միջոցով, ցանկացած բանկի քարտերից Ամերիաբանկի քարտային և բանկային հաշիվներին:
- Ամերիաբանկը CR2 իռլանդական ընկերության հետ կնքեց պայմանագիր Հայաստանում հեռահար բանկային ծառայությունների BankWorld բազմաֆունկցիոնալ համակարգի ներդրման մասին: Սա CR2-ի առաջին նախագիծն է Հայաստանում:
- Ամերիաբանկը և «Յուքում» ընկերությունը ներդրեցին Հայաստանում նոր ծառայություն՝ Ամերիա TV Բանկինգ:
- Հերթերի կառավարման նախագծի շրջանակներում Երևանի մարդաշատ վայրերում և բանկի հիմնական մասնաճյուղերում տեղադրվեցին կանխիկի ընդունման բանկոմատներ և վճարային տերմինալներ: Մի քանի մասնաճյուղում պիլոտային կարգով ներդրվեց հերթերի կառավարման համակարգ:
- Կյանքի կոչվեցին մի շարք նախագծեր՝ բանկի կողմից իրականացվող գործառույթների ավտոմատացման և ծառայությունների բարելավման ուղղությամբ, ներդրվեցին մի շարք նոր գործիքներ, մասնավորապես՝
- Հաճախորդների նույնականացում հեռախոսային և TV բանկինգի, ԱրՔա համակարգում գործարքների իրականացման ժամանակ՝ կարճ հաղորդագրության միջոցով ուղարկվող գաղտնաբառեր
- Օնլայն և մոբայլ բանկինգի մեկանգամյա գաղտնաբառեր գեներացնող AmeriaToken հավելված Blackberry-ի համար, նոր AmeriaToken iPhone/iPad-ի համար

Ֆինանսական գործարքներ

- Բանկը կնքեց հոբեյանական 80-րդ գործարքը ՎԶԵԲ-ի առևտրի աջակցման ծրագրի շրջանակներում:
- Բանկի վարկային պորտֆելը համալրվեց նոր վարկերով՝ «Նորվիկ» ՈԻՎԿ վարկային պորտֆելի մի մասի ձեռքբերման հաշվին:
- ՕՊԵԿ-ի միջազգային զարգացման հիմնադրամ՝ 20 մլն ԱՄՆ դոլարի վարկային պայմանագիր փոքր և միջին ձեռնարկությունների ֆինանսավորման համար

- FMO և OeEB՝ 25 մլն ԱՄՆ դոլարի սինդիկացված վարկային պայմանագիր փոքր և միջին ձեռնարկությունների, վերականգնվող էներգետիկայի և էներգաարդյունավետության նախագծերի ֆինանսավորման համար:
- FMO՝ 20 մլն ԱՄՆ դոլարի փոխարկելի ստորադաս փոխառության պայմանագիր (2014): ՀՀ բանկային համակարգի պատմության մեջ առաջին անգամ հայկական բանկը փոխարկելի ստորադաս փոխառություն ներգրավեց միջազգային ֆինանսական կազմակերպությունից:
- ՄՖԿ՝ 50 մլն ԱՄՆ դոլարի ստորադաս փոխառության պայմանագիր (2015)
- EBRD: ՎՋԵԲ-ը 40 մլն ԱՄՆ դոլար ներդրեց Ամերիաբանկի կապիտալում՝ ձեռք բերելով բանկի բաժնեմաս (2015թ. տարեվերջում): Առաջին փուլում ներդրվել է 30 մլն ԱՄՆ դոլար (20.7% բաժնեմաս), իսկ մնացած 10 մլն ԱՄՆ դոլարը կօգտագործվի կապիտալի հետագա համալրման նպատակով:

2016 – 2017

Ամերիաբանկը պահպանեց առաջատարի դիրքը ՀՀ բանկային համակարգում ըստ բոլոր 5 հիմնական ֆինանսական ցուցանիշների:

Մրցանակներ և հավաստագրեր

- Fitch միջազգային վարկանշային գործակալությունը վերահաստատեց Ամերիաբանկի արտարժույթով երկարաժամկետ պարտավորություններ թողարկողի «B+» վարկանիշը և վերանայեց կանխատեսումը՝ «բացասականից» դարձնելով «կայուն»: Սա նշանակում է, որ ըստ գործակալության սպասումների՝ Ամերիաբանկը կպահպանի իր կայուն դիրքը՝ դիմակայելով արտաքին բարդ միջավայրի ճնշմանը և մարտահրավերներին:
- Կոմերցբանկի STP մրցանակ՝ 2015թ. միջազգային գործարքների անթերի իրականացման համար
- ՎՋԵԲ-ի «Տարվա գործարք էներգաարդյունավետության ոլորտում» մրցանակ՝ 2015թ. Հայաստանում ջերմոցային ենթակառուցվածքի էներգաարդյունավետության բարելավմանը նպաստելու համար
- ՎՋԵԲ-ի Ոսկե մրցանակ «Շրջակա միջավայրի և սոցիալական նորամուծություններ 2017» առևտրի աջակցման ծրագրի շրջանակներում «կանաչ» գործունեության համար
- Տարվա բանկ՝ EMEA Finance ամսագրի՝ 2015թ. Եվրոպայի բանկային մրցանակաբաշխության արդյունքներով

- Global Finance՝ Հայաստանում «Արտարժույթ փոխանակող լավագույն բանկ 2016, 2017», «Լավագույն ենթապահառու բանկ 2016, 2017», «Լավագույն ներդրումային բանկ 2016, 2017» և «Հայաստանի լավագույն բանկ 2016, 2017»:
- Euromoney՝ գերազանցության մրցանակ 2016 և 2017
- Financial Times հեղինակավոր կազմակերպության The Banker ամսագրի Հայաստանի «Տարվա լավագույն բանկ 2016 և 2017» մրցանակ:
- Միթիբանկ՝ STP Award 2015 և 2016 միջազգային գործառնությունների անթերի իրականացման համար

Նորամուծություններ և ենթակառուցվածք

- Բացվեց բանկի մասնաճյուղը հայաստնաի երկրորդ քաղաքում՝ «Կումայրի»
- Ընդլայնվեց երկարացված գրաֆիկով աշխատող մասնաճյուղերի ցանցը՝ ևս երկու նմանատիպ մասնաճյուղ Երևանում («Երիտասարդական» մասնաճյուղը «Մետրոնոմ» առևտրի կենտրոնում և «Քոչար» մասնաճյուղը «Ռիո Մոլ» առևտրի կենտրոնում):
- Երևանում գործարկվեց շուրջօրյա ռեժիմով գործող ինքնասպասարկման 5 տերմինալ:
- Ընդլայնվեց հեռախոսային բանկինգի միջոցով հասանելի ծառայությունների ցանկը՝ ներառելով նաև վարկային ծառայությունները:
- Կնքվեց համագործակցության հուշագիր ամերիկյան Գոլդեն Սթեյթ Բանկի հետ, որի միջոցով ԱՄՆ քաղաքացիները և իրավաբանական անձինք կարող են օգտվել Ամերիաբանկի ծառայություններից Գոլդեն Սթեյթ Բանկի միջոցով և հակառակը:
- Բարելավվեց քարտային վճարումների vPOS մոդուլը, որն այժմ հաճախորդներին հնարավորություն է տալիս մեկ անգամ գրանցելով քարտը՝ կատարել վճարումներ՝ առանց ամեն անգամ տվյալները մուտքագրելու անհրաժեշտության:
- Համագործակցություն արդարադատության նախարարության հետ՝ պետական ծառայությունների մատուցման միասնական գրասենյակի ծրագրի շրջանակներում
- Հաշվարկային բանկը հայկական կողմից Հայաստանի և Ռուսաստանի ազգային վճարային համակարգերի ինտեգրման գործընթացում «ԱրՔա-Միր» համատեղ վճարային քարտ, որն սպասարկվում է ինչպես Հայաստանում՝ «Արքա» համակարգի միջոցով, այնպես էլ Ռուսաստանում՝ «Միր» համակարգի միջոցով:

- Մշակող ընկերության հետ համատեղ ստեղծված նոր վճարային գործիք՝ «Դրոփս», որը հնարավորություն է տալիս ավտոմատացնել և բաշխել ընթացիկ վճարումները՝ թեթևացնելով բեռը:

Ֆինանսական գործարքներ

- Բանկը կնքեց հոբեյանական 100-րդ գործարքը ՎՋԵԲ-ի առևտրի աջակցման ծրագրի շրջանակներում:
- ՎՋԵԲ-ի կողմից ֆինանսավորվող «Կանայք բիզնեսում» ծրագրի շրջանակներում ստորագրվեց 10 մլն ԱՄՆ դոլարի վարկային գծի պայմանագիր՝ կանանց ձեռներեցությանն աջակցելու նպատակով:
- 20 մլն ԱՄՆ դոլարի վարկ DEG ընկերությունից՝ ՓՄՁ-ների վարկավորման նպատակով:
- 20 մլն ԱՄՆ դոլարի պայմանագիր «Պրոպարկո» ընկերության հետ՝ ուղղված ՓՄՁ-ների, էներգաարդյունավետության, վերականգնվող էներգետիկայի, առողջապահական և կրթական ծրագրերի ֆինանսավորմանը:
- Բանկն սկսեց համագործակցել Կլիմայական գործընկերության համաշխարհային հիմնադրամի (GCPF) հետ՝ կնքելով 30 մլն ԱՄՆ դոլարի չափահովված վարկի պայմանագիր՝ ուղղված վերականգնվող էներգետիկայի և էներգաարդյունավետ ծրագրերի ֆինանսավորմանը:
- Ամերիաբանկն իր ներդրումային կառավարիչ responsAbility Investments AG ընկերության միջոցով հաջողությամբ տեղաբաշխեց 20 մլն ԱՄՆ դոլարի պարտքային արժեթղթեր լյուքսեմբուրգյան չորս ներդրումային հիմնադրամներում: Տեղաբաշխումից ստացված միջոցներն ուղղվել են ՓՄՁ-ների վարկավորմանը և վերականգնվող էներգետիկայի ծրագրերի ֆինանսավորմանը:
- Բանկը կնքեց 30 մլն ԱՄՆ դոլարի վարկային պայմանագիր FMO-ի հետ՝ ուղղված մանրածախ բիզնեսի և երիտասարդ ձեռներեցների ֆինանսավորմանը Հայաստանում:

Կորպորատիվ սոցիալական պատասխանատվություն

Ամերիաբանկը մշտապես ձգտում է համատեղել բաժնետերերի, հաճախորդների, աշխատակիցների և լայն հանրության շահերը:

Բանկի գործունեությունը կառուցվում է այնպիսի հիմնարար սկզբունքների վրա, ինչպիսիք են ազնվությունը, փոխվստահությունը և գործարար էթիկայի նորմերը, որոնք թույլ են տալիս հավուր պատշաճի սպասարկել ինչպես անհատներին, այնպես էլ ցանկացած մեծության իրավաբանական անձանց և շահել նրանց վստահությունը: Բանկի ֆինանսական հզորությունը թույլ է տալիս ամենաբարձր մակարդակով կատարել մեր հիմնական պարտականությունը՝ պաշտպանել մեր հաճախորդների ֆինանսական ակտիվները: Որպես երկրի առաջատար ֆինանսական հաստատություն՝ Բանկը դարձել է Հայաստանի տնտեսության շարժիչ ուժ:

2017թ. Ամերիաբանկը շարունակում էր իրագործել համապարփակ Կորպորատիվ սոցիալական պատասխանատվության (ԿՍՊ) քաղաքականություն՝ ուղղված համայնքների կարիքներին: Բանկը ծավալում է գործունեություն երիտասարդ սերնդի և գործարար հանրության հետ մասնագիտական գիտելիքների փոխանակման, կրթական նախաձեռնությունների աջակցման, երեխաների առողջության և բարօրության ապահովման, ինչպես նաև ենթակառուցվածքային և համայնքային զարգացմանն աջակցելու ուղղությամբ:

ԿՍՊ ոլորտին վերաբերող բոլոր որոշումները կայացնում է հատուկ կոլեգիալ մարմինը՝ ԿՍՊ կոմիտեն, որը բաղկացած է Բանկի 7 տարբեր ստորաբաժանումների 7 ներկայացուցիչներից: Կոմիտեի պատասխանատվությունն է ապահովել հիմնավորված և համակարգված որոշումների ընդունում ԿՍՊ ոլորտում:

ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԲԱՆԿ (ՎԶԵԲ)

ՎԶԵԲ-ի հետ համագործակցությունը մեկնարկել է 2010թ., երբ ՎԶԵԲ-ն Ամերիաբանկին տրամադրեց 10 մլն ԱՄՆ դոլարի վարկային գիծ փոքր և միջին ձեռնարկությունների ֆինանսավորման համար: Այդ նույն ժամանակ ՎԶԵԲ-ը տրամադրեց նաև 2 մլն ԱՄՆ դոլարի երաշխիք՝ առևտրի ֆինանսավորմանն աջակցելու համար: Հետագայում սահմանաչափն ավելացավ և այժմ կազմում է 52 մլն ԱՄՆ դոլար: 2016թ. Բանկը կնքեց 100-րդ հոբեյանական գործարքը ՎԶԵԲ-ի առևտրի աջակցման ծրագրի շրջանակներում: Նույն տարում Ամերիաբանկն առաջինը հայկական բանկերից միացավ ՎԶԵԲ-ի՝ կին գործարարների աջակցմանն ուղղված «Կանայք բիզնեսում» ծրագրին: 10 միլիոն ԱՄՆ դոլարին համարժեք դրամի չափով վարկային գծի պայմանագիրն ստորագրվեց 2016թ. դեկտեմբերին:

Ի գնահատում առևտրի ֆինանսավորման ոլորտում արդյունավետ համագործակցության՝ ՎԶԵԲ-ը մի քանի տարի շարունակ տարբեր մրցանակներ է շնորհում Ամերիաբանկին, որոնց թվում են «Ամենաակտիվ թողարկող բանկը Հայաստանում» մրցանակը, «Տարվա գործարք» մրցանակը՝ Հայաստանում նոր սերնդի մանրաթելային ցանցի կառուցումը ֆինանսավորելու համար (2013), «Տարվա գործարք՝ արդյունավետություն» մրցանակը՝ ջերմոցների էներգաարդյունավետությունը բարելավելունն ուղղված ծրագրի համար (2015): Ամերիաբանկը նաև դարձավ առաջին հայկական բանկը, որն ստացավ ՎԶԵԲ-ի առևտրի աջակցման ծրագրի շրջանակներում հաստատող բանկի կարգավիճակ:

2015թ. դեկտեմբերին ՎԶԵԲ-ը 40 մլն ԱՄՆ դոլարի ներդրում կատարեց Ամերիաբանկի կապիտալում՝ ձեռք բերելով Բանկի բաժնեմաս, որից 30 մլն ԱՄՆ դոլարն արդեն վճարված է: Մա բաժնետոմսերի ձեռքբերման խոշորագույն գործարքն է, որը ՎԶԵԲ-ը մինչ օրս ստորագրել է մեր տարածաշրջանում: ՎԶԵԲ-ը ձեռք բերեց Ամերիաբանկի բաժնետոմսերի 20.7%-ը: Ներդրումների նպատակն է ուժեղացնել Ամերիաբանկը և պատրաստվել առաջնային հրապարակային տեղաբաշխման (IPO): 2016թ. Ամերիաբանկի տնօրենների խորհրդի կազմում ընդգրկվեց ՎԶԵԲ-ը ներկայացնող անկախ տնօրեն:

Ասիական զարգացման բանկ (ԱԶԲ)

Ամերիաբանկի & ԱԶԲ-ի համագործակցության մեկնարկն ազդարարվեց 2011թ.: Կնքված պայմանագրերի շրջանակներում Բանկին տրամադրված միջոցներն ուղղվեցին առևտրի զարգացմանը և Հայաստանի կայուն տնտեսական աճի ապահովմանը: Մասնավորապես, Ամերիաբանկին տրամադրվեց 20 մլն ԱՄՆ դոլարի վարկ՝ Հայաստանի ՓՄՁ-ներին աջակցելու նպատակով: Առևտրի ֆինանսավորման ոլորտում արգասաբեր համագործակցության արդյունքում բանկի համար բացված սահմանաչափը 2017թ. հասավ 27 մլն ԱՄՆ դոլարի:

2017թ. օգոստոսին ԱԶԲ-ի խորհուրդը հաստատեց 60 մլն ԱՄՆ դոլար բաժնային և պարտքային ֆինանսավորման փաթեթ Ամերիաբանկի համար: Մա տարածաշրջանում ԱԶԲ-ի բաժնային առաջին գործարքն է, որի արդյունքում նա 30 մլն ԱՄՆ դոլարի ներդրում է կատարում

Ամերիաբանկի բաժնետիրական կապիտալում: Փաստացի 13.98% բաժնեմասի ձեռքբերման գործարքը կնքվեց 2018թ. փետրվարին: Ներդրման նպատակն է ուժեղացնել Ամերիաբանկն առաջնային հրապարակային տեղաբաշխում իրականացնելու ճանապարհին: 2018թ. Ամերիաբանկի տնօրենների խորհրդի կազմը կհամալրվի ԱԶԲ-ն ներկայացնող ևս մեկ ոչ գործադիր անդամով:

Միջազգային ֆինանսական կորպորացիա (ՄՖԿ)

Դեռևս 2009թ. մեկնարկած համագործակցությունը Համաշխարհային բանկի խմբի անդամ հանդիսացող ՄՖԿ-ի հետ թույլ տվեց Ամերիաբանկին ընդլայնել ֆինանսավորման իր ոլորտը՝ ընդգրկելով նաև վերականգնվող էներգետիկան, մասնավորապես փոքր ՀԷԿ-երը: Այս նպատակով Բանկին տրամադրվեց 15 մլն ԱՄՆ դոլարի վարկ: ՄՖԿ-ի աջակցությամբ Ամերիաբանկը նաև սատարում է առևտրի ֆինանսավորման ոլորտին՝ դառնալով առաջատարը Հայաստանում առևտրի ֆինանսավորման ոլորտում: Ընդհանուր առմամբ, այս համագործակցության շնորհիվ Հայաստանում սկսեցին զարգանալ առևտրի ֆինանսավորման գործիքները: Գնահատելով փոխվստահությունը և կայուն համագործակցությունը՝ ՄՖԿ-ն ավելացրեց բանկին առևտրի ֆինանսավորման համար տրամադրված վարկային սահմանաչափը՝ այն հասցնելով 40 մլն ԱՄՆ դոլարի, որի նպատակն է նաև սատարել արտաքին առևտրին:

«Կովկասյան տարածաշրջանում առևտրի ֆինանսավորման համաշխարհային ծրագրի շրջանակներում ամենաակտիվ թողարկող բանկ 2011» և «Լավագույն թողարկող բանկ Եվրոպայում ու Կենտրոնական Ասիայում առևտրի ֆինանսավորման համաշխարհային ծրագրի շրջանակներում էներգիայի արդյունավետ օգտագործման նախագծերում 2012» մրցանակները լավագույն ապացույցն են Ամերիաբանկի և ՄՖԿ-ի բեղուն համագործակցության, հատկապես եթե հաշվի առնենք, որ սրանք ՄՖԿ-ի առաջին խրախուսական մրցանակներն են՝ շնորհիված Կովկասյան տարածաշրջանում գործող բանկի:

2014թ. ՄՖԿ-ն ֆինանսավորեց «Փրոփերթի Դիվելոպմենթ Քամփնի» ընկերության՝ Հայաստանում առաջին «կանաչ» բիզնես-կենտրոնը կառուցելու նախագիծը՝ տրամադրելով 9 մլն ԱՄՆ դոլարի վարկ սեփական միջոցներից ու ներգրավելով ևս 9 մլն ԱՄՆ դոլար DEG-ից: Նախագծի ընդհանուր արժեքն է շուրջ 37 մլն ԱՄՆ դոլար, որի մնացած մասը ֆինանսավորում է «Փրոփերթի Դիվելոպմենթ Քամփնի» ՓԲԸ-ն սեփական միջոցներից:

2015թ. դեկտեմբերին ՄՖԿ-ն 50 մլն ԱՄՆ դոլարի ստորադաս փոխառություն տրամադրեց Ամերիաբանկին՝ վերջինիս կապիտալն ավելացնելու, երկրի տնտեսվարող սուբյեկտների վարկավորման հնարավորությունները և ֆինանսավորման հասանելիությունը ընդլայնելու, տնտեսական աճն ու աշխատատեղերի ստեղծումը խթանելու նպատակով:

Երկարաժամկետ կապիտալ տրամադրելով՝ ՄՖԿ-ն ցանկանում է ամրապնդել Հայաստանի բանկային ոլորտը և օժանդակել իր արժեքավոր գործընկերոջ՝ Ամերիաբանկի ռազմավարական նպատակների իրագործմանը: Հաշվի առնելով Ամերիաբանկի կորպորատիվ կառավարման համակարգի բարձր որակն ու աճի արագընթաց տեմպերը՝ ՄՖԿ-ի տրամադրած ստորադաս փոխառությունը կնպաստի բանկի զարգացմանը և թույլ կտա նախապատրաստվել բաժնետոմսերի առաջնային հրապարակային տեղաբաշխման:

Նիդերլանդների զարգացման բանկ (FMO)

Ամերիաբանկն սկսեց համագործակցել FMO-ի հետ 2009թ-ին՝ ստորագրելով 30 մլն ԱՄՆ դոլարի վարկային պայմանագիր: Համագործակցության նպատակն էր Հայաստանում փոքր և միջին ձեռնարկությունների և վերականգնվող էներգետիկայի ոլորտի ֆինանսավորումը, որը թույլ տվեց բանկին ընդլայնել ՓՄՁ-ների և փոքր հիդրո և հողմակայանների վարկավորման ծավալները:

2010թ. Ամերիաբանկը FMO-ի և DEG-ի աջակցությամբ բարեհաջող կերպով ներդրեց շրջակա միջավայրի և սոցիալական ռիսկերի կառավարման համակարգ: Նշենք, որ Ամերիաբանկը տարածաշրջանում առաջիններից էր, որ ներդրեց նման համակարգ՝ արժանանալով FMO-ի և DEG-ի գնահատանքի հավաստագրին: Ի նշան գնահատանքի նվազեցվեց նաև 2009թ. դեկտեմբերին կնքված պայմանագրի շրջանակներում տրված վարկի տոկոսադրույքը:

2014թ. Ամերիաբանկը և FMO-ն կնքեցին 20 մլն ԱՄՆ դոլարի փոխարկելի ստորադաս փոխառություն ներգրավելու մասին պայմանագիր: Առաջին անգամ ՀՀ բանկային համակարգի պատմության մեջ միջազգային ֆինանսական կազմակերպությունը տրամադրում է փոխարկելի ստորադաս փոխատվություն հայկական բանկի: Սա նշանակում է, որ միջազգային ներդրողների վստահությունը ՀՀ բանկային համակարգի հանդեպ գնալով աճում է:

2017թ. բանկը և FMO կնքեցին նոր պայմանագիր՝ 30 մլն ԱՄՆ դոլարի ֆինանսավորում ներգրավելու մասին, որն ուղղվելու է փոքր և միջին ձեռներկությունների և հատկապես երիտասարդ ձեռներեցների վարկավորմանը:

Պրոպարկո

2013թ. Պրոպարկոն, որը Ֆրանսիական զարգացման գործակալության կազմում ֆինանսավորում է մասնավոր հատվածը, Բանկի հետ կնքեց 15 մլն ԱՄՆ դոլարի վարկային պայմանագիր, որն ազդարարեց համագործակցության սկիզբը՝ դառնալով Պրոպարկոյի առաջին ներդրումը Հայաստանում և երկրորդը՝ Հարավային Կովկասում: Վարկը նախատեսված է գյուղատնտեսության և փոքր ու միջին վերամշակող ձեռնարկությունների երկարաժամկետ ֆինանսավորման համար:

Բանկային համակարգում ունեցած կայուն դիրքի շնորհիվ 2016թ. Ամերիաբանկը կնքեց երկրորդ վարկային պայմանագիրը՝ 20 մլն ԱՄՆ դոլարի չափով, որն ուղղված էր ՓՄՁ-ների, էներգաարդյունավետության, վերականգնվող էներգետիկայի, առողջապահական և կրթական ծրագրերի ֆինանսավորմանը:

Գերմանիայի զարգացման բանկ (KfW), Գերմանիայի ներդրումների և զարգացման ընկերություն (DEG)

DEG-ի հետ համագործակցությունը սկսվեց 2009թ.՝ այս կազմակերպության և FMO-ի հետ համատեղ վարկային գծի պայմանագրի կնքմամբ: Հետագայում համագործակցությունը վերածվեց ռազմավարական գործընկերության, երբ 2012թ. նոյեմբերին ստորագրվեց 20 մլն ԱՄՆ դոլարի վարկային պայմանագիր: Վարկը տրամադրվել է 8 տարի ժամկետով և նախատեսված է Հայաստանում փոքր և միջին ձեռնարկությունների ֆինանսավորման համար: Այս համագործակցությունը համահունչ է բանկի ռազմավարությանը, համաձայն որին փոքր և միջին բիզնեսի ֆինանսավորումը վարկային քաղաքականության առաջնահերթ ուղղություններից մեկն է: Ավելին, 2016թ. մայիսին Ամերիաբանկը վերահաստատեց իր ուղղվածությունը դեպի ՓՄՁ վարկավորում՝ կնքելով ևս մեկ 20 մլն ԱՄՆ դոլարի վարկային պայմանագիր DEG-ի հետ:

Ավստրիական զարգացման բանկ (OeEB)

2013թ. կնքվեց 15 մլն ԱՄՆ դոլարի վարկային պայմանագիր՝ 8 տարի ժամկետով: 2015թ. կնքվեց 25 մլն ԱՄՆ դոլարի սինդիկացված վարկային պայմանագիր Նիդերլանդների զարգացման բանկի (FMO) և Ավստրիական զարգացման բանկի հետ: Երկու դեպքում էլ պայմանագրերի շրջանակներում ստացված ֆինանսական միջոցներն ուղղվել են Հայաստանում փոքր և միջին ձեռնարկությունների և վերականգնվող էներգետիկայի/էներգաարդյունավետության ոլորտի ֆինանսավորմանը:

responsAbility

2016թ. Ամերիաբանկն ամրապնդեց իր հեղինակությունը կապիտալի միջազգային շուկաներում՝ իր ներդրումային կառավարիչ responsAbility Investments AG ընկերության միջոցով տեղաբաշխելով 20 մլն ԱՄՆ դոլար ընդհանուր ծավալով պարտքային արժեթղթեր լյուքսեմբուրգյան չորս ներդրումային ֆոնդերում: Արժեթղթերի տեղաբաշխումից ստացված միջոցներն ուղղվել են Հայաստանում փոքր և միջին ձեռնարկությունների վարկավորմանը, վերականգնվող էներգետիկայի և էներգաարդյունավետության ծրագրերի ֆինանսավորմանը:

Եվրասիական զարգացման բանկ (ԵԶԲ)

2010թ. Ամերիաբանկին տրամադրվեց 30 մլն ԱՄՆ դոլարի վարկային գիծ փոքր և միջին ձեռնարկությունների ֆինանսավորման համար:

Կլիմայական գործընկերության համաշխարհային հիմնադրամ (GCPF)

Բանկի միջազգային գործընկերների ցանկը համալրվել է ևս մեկ անունով: Բանկն սկսել է համագործակցել Կլիմայական գործընկերության համաշխարհային հիմնադրամի հետ՝ 2016թ. դեկտեմբերին կնքելով 30 մլն ԱՄՆ դոլարի չապահովված վարկի պայմանագիր՝ ուղղված վերականգնվող էներգետիկայի և էներգաարդյունավետ ծրագրերի ֆինանսավորմանը:

ՕՊԵԿ-ի Միջազգային զարգացման հիմնադրամ (OFID)

2015թ. հունիսին Ամերիաբանկը և հիմնադրամը կնքեցին 20 մլն ԱՄՆ դոլարի երկարաժամկետ վարկային պայմանագիր՝ նախատեսված Հայաստանում փոքր և միջին ձեռնարկությունների ֆինանսավորման համար:

Սնծովյան առևտրի և զարգացման բանկ (BSTDB)

Ամերիաբանկի և Սնծովյան բանկի համագործակցությունն սկսվեց 2014թ., երբ կնքվեց մանդատային համաձայնագիր՝ 6 տարի ժամկետով, որի շրջանակներում Ամերիաբանկին տրամադրվեց 10 մլն ԱՄՆ դոլարի վարկ՝ փոքր և միջին ձեռնարկատիրության ֆինանսավորման համար:

**ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱԿՆԱՐԿ
ՄՐՑԱՆԱԿՆԵՐ**

2010թ-ից ի վեր յուրաքանչյուր տարի Ամերիաբանկն արժանանում է Euromoney ամսագրի (2017, 2016, 2014, 2012, 2011) և Financial Times-ի The Banker ամսագրի (2017, 2016, 2015, 2013, 2010) մրցանակների: Վեց տարի անընդմեջ՝ սկսած 2012թ-ից, բանկն արժանանում է Global Finance-ի մրցանակների մի քանի կարևոր անվանակարգերում, մասնավորապես՝ Հայաստանում արտարժույթ փոխանակող լավագույն բանկ, Հայաստանի լավագույն բանկ առևտրի ֆինանսավորման ոլորտում, Հայաստանի լավագույն ենթապահառու բանկ, Հայաստանի լավագույն ներդրումային բանկ և Հայաստանի լավագույն բանկ: 2017թ. Ամերիաբանկը **երկրորդ տարին անընդմեջ** ճանաչվեց Հայաստանի լավագույն բանկ երեք հեղինակավոր հրատարակությունների կողմից՝ Euromoney, Global Finance և The Banker: Շեշտենք, որ Global Finance ամսագիրն Ամերիաբանկը Հայաստանում տարվա բանկ է ճանաչում արդեն **վեցերորդ տարին անընդմեջ** և երկրորդ տարին անընդմեջ՝ լավագույն ներդրումային բանկ: Սա հատկապես ուշագրավ է, եթե հաշվի առնենք, որ «Լավագույն ներդրումային բանկ» անվանակարգը Հայաստանում կիրառվում է ընդամենը երկու տարի:

Բանկը միջազգային պարբերականների և գործընկերների մրցանակներին է արժանացել նաև առանձին գործառնական ոլորտներում, մասնավորապես, Միթիբանկի STP Award 2015 և STP Award 2016 մրցանակների միջազգային գործարքների անթերի կատարման համար: Միթիբանկը մրցանակը շնորհում է աշխարհի տարբեր երկրներում գտնվող լավագույն գործընկեր բանկերին՝ որպես հատուկ մրցանակ տվյալ բանկերի կողմից միջազգային գործարքների քանակական և որակական ամենաբարձր չափանիշների ապահովման համար: Եվս մեկ մրցանակ «Հայաստանի լավագույն ներդրումային բանկ 2017», այս անգամ Cbonds գործակալությունից, որն Ամերիաբանկը նաև ճանաչեց Հայաստանում պարտատուներ թողարկող առաջատար բանկ ըստ 2016թ. արդյունքների: Իսկ ՎԶԵԲ-ն Ամերիաբանկին շնորհեց «Շրջակա միջավայրի և սոցիալական նորամուծությունների որակե մրցանակը 2017» իր տարեկան ժողովի ժամանակ:



**5 անգամ ճանաչվել է
լավագույն բանկ**



**5 անգամ արժանացել է
գերազանցության միցանակի**

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱԿՆԱՐԿ

ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

2015թ Ամերիաբանկն առաջին բանկն էր Հայաստանի բանկային համակարգի պատմության մեջ, որը գերազանցեց ակտիվների 1 մլրդ ԱՄՆ դոլարի շեմը:

2017թ բանկը վերահաստատեց առաջատարի իր դիրքը՝ 677.7 մլրդ ՀՀ դրամի ակտիվներով: Հատկանշական է, որ ըստ ակտիվների Բանկը եղել է համակարգի առաջատարը 2013թ 1-ին եռամսյակից ի վեր: 2017թ տարեվերջի դրությամբ Ամերիաբանկը ՀՀ բանկային համակարգի **անվիճելի առաջատարն** է բոլոր հիմնական ֆինանսական ցուցանիշներով:

Վարկային պորտֆելը (ներառյալ լիզինգը և ֆակտորինգը) կազմել է 475.5 մլրդ ՀՀ դրամ, պարտավորությունները՝ 607.8 մլրդ ՀՀ դրամ: Ամերիաբանկի կապիտալն աճել է 8.6%-ով՝ կազմելով 69.9 մլրդ ՀՀ դրամ: 2017թ վերջին Բանկի զուտ շահույթը կազմում էր 7.6 մլրդ ՀՀ դրամ:

Չորրորդ տարին անընդմեջ Ամերիաբանկն առաջատարն է ըստ ակտիվների, վարկերի և պարտավորությունների::

Ակտիվներ
մլն ՀՀ դրամ



Կապիտալ
մլն ՀՀ դրամ



Վարկեր
մլն ՀՀ դրամ



Պարտավորություններ
մլն ՀՀ դրամ



Շահույթ
մլն ՀՀ դրամ



Տեխնոլոգիաների մշակում

Ամերիաբանկը նպատակ ունի մշտապես կատարելագործել իր հաճախորդներին տրամադրվող ծառայությունները և ապահովել առավելագույն հարմարություն: Նորարարությունը մշտապես եղել է բանկի առաքելության անբաժանելի մաս՝ որպես զարգացման շարժիչ ուժ: Բանկի համար իր հաճախորդները նաև գործընկերներ են, ովքեր արժանի են ամենանորարարական, համապարփակ, բարձրորակ ֆինանսական լուծումներին: Սա վերաբերում է թե՛ անհատներին, թե՛ կազմակերպություններին, թե՛ ներքին, թե՛ արտաքին շուկայում: Բանկը մշտապես ներդրումներ է կատարում հետազոտությունների և մշակումների մեջ՝ նպատակ ունենալով բանկային գործարքները դարձնել ավելի ճկուն, կատարելագործել սպասարկումը թվայնացման միջոցով, և տրամադրել հաճախորդի պահանջներին համապատասխան հատուկ մշակված անհատական ֆինանսական ծառայություններ (օրինակ՝ հատուկ առաջարկ տնտեսության մի շարք ոլորտների աշխատակիցների համար, ուղղորդման պարզավճարներ, էներգախնայող լուծումների ձեռքբերման համար նախատեսված վարկերի հատուկ սակագներ և այլն): Ամերիաբանկի նորարարական քաղաքականությունները հիմնված են հետևյալ երեք սկզբունքների վրա.

- Նորարարության ընդհանուր քաղաքականության ու բանկի ռազմավարական նպատակների, ընթացիկ զարգացման համաձայնեցում
- Ուղղվածություն դեպի միջազգային լավագույն փորձը, տեխնոլոգիաների շարունակական արդիականացում և ամենաժամանակակից բանկային լուծումների ներդրում
- Հաճախորդակենտրոն մոտեցում և անհատական ժամանակակից լուծումներ

Հավատարիմ մնալով այս երեք սկզբունքներին՝ Ամերիաբանկը կարճ ժամանակում դարձավ Հայաստանի բանկային համակարգի առաջատարներից մեկը: Այսօր Ամերիաբանկը հզոր ֆինանսական կառույց է, որն իր հաճախորդների կողքին է՝ որպես հուսալի գործընկեր՝ պատրաստ դիմակայելու ցանկացած մարտահրավերի ու քայլել ժամանակին համընթաց, հանդես գալ աննախադեպ նորարար լուծումներով ու ամենարդի տեխնոլոգիաներով:

Հաճախորդների փորձառության բարելավում

Արդի բանկային տեխնոլոգիաներին համընթաց՝ Ամերիաբանկը ձգտում է իր հաճախորդներին տրամադրել առավել նորարար լուծումներ: 2017թ. բանկն իրականացրեց մի շարք ներքին և արտաքին բարելավումներ, որոնց շնորհիվ թե՛ բանկային, թե՛ հիմնական ոչ բանկային ծառայությունները դարձան ավելի հասանելի, իսկ նրանցից օգտվելը՝ ավելի հեշտ ու հարմար:

Որդեգրելով ցանկացած պահի ցանկացած տեղ հասանելիություն ապահովելու սկզբունքը՝ Ամերիաբանկն ընդլայնեց իր ԱԳՄ-ների, վճարային տերմինալների, կանխիկի մուտքագրման և ելքագրման սարքերի ցանցը (մանրամասների համար տես «Աշխարհագրական տարածում» հատվածը): Բանկը միացավ ՀՀ Արդարադատության նախարարության պետական ծառայությունների մատուցման

միասնական գրասենյակի ծրագրին՝ քաղաքացիներին հնարավորություն ընձեռելով ստանալ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման, իրավաբանական անձանց գրանցման վերաբերյալ տեղեկանքներ և այլ փաստաթղթեր անմիջապես Ամերիաբանկի համապատասխան մասնաճյուղից:

Բանկը նաև հետամուտ է իր թվայնացման ծրագրին՝ ակտիվորեն զարգացնելով հեռահար բանկային ծառայությունները: Մասնավորապես՝ կատարելագործվեցին Ամերիա մոբայլ/օնլայն ծառայությունները՝ ընդգրկելով նոր հնարավորություններ, ներդրվեց մի շարք վճարումների շուրջօրյա ձևակերպման հնարավորությունը: Բանկը նաև ներդրեց հերթերի կառավարման բջջային հավելված, որի միջոցով կարելի է ծառայություններից օգտվելու համար գրանցվել նախօրոք և խուսափել հերթում սպասելուց: Իսկ որպեսզի հաճախորդները կարողանան հեշտությամբ կատարել օնլայն գործարքներ ճանապարհորդության ժամանակ՝ առանց ակտիվացնելու ռոումինգը կամ օգտագործելու բջջային սարքը, կատարելագործվեց տվյալների պաշտպանության 3D Secure համակարգը, և այժմ օնլայն գործարքներ կատարելիս հաճախորդներն անվտանգության ծածկագրերն ստանում են ոչ միայն բջջային սարքին, այլև էլեկտրոնային հասցեին:

Հաճախորդների համար ամենահեշտ, արդյունավետ և հաճելի սպասարկումն ապահովելու համար Ամերիաբանկը շարունակաբար ընդլայնում է Կոնտակտային կենտրոնի միջոցով մատուցվող ծառայությունների ցանկը: 2017թ. այս ցանկում ներառվեցին նաև որոշ վարկատեսակներ: Տարվա հիմնական մարտահրավերներից մեկն էր վարկային նոր պրոդուկտի մշակումը, որի դեպքում վարկերը կտրամադրվեին նախապես հաստատված պայմանների և գումարի սահմաններում, իսկ հաճախորդներին համար մշակվելին անհատական առաջարկներ՝ ապահովելով վարկավորման բոլորովին նոր մակարդակ: Եվ վերջապես, ավարտին է հասցվում բանկի գլխավոր ծրագրերից մեկը՝ իռլանդական CR2 կազմակերպության BankWorld հեռահար սպասարկման բազմաֆունկցիոնալ համակարգի ներդրումը: Այն ոչ միայն նոր մակարդակի կհասցնի հաճախորդների փորձառությունը թվային բանկային ծառայությունների բնագավառում, այլև կներկայացնի ֆինանսական համակարգի համար լիովին նոր գործիքներ:

Ամերիաբանկը մշտապես քայլեր է ձեռնարկում թվայնացման ուղղությամբ: Բանկի հաճախորդների նախընտրանքների և սովորությունների փոփոխության արդյունքում 2017թ. 33%-ով ավելացավ օնլայն և մոբայլ ծառայություններից օգտվողների թիվը, իսկ ինտերնետի միջոցով իրականացվող գործարքների ծավալը՝ 77%-ով: Թվային հարթակների (բանկոմատների, էքսպրես բանկինգի, ինքնասպասարկման տերմինալների) միջոցով իրականացվող գործարքների ընդհանուր ծավալն ավելացավ 32%-ով, մինչդեռ ակտիվությունը մյուս հարթակներում (գործարքներ մասնաճյուղերում, բանկի համապատասխան ստորաբաժանման կողմից ձևակերպվող գործարքներ, հեռախոսային բանկինգ) նվազեց 7%-ով, ինչը հստակ վկայում է, որ Ամերիաբանկի հաճախորդները պատրաստ են անցնել թվային տեխնոլոգիաների:

Ֆինանսական լուծումներ

Ամերիաբանկը նաև աշխատում է հաճախորդներին տրամադրել հատուկ մշակված ֆինանսական լուծումներ, որոնք առավելապես կհամապատասխանեն յուրաքանչյուր սեզմենտի կարիքներին: Մասնավորապես, բանկը շուկայում ներկայացրել է մի քանի նոր ծառայություններ՝ մշակող ընկերության հետ համատեղ ստեղծված «Դրոփս» վճարային գործիք՝ վճարումներն ավտոմատացնելու և դրանց բեռը բաշխելու համար,

«Ասա ընկերոջ» ծրագիրը, որն այժմ ներառում է նաև բրոքերային ծառայությունները, այնպես որ, յուրաքանչյուր ոք կարող է իր ընկերներին խորհուրդ տալ օգտվել Ամերիաբանկի բրոքերային ծառայություններից և պարզևավճար ստանալ:

2016թ. Ամերիաբանկը «Best Card» ՄՊԸ-ի հետ համատեղ հանդես էր եկել «ԱՅՈ» հետվճարային ծրագրով, որին 2017թ. ավելացվեց նաև վարկային բաղադրիչը, և այժմ հաճախորդները կարող են ոչ միայն հետ ստանալ ծախսած գումարի մի մասը, այլև օգտվել Visa AYO Classic և Visa AYO Gold քարտերին բացվող վարկային գծից: Ծրագիրը հնարավորություն է տալիս Ամերիաբանկի քարտերով (բացառությամբ Business և նվեր քարտերի) անկանխիկ վճարում իրականացնելիս ստանալ ծախսած գումարի մինչև 20%-ի չափով հետվճար՝ գործընկեր առևտրի և սպասարկման կետերում: Իսկ լրացուցիչ վարկային բաղադրիչը թույլ է տալիս գնումներ կատարել՝ առանց միջոցների հասանելիության մասին մտահոգվելու:

«ԱրՔա» քարտերի աշխարհագրությունն ընդլայնելու նպատակով Ամերիաբանկը հանդես եկավ «Արքա-Միր» քարտով, որը մշակվել է Ռուսաստանի «Միր» վճարային համակարգի հետ համատեղ, և որի նպատակն է նաև հեշտացնել գործարքների կատարումն այն հաճախորդների համար, ովքեր հաճախակի ճանապարհորդում են դեպի Ռուսաստան գործնական կամ անձնական նպատակներով: Այժմ Ամերիաբանկի «ԱրՔա» քարտատերերը կարող են իրենց քարտն օգտագործել ոչ միայն Հայաստանում, Ռուսաստանում, այլև այն երկրներում, որտեղ ներդրված է «Միր» վճարային համակարգը: Ջարգացնելով հաճախորդների համար անհատականացված ծառայությունների տրամադրումը՝ Ամերիաբանկը հանդես եկավ նոր ՓՄՁ և հիփոթեքային վարկային արշավներով: Արշավների շրջանակներում վարկերի տրամադրումը հիմնված է հաճախորդի վարկային ռիսկի վրա. յուրաքանչյուր հաճախորդին առաջարկվում են անհատական պայմաններ՝ կախված վարկի ժամկետից, ապահովության միջոցից և հաճախորդի եկամտից:

ՎՋԵԲ-ի «Կանայք բիզնեսում» ծրագրի շրջանակներում մշակվեց նոր վարկային պրոդուկտ՝ հատուկ նախատեսված կին գործարարների համար:

Աջհարհագրական տարածում

2017թ. Ամերիաբանկը բացեց երկու նոր մասնաճյուղ՝ «Կումայրի» մասնաճյուղը Հայաստանի երկրորդ քաղաք Գյումրիում և «Քոչար» մասնաճյուղը («Ռիո Մոլ» առևտրի կենտրոնում), որը համալրեց երկար աշխատանքային գրաֆիկ ունեցող մասնաճյուղերի ցանկը: Մենք մասնաճյուղեր ունենք Հայաստանի խոշոր քաղաքներում և մարզկենտրոններում՝ «Վանաձոր» (Լոռի), «Դիլիջան» (Տավուշ), «Քաջարան» (Սյունիք), «Կապան» (Սյունիք), Գյումրի (Շիրակ), ինչպես նաև՝ 8 մասնաճյուղ և գլխամասային գրասենյակը մայրաքաղաքի ամենաբանուկ վայրերում: Բոլոր մասնաճյուղերի և գլխամասի միջև կապն ապահովվում է հատուկ սինխրոնացված համակարգով, որը թույլ է տալիս հաճախորդներին սպասարկվել ցանկացած մասնաճյուղում՝ անկախ նրանից, թե որ մասնաճյուղում են հաշիվ բացել: Մասնաճյուղերի ցանցի զարգացմանը զուգընթաց, որպես ենթակառուցվածքի անբաժանելի մաս, բանկը նաև ընդլայնում և բարելավում է իր բանկոմատների և POS տերմինալների ցանցը՝ ապահովելու համար հեռահար բանկային սպասարկման և ինքնասպասարկման ավելի մեծ հնարավորություններ: Մասնավորապես, 2017թ. բանկը գործարկեց էքսպրես-բանկինգի 3 նոր անկյուն, ընդ որում դրանցից մեկը գտնվում է Գյումրիում՝ բանկի նոր մասնաճյուղում: 2017-ի տարեվերջում բանկն ուներ 122 ԱԳՄ, 1619 վճարային տերմինալ, 255 վիրտուալ վճարային տերմինալ և 39 POS Cash տերմինալ:



ԱԳՄ
122



Գլխամասային
գրասենյակ և
մասնաճյուղեր

Երևան 9
մարզեր 5

Վիրտուալ
ՔՕՏ տերմինալ
255



ՔՕՏ
տերմինալ
1,619



ՔՕՏ
կառնիսիկ
տերմինալ
39



ԿԵՆՏՐՈՆԱՆԱԿ

ՏԵՍԼԱԿԱՆԻ ԿՐԱ՝ ՄԵԾ ՀԵՌԱԿՈՐՈՒԹՅՈՒՆԻՑ
ԴԻՏԱՐԿԵԼՈՎ ՄԻՋԱԿԱՅՐԸ ԵՎ ՄՈՏԻԿԻՑ՝
ԱՐԺԵՔՆԵՐՆ ՈՒ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ



Մակրոտնտեսական նախադրյալներ

2017թ. ՀՀ մակրոտնտեսական միջավայրը զգալիորեն բարելավվել է 2014թ. սկսված ճգնաժամի շրջանից և 2016թ. Ռուսաստանի տնտեսական խնդիրներով անբարենպաստ ազդեցությունից հետո: 2009թ. կտրուկ անկումից հետո տնտեսությունն ունեցավ չափավոր վերականգնում՝ 2010-2015թթ. 4.0% միջին տարեկան աճով, իսկ 2016թ. ունեցավ 0.2% կրճատում: **2017թ., սակայն, աչքի ընկավ ՀՆԱ-ի կտրուկ 7.5% աճով**, որը ոչ միայն Հայաստանի համար ամենաբարձրն է վերջին 10 տարվա ընթացքում, այլև ամենաբարձրն է տարածաշրջանի և Եվրասիական տնտեսական միության այլ երկրների համեմատ:

ՀՀ տնտեսության վրա հնարավոր ազդեցություն ունեցող հիմնական գործոններն էին՝ 2015-2016թթ. համաշխարհային տնտեսության դանդաղ աճը (զարգացող երկրներում և հատկապես Ռուսաստանում), ապրանքների ցածր գները, տարածաշրջանի աշխարհաքաղաքական իրավիճակը: Այս միտումները փոխվեցին 2017թ.: Նավթի գների դանդաղ աճի պայմաններում Ռուսաստանի տնտեսությունը սկսեց վերականգնվել: Ավելացան նաև Հայաստան մտնող տրանսֆերտները, ակտիվացավ արտաքին առևտուրը: Միաժամանակ օտարերկրյա ուղղակի ներդրումների ծավալը մնում է ցածր:

ՀՀ տնտեսության զարգացումը մեծապես կախված է Ռուսաստանի՝ Հայաստանի հիմնական առևտրային գործընկերոջ տնտեսական վիճակից: Ռուսաստանից կախվածությունն ավելի խորացավ Հայաստանի՝ ԵՏՄ-ին անդամակցելուց հետո (2015թ. հունվարին): Որպես ԵՏՄ անդամ՝ Հայաստանն օգտվում է մաքսային և այլ արտոնություններից: 2015-2016թթ. անկումից հետո ԵՏՄ անդամ երկրների արտահանման և ներկրման ծավալն սկսեց աճել: 2014-2016թթ. Ռուսաստանից Հայաստան մտնող մասնավոր փոխանցումների ծավալը 2013թ. համեմատ կրճատվել էր 33.4%-ով (2014թ.՝ 7.8%-ով, 2015թ.՝ 23.2%-ով, 2016թ.՝ 6.1%-ով): 2017թ., սակայն, միտումը փոխվեց, և արձանագրվեց 18.7% աճ, որի շնորհիվ հաջողվեց վերականգնել նախորդ 3 տարվա ընթացքում գրանցված ծավալի կրճատման գրեթե կեսը:

2017թ. ՀՀ ընթացիկ վճարային հաշվեկշռի պակասորդը համեմատաբար փոքր էր, փոխարժեքները և սպառողական գները՝ կայուն: Ակնկալվում է, որ մոտակա 2-3 տարիներին երկրում կգրանցվի չափավոր տնտեսական աճ: Ըստ միջազգային կազմակերպությունների կանխատեսումների՝ 2018թ. տնտեսական աճը կկազմի 2.9-3.5% (2.9% ըստ Արժույթի միջազգային հիմնադրամի, 3.1% ըստ Համաշխարհային բանկի, 3.5% ըստ ՎՋԵԲ-ի):

2017թ. (դեկտեմբերը դեկտեմբերի համեմատ) **սպառողական գների ինդեքսը** կազմել է 102.6%, որը գնաճի Կենտրոնական բանկի կողմից կանխատեսված 4.0% (\pm 1.5%) շեմի սահմաններում է: Նախորդ երկու տարում Հայաստանում գնանկում է գրանցվել: Միննույն ժամանակ գնաճի միջին տարեկան մակարդակը 1.0% էր: Սա գների փոփոխության ամենացածր տարեկան ցուցանիշն է եղել վերջին 12 տարվա ընթացքում, բացառությամբ 2016թ. գրանցված գնանկման: Ցածր գնաճը պայմանավորված էր տարվա ընթացքում բոլոր ապրանքախմբերի համեմատաբար կայուն գներով: Որոշ թանկացումներ պարենային ապրանքների, վառելիքի և ավիափոխադրումների

մասով արձանագրվել են երկրորդ կիսամյակում. դրամ/դոլար փոխարժեքը կայուն էր: 2018թ. սպառողական գների ինդեքսի կտրուկ տատանումներ չեն նախանշվում, այն կլինի գնաճի կանխատեսված սահմաններում:

2017թ. անվանական ՀՆԱ-ն կազմեց 5.58 տրիլիոն ՀՀ դրամ, որը պատմության մեջ ամենաբարձր մակարդակն է: 2017 թ. **իրական ՀՆԱ-ն 17.2%-ով գերազանցում է նախաձգնաժամային (2008թ.) մակարդակը**, սակայն դոլարային արտահայտմամբ անվանական ՀՆԱ-ն դեռևս զիջում է նույն տարվա ցուցանիշին: 2017թ. այն կազմեց 11.56 մլրդ ԱՄՆ դոլար, որն ավելի բարձր է, քան 2015-2016թթ. նույն ցուցանիշը, սակայն 0.4%-ով քիչ, քան 2014թ-ինը, ինչը պայմանավորված է 2014թ. դեկտեմբերին փոխարժեքի տատանումների արդյունքում դրամի՝ դոլարի նկատմամբ 15% արժեզրկմամբ:

2017թ. տնտեսական աճի արագացումը հիմնականում պայմանավորված էր ՀՆԱ-ի աճին նպաստող տնտեսության հիմնական ճյուղերի **ակտիվացմամբ՝ առևտուր** (16.4%, նպաստել է ՀՆԱ-ի աճին 1.7 տոկոսային կետով՝ ի տարբերություն 2016թ. 0.1 տոկոսային կետի) և **արդյունաբերություն** (11.7% աճ, նպաստել է ՀՆԱ-ի աճին 1.1 տոկոսային կետով՝ ի տարբերություն 2016թ. 0.5 տոկոսային կետի): Հիշատակենք նա երեք հատված, որոնք նպաստել են ՀՆԱ-ի աճին 2017թ.՝ **ապրանքների զուտ հարկեր** (նպաստել է 1.0 տոկոսային կետով՝ ի տարբերություն 2016 -0.5-ի), **ֆինանսներ և ապահովագրություն** (1.0 տոկոսային կետ ի տարբերություն 2016թ. 0.1-ի) և **մշակույթ, ժամանց և հանգիստ** (0.9 տոկոսային կետ՝ ի տարբերություն 2016թ. 1.1-ի): Անգամ **գյուղատնտեսության** ոլորտի շարունակական անկման պայմաններում՝ 4.0% 2017թ. և 5.8% 2016թ. (համապատասխանաբար -0.6 և -1.0 տոկոսային կետ ՀՆԱ-ում), տնտեսությունն արձանագրել է բարձր աճ: Հատկանշական է, որ 2017թ.՝ անկումային 5 տարիներից հետո, առաջին անգամ աճ արձանագրեց նաև շինարարության ոլորտը: Սպասարկման այլ ոլորտներից, որոնք արձանագրել են զգալի աճ, առանձնացնենք բեռնափոխադրումների ոլորտը (17.2%), հյուրանոցային և հանրային սննդի ոլորտը (24.7%) և SS ոլորտը (ավելի քան 27%):

Ավելին, նկատվում է տնտեսության առաջատար ճյուղի փոփոխության միտում. **գյուղատնտեսությունը**, որը մինչև 2015թ. առաջատարն էր (2008թ. երկրորդը՝ շինարարությունից հետո, 2011-2015թթ. տարեկան 7.2% աճով), 2016թ. 5.8% անկումից հետո շարունակեց կրճատվել նաև 2017թ.՝ գրանցելով 4.0% անկում: Կրճատումը պայմանավորված էր եղանակային անբարենպաստ պայմանների արդյունքում մշակաբույսերի ենթաճյուղի անկմամբ և 2014թ. գյուղատնտեսական հաշվառման արդյունքներով ճշգրտումներով: Մինչև նույն ժամանակ անասնաբուծությունը և ձկնաբուծությունը շարունակել են աճել: Այդուհանդերձ, գյուղատնտեսությունն առաջատարն է ըստ ՀՆԱ-ի մասնաբաժնի (14.7%): Մասնաբաժինը սկսել էր նվազել 2013թ., երբ կազմում էր 18.4%: 2017թ. իրականացվեցին ոլորտի աճին նպաստող մի շարք ծրագրեր. վերանայվեց գյուղատնտեսության սուբսիդավորման պետական քաղաքականությունը, գործարկվեց պետական աջակցման մի քանի նոր ծրագիր, միջոցներ են ձեռնարկվում՝ խթանելու համար գյուղմթերքի արտահանումը, ներդրվել են լիզինգով ձեռք բերվող գյուղտեխնիկայի տոկոսադրույքների մասնակի սուբսիդավորման պիլոտային ծրագրեր, և այլն: Ակնկալում ենք, որ մոտակա մի քանի տարվա ընթացքում գյուղատնտեսության ոլորտի աճը կվերականգնվի. 2018թ. ծրագրերն արդեն մշակվել են: Կառավարության 2018թ. ծրագրերն ուղղված են անասնաբուծության և կերերի արտադրության ենթաճյուղերի զարգացմանը: ԵՏՄ անդամակցությունը, ինչպես նաև արևմտյան երկրներից Ռուսաստան գյուղմթերքի ներկրման էմբարգոն, նպաստում են հայկական ապրանքների արտահանմանը դեպի Ռուսաստան և խթանում Հայաստանում գյուղմթերքի արտադրությունը:

Շինարարության համար, որն առաջատարն էր մինչև 2008թ., տարին այնքան էլ բարենպաստ կերպով չսկսվեց: Առաջին երկու կիսամյակների արդյունքներով շինարարությունը կարող էր դասվել այն ոլորտների շարքին, որոնք դանդաղեցնում էին տնտեսության աճը (գյուղատնտեսության հետ մեկտեղ): Սկսած 3-րդ եռամսյակից, սակայն, պատկերը սկսեց փոխվել, և տարվա արդյունքներով ոլորտն արձանագրեց 3.1% աճ 4 տարվա անընդմեջ անկումից հետո: Աճին նպաստում էին հիմնականում միջազգային վարկային ծրագրերի հաշվին ֆինանսավորվող նախագծերը՝ չնայած, որ որոշակի դեր ունեն նաև մասնավոր ներդրումները:

ՀՆԱ աճում ամենամեծ ներդրումն ունեցող ոլորտներից մեկը՝ **ֆինանսական և ապահովագրական ծառայությունների** ոլորտը 2011-2014թթ. ընթացքում ամենաարագ աճող ոլորտներից էր : Այդուհանդերձ, մի քանի տարվա երկնիշ աճից հետո 2015թ-ին ոլորտը 7.2%-նոց անկում ապրեց, ինչը հիմնականում պայմանավորված էր տարածաշրջանում տնտեսական աճի տեմպերի անկմամբ և 2014թ-ի վերջում դրամի արժեզրկման ավելացող ռիսկով: 2016թ-ին նշված ոլորտում աճը որոշ չափով վերականգնվեց և կազմեց 3.2%, իսկ 2017թ. աճն զգալի թափ առավ՝ կազմելով 24.7%:

2017թ. ՀՆԱ-ի աճին նպաստող երկու հիմնական ոլորտների՝ **արդյունաբերության** և **առևտրի** աճին որոշ չափով նպաստել է **արտաքին առևտրի ծավալի աճը**: Արդյունաբերության 11.7% աճի գրեթե կեսը ապահովեց երկու ենթաձյուղ՝ խմիչքների և ծխախոտի արտադրությունը, վերջիններս նաև ունեցան իրենց ուղղակի ազդեցությունն արտահանման աճին:

Պահպանվեց նաև 2016թ. սկիզբ առած՝ **արտաքին առևտրի աճը**, որին նախորդել էր զգալի անկում (պայմանավորված Ռուսաստանի տնտեսական վիճակով, մետաղների գների անկմամբ և տարածաշրջանում արժույթների արժեզրկմամբ): 2017թ. արտահանումը ներմուծումը գրանցեցին երկնիշ աճ՝ ավելի քան 25%: Մասնավորապես, արտահանումն աճեց 25.2%-ով՝ պահպանելով երկնիշ տեմպերը, իսկ ներմուծումն ավելացավ 27.8%-ով՝ շարունակելով նախորդ տարվա վերականգնման միտումը: Այդուհանդերձ, չնայած թե՛ արտահանման, թե՛ ներմուծման ավելի քան 20% աճին՝ առևտրային հաշվեկշռի պակասորդը նախորդ տարվա համեմատ ավելացավ՝ հասնելով ՀՆԱ-ի 3.5%-ին (2.3% 2016թ.), որն այնուամենայնիվ դեռ շատ ավելի ցածր է, քան 2008-2014թթ. (միջինը 11.4%):

Հայաստանի **արտաքին պարտքը** 2017թ. կազմում էր ՀՆԱ-ի 47.5%-ը 2016թ. 35.5%-ի համեմատ, գումարային արտահայտմամբ՝ 5,495 մլն ԱՄՆ դոլար՝ 14.3%-ով ավել, քան նախորդ տարի, ընդ որում 89.1%-ը կառավարության պարտքն է (89.5% 2016թ.), մնացած 10.9%՝ Կենտրոնական բանկինը (10.5% նախորդ տարվա համեմատ): Անգամ եթե հաշվի առնենք պարտքի ավելացումը, պարտքի հարաբերությունը ՀՆԱ-ին բարձր ռիսկային չէ՝ ըստ միջազգային կազմակերպությունների գնահատականների: Այդուհանդերձ, 2018թ. կառավարությունը նախատեսում է 2%-ով կրճատել պարտքը: 2017թ. **արտարժույթային պետական պահուստներն** ավելացան 5%-ով՝ կազմելով 2.3 մլրդ ԱՄՆ դոլար (նախորդ տարի՝ 24%, 2.2 մլրդ ԱՄՆ դոլար):

2017թ. Հայաստանը շարունակում էր ակտիվորեն համագործակցել միջազգային կառույցների հետ և տեղաբաշխել ներգրավված միջոցները (ՀԲ, Արժույթի միջազգային հիմնադրամ, ԱԶԲ, ԵՄ): Մասնավորապես, 2017թ. ՀԲ աջակցությամբ իրականացվում էր ավելի քան 20 նախագիծ տնտեսության տարբեր բնագավառներում՝ ճանապարհաշինություն, էներգետիկա, գյուղատնտեսություն, կրթություն, առողջապահություն, ոռոգման համակարգեր, գյուղական համայնքների զարգացում, հանրային կառավարում և դատական համակարգ: Ասիական զարգացման բանկի մշակած՝ 2017-2019թթ. երկրի գործառնությունների բիզնես պլանը (ԵԳԲ) կազմվել է այնպես, որ


ներդաշնակ լինի ՀՀ 2014-2025թթ. զարգացման ռազմավարությանը: ԵԳԲ-ն համահունչ է ԱԶԲ-ի 2020թ. Ռազմավարության միջնաժամկետ գնահատմամբ նախանշված առաջնահերթ խնդիրներին, ինչպես նաև ԱԶԲ-ի մշակված՝ Հայաստանի 2014-2018թթ. գործընկերության ռազմավարությամբ սահմանված առաջնային նպատակներին: Հայաստանում ՎԶԵԲ-ի քաղաքականությունն ուղղված է հետևյալ ռազմավարական նպատակների իրականացմանը՝ մասնավոր հատվածի մրցունակության բարձրացում՝ կարողությունների ամրապնդման, ընկերությունների թափանցիկության բարձրացման և գործարար միջավայրի բարելավման միջոցով, կապիտալ շուկաների զարգացում, ազգային արժույթով ֆինանսավորման խրախուսում, կայուն և առևտրայնացված կոմունալ ծառայությունների զարգացում:

Վերջին տարիների ընթացքում ՀՀ ձեռնամուխ է եղել երկրում **ներդրումային և գործարար միջավայրի բարելավմանը**: Ըստ ՀԲ Doing Business 2017 զեկույցի՝ Հայաստանը զբաղեցնում է 47-րդ դիրքը 190 երկրների շարքում: Եվ սակայն նախորդ տարվա համեմատ արձանագրվել է անկում, բայց որոշ չափով բարելավվել է Distance to Frontier ցուցանիշը (72.51 2017թ. 71.92 համեմատ): Հայաստանը 6 կետով բարելավել է իր դիրքը Համաշխարհային տնտեսական ֆորումի 2017-2018թթ. մրցունակության ինդեքսում՝ զբաղեցնելով 73-րդ հորիզոնականը նախորդ տարվա 79-ի համեմատ: Heritage Foundation հետազոտական կենտրոնի 2018թ. տնտեսական ազատության ինդեքսում Հայաստանն զբաղեցնում է 44-րդ հորիզոնականը և 20-րդը՝ տարածաշրջանում: 2017թ. նկատվում էին դրական միտումներ օտարերկրյա ուղղակի ներդրումների առումով անշարժ գույքի ոլորտում: Ձուտ ներդրումներն այս ոլորտում կազմեցին 193 մլն ԱՄՆ դոլար, որն ավելի բարձր է, քան նախորդ երկու տարիներին, բայց ավելի ցածր, քան 2008-2014թթ.:


Համախառն Ներքին Արդյունք (ՀՆԱ)



Տնտեսության ճյուղերի մասնաբաժինները ՀՆԱ-ում



Ներմուծում և արտահանում
մլն ԱՄՆ դոլար




■ Արտահանում ■ Ներմուծում

Փոխարժեք և ՍԳԻ
ՀՀ դրամ/ԱՄՆ դոլար փոխարժեք

	2013	2014	2015	2016	2017
Միջին տարեկան	409.63	415.92	477.92	480.49	482.72
Տարվա վերջին	405.64	474.97	483.75	483.94	484.10
ՍԳԻ % <small>(ԴՆԱյանքերից նախորդ տարվա ԴՆԱյանքերի համեմատ)</small>					

Առևտրի հաշվեկշիռ
մլն ԱՄՆ դոլար



**ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՏՎԱԾ**

2017թ. ՀՀ բանկային հատվածն արձանագրեց բոլոր հիմնական ցուցանիշների աճ: Անգամ չնայած նրան, որ այս տարվա աճը նախորդ տարվա համեմատ փոքր էր՝ բանկային համակարգի ակտիվներն ավելացան գրեթե 9%-ով, վարկերը՝ 5%-ով: Աճին զգալիորեն նպաստեցին ֆինանսական հատվածի մյուս մասնակիցները՝ վարկային կազմակերպությունները, ապահովագրական ընկերությունները. մասնավորապես, վարկային կազմակերպությունների ակտիվներն ավելացան 21%-ով, վարկերը՝ 15%-ով: Համապատասխանաբար ապահովագրական ընկերությունները և այլ ֆինանսական կազմակերպությունները ևս գրանցեցին որոշակի աճ: Կենսաթոշակային հիմնադրամներում կուտակված միջոցներն ավելացան շուրջ 70%-ով՝ կազմելով 105 մլրդ ՀՀ դրամ կամ ՀՆԱ-ի 2%-ը:

2017թ.՝ հիմնական իրադարձությունները, միտումները և մարտահրավերները

- **Կանոնադրական հիմնադրամի նոր պահանջն** ուժի մեջ մտավ 2017թ. հունվարի 1-ին: Այսուհետ նախկին 5 մլրդ ՀՀ դրամի փոխարեն բանկերի կանոնադրական կապիտալի նվազագույն պահանջը 30 մլրդ ՀՀ դրամ է: Կենտրոնական բանկի տված երկու տարվա ընթացքում բանկերից շատերը կարողացան նոր կապիտալ ներգրավել՝ առկա կամ նոր ներդրողներից:
 - ✓ Մի քանի բանկ նախընտրեց միաձուլման ճանապարհը՝ որպես նվազագույն կապիտալի ավելացման այլընտրանքային միջոց: Արդյունքում երկու տարվա ընթացքում 21 բանկի փոխարեն համակարգում մնաց 17 բանկ:
 - Միաժամանակ, բարձր իրացվելիությունը, մրցակցության թեժացումը և ֆինանսավորման ընդլայնումը թելադրում են շարունակել կապիտալացումը:
 - ✓ Մի քանի բանկ դեռ չի լուծել այս խնդիրը:
 - ✓ Անգամ նրանք, ովքեր լուծել են, միշտ չէ, որ կարողանում են ընդլայնել իրենց գործունեությունը և միաժամանակ պահպանել կապիտալի համարժեքության անհրաժեշտ մակարդակը (2017թ. հայկական բանկերի կապիտալի համարժեքության գործակիցը 19.95%-ից նվազեց մինչև 18.57%, նվազագույն շեմը 12% է):
 - ✓ Թեժ մրցակցությունը, հաճախորդների համար պայքարը և հատկապես խոշոր տնտեսավարող սուբյեկտների շրջանում վարկային ռեսուրսների պահանջարկը բանկերին ստիպում են ավելացնել վարկավորման ծավալը, ինչը դժվար է անել առանց կապիտալացման:
- Սա նշանակում է, որ մոտ ապագայում անխուսափելի են նոր ներդրողների ներգրավումը, նոր միաձուլումները և ձեռքբերումները:

- Բանկային հատվածի **մեկ այլ մարտահրավեր է դոլարիզացիայի բարձր մակարդակը**, երբ տնտեսությունը կարիք ունի միջոցների՝ ազգային արժույթով:
 - ✓ 1999թ. հետո ՀՀ տնտեսության դոլարացումը կտրուկ աճել էր՝ 40%-ից հասնելով 75%-ի, սակայն 2014թ. արժույթային ցնցումից հետո հարաբերակցությունը մի փոքր փոխվեց ի օգուտ դրամային բաղադրիչի:
 - ✓ 2016թ. վերջի դրությամբ դոլարային ավանդների հարաբերակցությունը դրամային ավանդներին 65%/35% էր, 2017թ.՝ 60%/40%:

Դրամային բաղադրիչի աճին զուգահեռ ավելանում են նաև բանկերի՝ ազգային արժույթով վարկեր տրամադրելու հնարավորությունները:

- ՀՀ բանկային համակարգի **նոր միտումներից էրանկային պրոդուկտների և գործընթացների արդիականացումը և թվայնացումը**: Մրցակցության աճը և ամբողջ աշխարհում թվայնացման ակտիվ միտումները՝ տնտեսության բոլոր հատվածներում, նպաստեցին նրան, որ հայկական ընկերությունները ևս սկսեցին մեծ ուշադրություն դարձնել տեխնոլոգիաների զարգացմանը և ներդրումներ կատարեն այդ ուղղությամբ:
 - ✓ Բանկերից շատերն սկսեցին ավելի ակտիվորեն համագործակցել SS ընկերությունների հետ:
 - ✓ Գործունեության ընդլայնումը և հաճախորդների թվի ավելացումը թելադրում են բանկերին վերանայել տվյալների կառավարման համակարգերը և ներդնել մեծածավալ տվյալների կառավարման լուծումներ:
 - ✓ Նոր միտումներից մեկն է անցումը դեպի օնլայն սպասարկում, որի արդյունքում, եթե հաջողվի փոխել հաճախորդների մտածողությունը, կնվազի նաև բանկերի ֆիզիկական ներկայության անհրաժեշտությունը:

Ներկայում բանկերի ջանքերն ուղղված են գործունեության թվայնացմանը, օպտիմալացմանը, ծախսերի կրճատմանը և որակյալ վարկառուների ներգրավմանը:

- **2017թ. բանկերն սկսեցին ակտիվորեն միջոցներ ներգրավել ներքին շուկայում պարտատոմսերի թողարկման միջոցով**:
 - ✓ Մեկ տարվա ընթացքում թողարկված պարտատոմսերի ծավալն ավելի քան կրկնապատկվեց՝ հասնելով 155 մլրդ ՀՀ դրամի՝
 - ✓ նպաստելով Nasdaq OMX Armenia ֆոնդային բորսայում առևտրի աննախադեպ ակտիվացման. 2003թ-ից ի վեր գրանցվել է կորպորատիվ պարտատոմսերի առքուվաճառքի ամենամեծ ծավալը՝
 - ✓ 11 մլրդ ՀՀ դրամ, որին նպաստեցին նաև Կենտրոնական բանկի առաջարկած արտոնությունները:

Ընդհանուր առմամբ, վերջին 2 տարում հայկական թողարկողները բավականին ակտիվ էին: Թողարկողների մեծ մասը բանկեր և վարկային կազմակերպություններ են:

- 2017թ. Հայաստանի ֆոնդային բորսան շարունակում էր աճել՝
 - ✓ Արժեթղթերի շուկայի կապիտալիզացիան ավելացավ 7%-ով՝ հասնելով 143 մլրդ ՀՀ դրամի:
 - ✓ Շատ ակտիվ էր կորպորատիվ պարտատոմսերի շուկան՝ արձանագրելով 83% աճ. կարելի է ասել, որ սա տարվա գլխավոր միտումն էր:
 - ✓ Պետական պարտատոմսերի առքուվաճառքի գործարքները ավելացան 20%-ով: Չափազանց նշանակալի էր ռեպո և սվոպ գործառնությունների աճը՝ 38 անգամ նախորդ տարվա համեմատ:
 - ✓ 2017թ. ապրիլին պետական պարտատոմսերի շուկայի հարթակը տեղափոխվեց Կենտրոնական բանկից Nasdaq OMX, ինչի շնորհիվ հայկական պարտատոմսերը կարող են ավելի տեսանելի ու հասանելի դառնալ արտասահմանյան շուկաներում:
 - ✓ Կարևոր զարգացում էր պետական պարտատոմսերի առցանց առքուվաճառքի հարթակի ներդնումը, որը թույլ է տալիս անհատներին պետական պարտատոմսեր գնել առցանց ռեժիմում՝ առանց որևէ հիմնարկ այցելելու:

2018թ. հայկական ֆոնդային բորսան նախատեսում է իրականացնել միջոցների զանգվածային ներգրավման ծրագիր (crowdfunding)՝ որպես կապիտալի ներգրավման գործիք սկսնակ ձեռներեցների համար, որը նաև նրանց համար հասանելի կդարձնի օտարերկրյա ներդրումները:

- 2017թ. մայիսին գործարկվեց հայկական «ԱրՔա» և ռուսական «Միր» վճարային համակարգերի համատեղ քարտային ծրագիրը, որի շրջանակներում սկսած՝ 2017թ. հուլիսից «ԱրՔա» քարտերն սպասարկվում են «Միր» համակարգի կողմից, և հակառակը:
 - ✓ Հուլիսի 7-ին Կենտրոնական բանկը գրանցեց «Միր» համակարգը որպես վճարահաշվարկային համակարգ:
 - ✓ Համապատասխանաբար, Ռուսաստանի կարգավորող մարմինը որպես վճարահաշվարկային համակարգ գրանցեց «ԱրՔա» համակարգը:
 - ✓ Երկու երկրների ազգային վճարային համակարգերի ինտեգրման պիլոտային նախագիծն ավարտվեց օգոստոսին, իսկ ներկայում «ԱրՔա» և «Միր» քարտերը որպես վճարային գործիք ընդունվում և սպասարկվում են թե՛ Հայաստանում, թե՛ Ռուսաստանում: Բոլոր հաշվարկներն իրականացվում են ազգային արժույթներով՝ դրամով և ռուբլիով (Ամերիաբանկը հանդես է գալիս որպես հաշվարկային բանկ հայկական կողմից): «ԱրՔա-Միր» ծրագիրը առաջին և առայժմ միակ նմանատիպ ծրագիրն է ԵՏՄ տարածքում:

Հայաստանում գործող ֆինանսական հաստատությունները

2016 2017

	Բանկեր, այդ թվում	19	17
	Առևտրային բանկեր Համահայկական բանկ ²	18 ¹ 1	17 -
	Վարկային կազմակերպություններ	34	35
	Ապահովագրական ընկերություններ	7	7
	Հիմնադրամներ, ներառյալ	12	25
	▶ Կենսաթոշակային	8	8
	▶ Ներդրումային	2	15
	▶ Վենչուրային	1	2

Fitch և Moody's գործակալությունների կանխատեսումները ՀՀ բանկային համակարգի վերաբերյալ

- Fitch Ratings միջազգային վարկանշային գործակալությունը 2018թ. ՀՀ բանկային համակարգին շնորհել է «կայուն» կանխատեսում:
- Moody's գործակալությունը վերահաստատեց երկարաժամկետ պարտավորություններ թողարկողի B1 վարկանիշը՝ «կայուն» հեռանկարով: B1 վարկանիշը հիմնվում է տնտեսական և ֆինանսական կայուն կառավարման, արդյունավետ դրամավարկային քաղաքականության և բարձր վարկունակության վրա:

Բանկային համակարգի շարունակական աճ 2017թ.

2017թ. ևս մեկ բարեհաջող տարի էր ՀՀ բանկային հատվածի համար՝ աճ արձանագրվեց բոլոր հիմնական ցուցանիշներով:

Տարվա ընթացքում բանկային համակարգի **կապիտալը** շարունակում էր աճել՝ ավելանալով 6.1%-ով և կազմելով 701 մլրդ ՀՀ դրամ կամ ՀՆԱ-ի 12.6%-ը:

Կապիտալի աճին զուգահեռ աճում էին նաև բանկային համակարգի **ակտիվները** և **պարտավորությունները**՝ մասնավորապես, **ակտիվներն** ավելացան 8.5%-ով՝ կազմելով 4.4 տրիլիոն ՀՀ դրամ, **վարկերը**՝ 4.9%-ով՝ կազմելով 2.6 տրիլիոն ՀՀ դրամ: Ընդհանուր առմամբ, բանկային համակարգի ակտիվները կազմեցին ՀՆԱ-ի 78.2%-ը, վարկերը՝ 47.4%-ը:

Բանկերի **պարտավորություններն** ավելացան 9.0%-ով՝ կազմելով 3.7 տրիլիոն ՀՀ դրամ կամ ՀՆԱ-ի 65.6%-ը, **պարտավորությունները հաճախորդների նկատմամբ**՝ 12.4%-ով՝ կազմելով 2.6 տրիլիոն ՀՀ դրամ: Ինչպես նշվեց, 2017թ. բանկային համակարգի մասնակիցներն սկսեցին ակտիվորեն միջոցներ ներգրավել արժեթղթերի թողարկման միջոցով, ուստի, **եթե հաշվի առնենք բանկերի կողմից թողարկված արժեթղթերը**, աճը կկազմի 15.6%, բացարձակ արժեքով՝ 2.7 տրիլիոն ՀՀ դրամ:

Համակարգի **ընդհանուր շահույթը** կազմեց 38.3 մլրդ ՀՀ դրամ 2016թ. 33.0 մլրդ համեմատ՝ աճելով 16.2%-ով: 2017թ. երկու բանկ տարին ավարտեց վնասով՝ նախորդ տարվա 4-ի համեմատ:

Ներկայում բանկային համակարգի **իրացվելիության** և **կապիտալի** ցուցանիշները բավարար մակարդակի վրա են՝ ապահովելու համար համակարգի ֆինանսական կայունությունը: Սրա մասին են վկայում նաև բանկերի նորմատիվային ցուցանիշները, համաձայն որոնց՝ բոլոր բանկերն ունեն տնտեսության ֆինանսավորման և նոր միջոցներ ներգրավելու մեծ ներուժ:

- Բանկային համակարգի **կապիտալի համարժեքության ցուցանիշը** կազմում էր 18.6%, ՀՀ ԿԲ նվազագույն նորմատիվը՝ 12%:
- **Իրացվելիության** ցուցանիշները ևս բավականին բարձր են՝ Ն2.1՝ 32.2% (ՀՀ ԿԲ նորմատիվ՝ 15%), Ն2.2՝ 141.7% (ՀՀ ԿԲ նորմատիվ՝ 60%):

Վարկային պորտֆելի որակը


Չաշխատող վարկերը 2017թ. մնում էին բանկային համակարգի հիմնական մարտահրավերներից մեկը, սակայն նախորդ տարվա համեմատ նկատվում է որոշակի բարելավում: Տարեվերջի դրությամբ այս ցուցանիշը 5.5% էր (ըստ ՀՀ ԿԲ տվյալների): Նշենք, որ որոշ բանկերի չաշխատող վարկերը բավականին բարձր մակարդակի վրա են, սակայն համակարգի ընդհանուր վերականգնման պայմաններում բանկերը կարողանում են ոչ միայն զսպել ցուցանիշի աճը, այլև մաքրել պորտֆելները ժամկետանց վարկերից: Մրան նպաստող միջոցների թվում են չաշխատող վարկերի դուրսգրումը, վարկավորման ծավալի աճը, անհուսալի վարկերի մասնակի վերադարձը: Ըստ ՀՀ ԿԲ տվյալների՝ բանկային համակարգում օտարերկրյա կապիտալի մասնաբաժինը կազմում է 61.8%: Հայկական բանկային հատվածի նկատմամբ վստահության և հետաքրքրության մասին են վկայում նաև միջազգային ֆինանսական հաստատություններից ներգրավված երկարաժամկետ միջոցները և համատեղ ծրագրերը՝ ուղղված Հայաստանի տնտեսության զարգացմանը: 2017թ. բանկերը շարունակում էին երկարաժամկետ միջոցների ներգրավումը՝ տնտեսության տարբեր ճյուղերի ֆինանսավորման համար:

ՀՀ բանկային համակարգի հիմնական ցուցանիշները

Ակտիվներ
մլրդ ՀՀ դրամ



Վարկեր
մլրդ ՀՀ դրամ




Պարտավորություններ հաճախորդներին
ներառյալ բանկի կողմից թողարկված արժեթղթերը
մլրդ ՀՀ դրամ




ՀՀ բանկային համակարգի հիմնական ցուցանիշները

Շահույթ
մլրդ ՀՀ դրամ




Կապիտալ
մլրդ ՀՀ դրամ




ՀՀ բանկային համակարգի քանակական ցուցանիշները


Չաշխատող վարկեր



Կապիտալի եկամտաբերություն (ROE)




Ակտիվների եկամտաբերություն (ROA)




Գործունեության հիմնական ցուցանիշների աճի ցուցանիշը


Ակտիվներ



Վարկեր



Պարտավորություններ հաճախորդներին
 ներառյալ բանկի կողմից թողարկված արժեթղթերը



Իրավական դաշտ

2017թ. մի շարք փոփոխություններ և լրացումներ կատարվեցին ՀՀ որոշ իրավական ակտերում, մասնավորապես՝ ՀՀ Քաղաքացիական օրենսգրքում, «Արժույթային կարգավորման և արժույթային վերահսկման մասին» ՀՀ օրենքում, «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքում, Քաղաքացիական դատավարության օրենսգրքում, ինչպես նաև ՀՀ ԿԲ նոր՝ Բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից երաշխավորների հետ գործարար վարվելակերպի կանոնների կիրառման եղանակները և ընթացակարգի պահանջները կանոնակարգ 8/06-ում:

Փոփոխվել են հետևյալ դրույթները՝

- **ՀՀ Քաղաքացիական օրենսգիրք՝** հոդված 372 (տուժանքը պակասեցնելը): Ըստ նոր կարգավորման՝ կիրառվող առավելագույն տուժանքը չի կարող գերազանցել ՀՀ ԿԲ հաշվարկային դրույքի քառապատիկը, իսկ կիրառված տուժանքի ընդհանուր գումարը չի կարող գերազանցել դրա կիրառման օրվա դրությամբ պարտքի մայր գումարի մնացորդը:
- **Արժույթային կարգավորման և արժույթային վերահսկման մասին օրենք՝** հոդված 6, կետ 2՝ համաձայն որի՝ արտարժույթային վարկերի և ավանդների տոկոսները հաճախորդի ցանկությամբ կարող են վճարվել նույն արժույթով, ինչ վարկը կամ ավանդը:
- **Դատական ակտերի հարկադիր կատարման մասին օրենք՝** դատարանների և հարկադիր կատարման ծառայության գործառույթների կանոնակարգում, մասնավորապես, զգալի փոփոխություններ են կատարվել հոդվածներ 23-ում և 31-ում (դատական ակտերի կազմում, կատարման ներկայացում և վերադարձ): Նշենք մի կարևոր փոփոխություն, համաձայն որի՝ դատական ակտերի հարկադիր կատարման ծառայությունն իրավունք է ստանում որոշել բռնագանձման ենթակա գույքը, ինչպես նաև բռնագանձման ենթակա գումարի չափը:
- **Քաղաքացիական դատավարության օրենսգիրք՝** մինչև 2 մլն ՀՀ դրամի չափով պահանջների քննություն մինչև մեկ ամսվա ընթացքում, իսկ համապատասխան դատական որոշման ուժի մեջ մտնելը՝ 15 օրվա ընթացքում: Բացի դրանից, ըստ նոր փոփոխությունների՝ ընդհանուր իրավասության դատարանն իրավունք ունի կիրառել պահանջների քննության վերոնշյալ պարզեցված ընթացակարգը, եթե առկա է կողմերի համաձայնությունը, և դատարանին պատասխան ներկայացնելու համար սահմանված ժամկետում առարկություն չի բարձրացվում:
- **Բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից երաշխավորների հետ գործարար վարվելակերպի կանոնների կիրառման եղանակները և ընթացակարգի պահանջները կանոնակարգ 8/06:**Նոր ընդունված կանոնակարգ, որը սահմանում է երաշխավորների հետ փոխհարաբերությունների կանոնները և Կանոնակարգով սահմանված ժամկետում, համաձայնեցված եղանակով երաշխավորներին տրամադրվող տեղեկությունները:


ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԱՄԵՐԻԱԲԱՆԿԻ ԴԻՐՔԸ ՀՀ ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

Վերջին երեք տարվա ընթացքում Ամերիաբանկն արձանագրել է աճի բարձր տեմպեր, որոնք զգալիորեն գերազանցել են միջին շուկայական ցուցանիշը: Անգամ եթե որոշ ցուցանիշներ արձարագրել են որոշակի դանդաղում կամ անկում, բանկը պահպանել է առաջատարի իր դիրքը:



2017թ. վերջի դրությամբ Ամերիաբանկը համակարգի բացարձակ առաջատարն է ըստ կապիտալի, գուտ շահույթի, ակտիվների, վարկերի, պարտավորությունների, այդ թվում՝ հաճախորդների նկատմամբ պարտավորությունների (ներառյալ բանկի կողից թողարկված արժեթղթերը): Վերջին երեք տարում՝ 2014թ-ից 2017թ., Բանկը 65.1%-ով ավելացրեց իր կապիտալը՝ իր մասնաբաժինը հասցնելով 10%-ի: Ակտիվներն ու պարտավորությունները նույն ժամանակահատվածում ավելացան 70.1%-ով՝ կազմելով բանկային հատվածի համապատասխանաբար 15.5%-ը և 16.6%-ը, վարկերը և հաճախորդների նկատմամբ պարտավորությունները ևս աճեցին (ինչպես բանկի թողարկած արժեթղթերի հետ այնպես էլ առանց դրանց)՝ համապատասխանաբար 66.2%-ով (18% մասնաբաժին) և 79.8%-ով, իսկ արժեթղթերով հանդերձ՝ 99.4%-ով (14.7% մասնաբաժին, արժեթղթերով՝ 15.4%):




Բանկի հիմնական ֆինանսական ցուցանիշների և շուկայի մասնաբաժինների դինամիկան ներկայացված է գծապատկերներում:

- Դեռ 2015թ. Ամերիաբանկը առաջատարների շարքում էր ըստ սեփական կապիտալի (ներգրավելով նոր ներդրողի), իսկ 2016 և 2017թթ. բանկն ավելի ամրապնդեց իր դիրքը: Մասնավորապես, 2017թ. բանկի ընդհանուր կապիտալը նախորդ տարվա համեմատ ավելացավ 5.5 մլրդ ՀՀ դրամով կամ 8.6%-ով: Մասնաբաժինն ըստ այս ցուցանիշի կազմեց 10.0% 2016թ. 9.8%-ի համեմատ: Բանկային համակարգում այս ցուցանիշի աճը 6.1% էր:
- 2017թ. Բանկի շահույթը նախորդ տարվա համեմատ ավելացավ 23.2%-ով, մինչդեռ բանկային համակարգի ցուցանիշն ընդամենը 16.2% էր:
- Ամերիաբանկի ակտիվների և կապիտալի եկամտաբերության ցուցանիշերը զգալիորեն գերազանցում են բանկային ոլորտի միջին ցուցանիշները. շահութաբերության ցուցանիշները մշտապես բանկի ուշադրության կենտրոնում են:
- Բանկը նաև մեծ ուշադրություն է դարձնում իր վարկային պորտֆելի որակին՝ զսպելով և կառավարելով չաշխատող վարկերի ցուցանիշը: Ներկա պահի դրությամբ Ամերիաբանկի չաշխատող վարկերի ցուցանիշը երկու անգամ ավելի ցածր է, քանի բանկային համակարգի միջինը:

Կապիտալի եկամտաբերության (ROE) դինամիկան



Ակտիվների եկամտաբերության (ROA) դինամիկան



ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ԲԻԶՆԵՍ ՍՈՂԵԼԸ ԵՎ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ

2017 թվականը ևս բավականին հաջող տարի եղավ Ամերիաբանկի համար: Բանկն ամրապնդեց իր դիրքը ՀՀ առաջատար բանկերի շարքում՝ որպես կայուն, ժամանակակից, իրացվելի, արագ աճող և մրցունակ ֆինանսական հաստատություն՝ հետագա աճի և զարգացման հսկայական ներուժով:

Առանձնակի ուշադրություն դարձնելով սպասարկմանը և որակին՝ բանկն արդեն իսկ ամուր դիրք է գրավել որպես առաջատար ըստ նորարարության և սպասարկման չափանիշների: Բանկը շարունակ կատարելագործում է աշխատանքի կազմակերպման, կորպորատիվ կառավարման և հաճախորդների սպասարկման համակարգը և մոտեցումները, ձգտում ընդլայնել առաջարկվող ծառայությունների և պրոդուկտների ցանկը, ներգրավել հմուտ ու արհեստավարժ անձնակազմ և ապահովել պահանջվող ռեսուրսների մշտական առկայությունը: Ամերիաբանկը վերահաստատում է իր որդեգրած ռազմավարությունը՝ դառնալ ունիվերսալ բանկ: Այս առումով 2017թ. հսկայական աշխատանք կատարվեց՝ ընդլայնվեց մանրածախ ծառայությունների ցանկը, մասնաճյուղերի և ԱԳՄ-ների ցանցը, և զգալի փոփոխություններ տեղի ունեցան մանրածախ դեպարտամենտի կառուցվածքում՝ գործունեության այս ուղղությունն ակտիվացնելու նպատակով:

Մեր ներկայիս ռազմավարության գլխավոր խնդիրն է բանկի առաջատար դիրքերի պահպանումը և գործունեության բոլոր ուղղություններով, մասնավորապես.

- Լինել բացարձակ առաջատարը սպասարկման որակով՝ շարունակելով 2008թ. որդեգրված հաճախորդակենտրոն քաղաքականությունը
- Լինել առաջատարը նորարարություններով՝ առաջարկելով լավագույն միջազգային բանկային լուծումները և ժամանակին արձագանքելով հաճախորդի արագ փոփոխվող կարիքներին
- Դառնալ ամենամեծ ունիվերսալ բանկն ըստ ակտիվների՝ պահպանելով կորպորատիվ, մանրածախ և ՓՄՁ պորտֆելների հավասարակշռված կառուցվածք
- Պահպանել բանկային համակարգի առաջատարի դիրքը բոլոր հիմնական ֆինանսական ցուցանիշներով
- Բարձրացնել բանկի ֆինանսական արդյունավետությունը կապիտալի շահութաբերության և ծախսերի ու եկամուտների հարաբերության տեսանկյունից

- Բարձր պահել բրենդի հեղինակությունը և միջոցներ ձեռնարկել բրենդի մասին իրազեկվածությունն ու դրական ընկալումն ավելացնելու նպատակով
- Ընդլայնել ծառայությունների տեսականին՝ հաճախորդների ամենատարբեր կարիքները բավարարելու համար
- Շարունակաբար խթանել հեռահար բանկային ծառայությունները, ներդրումներ կատարել՝ այդ ուղղությունը զարգացնելու համար
- Լայնորեն կիրառել կորպորատիվ կառավարման լավագույն փորձը
- Ջարկ տալ անձնակազմի լոյալությանն ու մոտիվացմանն ուղղված ծրագրերին՝ ներդրումներ կատարելով մարդկային կապիտալի մեջ և պատրաստելով նոր տաղանդների


Առաքելությունը

Բարելավել կյանքի որակը՝

- Մեր հաճախորդներին տրամադրելով միջազգային որակի ֆինանսական ծառայություններ և գործարար լուծումներ
- Իրականացնելով հասարակության բարօրության համար նշանակալի բիզնես և սոցիալական ծրագրեր
- Ձևավորելով յուրահատուկ կորպորատիվ մշակույթ և միջազգային ընկերության զարգացման մեր սեփական մոդելը՝ միավորելով հաջողակ մարդկանց
- Շարունակաբար ավելացնելով մեր բաժնետիրական արժեքը

Տեսլականը

- Դառնալ ֆինանսական և գործարար լուծումներ տրամադրող միջազգային ընկերություն:
- Լինել թիրախային շուկաների առաջատարն սպասարկման որակով ու արդյունավետությամբ՝ ներգրավելով ընդհանուր արժեքներ կրող բացառիկ մարդկանց:



Մեր առաքելությամբ ու տեսլականով սահմանված խնդիրները լուծելու և մեր ռազմավարական նպատակներին հասնելու համար մենք նախանշել ենք հետևյալ կարճաժամկետ և միջնաժամկետ ծրագրերը՝

- Ավելացնել ակտիվները, զուտ շահույթը և հաճախորդների բազան
- Ապահովել հիմնական ֆինանսական ցուցանիշների առաջանցիկ աճ, միաժամանակ լինել առաջատար ըստ արդյունավետության ցուցանիշների
- Առանձնակի ուշադրություն դարձնել մանրածախ և ՓՄՁ ծառայություններին, շարունակել զարգացնել ներդրումային բանկային ծառայությունները
- Ընդլայնել քարտային ծառայությունները և դրանց դերը բանկի գործունեության մեջ
- Բարձրացնել սպասարկման որակը
- Զարկ տալ հեռահար սպասարկման լուծումներին, հանդես գալ նոր բանկային և ներդրումային ծառայություններով, նորարար լուծումներով (բազմաֆունկցիոնալ սպասարկման համակարգեր և այլն)՝ միջազգային լավագույն փորձին համահունչ
- Ապահովել ակտիվների արդյունավետ տեղաբաշխում և դիվերսիֆիկացում
- Ներդնել վարկային որոշումների կայացման արդյունավետ գործիքներ (սքորինգ)
- Շարունակաբար բարձրացնել ֆինանսական կայունությունը և հավելյալ ապահովություն ստեղծել բոլոր շահառուների համար՝ վերանայելով ռիսկերի պարամետրերը
- Արդյունավետորեն կառավարել բանկի հիմնական ռիսկերը, ապահովել վարկային ռիսկի ցածր մակարդակ, բարելավել շուկայական, գործառնական և այլ ռիսկերի գնահատման և կառավարման համակարգերը
- Շարունակաբար բարձրացնել անձնակազմի մասնագիտական զարգացումը և մոտիվացումը
- Նախապատրաստել առաջնային հրապարակային տեղաբաշխման ծրագիրը և դառնալ առաջին հայկական բանկը, որը պաշտոնապես կցուցակվի կապիտալի առաջատար միջազգային շուկաներում
- Նպաստել համայնքի աճին և սոցիալական խնդիրների լուծմանը՝ իրականացնելով կորպորատիվ սոցիալական պատասխանատվություն՝ ուղղված ՓՄՁ-ների և գործարար համայնքի զարգացմանը, ֆինանսական տեխնոլոգիաների զարգացմանը, պրոֆեսիոնալ գիտելիքի տարածմանը մատաղ սերնդի շրջանում, կրթական ծրագրերին, երեխաների առողջությանը և բարեկեցությանը և համայնքի ընդհանուր զարգացմանը

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՄԱՆՐԱԾԱԽ ԲԱՆԿԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Վերջին տարիների ընթացքում Ամերիաբանկը մանրածախ բանկային գործառնությունների զարգացումը համարում է իր հիմնական ռազմավարական ուղղություններից մեկը: Մենք մեր բոլոր որոշումներն ընդունում ենք՝ նպատակ ունենալով բավարարել մեր հաճախորդների կարիքները:

Այսօր արդեն, որպես լիարժեք մանրածախ բանկ, Ամերիաբանկը շուկայի հիմնական սեգմենտների առաջատարն է և շարունակում է ամրապնդել իր դիրքը:

2017թ. բանկը շարունակում էր իր գործունեության **թվայնացման** գործընթացը, որի նպատակն է որակապես փոխել սպասարկման մոդելը. այս առումով նշանակալից է վարկի համար առցանց դիմելու և առցանց վարկեր ստանալու հնարավորությունը:

Սպասարկման բազմակողմանի ցանց

Սպասարկման բազմակողմանի ցանցը զարգացնելու նպատակով բանկը նախաձեռնել է մասնաճյուղերի ցանցի ընդլայնման ծրագրեր, մասնավորապես՝

- Բացվեց նոր՝ «Քոչար» մասնաճյուղը Երևանի բանուկ առևտրի կենտրոններից մեկում:
- Հանրապետության երկրորդ քաղաքում բացվեց «Կումայրի» մասնաճյուղը:

Ամերիաբանկը շարունակաբար աշխատում է տեխնոլոգիաների զարգացման ուղղությամբ և զարկ տալիս թվային և բջջային տեխնոլոգիաներին: Մեր նպատակն է բարելավել սպասարկումը, անհատականացնել հաճախորդների տարբեր խմբերին առաջարկվող ծառայությունները և հաճախորդի համար բանկային գործառնությունների իրականացումը դարձնել հնարավորապես հեշտ ու արագ:

Մեր բազմակողմանի սպասարկման ցանցի հիմնարար սկզբունքներից մեկն է տեխնոլոգիաներին զուգահեռ ապահովել նաև ֆիզիկական ներկայությունը մասնաճյուղերի միջոցով, որպեսզի հաճախորդը ցանկացած պահի կարողանա այցելել մեզ և ստանալ իրեն հուզող հարցերի պատասխանները:

Թվայնացման ճանապարհին սպասարկման կարևորագույն գործիքներից է բանկի Կոնտակտային կենտրոնը: 2017թ. Ամերիաբանկն ընդլայնեց Կոնտակտային կենտրոնի միջոցով մատուցվող ծառայությունների ցանկը՝ ներառելով վարկավորումը: 2017թ. հիմնական մարտահրավերներից մեկն էր նոր վարկային պրոդուկտի մշակումը, որի շրջանակներում հաճախորդներին կտրամադրվեին անհատականացված վարկեր՝ նախապես հաստատված սահմանաչափին և պայմաններին համապատասխան, և կապահովվեր վարկավորման լիովին նոր մակարդակ:

2017թ. դեկտեմբերին նախորդ տարվա համեմատ ինտերնետային և հեռախոսային բանկային ծառայություններից օգտվողների քանակն ավելացավ 33%-ով, իսկ հեռակառավարման համակարգերով իրականացված գործարքների քանակը՝ 77%-ով:

Նոր պրոդուկտներ և ծառայություններ

Ամերիաբանկը վերանայեց և բարելավեց **տնտեսության մի շարք առանցքային ոլորտների համար նախատեսված հատուկ առաջարկը**՝ ներառելով նոր ոլորտներ: Առաջարկը նախատեսում է քարտերի սպասարկման և վարկավորման արտոնյալ պայմաններ, այդ թվում՝ ցածր տոկոսադրույքներ, սահմանվածից բարձր վարկ/գրավ հարաբերակցություն գրավով ապահովված վարկերի համար, հատուկ պայմաններ հեռահար բանկային ծառայություններից օգտվելու դեպքում և ամենակարևորը՝ վարկավորման պարզեցված ընթացակարգ: Մեր նպատակն է պարզ ու հարմար բանկային ծառայություններ մատուցել նշված ոլորտների աշխատակիցներին՝ հնարավորություն տալով վերջիններիս ժամանակ չվատնել բանկային ծառայությունների համար և ողջ ուշադրությունն ուղղել իրենց կարևոր առաքելության իրականացմանը:

ՎՋԵԲ-ի հետ համատեղ մշակվեց նոր վարկային պրոդուկտ՝ **«Կանայք բիզնեսում»**, որով տրամադրվում են դրամով վարկեր՝ զածր տոկոսադրույքով և բարձր վարկ/գրավ հարաբերակցությամբ: Կին գործարարներին խրախուսելու համար կազմակերպվեց նաև հատուկ միջոցառում:

Բանկն ընդլայնեց իր համագործակցությունը «Բեսթ Քարտ» ՄՊԸ-ի հետ՝ «Այո» հետվճարային ծրագրի շրջանակներում: Ծրագիրը հնարավորություն է տալիս Ամերիաբանկի քարտերով (բացառությամբ Business և Նվեր քարտերի) անկանխիկ վճարում իրականացնելիս ստանալ ծախսած գումարի մինչև 20%-ի չափով հետվճար՝ գործընկեր առևտրի և սպասարկման կետերում: 2017թ. AYO քարտապանների համար մշակվեց նաև նոր պրոդուկտ՝ վարկային գիծ:

2017թ. մեկ այլ հիմնական ռազմավարական ուղղություն էր ավտովարկավորումը: Բանկն ընդլայնեց իր համագործակցությունն ավտոսրահների հետ՝ հայտարարելով հատուկ արշավներ առաջնային շուկայից **Toyota** և **Kia** մակնիշի ավտոմեքենաների ձեռքբերման համար: Արշավի շրջանակներում Ամերիաբանկի հաճախորդներին առաջարկեց երկու կարևոր առավելություն՝

- Ավելի բարձր վարկ/գրավ հարաբերակցություն
- Արտոնյալ տոկոսադրույք

Տարվա վերջում սպառողներին ներկայացվեց նոր պրոդուկտ՝ **սպառիկ** ֆինանսավորում, որը ձևակերպվում է անմիջապես վաճառասրահում: Ֆինանսավորման մասին որոշումն ընդունվում է առցանց ռեժիմում՝ մի քանի րոպեում:

Հաճախորդների սպասարկում

Ամերիաբանկի նպատակն է հաճախորդների համար ապահովել ամենաբարձր որակի սպասարկումը՝ օգնելով նրանց ստեղծել, բազմապատկել և պահպանել իրենց ֆինանսական կարողությունը:

Մենք առաջարկում ենք պարզ ու թափանցիկ բանկային պրոդուկտներ՝ կանխատեսելով և բավարարելով հաճախորդների բոլոր կարիքները:

Սպասարկման որակը մնում է մեր առաջնային խնդիրներից մեկը: 2017թ. քայլեր ձեռնարկվեցին հերթերի կառավարման ուղղությամբ՝ ներդրվեց հերթերի կառավարման բջջային հավելված Earlyone կազմակերպության հետ համատեղ: Այժմ հաճախորդները կարող են բջջային հավելվածի միջոցով գրանցվել նախապես որոշակի օրվա և ժամի համար և մասնաճյուղում այլևս հերթում չսպասել:

Հաճախորդների բազա և ավանդներ

Ռազմավարության և սպասարկման բարելավման շնորհիվ՝ 30.4%-ով ավելացել է Ամերիաբանկի մանրածախ պորտֆելը, ընդ որում ֆիզիկական անձ հաճախորդների թիվն ավելացել է 8.2%-ով:

Չնայած ավանդային տոկոսադրույքների անկմանը, Ամերիաբանկի ավանդային պորտֆելի ցուցանիշները բարելավվել են, մասնավորապես՝ մանրածախ ցպահանջ ավանդներն ավելացան 42.8%-ով՝ կազմելով 58,843 մլն ՀՀ դրամ, ժամկետային ավանդները՝ 24.0%-ով՝ կազմելով 160,442 մլն ՀՀ դրամ:

Ցպահանջ ավանդների աճը կարևոր ցուցանիշ է, որը վկայում է հաճախորդների վստահության և հավատարմության մասին:

Ամերիաբանկի կողմից թողարկված պարտատոմսերի ծավալը 2017 թ. կազմել է 31,221 մլն ՀՀ դրամի, որից 25,368 մլն ՀՀ դրամի պարտատոմսերը տեղաբաշխվել են ֆիզիկական անձանց շրջանում, ինչը վկայում է հաճախորդների բարձր վստահության և արդյունավետ համագործակցության մասին:

Վճարային քարտեր

Իր ռազմավարության շրջանակներում բանկը մշտապես կարևորում է քարտային պրոդուկտների շարունակական զարգացումը՝ թե՛ որակապես, թե՛ քանակապես:

Մեր քարտային պրոդուկտների հիմքում են սպասարկման բարձր որակն ու ծառայությունների հասանելիությունը: Մասնավորապես, քարտային գործարքների շուրջօրյա մոնիթորինգն ու տեխնիկական օժանդակումը թույլ են տալիս բարձրակարգ աջակցություն ցուցաբերել հաճախորդներին: Այս բոլոր ջանքերի շնորհիվ՝ մեզ հաջողվեց զգալի արդյունք գրանցել քարտային ոլորտում՝ ապահովելով քարտային ընդհանուր քանակի 14% աճ:

Բանկը շարունակաբար ընդլայնում է իր համագործակցությունը վճարային համակարգերի հետ: 2017թ. մեկնարկեց VISA և MasterCard համակարգերի հետ միասին իրականացվող մի քանի արշավ, որոնց նպատակն է ավելացնել քարտերի քանակը և խթանել անկանխիկ գործարքները, հատկապես միջին խավի շրջանում:

Վարկային գծերը բանկը համարում է քարտային բիզնեսի կարևոր տարր, որը խթանելու ուղղությամբ գործադրված ջանքերի շնորհիվ վարկային գծերի պորտֆելն աճել է 33.4%-ով:

Ամերիաբանկը շուկայի առաջատարն է էլեկտրոնային առևտրի և վճարային տերմինալների ցուցանիշներով: Մեզ համար կարևոր է, որ հաճախորդների համար գնումներ կատարելու գործընթացը լինի հնարավորապես հեշտ ու հաճելի, ուստի մենք շարունակաբար ընդլայնում ենք POS տերմինալների և վիրտուալ POS տերմինալների ցանցը: 2017թ. վիրտուալ POS տերմինալների քանակն ավելացավ 46%-ով՝ հասնելով 255-ի, իսկ դրանցով իրականացված գործարքների ծավալը՝ 171%-ով: POS տերմինալների քանակն ավելացավ 32%-ով՝ հասնելով 1,619-ի, իսկ դրանցով իրականացված գործարքների ծավալը՝ 36%-ով:

Մանրածախ վարկավորում

2017թ. իրականացվեցին վարկավորման գործընթացը բարելավելունն ուղղված մի շարք ջանքեր: Բանկն ամբողջությամբ վերանայեց և բարելավեց վարկավորման իր պայմանները, մասնավորապես՝

- Տոկոսադրույք (իջեցված տոկոսադրույքներ բոլոր արժույթների համար, լողացող տոկոսադրույք բոլոր տեսակ կարճաժամկետ վարկերի համար)
- Ոչ տոկոսային պայմանների վերանայում, ռիսկի վրա հիմնված գնագոյացման մեխանիզմի ներդրում, որի միջոցով ցածր ռիսկային հաճախորդներին կարող են առաջարկվել ավելի ցածր տոկոսադրույքներ

Մեպտեմբերին մեկնարկեցին **փոքր և միջին ձեռնարկությունների վարկերի և հիփոթեքային վարկերի** լայնածավալ արշավեր, որոնց հիմնական բաղադրիչը ռիսկերի վրա հիմնված տոկոսադրույքներն են: Արշավների շրջանակներում տրամադրվել է ավելի քան 400 ՓՄՁ և հիփոթեքային վրակ՝ 12 մլն ՀՀ դրամ ընդհանուր գումարով:

2017թ. Բանկի մանրածախ վարկային պորտֆելն ավելացավ 30.4%-ով, մասնավորապես՝ տարեվերջի դրությամբ այն կազմում էր 78,531 մլն ՀՀ դրամ: Հիփոթեքային վարկերը հասան 28,602 մլն ՀՀ դրամի (42.6% աճ նախորդ տարվա համեմատ), ավտովարկերը՝ 2,041 մլն ՀՀ դրամի, վարկային քարտերը՝ 19,025 մլն ՀՀ դրամի:

Ամերիաբանկի մանրածախ սեզմենտի ժամկետային և ցպահանջ ավանդները (ներառյալ պարտատոմսերը) մլն ՀՀ դրամ



170,607
2016



219,285
2017

Մանրածախ սեզմենտի հաճախորդների վարկերը մլն ՀՀ դրամ



60,240
2016



78,531
2017

Ամերիաբանկի մանրածախ սեզմենտի հաճախորդները



95,564
2017

Վճարային քարտերի քանակը



75,203
2016



86,044
2017

Ամերիաբանկի մանրածախ սեգմենտի վարկային պորտֆելի կառուցվածքը



ՈԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ԲԱՆԿԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Կորպորատիվ բանկային ծառայությունների շուկայում Ամերիաբանկը ճանաչված է որպես վստահելի ռազմավարական գործընկեր: Մենք ցուցաբերում ենք անհատական մոտեցում և օգնում յուրաքանչյուր հաճախորդին գտնել տարբեր ֆինանսական գործիքներից բաղկացած՝ իր համար լավագույն լուծումը:

Հաշվետու տարում Ամերիաբանկը 29%-ով ընդլայնեց կորպորատիվ հաճախորդների բազան, ընդ որում կորպորատիվ հաճախորդների ցպահանջ ավանդները կազմեցին 101,413 մլն ՀՀ դրամ, ժամկետային ավանդները՝ 82,359 մլն ՀՀ դրամ: 2017թ. Ամերիաբանկը թողարկեց կորպորատիվ պարտատոմսեր և ամբողջությամբ տեղաբաշխեց դրանք:

Մենք որդեգրել ենք կորպորատիվ հաճախորդների հետ համագործակցության հետևյալ սկզբունքները՝

- Անհատական մոտեցում
- Մասասարկման բարձր որակ
- Գործընկերական հարաբերություններ, այդ թվում՝ ֆինանսական խորհրդատվություն ՀՀ և արտաքին շուկաներում առկա լուծումների արդյունավետության վերաբերյալ
- Աջակցություն հաճախորդների աճին և թափանցիկության ապահովմանը
- Նպատակային ծրագրային միջոցների հասանելիության ապահովում

2017թ. Բանկը պահպանեց կորպորատիվ վարկավորման **առաջատարի** դիրքը՝ 8-րդ տարին անընդմեջ. կորպորատիվ վարկերի պորտֆելը կազմեց 413 մլրդ ՀՀ դրամ:

Իր ռազմավարությանը համահունչ՝ բանկն ուշադրության կիզակետում էր պահում նաև ՓՄՁ վարկավորումը՝ այս սեգմենտին առաջարկելով նոր, մրցակցային պրոդուկտներ: ՓՄՁ վարկավորմանն ուղղված նպատակային քաղաքականության արդյունքում ՓՄՁ վարկերի պորտֆելն ընդհանուր կորպորատիվ պորտֆելի կազմում աճեց 5%-ով՝ տարեվերջում կազմելով 66.9 մլրդ ՀՀ դրամ (138.2 մլն ԱՄՆ դոլար): Աճին նպաստեց նորարարական և «կանաչ» ծրագրերի վարկավորումը մրցակցային պայմաններով, որակյալ սպասարկումը: Ինչպես միշտ, ֆինանսավորման մեջ մեր որդեգրած հիմնական սկզբունքներից մեկն է անհատական մոտեցումը յուրաքանչյուր հաճախորդին: ՓՄՁ ֆինանսավորումն ընդգրկում է տնտեսության հիմնական զարգացող ճյուղերը, այդ թվում՝ էներգետիկան, գյուղատնտեսությունը, շինարարությունը, զբոսաշրջությունը և այլ ոլորտներ: Բանկի առանձնակի ուշադրությանն են արժանանում հատկապես էներգաարդյունավետության և վերականգնվող էներգետիկայի նախագծերը, որոնց ֆինանսավորման համար բանկն առաջարկում է առավել բարենպաստ պայմաններ:

Լիզինգ և ֆակտորինգ

Նախորդ տարի Ամերիաբանկը վերանայեց լիզինգի կառուցվածքը, հատկապես անշարժ գույքի ձեռքբերման նպատակով տրամադրվող ֆինանսական վարձակալություն մասով: Զգալիորեն աճեց Ամերիաբանկի հաճախորդների կողմից ֆինանսական վարձակալության միջոցով էներգաարդյունավետ սարքավորումների ձեռքբերման ծավալը: 2017թ. հատկապես մեծ էր Ամերիաբանկի **լիզինգային ծառայությունների** պահանջարկն այն ընկերությունների շրջանում, որոնց անհրաժեշտ էր ֆինանսավորում՝ շրջանառու ակտիվների համալրման նպատակով, բայց որոնք ֆինանսավորում ստանալու համար գույք գրավադնելու հնարավորություն չունեին: Հաճախորդներին առավել բարենպաստ պայմաններ առաջարկելու նպատակով Ամերիաբանկը համագործակցության պայմանագրեր կնքեց «Ավանգարդ Մոթորս», «Կապիտալ Մոթորս», «Եվրո Տրաք» ընկերությունների հետ: Մենք նաև համագործակցում ենք բժշկական սարքավորման հիմնական մատակարարների հետ: Ավելին, գործունեության «կանաչ» տեսակները խրախուսելու նպատակով Ամերիաբանկը հատուկ պայմաններ է առաջարկում արևային էլեկտրակայանների ֆինանսավորման համար՝ գերմանահայկական հիմնադրամի հետ համագործակցության շրջանակներում:

Ֆակտորինգը ևս Բանկի գործունեության կարևոր ուղղություն է՝ որպես կարճաժամկետ ֆինանսավորման լավագույն լուծում: 2017թ. վերջում Ամերիաբանկի ֆակտորինգի պորտֆելը կազմել է 6.8 մլրդ ՀՀ դրամ: Նախորդ տարվա համեմատ՝ ֆակտորինգային գործառնությունների ընդհանուր ծավալն աճել է 61%-ով, ընդ որում՝ գործարքների զգալի մասը բաժին է ընկել արտահանման ֆակտորինգին, ինչպես և նախորդ տարիներին: Բանկի ֆակտորինգային ծառայություններից օգտվում են տնտեսության ամենատարբեր ոլորտներ ներկայացնող հաճախորդներ, ամենատարբեր չափի ընկերություններ, որոնց անհրաժեշտ է համալրել շրջանառու միջոցները կամ կանխիկը: Բազմաբնույթ հաճախորդների հետ աշխատանքն Ամերիաբանկին թույլ է տալիս նրանցից յուրաքանչյուրի համար ոչ ստանդարտ ու առանձնահատուկ մոտեցումներ մշակել և հետաձգված վճարման նոր լուծումներ առաջարկել:

2013թ-ից ի վեր Բանկը հանդիսանում է **Factors Chain International** միջազգային ֆակտորինգային միության անդամ: Նշված կառույցը ֆակտորինգի և դեբիտորական պարտքի ֆինանսավորման բնագավառում միջազգային ներկայացուցչական մարմինն է, որին 2016թ-ին միացավ նաև International Factors Group միջազգային ֆակտորինգային կազմակերպությունը: Սա եզակի հարթակ է, որը ներկրողներին և արտահանողներին թույլ է տալիս սերտ համագործակցություն ծավալել միջազգային մակարդակով:

Առևտրի ֆինանսավորում

Ամերիաբանկը Հայաստանում առևտրի ֆինանսավորման ծառայություններ մատուցող հիմնական կառույցներից է: Մեր առաջարկած գործիքները նախատեսված են՝ մեղմացնելու ինչպես օտարերկրյա, այնպես էլ տեղական շուկաների ռիսկերը:

Թողարկված ակրեդիտիվների ու երաշխիքների, սպասարկման բարձր մակարդակի ու նոր հետաքրքիր նախագծերի համար բանկն արժանանում է հեղինակավոր միջազգային կազմակերպությունների բազմաթիվ մրցանակների, այդ թվում՝ ՎՋԵԲ-ի՝ «Հայաստանում ամենաակտիվ թողարկող բանկ» մրցանակին, ՄՖԿ-ի՝ «Կովկասյան տարածաշրջանում առևտրի ֆինանսավորման համաշխարհային ծրագրի շրջանակներում ամենաակտիվ թողարկող բանկ» մրցանակին, ՎՋԵԲ-ի՝ «Տարվա լավագույն գործարք» մրցանակին Հայաստանում նոր սերնդի օպտիկամանրաթելային ցանցի և էներգաարդյունավետ ջերմոցների կառուցումը ֆինանսավորելու համար, ՄՖԿ-ի՝ «Լավագույն թողարկող բանկ առևտրի ֆինանսավորման համաշխարհային ծրագրի շրջանակներում էներգիայի արդյունավետ

օգտագործման նախագծերում» մրցանակին, Կոմերցբանկի՝ առևտրի ֆինանսավորման ոլորտում անթերի համագործակցության մրցանակին: Ուշագրավ է, որ 2013թ. Ամերիաբանկն առաջինը հայկական բանկերից արժանացավ ՎՋԵԲ-ի հաստատող բանկի կարգավիճակի առևտրի աջակցման միջազգային ծրագրի շրջանակներում:

Առևտրի ֆինանսավորման ոլորտում Ամերիաբանկի գործընկերներն են մի շարք միջազգային բանկեր: Մասնավորապես, մենք ունենք Կոմերցբանկի հետ համագործակցության հարուստ պատմություն, ընդ որում Կոմերցբանկի մասնակցությամբ մի քանի գործարքներ արժանացել են մրցանակների: 2010թ-ից գործում է առանց երաշխավորության առևտրի ֆինանսավորման երկկողմանի պայմանագիրն Ամերիաբանկի ու Կոմերցբանկի միջև: Յունիկրեդիտ բանկ՝ Ամերիաբանկը և Յունիկրեդիտը համագործակցում են տարիներ շարունակ, և այս ընթացքում Յունիկրեդիտը դարձել է Ամերիաբանկի վստահելի գործընկերը՝ տրամադրելով առևտրի ֆինանսավորման գործիքներ և սահմանաչափեր: Երկու բանկերի համագործակցության շրջանակը գնալով ընդլայնվում է՝ ստեղծելով նորանոր հնարավորություններ արտաքին առևտրով զբաղվող տնտեսվարողների համար: Այդ ուղղությամբ հերթական քայլը կատարվեց 2017թ., երբ բանկերն ստորագրեցին հիմնական վարկային պայմանագիր՝ բացելու համար Հայաստանում առևտրի ֆինանսավորման նոր հնարավորություններ: Ամերիաբանկը տարիներ շարունակ համագործակցում է Միթիբանկի հետ՝ աստիճանաբար ավելացնելով գործարքների թիվը և ծավալն ու հայկական ընկերությունների համար ապահովելով էժան ֆինանսավորման հնարավորություն: 2011թ. Ամերիաբանկը Միթիբանկի հետ կնքեց Առևտրի ֆինանսավորման կանխավճարների փոխհատուցման շարունակական համաձայնագիրը: Այս և այլ պայմանագրերի ներքո արդյունավետ համագործակցության շնորհիվ Միթիբանկն ավելացրել է Ամերիաբանկի ֆինանսավորման սահմանաչափերը:

Հաճախորդների հետ սերտ համագործակցություն ծավալելով՝ բանկը կարողանում է ճանաչել նրանց և հիմնավորված խորհրդատվություն ու հաճախորդի կարիքներից բխող նորարար ֆինանսական լուծումներ առաջարկել: 2017թ. Ամերիաբանկը նորից ապացուցեց, որ վստահելի, կայուն ու դինամիկ գործընկեր է: Մասնավորապես, բանկի թողարկած **ակրեդիտիվների ու երաշխիքների** ծավալը գերազանցեց 12.31 մլրդ ՀՀ դրամը:

Շնորհիվ ՄՖԿ-ից, ՎՋԵԲ-ից և մի շարք խոշոր առևտրային բանկերից ներգրավված միջոցների՝ բանկը հաճախորդների ներմուծման գործարքների համար տրամադրում է երկարաժամկետ ֆինանսավորում՝ շուկայականից ցածր տոկոսադրույքներով: Ընդհանուր առմամբ, 2017թ. բանկը ֆինանսավորում էր առևտուրն ինչպես տեղական ու միջազգային վճարային գործիքների թողարկման և արտահանման գործառնությունների սպասարկման, այնպես էլ միջազգային բանկերից ռեսուրսների ներգրավման և հայրենական արտադրողների արտահանման և ներկրման գործառնությունների ուղղակի ֆինանսավորման միջոցով: Մասնավորապես, Ամերիաբանկի համար միջազգային ֆինանսական կազմակերպությունների և առևտրային բանկերի կողմից բացված վարկային սահմանաչափերը 2017թ. գերազանցում էին 77 մլրդ ՀՀ դրամը:

Հաշվետու տարում Ամերիաբանկն իրագործեց ազգային նշանակության մի քանի նախագիծ արդյունաբերության, արտադրության, ջերմոցային տնտեսության, հանքարդյունաբերության, մետաղագործության, ապրանքների ֆինանսավորման ոլորտներում: Այդ

գործարքները թե՛ ծավալի, թե՛ նշանակության տեսանկյունից բավականին տպավորիչ էին և՛ տեղական շուկայի, և՛ տարածաշրջանի մակարդակով:


Կորպորատիվ սեգմենտի
ՓՄՁ վարկեր և լիզինգ
մլն ՀՀ դրամ

68,732



2017

Կորպորատիվ սեգմենտի հաճախորդների
պարտավորություններ
մլն ՀՀ դրամ



■ Ժամկետային ավանդներ ■ Ցայահանջ ավանդներ

Խոշոր կորպորատիվ
ընկերությունների վարկեր
մլն ՀՀ դրամ

333,102



2017

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԴՐՈՒՄԱԲԱՆԿԱՅԻՆ ԵՎ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Որպես նորարարական ունիվերսալ բանկ՝ Ամերիաբանկը հիմք է ստեղծել Հայաստանում ներդրումաբանկային և առևտրային գործառնությունների զարգացման համար: Իր աննախադեպ, շրջադարձային գործարքներով Ամերիաբանկը պահպանում է առաջատար դիրքը՝ միաժամանակ մեծ ներդրում ունենալով Հայաստանի ֆինանսական շուկայի զարգացման գործում:

Ամերիաբանկը Հայաստանում տրամադրում է ներդրումաբանկային և առևտրային ծառայությունների լայն տեսականի՝ կորպորատիվ ֆինանսներ, կապիտալի շուկաներ, միաձուլումներ ու ձեռքբերումներ, ուղղակի ներդրումներ, արտարժույթային և բրոքերային գործառնություններ, միջնորդություն Դեպոզիտարիայի կողմից արժեթղթերի ռեեստրավարման և պահառության ծառայությունների մատուցման ժամանակ:

2017թ. Global Finance-ն Ամերիաբանկը երկրորդ տարին անընդմեջ ճանաչեց Հայաստանի լավագույն ներդրումային բանկ:

Կորպորատիվ ֆինանսների խորհրդատվություն

Ամերիաբանկի Կորպորատիվ ֆինանսների բաժինն առաջարկում է ընթացիկ օժանդակություն կորպորատիվ ֆինանսների ոլորտում և լուծումների մշակում Ամերիաբանկի հաճախորդների համար: Մեր փորձառու մասնագետները խորհրդատվություն են տրամադրում ամենատարբեր բնագավառներում՝ պարտքային և բաժնային ֆինանսավորում կապիտալի փակ շուկաներից, վարկանիշի ստացում, բանկերից ֆինանսավորում ներգրավելու համար ռազմավարության մշակում և այլն:

2017թ. կորպորատիվ ֆինանսների ոլորտում մեր գլխավոր գործարքն AAA վարկանիշ ունեցող միջազգային ֆինանսական կառույցի հետ էր, որը նախապատրաստվում էր մեր տարածաշրջանում իր առաջին ներդրումը կատարելուն՝ 30 մլն ԱՄՆ դոլարի բաժնեմաս ձեռք բերելու միջոցով: Պայմանագրի կնքումը նախանշվում է 2018թ. սկզբում: Ֆինանսավորման ընթացիկ կարիքները բավարարելու համար բանկը 30 մլն է ներգրավել իր վաղեմի գործընկեր Նիդերլանդների զարգացման բանկից (FMO)՝ փոքր և միջին ձեռնարկությունների և երիտասարդ ձեռներեցների ֆինանսավորման համար: Մենք ձգտում ենք հնարավորապես ընդլայնել ֆինանսավորվող ոլորտները՝ ներառելով երիտասարդ ձեռներեցների վարկավորումը, կրթությունը, հյուրանոցային ոլորտը և տնտեսական աճին նպաստող այլ ոլորտներ: Մենք ոչ միայն ձգտում ենք պահպանել համագործակցությունն առկա գործընկերների հետ, այլև շարունակաբար բացահայտում ենք նորերին, որոնք կարող են հետաքրքրվել Հայաստանում կայուն բիզնեսի զարգացմամբ: 2017թ. ևս բացառություն չէր, և կնքվեց առաջին պայմանագիրը Symbiotics ներդրումային հիմնադրամի հետ (ԺՆՆ), ընդ որում պայմանագրի ներքո կարող է ֆինանսավորում ներգրավվել ինչպես արտարժույթով, այնպես էլ ազգային արժույթով:

Նախորդ 7 տարվա ընթացքում Ամերիաբանկը **տարբեր միջազգային ֆինանսական** հաստատություններից և զարգացման կառույցներից ընդհանուր առմամբ ներգրավել է ավելի քան **600 մլն ԱՄՆ դոլար**. մեր գործընկերների շարքում են Վերակառուցման և զարգացման

Եվրոպական բանկը (ՎՁԵԲ), Ասիական զարգացման բանկը (ԱԶԲ), Միջազգային ֆինանսական կորպորացիան (ՄՖԿ), Նիդերլանդների զարգացման բանկը (FMO), Գերմանիայի ներդրումների և զարգացման ընկերությունը (DEG), Եվրասիական զարգացման բանկը (EDB), Ավստրիական զարգացման բանկը (OeEB), «Պրոպարկո» ֆրանսիական գործակալությունը, Առևտրի և զարգացման սնծովյան բանկը (BSTDB), OPEC-ի Միջազգային զարգացման հիմնադրամը, responsAbility Investments AG-ն և Կլիմայական գործընկերության համաշխարհային հիմնադրամը: Բացի միջազգային ֆինանսական հաստատություններից, մեր գործընկերների ցանկն ընդգրկում է նաև մի շարք խոշոր առևտրային բանկեր:

Ամերիաբանկը հաջողությամբ տեղաբաշխել է ներգրավված միջոցները փոքր և միջին բիզնեսի, վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության, կրթության, առողջապահության և գյուղատնտեսության ոլորտներում: Որպես առաջադեմ և նորարար կազմակերպություն՝ Ամերիաբանկն առաջինը Հայաստանում սկսեց համագործակցել ՎՁԵԲ-ի հետ «Կանայք բիզնեսում» ծրագրի շրջանակներում: Ծրագրի նպատակն է աջակցել կին ձեռնարկատերերին, նրանց տրամադրել ֆինանսավորում, խորհրդատվություն, զարգացնել կարողությունները և նպաստել երկրում կանանց ձեռներեցության զարգացմանը: Միջոցները հասանելի են 2017-2018թթ., իսկ ֆինանսավորման տրամադրումը ՀՀ դրամով նախատեսված է՝ արժույթային ռիսկերը մեղմելու համար:

Մեր խորին համոզմամբ՝ մեր երկրի տնտեսությունը զարգացնելու համար հարկավոր է նախ և առաջ ֆինանսավորումն ուղղել այն հատվածներին, որոնք ունեն դրա կարիքը: Ինչ վերաբերում է մասնավոր նախագծերին, Ամերիաբանկն ուշադիր հետևում է Հայաստանում արևային և հողմային էներգետիկայի զարգացմանը՝ միշտ պատրաստ լինելով առաջինը ներդնել նորարարական ոլորտներում:

Կապիտալի շուկաներ

Ամերիաբանկի պրոֆեսիոնալ թիմը մատուցում է պարտքային և բաժնային ֆինանսավորում ներգրավելու ծառայությունների ամբողջ տեսականին, ներառյալ կորպորատիվ պարտատոմսերի թողարկումը, արժեթղթերի առաջնային և երկրորդային տեղաբաշխումը, մարքեթ-մեյքերի (շուկա ստեղծողի) ծառայություններ, խորհրդատվություն: 2017թ. Ամերիաբանկը պահպանեց այս ոլորտում առաջատարի դիրքը՝ իրականացնելով պարտատոմսերի 5 ծրագիր՝ շուրջ 42 մլն ԱՄՆ դոլար ընդհանուր արժեքով: Բանկը հաջողությամբ տեղաբաշխեց դոլարային պարտատոմսերի 3 տրանշ՝ 35 մլն ԱՄՆ դոլար ընդհանուր ծավալով, և իրականացրեց եվրոյով պարտատոմսերի առաջին տեղաբաշխումը: Բանկն ակտիվ էր նաև դրամային պարտատոմսերի շուկայում՝ իրականացնելով 1.5 մլրդ ՀՀ դրամի տեղաբաշխում:

2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ տեղաբաշխված պարտատոմսերի ծավալը **64 մլն ԱՄՆ դոլար էր** կամ ՀՀ պարտատոմսերի շուկայի ընդհանուր ծավալի **շուրջ 30%-ը**:

Ներկայում Ամերիաբանկի պարտատոմսերի 8 տրանշ ցուցակված է Nasdaq OMX Armenia ֆոնդային բորսայում, որտեղ երկրորդային շուկայի իրացվելիությունն ապահովվում է մարքեթ-մեյքերների ներգրավման միջոցով:

Ամերիաբանկն ակտիվ էր նաև խորհրդատվական ծառայությունների ոլորտում (առաջնային տեղաբաշխում, պարտքային ֆինանսավորում). համապատասխան գործարքների կնքումը նախանշվում է 2018թ.:

Ամերիաբանկը Հայաստանում մարքեթ մեյքերի ծառայություններ մատուցող առաջատար կազմակերպություններից է՝ 33 մլն ԱՄՆ դոլարի ընդհանուր պորտֆելով:

Այս բոլոր գործոնները, անշուշտ, հաշվի է առել Global Finance ամսագիրը, երբ Ամերիաբանկին շնորհում էր «Հայաստանում լավագույն ներդրումային բանկ 2017» մրցանակը:



Ամերիաբանկը Հայաստանում և տարածաշրջանում կապիտալի շուկաների զարգացման ջատագովն է: Համոզված լինելով, որ Հայաստանի և տարածաշրջանի բաժնային և պարտքային կապիտալի շուկաներն ունեն խոստումնալից ապագա՝ մենք շարունակաբար աշխատում ենք դրանք զարգացնելու ուղղությամբ:

Միաձուլումներ և ձեռքբերումներ

Ամերիաբանկի Միաձուլումների և ձեռքբերումների բաժինը տրամադրում է ծառայությունների լայն փաթեթ, այդ թվում՝ պոստենցիալ ներդրողների և թիրախների բացահայտում, փաստաթղթերի և առաջարկների կազմում (հուշագրեր, սեղմնագրեր (teaser) և այլն), գործարքի կառուցում և ֆինանսական մոդելավորում, բիզնեսի գնահատում, միաձուլման արդյունավետության գնահատում, հետգործարքային ուսումնասիրություն և գնահատում: Մեր գործունեության տարիների ընթացքում մենք ձեռք ենք բերել շուկայի լավ իմացություն և լայն կապեր ՀՀ և արտերկրի գործարար շրջանակների հետ:

2017թ. Ամերիաբանկի ուշադրության կենտրոնում էր ՀոՌեԿա ոլորտը, ֆինանսական հատվածը, հանքարդյունաբերությունը, մասնագիտացված մանրածախ առևտուրը, կոմերցիոն անշարժ գույքը, հեռահաղորդակցությունը, հիվանդանոցների ոլորտը և առողջապահությունը, ինչպես նաև սննդի արտադրության ոլորտը: Ամերիաբանկը մատուցել է խորհրդատվություն տարատեսակ ոլորտներում, ինչպիսիք են՝ անշարժ գույքը, տրանսպորտը և կապը, ՏՏ, միջազգային ֆրենչայզինգը, գյուղատնտեսությունը և էներգետիկան:

Նշենք, որ միաձուլումների և ձեռքբերումների ոլորտը, հատկապես բանկային հատվածում, խթանել էր նաև ՀՀ ԿԲ նոր նորմատիվը նվազագույն կանոնադրական կապիտալի վերաբերյալ, որն ուժի մեջ մտավ 2017թ. հունվարի 1-ին: Կնքվեց մի քանի փոքր գործարք՝ պայմանավորված օրենսդրական պահանջներով, բայց բարձր է նաև համակարգային գործարքների միտումը, եթե հաշվի առնենք թե՛ մրցակցությունը և մարժան. այս ամենի արդյունքում համակարգի խոշորացումը դառնում է անխուսափելի: Ամերիաբանկը մասնակցել է բանկերի միաձուլումների և ձեռքբերումների 3 գործարքի և մտադիր է շարունակել ուսումնասիրել շուկան և բացահայտել միաձուլման նոր հնարավորություններ, որոնք թույլ կտան ավելացնել բաժնետիրական արժեքը:

Առևտրային գործառնություններ

2017թ. բանկը 2-րդն էր ՀՀ շուկայում ըստ առևտրային գործառնությունների: 2017թ. առևտրային գործառնություններից (արժույթային գործառնություններից, ոսկով և արժեթղթերով գործառնություններից) և վերագնահատումից ստացված զուտ եկամուտը կրկին աճել է և կազմել բանկային հատվածի ընդհանուր առևտրային գործառնությունների 18%:

2017թ. ՀՀ արտարժույթային շուկան համեմատաբար կայուն էր, փոխարժեքների կտրուկ տատանումներ չեն արձանագրվել: Բանկը պահպանեց առաջատար դիրքը՝ արձանագրելով հաճախորդների արտարժույթային գործարքների **54% աճ** և արժույթային գործառնություններից ստացվող եկամտի 14% աճ: Ամերիաբանկը շարունակում էր ակտիվորեն մասնակցել ՀՀ և այլ երկրների

Եվրապարտատոմսերի շուկայի գործունեությանը և խոշորագույն մասնակիցներից էր նաև ոչ պետական պարտատոմսերում իրականացված ներդրումների ծավալով:

2017թ. Ամերիաբանկի բրոքերային ծառայություններից օգտվող հաճախորդների քանակը աճել է ավելի քան 30%-ով: «Ասա ընկերոջ» ծրագրի շրջանակներում հաճախորդները կարող են պարզևավճար ստանալ Ամերիաբանկի բրոքերային ծառայությունների իրենց բարեկամներին և ընկերներին խորհուրդ տալու համար, իսկ բրոքերային ծառայությունների տրամադրման գործընթացն առավել դյուրին դարձնելու համար պարզեցվել է բրոքերային հաշվի բացման գործընթացը:

Ամերիաբանկի բրոքերային ծառայությունները հասանելի են 23 երկրի 100-ից ավել մասնագիտացված առևտրային հարթակներում՝ հնարավորություն տալով իրականացնել տարատեսակ արժեթղթերի առքուվաճառք ֆոնդային բորսաներում և մշտապես տեղեկացված լինել ֆինանսական շուկայի զարգացումների մասին: Բացելով բրոքերային հաշիվ Ամերիաբանկում՝ հաճախորդը ստանում է հասանելիություն աշխարհի ամենամեծ ֆոնդային բորսաներին, ինչպիսիք են՝ NYSE-ն, NASDAQ-ը, AMEX-ն, ARCA-ն, CBOT-ը և այլն (ԱՄՆ), Տորոնտոյի և Մոնրեալի ֆոնդային բորսաները (Կանադա), LSE-ն, LSE International Order Book-ը (Միացյալ Թագավորություն), Ֆրանկֆուրտի բորսան (Գերմանիա), Վիեննայի բորսան (Ավստրիա), Բրյուսելի Euronext բորսան, Nasdaq OMX Europe-ը (NUROEN) (Բելգիա), Euronext France-ը (Ֆրանսիա), Շվեյցարիայի ֆոնդային բորսան (Շվեյցարիա), Borsa Italiana-ն (Իտալիա), Մադրիդի բորսան (Իսպանիա), Տոկիոյի բորսան (Ճապոնիա), Հոնկոնգի բորսան (Չինաստան), Ավստրալիայի բորսան և այլն: Հաճախորդը հնարավորություն է ստանում իրականացնել տարբեր արժույթներով գնանշվող արժեթղթերի առքուվաճառք և ստանալ միջազգային շուկաների արժեթղթերի գնանշումներն իրական ժամանակում:

ԿԱՆԽԱՏԵՍԵԼ

ՄՊԱՍՈՒՄՆԵՐՆ ՈՒ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԱՊԱՀՈԿԵԼ
ԲԱՑ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՍՏԵՂԾԵԼ ՈՒՐՈՒՅՆ
ԱՐԺԵՔՆԵՐՈՎ ՄԹՆՈԼՈՐՏ



ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՈՒՂԵՐԶ

Հարգելի բաժնետերեր

Ամերիաբանկը մշտապես ձգտել և ձգտում է համապատասխանել կորպորատիվ կառավարման լավագույն փորձին, ուստի ամեն տարի մենք մեզ համար սահմանում ենք կառավարման նոր չափանիշներ: Ավելին, մեր նպատակը՝ իրականացնել բաժնետոմսերի առաջնային հրապարակային տեղաբաշխում, թելադրում է նորանոր պահանջներ և ավելի բարձր չափանիշներ, որոնք պետք է ներդնել և կիրառել տեղաբաշխում իրականացնելուց շատ առաջ: Այսօր արդեն մենք հպարտությամբ կարող ենք ասել, որ համապատասխանում ենք միջազգային պահանջների մեծամասնությանը:

2017թ. նշանավորվեց կորպորատիվ կառավարման համակարգի զգալի բարելավմամբ: 2016թ. մենք ստեղծեցինք տնօրենների խորհրդին կից կոմիտեներ և հաստատեցինք դրանց կանոնակարգերը, իսկ 2017թ. բոլոր կոմիտեներն արդեն լիարժեք գործող մարմիններ էին բանկի կազմում՝ մեծապես նպաստելով որոշումների կայացման գործընթացին:

Հպարտությամբ փաստում ենք, որ այսօրվա դրությամբ մենք ունենք Հայաստանում ամենափորձառու տնօրենների խորհուրդներից մեկը, որի կազմի մեջ մտնում են ամենատարբեր ոլորտներ ներկայացնող ոչ գործադիր անդամներ՝ մեծ փորձառությամբ և գիտելիքի հսկայական պաշարով:

Խորհրդի կազմում անկախ դիրքորոշում արտահայտող անդամների առկայությունը նույնքան կարևոր է, որքան խորհրդի կարողությունը՝ կայացնելու հիմնավորված, տեղեկացված և անկախ որոշումներ, ուստի մեր նպատակն է խորհրդի կազմում ապահովել անկախ անդամների օպտիմալ թիվը: 2017թ. մենք վերանայեցինք և գնահատեցինք մեր խորհրդի բոլոր 7 անդամներին անկախության տեսանկյունից: Չնայած նրանք բոլորն իրենց դատողություններում և գործողություններում անկախ և անկողմնակալ են, նրանցից ոմանք ունեն որոշակի փոխկապվածություններ, որոնք որոշակի իրավիճակներում կարող են ազդել անկախ դատողություն անելու նրանց հնարավորության վրա: Ելնելով մեր դիրքորոշումից՝ հետևել անկախությունը սահմանելու խիստ կանոններին, մենք կորպորատիվ կառավարման և ղեկավար անձնակազմի նշանակման կոմիտեի առաջարկով դիտարկեցինք պ-ն Ռոբերտ Ֆոն Ռեկովսկու թեկնածությունը՝ որպես խորհրդի անկախ անդամ:

Խորհրդում որոշումների կայացման գործընթացը, որոշումների արդյունավետության և անկախության ապահովումը մշտապես մեր ուշադրության կենտրոնում են, և մենք ձգտելու ենք ապահովել փորձի, գիտելիքի ցանկալի մակարդակն ու ոչ գործադիր անդամների օպտիմալ թիվը:

Ամբողջ 2017թ. ընթացքում մենք ուշադրության կիզակետում էին պահում այս հարցերը՝ գիտակցելով ռիսկերի կառավարման և ներքին հսկողության կուռ համակարգ ունենալու կարևորությունը: Աուդիտի կոմիտեի գործունեության փաստացի մեկնարկից հետո ակնկալում ենք, որ զգալիորեն կբարելավվի ներքին հսկողության գործընթացը:

Մենք հավատարիմ ենք մեր նպատակին՝ համապատասխանել կորպորատիվ կառավարման ամենաբարձր չափանիշներին, որքան էլ դժվար դա լինի: Վստահ ենք, որ կորպորատիվ կառավարման լավ համակարգը մեր բիզնեսի աճն ապահովող ամենակենսական տարրերից մեկն է, որն անփոխարինելի է երկարաժամկետ հեռանկարում բաժնետիրական մնայուն արժեք ստեղծելու համար:


Անդրեյ Մկրտչյան

Տնօրենների խորհրդի նախագահ

ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Ինչպես մեր գործունեության բոլոր ոլորտներում, կորպորատիվ կառավարման մեջ ևս մենք ձգտում ենք համընթաց քայլել լավագույն միջազգային չափանիշներին: Կառավարման մեր համակարգում մենք ձգտում ենք ներառել այն գործիքները, հսկողական մեխանիզմները և հակակշիռները, որոնք անհրաժեշտ են՝ գործադիր մարմնի, տնօրենների խորհրդի և բաժնետերերի հարաբերություններն արդյունավետ կերպով կառուցելու և կառավարելու համար: Բանկի կորպորատիվ կառավարման համակարգը ներառում է հետևյալ մարմինները. բաժնետերերի ընդհանուր ժողովը բանկի կառավարման բարձրագույն մարմինն է, որը կանոնակարգում և ղեկավարում է բանկի գործունեության հիմնական ուղղությունները: Բաժնետերերի ընդհանուր ժողովն իրավասու է հաստատել բանկի ռազմավարական զարգացման վերաբերյալ բոլոր առանցքային որոշումները:



ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՏՆՕՐԵՆՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ

Տնօրենների խորհուրդը պատասխանատու է բանկի երկարաժամկետ զարգացումն ապահովելու համար: Այն սահմանում է բանկի ռազմավարությունն ու հիմնական արժեքները և վերահսկում ղեկավարության գործունեությունը: Խորհրդի նպատակն է ապահովել բաժնետերերի ներդրումների առավելագույն արժեքը և միաժամանակ պաշտպանել այլ շահագրգիռ անձանց շահերը:

Խորհրդի հիմնական խնդիրներից մեկն է ներքին հսկողության արդյունավետ համակարգի ներդրումը, բանկի գործունեության հետ առնչվող ռիսկերի պատշաճ վերահսկումն ու ռիսկերի «ախորժակի» սահմանումը: Էական ռիսկերի, այդ թվում՝ սոցիալական, բնապահպանական և էթիկական ռիսկերի բացահայտումը, դրանց գնահատումը և կառավարումը բանկում կրում են շարունակական բնույթ: Խորհուրդը պատասխանատու է ռիսկերի և հսկողության ներքին քաղաքականությունների և ընթացակարգերի մշակման համար, իսկ բանկի ղեկավարությունն ստանձնել է դրանց ներդրման, իրականացման ու պահպանման պարտականությունը: Ներքին հսկողության համակարգերի և դրանց արդյունավետությունը գնահատելու պատասխանատվությունը նույնպես կրում է խորհուրդը:

Խորհուրդը պարտավոր է մշտապես ապահովել իր աշխատանքի պատշաճ կատարման համար անհրաժեշտ գիտելիքի և հմտությունների համապատասխան պաշար: Արդյունավետության տեսանկյունից առանցքային դեր է խաղում տեղեկատվության ու ղեկավարման գործընթացի հասանելիությունը բոլոր անդամների համար: Խորհրդի բոլոր անդամները մշտապես ձգտում են ապահովել իրենց մասնակցությունը բոլոր նիստերին, եթե ոչ առկա, ապա հեռակա կարգով: Բանկում ներդրվել է հատուկ խորհրդի անդամների համար նախատեսված ներքին էլեկտրոնային հակակարգ՝ պորտալ, որի միջոցով խորհրդի անդամները և նրանց օգնականները շփվում են, համագործակցում, մասնակցում տնօրենների խորհրդի առօրյա աշխատանքին և մեկ վայրում համակարգում բոլոր փաստաղթերը, այդ թվում՝ արձանագրությունները, շնորհանդեսները, հաստատումները և հաշվետվությունները: Համակարգին կարելի է միանալ ամենատարբեր սարքերի միջոցով, և տնօրենների խորհրդի անդամները կարող են խորհրդի նիստերին և քննարկումներին մասնակցել աշխարհի ցանկացած կետից: Խորհրդի անդամները և նախագահը հաճախակի այցելում են բանկ և շփվում բոլոր օղակների աշխատակիցների հետ, ինչը նրանց հնարավորություն է տալիս տեղում ծանոթանալ ընկերության մշակույթին, արժեքներին ու գործնական համատեքստ ստեղծում նիստերի ընթացքում քննարկվող տեղեկությունների համար: Իր պաշտոնական և ոչ պաշտոնական հանդիպումների ընթացքում խորհուրդն ուսումնասիրում է ղեկավարության բոլոր գործողությունները՝ դրանց հիմնավորվածությունը գնահատելու նպատակով: Այդ հարցում հատկապես կարևոր դեր է խաղում խորհրդի նախագահը, ով հնարավորություն է տալիս խորհրդի բոլոր անդամներին արտահայտել իրենց դիրքորոշումը:

Ամերիաբանկի տնօրենների խորհուրդն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է տնօրենների խորհրդի կանոնակարգով, որով սահմանվում են խորհրդի գործունեության հիմնական նպատակներն ու խնդիրները, իրավասությունների շրջանակը, նիստերի նախապատրաստման, հրավիրման և վարման կարգը:

Խորհրդի անդամների պաշտոնավարման ժամկետը սահմանվում է ընդհանուր ժողովի կողմից և չի կարող 5 տարուց պակաս և 10 տարուց ավել լինել, ընդ որում տնօրենների խորհրդի նախագահն ու անդամներն ունեն վերընտրվելու իրավունք: Բանկի այն բաժնետերերը, որոնք տիրապետում են բանկի տեղաբաշխված բաժնետոմսերի 10 և ավել տոկոսին, իրավունք ունեն առանց ընտրության ընդգրկվել բանկի տնօրենների խորհրդի կազմում կամ խորհրդի կազմում նշանակել իրենց ներկայացուցչին: Փոքր մասնակցություն ունեցող բաժնետերերը կարող են միավորվել և խորհրդի կազմում ընդգրկել իրենց միասնական ներկայացուցչին:

Խորհրդի կազմը, անդամների թիվը և որակավորումը, ինչպես նաև նրանց փոխընկերացնող փորձառությունն ու հմտություններն անմիջականորեն անդրադառնում են խորհրդի արդյունավետության վրա: Խորհուրդը պարբերաբար անդրադառնում է այս հարցին՝ հասկանալու համար, թե ինչպիսի մարդիկ են մեզ անհրաժեշտ ներկայում և կարող են անհրաժեշտ լինել ապագայում՝ հաջողության հասնելու համար: Գիտակցելով բազմազան հմտություններ և գիտելիքը մեկտեղելու բոլոր առավելությունները՝ մենք մեր տնօրենների խորհրդում ընդգրկել ենք բանկը հավուր պատշաճի ղեկավարելու համար անհրաժեշտ ամենատարբեր ունակություններ և փորձառություն ունեցող մարդկանց: Խորհրդի նոր անդամներ ներգրավելիս՝ մենք հաշվի ենք առնում աշխարհագրական բազմազանությունը, բանկային գործի, ակտիվների կառավարման, խորհրդատվության, ֆինանսների և միջազգային բիզնեսի ոլորտներում հարուստ մասնագիտական փորձը:

Խորհրդի համար կադրային պլանավորման նպատակն է խորհրդի և տնօրինության համար մշտապես ապահովել համապատասխան հմտություններով և փորձառությամբ մարդկային ռեսուրսներ: Մենք առաջնորդվում ենք հետևյալ սկզբունքով. չնայած նոր մարդիկ կարող են նոր շունչ հաղորդել առօրյա գործընթացներին և հանդես գալ նոր գաղափարներով՝ մենք բարձր ենք գնահատում նաև բանկում բազմամյա փորձ ունեցող անդամներին, ովքեր առավել խոր գիտելիք և պատկերացում ունեն բանկի ամեն մի գործընթացի մասին:

Խորհրդի արդյունավետ աշխատանքը բանկի հաջողության հիմնական գրավականներից է: Բանկը մշտապես իրականացնում է տնօրենների խորհրդի անդամների վերապատրաստման ծրագիր, որը հատուկ մշակված է ըստ նրանցից յուրաքանչյուրի պահանջների: Ծրագրի նպատակը խորհրդի անդամների շարունակական մասնագիտական զարգացումն է: Այն հնարավորություն է տալիս ընդլայնել մասնագիտական աշխարհայացքը, ավելի խոր պատկերացում կազմել բիզնեսի և շուկաների մասին:

2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ տնօրենների խորհրդի կազմում ընդգրկված էին հետևյալ 7 անդամները:

Տնօրենների խորհրդի կառուցվածքը

Անուն, ազգանուն	Պաշտոն	խորհրդի կազմում առաջին անգամ ընդգրկվելու տարին	խորհրդի կազմում վերընտրվելու տարին
Անդրեյ Մկրտչյան	Տնօրենների խորհրդի նախագահ	2007թ.	2013թ.
Ռուբեն Վարդանյան ⁶	Տնօրենների խորհրդի անդամ	2007թ.	2013թ.
Նուբար Աֆեյան	Տնօրենների խորհրդի անդամ	2010թ.	2010թ.
Ռոբերտ Փոն Ռեկովսկի	Տնօրենների խորհրդի անկախ անդամ	2012թ.	2012թ.
Պիեռ Գյուրջյան ⁷	Տնօրենների խորհրդի անդամ	2016թ.	2016թ.
Օլեգ Ցարկով	Տնօրենների խորհրդի անդամ	2016թ.	2016թ.
Ալեքսեյ Գերմանովիչ	Տնօրենների խորհրդի անդամ	2016թ.	2016թ.

Կենսագրականները ներկայացված են **82-88 էջերում**:

2017թ. տնօրենների խորհուրդն անցկացրեց 19 նիստ, որոնցից 2՝ առկա: Առկա նիստերում քննարկվեցին գլխավոր տնօրենի և ֆինանսական տնօրենի ներկայացրած հաշվետվությունները բանկի գործունեության մասին: Որպես կանոն, ռազմավարությանը և տարեկան գործարար ծրագրերին վերաբերող հարցերը քննարկվում են խորհրդի առկա նիստերում: Տնօրենների խորհրդին պարբերաբար հաշվետվություններ են ներկայացնում ռիսկերի կառավարման կենտրոնը, ներքին աուդիտի և ներքին հսկողության ստորաբաժանումները, ռազմավարության և հետազոտությունների բաժինը, մարդկային ռեսուրսների կառավարման և ներդրողների հետ փոխհարաբերությունների բաժինները:

ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՏՆՕՐԵՆՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ

Տնօրենների խորհրդին վերջինիս ընթացիկ աշխատանքում օժանդակելու համար բանկում հիմնվել են խորհրդին կից կոմիտեներ: 2016թ. մշակվել և հաստատվել էին կոմիտեների գործունեությունը կարգավորող իրավական ակտերը, իսկ 2017թ. կոմիտերն սկսեցին փաստացի աշխատանքը:

Կոմիտեների կազմում ընդգրկվելը որևէ կերպ չի ազդում տնօրենների խորհրդի իրավասությունների ու պարտականությունների վրա և չի սահմանափակում դրանք: Կոմիտեներն իրենց գործունեության մեջ անկախ են և իրենց պարտականություններն իրականացնում են ինքնուրույն, սակայն վերջնական հաստատման համար կոմիտեների որոշումները և նախագծերը ներկայացվում են տնօրենների խորհրդին: Համաձայն բանկի ներքին կանոնակարգերի՝ համակողմանի ուսումնասիրման ենթակա ցանկացած հարց նախ պետք է քննարկվի կոմիտեների մակարդակով, այնուհետև ներկայացվի տնօրենների խորհրդին:

Ներկայումս բանկում գործում է խորհրդին կից երեք կոմիտե. աուդիտի կոմիտե, վարձատրության կոմիտե, կորպորատիվ կառավարման և ղեկավար անձնակազմի նշանակման կոմիտե:

Աուդիտի կոմիտե

Կոմիտեի հիմնական նպատակն է ապահովել բաժնետերերի շահերի պաշտպանությունը, բարձրացնել բանկում ֆինանսական հաշվետվողականության, արտաքին աուդիտի, ռիսկերի կառավարման և ներքին հսկողության արդյունավետությունը:

2017թ. աուդիտի կոմիտեն անցկացրեց 5 նիստ, որոնց ընթացքում քննարկվեցին ՖՀՄՍ համաձայն ներկայացվող եռամսյակային ֆինանսական հաշվետվությունները, ներքին աուդիտի ստորաբաժանման եռամսյակային հաշվետվությունները և ներքին հսկողության համակարգի ընդհանուր արդյունավետությունը:

Վարձատրության կոմիտե

Կոմիտեի նպատակն է աջակցել բանկում վարձատրության արդյունավետ համակարգի ձևավորմանը, ապահովել համակարգի որակի գնահատումը, իրականացնել վարձատրության կիրառվող մեխանիզմների մոնիթորինգ՝ լավագույն մասնագետներին ներգրավելու և պահելու, ինչպես նաև չարաշահման ցանկացած հնարավորություն բացառելու նպատակով:

2017թ. վարձատրության կոմիտեն անցկացրեց 4 նիստ: Ըստ սահմանված կարգի՝ նիստերից մեկը կայացավ կիսամյակային և տարեկան գնահատումից հետո՝ քննարկելու համար անձնակազմի տարեկան պարգևատրման հարցը, տնօրենների խորհրդին համապատասխան առաջարկություններ ներկայացնելու, քննարկելու ղեկավարների վարձատրությունը և անձնակազմի գնահատման ընդհանուր

համակարգը: Կոմիտեն նաև նախաձեռնեց անձնակազմի բաժնեմասնակցության սխեման և համապատասխան առաջարկություններ ներկայացրեց խորհրդին: 2018թ. նախատեսվում է ներդնել անձնակազմի բաժնեմասնակցության նոր հայեցակարգ:

Կորպորատիվ կառավարման և ղեկավար անձնակազմի նշանակման կոմիտե

Կոմիտեի նպատակը բանկի տնօրենների խորհրդի, վերջինիս կից կոմիտեների և ղեկավարության համար արհեստավարժ, փորձառու, առաքինի մասնագետներից բաղկացած կադրային բազայի ստեղծումն է, ըստ անհրաժեշտության նրանց համապատասխան պաշտոններում ներգրավումը, այդ թվում՝ փոխարինելիության ապահովումն ու կադրային բարելավումը, ինչպես նաև կիրառելի օրենսդրական կարգավորմանը համապատասխան՝ կորպորատիվ կառավարման միջազգային լավագույն փորձի ներդնումը:

2017թ. կոմիտեն անցկացրեց 1 նիստ, որի ընթացքում քննարկվեց խորհրդի բոլոր 7 անդամների անկախության հարցը, և ներկայացվեցին համապատասխան առաջարկություններ որոշ անդամների որպես անկախ անդամ դիտարկելու վերաբերյալ: Կոմիտեն նաև վերանայեց անկախության գործող չափանիշները՝ ահապովելու համար համապատասխանությունը լավագույն միջազգային փորձին:

ԿՈՄԻՏԵՆԵՐ	Սուղիտի կոմիտե	Վարձատրության կոմիտե	Կորպորատիվ կառավարման և ղեկավար անձնակազմի նշանակման կոմիտե
Անդրեյ Մկրտչյան			Նախագահ
Ռուբեն Վարդանյան		Նախագահ	անդամ
Նուբար Աֆեյան		անդամ	անդամ
Ռոբերտ ֆոն Ռեկովսկի	անդամ		
Պիեռ Գյուրջյան	Նախագահ		
Օլեգ Ցարկով	անդամ		
Ալեքսեյ Գերմանովիչ		անդամ	



Անդրեյ Մկրտչյան
Տնօրենների խորհրդի նախագահ

Ծննդյան ամսաթիվ՝ 2 դեկտեմբերի, 1973

Պրն Անդրեյ Մկրտչյանը «Ամերիաբանկ» ՓԲԸ տնօրենների խորհրդի նախագահն է 2013թ. նոյեմբերի 27-ից, իսկ մինչ այդ՝ 2007թ-ից մինչև 2013թ., հանդիսացել է «Ամերիաբանկ» ՓԲԸ տնօրենների խորհրդի անդամ:

Փորձը և հմտությունները

Ա. Մկրտչյանն «Ամերիա» ՓԲԸ գործադիր տնօրենն է և տնօրենների խորհրդի նախագահը: Նա կանգնած է եղել Հայաստանում ներդրումաբանկային և խորհրդատվական ծառայությունների ակունքներում: Նրա հարուստ փորձը ռազմավարական կառավարման ոլորտում դարձել է «Ամերիա» խմբի աճի ու զարգացման գրավականը: Անդրեյ Մկրտչյանն առաջին գործարարն է Հայաստանից, ով դարձել է Համաշխարհային

տնտեսական համաժողովի նոր առաջնորդների ենթախմբերից մեկի հիմնադիր անդամը: Ա. Մկրտչյանը նաև մի շարք մասնավոր և պետական կազմակերպությունների խորհուրդների անդամ է:

Ա. Մկրտչյանն ամենայն հայոց կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ-ի կողմից արժանացել է պատվո շքանշանի՝ Հայ առաքելական եկեղեցու համար կատարած բարեգործական գործունեության համար:

Կրթությունը

Ա. Մկրտչյանը իր մագիստրոսի գիտական աստիճանն ստացել է Երևանի պետական համալսարանի տնտեսագիտության ֆակուլտետում: Ստացել է Ամերիկյան Տնտեսական Ասոցիացիայի (AEA) կրթաթոշակը Կոլորադոյի պետական համալսարանի տնտեսագիտական բաժնում իր գիտական աշխատանքի համար, ինչպես նաև մասնակցել է մի շարք համալսարանների ծրագրերին, այդ թվում՝ Kingston Business School, Harvard Business School, INSEAD և այլն:



Ռոբերտ Ֆոն Ռեկովսկի
Տնօրենների խորհրդի անկախ անդամ

Ծննդյան ամսաթիվ՝ 26 հուլիսի, 1966

Պրն Ռոբերտ Ֆոն Ռեկովսկին զբաղեցնում է Ամերիաբանկի տնօրենների խորհրդի անկախ անդամի պաշտոնը 2012թ. հոկտեմբերից:

Փորձը և հմտությունները

Համաշխարհային ակտիվների կառավարման ոլորտում շուրջ 30 տարվա փորձառություն ունեցող Ռոբերտ Ֆոն Ռեկովսկին Fidelity Investments ընկերության՝ զարգացող շուկաների ռազմավարության բաժնի փոխնախագահն է: Կառավարել է ամերիկյան և կանադական ներդրողների մի շարք ինստիտուցիոնալ և մանրածախ ներդրումային հիմնադրամներ զարգացող շուկաներում:

1989թ-ին ընդունվել է Fidelity Investments ընկերության՝ ֆիքսված եկամտաբերությամբ ներդրումների բաժին: 1995թ-ին զարգացող շուկաների պարտքային գործիքների կառավարման խմբի հետ տեղափոխվել է բարձր եկամտաբերությամբ ներդրումների բաժին՝ որպես սուվերեն պարտքային գործառնությունների վերլուծաբան: 1996-1998թթ. ընկերության լոնդոնյան գրասենյակում զբաղվել է եվրոպական շուկայում կապիտալ ներդրումների ուսումնասիրությամբ՝ միաժամանակ շարունակելով զբաղեցնել վերլուծաբանի իր պաշտոնը: 2002-2004թթ. եղել է զարգացող շուկաների հիմնադրամների՝ Եվրոպայի, Մերձավոր Արևելքի և Աֆրիկայի տարածաշրջանների մասով պատասխանատու առաջատար կառավարիչ: 2004թ-ին տեղափոխվել է Բոստոն, ուր ստանձնել է ընկերության՝ զարգացող շուկաներում կապիտալի ներդրումային հիմնադրամների կառավարումը:

Կրթությունը

Ստացել է քաղաքագիտության բակալավրի գիտական աստիճան Նյու-Յորքի նահանգային համալսարանում՝ Օլբանիում (ԱՄՆ), ինչպես նաև քաղաքագիտության մագիստրոսի կոչում՝ Հյուսիսարևելյան համալսարանում (ԱՄՆ): Ունի նաև ֆինանսների մագիստրոսի կոչում, որն ստացել է Բրենդայզ համալսարանում:



**Ռուբեն Վարդանյան
Տնօրենների խորհրդի անդամ**

Ծննդյան ամսաթիվ՝ 25 մայիսի, 1968

Ռուբեն Վարդանյանն Ամերիաբանկի տնօրենների խորհրդի անդամ է նշանակվել 2013թ. նոյեմբերի 27-ին: Դրանից առաջ՝ բանկի վերակազմավորման պահից (2007թ.), զբաղեցրել է «Ամերիաբանկ» ՓԲԸ տնօրենների խորհրդի նախագահի պաշտոնը:

Փորձը և հմտությունները

Ռուբեն Վարդանյանը հայտնի ներդրող է և ձեռներեց, ներդրումային բանկիր՝ ավելի քան 25 տարվա փորձով, նշանակալից դեր է խաղացել Ռուսաստանի կապիտալի շուկաների կայացման գործում: «Վարդանյան, Բրոյթման և Գործընկերներ» ընկերության հիմնադիրներից մեկն է և նախագահը, խորհրդի անդամ բազմաթիվ ընկերություններում Ռուսաստանում և այլուր, Միջազգային ֆինանսական

կորպորացիայի Տնտեսական խորհրդատվական խորհրդի անդամ: Նախքան 2012թ. հունվարին Սբերբանկի հետ միավորումը զբաղեցնում էր Ռուսաստանի և ԱՊՀ առաջին և խոշորագույն ներդրումային բանկերից մեկի՝ «Տրոյկա Դիալոգ»-ի տնօրենների խորհրդի նախագահ - գլխավոր տնօրենի պաշտոնը: Խորհրդի նախագահն է հետևյալ ընկերություններում՝ «ՍՈԼԵՐՍ» (ռուսական առաջատար ավտոմոբիլային ընկերություն), «ԿԱՄԱԶ», «ՄԻԲՈՒԲ Հոլդինգ», հանդիսանում է «Ավիքա Փրոփերթի Ինվեսթորս Ինթերնեշնլ» ընկերության ներդրումային կոմիտեի անդամ: Նա նաև ՌԴ Պետական դումայի նախագահին առընթեր ներդրումային խորհրդի և Արդյունաբերության և առևտրի նախարարությանն առընթեր՝ նոր ոլորտներում ներդրումների ռազմավարական խորհրդի անդամ է: Հանդիսանում է Մոսկվայի «ՄԿՈԼԿՈՎՈ» կառավարման դպրոցի հիմնադիր-գործընկեր, դպրոցի խորհրդատվական միջազգային խորհրդի նախագահի տեղակալ, ՄԿՈԼԿՈՎՈ-յի Զարգացող շուկաների հետազոտության ինստիտուտի նախագահ, Scholae Mundi հիմնադրանի և Դիլիջանի միջազգային դպրոցի համահիմնադիր, Fundação Dom Cabral բիզնես-դպրոցի (Բրազիլիա) և Գուանգհայի կառավարման դպրոցի (Չինաստան) միջազգային խորհրդատվական խորհուրդների անդամ: Ռուսաստանի նախագահին առընթեր ժողովրդական տնտեսության և քաղաքացիական ծառայության ազգային ակադեմիայի և Լոմոնոսովի անվան պետական համալսարանի տնտեսագիտության ֆակուլտետի հոգաբարձուների խորհրդի անդամ է: Ռուբեն Վարդանյանը «Հայաստանի զարգացման նախաձեռնություններ» (IDeA) հիմնադրամի համահիմնադիրն է և խորհրդի նախագահը, «100 կյանք» նախաձեռնության և «Ավրորա» մարդասիրական մրցանակի համահիմնադիր, Հայկական բարեգործական ընդհանուր միության կենտրոնական խորհրդի անդամ:

Կրթությունը

Ռուբեն Վարդանյանն ավարտել է Մոսկվայի պետական համալսարանի տնտեսագիտության ֆակուլտետը, որից հետո ուսանել է մի շարք միջազգային ինստիտուտներում և դպրոցներում, այդ թվում՝ INSEAD-ում, Հարվարդի բիզնես-դպրոցում, Յեյլի համալսարանում և Սթենֆորդում:



Նուբար Աֆեյան
Տնօրենների խորհրդի անդամ

Ծննդյան ամսաթիվ՝ 25 հուլիսի, 1962

Պրն Նուբար Աֆեյանն Ամերիաբանկի տնօրենների խորհրդի անդամ է նշանակվել 2010թ. հուլիսին:

Փորձը և հմտությունները

Դոկտոր Աֆեյանը Flagship Pioneering ընկերության հիմնադիր է, ավագ ղեկավար գործընկեր և գլխավոր տնօրեն: Ընկերությունը ներդրումներ է կատարում նորաստեղծ ընկերություններում և վենչուրային նախաձեռնություններում առողջապահության և կենսաբանական տեխնոլոգիաների ոլորտներում, և ներկա պահին պորտֆելի արժեքը կազմում է ավելի քան 1.75 մլրդ ԱՄՆ դոլար: Ն. Աֆեյանը նաև ղեկավարում է ընկերության Flagship VentureLabs ստորաբաժանումը, որն զբաղվում է ստարթափների ստեղծմամբ և գործարկմամբ:

Դոկտոր Աֆեյանը Մասաչուսեթսի տեխնոլոգիական ինստիտուտի Սլոունի մենեջմենթի դպրոցի ավագ դասախոս է. 2000 թ-ից ի վեր դասավանդում է տեխնոլոգիական ձեռներեցություն, նորարարության և առաջնորդություն: Ստացել է կենսատեխնիկական գիտությունների դոկտորի կոչում (Մասաչուսեթսի տեխնոլոգիական ինստիտուտ), բազմաթիվ գիտական հոդվածների և արտոնագրերի հեղինակն է:

Վերջին երեք տասնամյակի ընթացքում Ն. Աֆեյանը մասնակցել է կենսաբանական և տեխնոլոգիական ուղղվածություն ունեցող 35-ից ավել հաջողակ ստարթափների հիմնադրմանը և կայացմանը: Նա կենսաբանական սարքավորումների և գործիքների արտադրության ոլորտի առաջատար PerSeptive Biosystems-ի հիմնադիրն էր և գործադիր տնօրենը: Applera Corporation-ի կողմից PerSeptive-ի ձեռքբերումից հետո Ն. Աֆեյանը դարձավ Applera-ի գլխավոր փոխնախագահը և տնօրենը, նախաձեռնեց և վերահսկեց Celera Genomics ընկերության ստեղծումը: Ներկայումս պ-ն Աֆեյանը մի շարք պետական և մասնավոր ընկերությունների խորհրդի անդամ է: Դրանց շարքում են Codiak Biosciences, Evelo BioSciences, Kaleido BioSciences, Moderna Therapeutics, Axcella Health և Seres Therapeutics ընկերությունները: Արժանացել է համաշխարհային տնտեսական համաժողովի «Technology Pioneer 2012» մրցանակին: Ն. Աֆեյանը Հայկական բարեգործական ընդհանուր միության, «Հայաստանի զարգացման նախաձեռնություններ» (IDeA) բարեգործական հիմնադրամի և Դիլիջանի միջազգային դպրոցի խորհրդի անդամ է: Ներգրավված է մի շարք բարեգործական նախաձեռնություններում, «100 կյանք» նախագծի և «Ավրորա» մարդասիրական նախաձեռնության համահիմնադիրներից է:

Կրթությունը

Ստացել է քիմիական ճարտարագիտության բակալավրի աստիճան McGill համալսարանից: Ունի կենսատեխնիկական գիտությունների դոկտորի կոչում (Մասաչուսեթսի տեխնոլոգիական ինստիտուտ):



Պիեռ Գյուրջյան
Տնօրենների խորհրդի անդամ

Ծննդյան ամսաթիվ՝ 8 փետրվարի, 1961

Պրն Պիեռ Գյուրջյանն Ամերիաբանկի տնօրենների խորհրդի անդամ է նշանակվել 2016թ. դեկտեմբերին:

Փորձը և հմտությունները

Պ. Գյուրջյանը Բելգիայի խոշորագույն համալսարաններից մեկի՝ Բյուսելի ազատ համալսարանի տնօրենների խորհրդի նախագահն է: Աշխատում է RVVZ հիմնադրամում որպես գործընկեր, պատասխանատու է հիմնադրամի միջազգային բարեգործական ծրագրերի համար:

Նախքան RVVZ հիմնադրամին անդամակցելը Պ. Գյուրջյանը 27 տարի աշխատել է «ՄզՔինգի ընդ Քամփնի» ընկերությունում որպես ավագ գործընկեր: 2005-2012թթ. եղել է ընկերության լուսնամբարանային գրասենյակի ղեկավար գործընկերը, այնուհետև ստանձնել մարդկային կապիտալի կառավարման

ծառայությունների ղեկավարումը Եվրոպայի, Մերձավոր Արևելքի և Աֆրիկայի տարածաշրջանում: Այդ ընթացքում աջակցում էր ընկերության հաճախորդներին անձնական և ինստիտուցիոնալ առաջնորդության կարողությունների զարգացման հարցում: Պ. Գյուրջյանի մասնագիտական հարուստ փորձը ներառում է խորհրդատվության տրամադրում բազում ոլորտներում՝ կառավարում, ռազմավարություն, արդյունավետություն, կազմակերպական հարցեր, գործառնություններ և ընկերությունների վերակազմավորում տարածաշրջանային մակարդակով, այդ թվում՝ ինտեգրում միաձուլումներից հետո: Պ. Գյուրջյանն ակտիվորեն մասնակցում էր մի շարք ֆորումների (Բաուերի ֆորում, Ղեկավարների առաջխաղացում, Փոփոխության առաջնորդներ)՝ որպես ավագ դասընթացավար, ինչպես նաև ընկերության ավագ գործընկերների համար նախատեսված ներքին ուսումնական ծրագրերին, որոնց շարքում հատկապես առանձնանում է INSEAD-ի և Հարվարդի համալսարանի առաջատար դասախոսների մասնակցությամբ անցկացվող խորհրդատվության վարպետության դասերի ծրագիրը: Անդամակցում է Նախագահների համաշխարհային կազմակերպությանը, YouthStart Belgium-ի (նախկինում NFTE Belgium) տնօրենների խորհրդի նախագահն է և Բելգիայի Հարվարդի ակումբի նախկին նախագահը: Հետաքրքրվում է փիլիսոփայությամբ, որի հիման վրա մշակել է «Առաջնորդություն և իմաստություն» նորարարական ուսումնական ծրագիրը: Դասավանդում է «Գործադիր տնօրենների հեռանկարներ» Բյուսելի ազատ համալսարանի Մոլվեյ բիզնես դպրոցում: Նա նաև բելգիական առաջատար UCB դեղագործական ընկերության տնօրենների խորհրդի անդամ է,

«Հայաստանի զարգացման նախաձեռնություններ» (IDeA) հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի, ինչպես նաև Դիլիջանի միջազգային դպրոցի կառավարիչների և հոգաբարձուների խորհրդի անդամ:

Կրթությունը

Ավարտել է Բյուսելի ազատ համալսարանը (կոմերցիոն ճարտարագիտություն որակավորմամբ) և Հարվարդի բիզնես-դպրոցը (գործարար կառավարման մագիստրոսի կոչմամբ):



**Ալեքսեյ Գերմանովիչ
Տնօրենների խորհրդի անդամ**

Ծննդյան ամսաթիվ՝ 19 հուլիսի, 1977

Պրն Ալեքսեյ Գերմանովիչն Ամերիաբանկի տնօրենների խորհրդի անդամ է նշանակվել 2016թ. օգոստոսին:

Փորձը և հմտությունները

Ա. Գերմանովիչը պրոֆեսիոնալ անկախ տնօրեն է, Ռուսաստանի՝ կորպորատիվ հաղորդակցման և ներդրողների հետ փոխհարաբերությունների ոլորտում ամենակարկառուն մասնագետներից մեկը: Ունի ռուսական խոշոր ընկերություններում որպես տնօրենների խորհրդի և գործադիր մարմինների անդամ աշխատելու 16 տարվա փորձ (ֆինանսների, տրանսպորտի և ավիացիայի, ավտոմոբիլային տրանսպորտի, հանքագործության և մետաղաձուլության, մեդիայի և հաղորդակցման ոլորտներում):

Ներկայում «Աերոֆլոտ-ռուսական ավիաուղիներ», «Բանկ Սանկտ-Պետերբուրգ» և «Ունիպրո» (նախկին «Է.ՕՆ Ռոսիա») ընկերությունների խորհրդի անդամ է: Նախկինում եղել է Պետական տրանսպորտային լիզինգային ընկերության, Միբիրյան ավիաուղիների, «Իրկուտսկ» միջազգային օդանավակայանի, «ՄԳ Տրանս», «Ռեն ԹիՎի», «Սոլերս» («Մևեոստալ-Ավտո») և մի շարք այլ ընկերությունների խորհրդի անդամ, ինչպես նաև «Մևեոստալ Գրուպ»-ի և Ռուսական ուղղակի ներդրումների հիմնադրամի գործադիր մարմնի անդամ: Անկախ տնօրենների ասոցիացիայի, PwC ընկերության և Ռուսաստանի արդյունաբերողների և ձեռներեցների միության կողմից 2013, 2014, 2015 և 2016թթ. ընդգրկվել է Ռուսաստանի 50 լավագույն անկախ տնօրենների ցուցակում: Ա. Գերմանովիչը Ռուսաստանի պետական գույքի կառավարման դաշնային գործակալության փորձագիտական խորհրդին կից կորպորատիվ կառավարման կոմիտեի նախագահն է: Ա. Գերմանովիչն ունի նաև դասախոսական գործունեության փորձ: Աշխատել է Մոսկվայի «ՄԿՈԼԿՈՎՈ» կառավարման դպրոցում որպես պետական և սոցիալական ծրագրերի տնօրեն և դասախոս:

Անկախ տնօրենների ասոցիացիայի, Ռուսաստանի տնօրենների ինստիտուտի, Ռուսաստանի արդյունաբերողների և ձեռներեցների միության, Կորպորատիվ տնօրենների և ղեկավարների ասոցիացիայի անդամ է:

Կրթությունը

Ավարտել է Մոսկվայի Լոմոնոսովի անվան պետական համալսարանը տնտեսագետի և լրագրողի որակավորումներով: Ունի ղեկավարի գործարար կառավարման մագիստրոսի կոչում Քրենֆիլդի համալսարանից (Մեծ Բրիտանիա):



Օլեգ Ցարկով
Տնօրենների խորհրդի անդամ

Ծննդյան ամսաթիվ՝ 22 սեպտեմբերի, 1966

Պրն Օլեգ Ցարկովն Ամերիաբանկի տնօրենների խորհրդի անդամ է նշանակվել 2016թ. սեպտեմբերին:

Փորձը և հմտությունները

Օ. Ցարկովն զբաղեցնում է գործադիր տնօրենի պաշտոնը Phoenix Advisors ընկերությունում, որը մասնագիտանում է իրավաբանական և ֆիզիկական անձանց, ինչպես նաև բարեգործական հիմնադրամների կարողության և դրամական միջոցների կառավարման և պլանավորման մեջ: Մինչ այդ նա Svarog Capital Advisors ընկերության ղեկավար գործընկեր էր՝ 2004թ. մարտից ի վեր տնօրինելով շուրջ 500 միլիոն ԱՄՆ դոլարի մասնավոր բաժնեմասնակցային ֆոնդեր:

2000-2003թթ. ղեկավարել է Ռուսաստանի ամենահին և ամենամեծ ներդրումային բանկերից մեկի՝ «Տրոյկա Դիալոգ»-ի ներդրումային բանկային վարչությունը: Նրա օրոք «Տրոյկա Դիալոգ»-ը դարձավ ռուսական շուկայի առաջատարը միջին կապիտալացմամբ ներդրումային գործառնությունների ոլորտում և ռուբլով պարտատոմսերի թիվ 1 անդերրայթերը: 1996-1998թթ. Օ. Ցարկովը «Կրեդիտանստալտ Գրանտի»-ի՝ այն ժամանակվա ռուսական խոշորագույն բրոքերային ընկերության գործադիր տնօրենն էր: Միաժամանակ Ֆոնդային շուկայի մասնակիցների ազգային ասոցիացիայի, Դեպոզիտար քլիրինգային ընկերության և Ռուսական առևտրային համակարգի անդամ էր: Ֆինանսական շուկաներում աշխատում է 1992թ-ից ի վեր:

Կրթությունը

1999թ. ավարտել է Ռեդինգի համալսարանի ISMA բիզնես դպրոցը (Մեծ Բրիտանիա)՝ ստանալով մագիստրոսի կոչում՝ «միջազգային ֆինանսական շուկաներ» մասնագիտացմամբ:

ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՏՆՕՐԻՆՈՒԹՅՈՒՆ

Բանկի ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է բանկի գործադիր մարմինը՝ տնօրինությունն ու տնօրինության նախագահ-գլխավոր տնօրենը: Տնօրինության կազմի մեջ են մտնում գլխավոր տնօրենը և 9 անդամ (այդ թվում՝ գլխավոր տնօրենի տեղակալ): Գլխավոր տնօրենին և վերջինիս ներկայացմամբ տնօրինության անդամներին նշանակում է տնօրենների խորհուրդը:

Տնօրինության և գլխավոր տնօրենի իրավասությանն են պատկանում բանկի ընթացիկ գործունեության կառավարման բոլոր հարցերը, բացառությամբ կանոնադրությամբ այլ մարմինների բացառիկ իրավասությանը վերապահված հարցերի:

Արտակ Հանեյան **Տնօրինության նախագահ, գլխավոր տնօրեն**

Ծննդյան ամսաթիվ՝ 12 փետրվարի, 1973

2007թ. հոկտեմբերին պրն Արտակ Հանեյանն ստանձնեց «Հայներարտբանկ» ՓԲԸ-ի, ներկայումս՝ «Ամերիաբանկ» ՓԲԸ-ի գլխավոր տնօրենի պաշտոնը, իսկ 2008թ. ապրիլից առ այսօր զբաղեցնում է «Ամերիաբանկ» ՓԲԸ-ի տնօրինության նախագահ-գլխավոր տնօրենի պաշտոնը:

Փորձը և հմտությունները

Ա. Հանեյանն ունի ՀՀ բանկային համակարգում բարձրագույն ղեկավար պաշտոններում աշխատելու հարուստ փորձ: Այս ոլորտում նա աշխատում է ավելի քան 20 տարի, որոնց ընթացքում զբաղեցրել է մի շարք կարևոր պաշտոններ «Կոնվերս Բանկ» ՓԲԸ-ում, ներառյալ գլխավոր տնօրենի պաշտոնը (2006-2007), ֆինանսական գլխավոր վարչության պետի, վարչության նախագահի տեղակալի պաշտոնները (1998-2006):

ՀՀ Կենտրոնական բանկում աշխատել է հետևյալ պաշտոններում՝ վերահսկողության, կարգավորման և արտոնագրման վարչության մասնագետ, ավագ մասնագետի, վերահսկողության վարչության առաջին բաժնի պետ (1995-1998թթ.): Աշխատել է «Արմինվեստբանկ» ՓԲԸ-ում որպես ինժեներ (1993-1994թթ.):

Կրթությունը

Ավարտել է Երևանի պետական համալսարանի միջազգային տնտեսական հարաբերությունների ֆակուլտետը՝ ստանալով մագիստրոսի կոչում:

Գևորգ Թառումյան

Տնօրինության անդամ, գլխավոր տնօրենի տեղակալ, ֆինանսական տնօրեն

Ծննդյան ամսաթիվ՝ 23 մայիսի, 1969

Պրն Գևորգ Թառումյանը տնօրինության անդամ է նշանակվել 2012թ. օգոստոսին:



Փորձը և հմտությունները

Գևորգ Թառումյանն ունի տեղական և միջազգային բանկերում ֆինանսական տնօրենի պաշտոնում աշխատելու ավելի քան 15 տարվա փորձ, որն անգնահատելի է այժմ Ամերիաբանկի տնօրինության համար: Բանկային համակարգում իր գործունեությունն սկսել է 1994թ. ՀՀ Կենտրոնական բանկի վերահսկողության ծառայությունում, որտեղ զբաղեցրել է տարբեր ղեկավար պաշտոններ, ինչպես նաև իրականացրել է Միջին Ասիայի և Կովկասի բանկերի վերահսկողության բազելյան կոմիտեի տարածաշրջանային խմբի համակարգումը Հայաստանում: 1999թ. տեղափոխվել է «Հայերարտբանկ» ՓԲԸ

որպես ֆինանսական տնօրեն, իսկ 2006թ. նշանակվել է նույն բանկի գլխավոր տնօրենի տեղակալ: Աշխատել է «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ-ում որպես գլխավոր տնօրեն-տնօրինության նախագահի տեղակալ և ֆինանսական ղեկավարամենտի տնօրեն (2007-2008), այնուհետև՝ «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ում որպես գլխավոր ֆինանսական տնօրեն: 2012թ. մարտի 6-ին նշանակվել է «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ գլխավոր գործադիր տնօրենի տեղակալ: Գևորգ Թառումյանն աշխատում է «Ամերիաբանկ» ՓԲԸ-ում 2012թ. հունիսից որպես գլխավոր տնօրենի տեղակալ և ֆինանսական տնօրեն:

Բանկային համակարգում աշխատանքը Գևորգ Թառումյանը համատեղել է դասախոսական գործունեության հետ՝ բանկային համակարգի աշխատողների համար կարգալով դասախոսություններ ֆինանսական վերլուծության և ռիսկերի կառավարման թեմաներով: Հանդիսանում է բանկային գործ, ֆինանսական վերլուծություն և ռիսկերի կառավարում թեմաներով մի շարք ձեռնարկների հեղինակ և համահեղինակ:

Կրթությունը

Ավարտել է Երևանի պետական տնտեսագիտական ինստիտուտը, մասնակցել է Լոնդոնի Տնտեսագիտության բարձրագույն դպրոցի՝ ղեկավարների համար նախատեսված դասընթացին:



Գագիկ Սահակյան

Տնօրինության անդամ, կորպորատիվ հաճախորդների գծով տնօրեն

Ծննդյան ամսաթիվ՝ 16 հունիսի, 1973

Պրն Գագիկ Սահակյանը տնօրինության անդամ է նշանակվել 2012թ. փետրվարին:

Փորձը և հմտությունները

Գ. Սահակյանն ունի Հայաստանում որպես խորհրդական և ղեկավար աշխատելու մեծ փորձ: Ավելին, նա՝ Ամերիա թիմում է եղել մեր սկզբնավորման օրից՝ նախ աշխատելով որպես ավագ խորհրդական, իսկ հետո՝ գործընկեր և կառավարման խորհրդատվության բաժնի ղեկավար (1999-2012): Մասնակցել է Հայներարտբանկի ձեռքբերման ամբողջ գործընթացին, Ամերիաբանկում զբաղեցրել է կարևոր պաշտոններ՝ խորհրդական (2008-2010թթ.), կորպորատիվ հաճախորդների գծով տնօրեն (2010-2012թթ.), տնօրինության անդամ - կորպորատիվ հաճախորդների գծով տնօրեն (2012թ.-ից առ այսօր):

Կրթությունը

Ավարտել է Երևանի պետական համալսարանի մաթեմատիկայի ֆակուլտետը: 1995-1997թթ. ուսումը շարունակել է Հայաստանի ամերիկյան համալսարանի գործարար կառավարման ֆակուլտետում և ստացել գործարար կառավարման մագիստրոսի որակավորում: Հետագայում մասնակցել է Հարվարդի համալսարանի Քենեդի կառավարման դպրոցի դասընթացին, 2004թ.:



Արման Բարսեղյան
Տնօրինության անդամ, մանրածախ գործառնությունների տնօրեն

Ծննդյան ամսաթիվ՝ 1 հուլիսի, 1976

Պրն Արման Բարսեղյանը տնօրինության անդամ է նշանակվել 2012թ. սեպտեմբերին:

Փորձը և հմտությունները

Արման Բարսեղյանը շուրջ 20 տարի է, ինչ աշխատում է մանրածախ բանկային գործառնությունների ոլորտում: Արման Բարսեղյանն իր աշխատանքային ուղին սկսել է 1997թ. «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ում (նախկինում Միդլենդ Արմենիա Բանկ ԲԸ) որպես ֆինանսական վերահսկողության բաժնի մասնագետ: Այնուհետև զբաղեցրել է տարբեր պաշտոններ, մասնավորապես՝ ֆինանսական վերահսկողության բաժնի գործառնությունների կառավարիչ (2001-2004թթ.), մասնաճյուղի կառավարիչ (2004-2008թթ.) և մանրածախ ծառայությունների դեպարտամենտի տնօրեն (2008-2012թթ.):

Արման Բարսեղյանն ստանձնել է «Ամերիաբանկ» ՓԲԸ-ի մանրածախ գործառնությունների գծով տնօրենի պաշտոնը 2012թ. հունիսին:

Կրթությունը

Ավարտել է Երևանի ժողովրդական տնտեսության ինստիտուտը՝ «միջազգային էկոնոմիկա» մասնագիտացմամբ, այնուհետև ստացել է տնտեսագիտության թեկնածուի գիտական կոչում ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի տնտեսագիտության ինստիտուտում:



Արթուր Բաբայան

Տնօրինության անդամ, առևտրային գործառնությունների գծով տնօրեն

Ծննդյան ամսաթիվ՝ 22 նոյեմբերի, 1972

Պրն Արթուր Բաբայանը տնօրինության անդամ է նշանակվել 2013թ. դեկտեմբերին:

Փորձը և հմտությունները

Ա. Բաբայանը բանկային համակարգում իր մասնագիտական ուղին սկսել է 1999թ. «Հայներարտբանկ» ՓԲԸ-ում, ներկայումս՝ Ամերիաբանկ, որտեղ աշխատելով առ այսօր՝ զբաղեցրել է տարբեր պաշտոններ՝ արտարժույթային և ֆոնդային գործառնությունների վարչության ղիլեր (1999-2001), գլխավոր ղիլեր (2001-2002), ղիլինգային կենտրոնի ղեկավար (2002-2013), առևտրային գործառնությունների գծով տնօրեն (2013): 2013թ. նշանակվել է տնօրինության անդամի պաշտոնակատար, ապա՝ տնօրինության անդամ-առևտրային գործառնությունների գծով տնօրեն (2013թ.-ից առ այսօր):

Կրթությունը

Ավարտել է Երևանի պետական համալսարանի ֆիզիկայի ֆակուլտետը:



Տիգրան Ջրբաշյան
Տնօրինության անդամ, զարգացման գծով տնօրեն

Ծննդյան ամսաթիվ՝ 23 հունվարի, 1968

Տիգրան Ջրբաշյանը տնօրինության անդամ է եղել 2008թ. նոյեմբերից 2011թ. դեկտեմբերը և 2013թ. հունիսից առ այսօր:

Փորձը և հմտությունները

Տ. Ջրբաշյանը Հայաստանի տնտեսության հիմնական ոլորտներում կառավարման խորհրդատվության ավելի քան 20 տարվա փորձ ունի: Նա Հայաստանում ռազմավարության մշակման, ճյուղային բարեփոխումների, իրավական ակտերի մշակման, ինստիտուցիոնալ հնարավորությունների ընդլայնման ոլորտներում ամենակարկառուն փորձագետներից մեկն է: Նրա մշակած լուծումների շնորհիվ բազում պետական և մասնավոր հաստատություններ կարողացել են զգալիորեն բարելավել իրենց գործունեության արդյունավետությունը, ճիշտ օգտագործել կազմակերպության ռեսուրսները, մարդկային կապիտալը, համակարգել բիզնես գործընթացները: Հեղինակել է ավելի քան 130 գիտական հոդված և հրապարակում ինստիտուցիոնալ տնտեսագիտության, արդյունաբերական տնտեսագիտության, ներդրումային և ֆինանսական շուկայի զարգացման, առևտրային քաղաքականության մշակման, մակրոտնտեսական տեսության, Հայաստանի՝ ԵՄ-ին ինտեգրման և ԱՀԿ-ին անդամակցության խնդիրների վերաբերյալ, որոնք տպագրվել են տեղական և միջազգային ամսագրերում և հանդեսներում:

Տ. Ջրբաշյանն ընդունվել է աշխատանքի Ամերիաբանկում 2008թ. որպես խորհրդական, իսկ այնուհետև՝ որպես զարգացման գծով տնօրեն: Առաջին անգամ տնօրինության անդամ է նշանակվել 2008թ. և պաշտոնավարել մինչև 2011թ.: 2013թ. կրկին նշանակվել է տնօրինության անդամ: Ներկայում նաև «Ամերիա» ընկերությունների խմբի գործընկերն է և կառավարման խորհրդատվության բաժնի ղեկավարը:

Կրթությունը

Ավարտել է Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանը՝ ստանալով ինժեներ-մեխանիկի որակավորում: Սովորել է ՌԴ Բաումանի անվան Պետական տեխնիկական համալսարանի ասպիրանտուրայում, ստացել տնտեսագիտության թեկնածուի գիտական կոչում Հայաստանի տնտեսագիտական հետազոտությունների ինստիտուտում:



Գոհար Խաչատրյան
Տնօրինության անդամ, գլխավոր հաշվապահ

Ծննդյան ամսաթիվ՝ 3 մայիսի, 1963

Գոհար Խաչատրյանը տնօրինության անդամի պաշտոնակատար է եղել 2008թ. մարտից մինչև հունիս, իսկ 2008թ. հունիսից առ այսօր՝ տնօրինության անդամ:

Փորձը և հմտությունները

Իր ավելի քան քառորդդարյա աշխատանքային փորձի ընթացքում զբաղեցրել է կարևոր պաշտոններ ինչպես կարգավորող մարմնում, այնպես էլ մասնավոր բանկերում՝ վաստակելով անբիծ հեղինակություն:

Գոհար Խաչատրյանն իր աշխատանքային ուղին սկսել է ՀՀ Կենտրոնական բանկում, որտեղ զբաղեցրել է հետևյալ պաշտոնները՝ հաշվապահ (1991-1992), տնտեսագետ (1992-1994), գլխավոր տնտեսագետ (1994) և առաջատար մասնագետ (1994-2000):

Այնուհետև տեղափոխվել է «Հայերարտբանկ» ՓԲԸ, ներկայումս՝ «Ամերիաբանկ» ՓԲԸ, որտեղ աշխատելով առ այսօր՝ զբաղեցրել է հետևյալ պաշտոնները. ֆինանսական դեպարտամենտի հաշվեկշիռների և հաշվետվությունների վերլուծության վարչության պետ (2000թ.), ֆինանսական հաշվետվությունների և ծախսերի վերահսկման վարչության պետ (2000-2001թթ.), ֆինանսական դեպարտամենտի կառավարչական հաշվապահության վարչության պետ (2001-2003թթ.), գլխավոր կառավարչական հաշվապահ (2003-2006թթ.), գլխավոր հաշվապահ- կառավարչական հաշվապահության ղեկավար (2006-2008թթ.): «Թի Դի Էյ Հոլդինգս Լիմիթեդ» ընկերության կողմից Հայերարտբանկի ձեռքբերումից հետո նշանակվել է տնօրինության անդամի ժամանակավոր պաշտոնակատար-գլխավոր հաշվապահ, այնուհետև՝ տնօրինության անդամ-գլխավոր հաշվապահ (2008): Բանկային համակարգում աշխատանքը համատեղել է դասախոսական գործունեության հետ: Հաշվապահության ոլորտում մի շարք հրապարակումների համահեղինակ է:

Կրթությունը

Ավարտել է Երևանի ժողովրդական տնտեսության ինստիտուտը՝ տնտեսագետի որակավորմամբ:



Սամվել Աղաբաբյան
Տնօրինության անդամ, անվտանգության ծառայության ղեկավար

Ծննդյան ամսաթիվ՝ 21 դեկտեմբերի, 1973

Պրն Սամվել Աղաբաբյանը տնօրինության անդամ է նշանակվել 2012թ. փետրվարին:

Փորձը և հմտությունները

1996-2007թթ. Ս. Աղաբաբյանն աշխատել է ՀՀ Ազգային անվտանգության ծառայությունում, որտեղ ձեռք բերված հարուստ փորձը հետագայում ներդրել է բանկի անվտանգության համակարգի մշակման գործում (այդ թվում՝ ՏՏ անվտանգությունը, ինկասացիոն ծառայությունները՝ որպես բանկի ներքին հսկողության անբաժանելի տարրեր): Նրա ջանքերի շնորհիվ Ամերիաբանկի անվտանգության համակարգը հայտնի է ամբողջ ներքին շուկայում: «Հայնեբարտբանկ» ՓԲԸ-ում՝ ներկայումս Ամերիաբանկ, աշխատանքի է

ընդունվել որպես գլխավոր տնօրենի խորհրդական (2007), այնուհետև նշանակվել է անվտանգության ծառայության ղեկավար (2008թ.-ից առ այսօր): Տնօրինության անդամ է 2012թ. փետրվարից:

Կրթությունը

Ավարտել է Երևանի իրավագիտության և մենեջմենթի ինստիտուտը: Սովորել է Մոսկվայի նոր իրավաբանական ինստիտուտում, ստացել իրավաբանի որակավորում: 2003-2004թթ. անցել է մասնագիտական վերապատրաստում ՌԴ անվտանգության դաշնային ծառայության ակադեմիայի հատուկ ֆակուլտետում:



Անդրանիկ Բարսեղյան
Տնօրինության անդամ, ռիսկերի կառավարման կենտրոնի ղեկավար

Ծննդյան ամսաթիվ՝ 9 մայիսի, 1972

Պրն Անդրանիկ Բարսեղյանը տնօրինության անդամ է նշանակվել 2009թ. դեկտեմբերին:

Փորձը և հմտությունները

Ա. Բարսեղյանը բանկային գործի, տնտեսագիտության և ռիսկերի կառավարման ոլորտի կարկառուն ներկայացուցիչ է: 1995-2002թթ. աշխատել է «Հայագրոբանկ» ԲԲԸ-ում՝ որպես բանկային տեխնոլոգիաների ավտոմատացման կառավարչության առաջին կարգի, այնուհետև՝ ավագ և առաջատար մասնագետ, իրացվելիության և ռեսուրսների կառավարման բաժնի գլխավոր տնտեսագետ և այնուհետև՝ բաժնի պետ, բանկային ռիսկերի կարգավորման վարչության պետ, ավտոմատացման վարչության պետ: 2003թ.-ից աշխատել է «Կոնվերս Բանկ» ՓԲԸ-ում՝ որպես հաշվետվությունների և վերլուծությունների բաժնի պետ, այնուհետև՝ ռիսկերի կառավարման վարչության պետ, բանկի վարչության անդամ: «Ամերիաբանկ» ՓԲԸ-ում աշխատանքի է անցել 2009թ.՝ որպես ռիսկերի կառավարման կենտրոնի ղեկավար և տնօրինության անդամ:

Անդրանիկ Բարսեղյանը մի շարք գիտական հոդվածների և հրապարակումների, այդ թվում՝ բանկային կառավարման խնդիրներին վերաբերող նյութերի (նաև միջազգային) հեղինակ է: Հանդիսանում է ֆինանսական մոդելավորման եվրոպական աշխատանքային խմբի անդամ (Erasmus համալսարան, Ռոտերդամ):

Կրթությունը

Ավարտել է Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանի (ՀՊՃՀ) «Հաշվիչ տեխնիկա և ինֆորմատիկա» ֆակուլտետը: Ավարտել է ՀՊՃՀ մագիստրատուրան, այնուհետև՝ ասպիրանտուրան՝ ստանալով տեխնիկական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան:



Բուրաստան Մովսիսյան
Տնօրինության անդամ, տեխնոլոգիաների և գործառնությունների գծով տնօրեն

Ծննդյան ամսաթիվ՝ 23 հունիսի, 1972

Տեխնոլոգիաների և գործառնությունների գծով տնօրեն է նշանակվել 2014թ. հունիսին:

Փորձը և հմտությունները

Նախքան Ամերիաբանկի թիմին միանալը Բ. Մովսիսյանն արդեն ուներ հեռահաղորդակցման ոլորտում աշխատանքի ավելի քան 15 տարվա փորձ: 1996-2013թթ. աշխատել է «Բիլայն Արմենիա» ընկերությունում (նախկին ԱրմենՏել)՝ զբաղեցնելով տարբեր պաշտոններ, այդ թվում՝ շարժական կապի վարչության պետի, վաճառքի տնօրենի և հաճախորդների սպասարկման ծառայության ղեկավարի պաշտոնները: Անմիջական և առանցքային դեր է ունեցել մի շարք նախագծերի ներդրման գործում, ներառյալ բջջային կապի և ռոումինգի ծառայությունները: Ժամանակակից աշխարհում տեղեկատվական և բանկային տեխնոլոգիաները գնալով սերտաճում են: Իր հետ բերելով հաղորդակցման տեխնոլոգիաների ոլորտի բացառիկ փորձը՝ Բ. Մովսիսյանն ակտիվ ռազմավարական դեր է խաղում Ամերիաբանկում բանկային տեխնոլոգիաների զարգացման գործում:

Բուրաստան Մովսիսյանն «Ամերիաբանկ» ՓԲԸ-ում աշխատանքի է անցել 2013թ. սեպտեմբերին որպես տեխնոլոգիաների և գործառնությունների գծով տնօրեն: 2014թ. հունիսին նշանակվել է տնօրինության անդամ - տեխնոլոգիաների և գործառնությունների գծով տնօրեն:

Կրթությունը

Ավարտել է Երևանի պետական համալսարանի ֆիզիկայի ֆակուլտետը: Մասնակցել է վերապատրաստման բազմաթիվ դասընթացների, ստացել Լյուքսեմբուրգի MACH ընկերության որակավորումը կապի ոլորտում:

ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՄԵՐ ԱՆՁՆԱԿԱԶՄԸ

Ամերիաբանկի կարևորագույն ուղենիշն է կառուցել և պահպանել առանձնահատուկ կորպորատիվ մշակույթ ունեցող Երազանքի թիմ: Մեր թիմի անդամները նորարար են ու նպատակասլաց, համարձակ ու տնտեսական փոփոխությունների հանդեպ ճկուն, միշտ համընթաց են քայլում տեխնոլոգիական նորարարություններին: Այս պրոֆեսիոնալ թիմի շնորհիվ է, որ Ամերիաբանկն առաջատարն է թե՛ աճի տեմպերով, թե՛ շուկայում բացարձակ դիրքով՝ ըստ բոլոր հիմնական ֆինանսական ցուցանիշների: Կազմակերպության կայունությունն ապահովում է թիմը: Մարդիկ Ամերիաբանկի կարևորագույն արժեքն են, որը մնացած բոլոր արժեքներից վեր է դասվում: Աշխատակիցներին տրվում է հնարավորություն ստեղծել կարիերա, հասնել իրենց պրոֆեսիոնալ նպատակներին և ունենալ բոլոր հնարավորությունները՝ իրենց և իրենց ընտանիքների կյանքը բարելավելու համար:

Անձնակազմի վերապատրաստում և զարգացում

Ամերիաբանկում ներդրված մշակույթը կարևորություն է տալիս աշխատակիցների շարունակական մասնագիտական զարգացմանը: Մենք խրախուսում ենք ինչպես աշխատակիցների ինքնազարգացումը, այնպես էլ գործատուի կողմից աշխատակիցների զարգացման խթանումը և այդ ուղղությամբ շարունակական ներդրումների իրականացմանը: Վերապատրաստման ծրագրերում առանձնահատուկ տեղ են գրավում բարձր և միջին օղակի ղեկավարության համար կազմակերպվող սեմինար-քննարկումները, վարպետության դասերը, որոնք ի թիվս այլոց վարում են նաև համաշխարհային ճանաչում և երկար տարիների պրակտիկ փորձառություն ունեցող բիզնես-դպրոցների հիմնադիրներ: Հարկ է նշել արդեն ավանդույթ դարձած՝ աշխատակիցներին տարբեր միջազգային կառույցներ on-the-job (տեղում) ուսուցման ուղարկելու փորձը: Բացի այդ, Ամերիաբանկի աշխատակիցները նաև ակտիվորեն ներգրավված են հեռահար ուսուցման բազմապիսի ծրագրերում, պարբերաբար մասնակցում են վեբինարների, միջազգային որակավորման ծրագրերի: Անցած տարի բանկն ակտիվորեն մասնակցում էր միջազգային ճանաչում ունեցող բիզնես-դպրոցների՝ Ստենֆորդի համալսարանի, Chartered Management Institution-ի, CFA Institute-ի, ACCA-ի և այլ կազմակերպությունների դասընթացներին՝ հնարավորություն ընձեռելով իր մասնագետներին ուսանել՝ առանց կտրվելու աշխատանքից, և ձեռք բերել արդի և մրցունակ փորձառություն: Բանկն ունի մշտապես թարմացվող գրադարան, որը հնարավորություն է ընձեռում աշխատակիցներին օգտվել հսկայածավալ ժամանակակից մասնագիտական գրականությունից թե՛ էլեկտրոնային, թե՛ թղթային տարբերակով:

2017թ. Ամերիաբանկի աշխատակիցները մասնակցել են 2,940 դասընթացի: Ընդհանուր առմամբ, անցած 10 տարվա ընթացքում Ամերիաբանկի աշխատակիցները մասնակցել են 23,885 վերապատրաստման դասընթացների 22 տարածքում և արտերկրում (այդ թվում՝ ներքին վերապատրաստումների):

Բազմազանություն՝ ի հաշիվ տարբեր սոցիալական ծրագրերի շրջանակներում անձնակազմի համալրման

Ամերիաբանկը ողջունում է եռանդուն, նվիրված, համարձակ, նորարար ու նպատակասլաց անձանց և պատրաստ է ներդրում կատարել նրանց մասնագիտական աճի համար: Այս նպատակով մենք լայնորեն կիրառում ենք մենթորների ինստիտուտը՝ ինչպես սկսնակների, այնպես էլ փորձառու մասնագետների տեղեկատվական և գործնական ադապտացումն իրականացնելու համար:

Ամերիաբանկը շարունակում է արդյունավետ համագործակցությունը Հայաստանի և Միջուռքի լավագույն ԲՈՒՀ-երի հետ և ընդլայնում գործընկեր-կազմակերպությունների ցանկը: **«Ամերիա Սերունդ»** ծրագրի և ուսանողների համար նախատեսված այլ ծրագրերի միջոցով մեր թիմին է միացել **շուրջ 200** նպատակասլաց երիտասարդ մասնագետ: 2017թ. մեկնարկեց 7-րդ «Ամերիա Սերունդ» ծրագիրը: Սա հոյակապ հնարավորություն է 20-25 տարեկան նորավարտ երիտասարդների համար՝ ստանալու տեսական և գործնական գիտելիք ֆինանսական ոլորտի և բանկային գործի վերաբերյալ, աշխատանքային միջավայրում շփվելու փորձառու մասնագետների հետ, ծանոթանալու կորպորատիվ մշակույթի առանձնահատկություններին և իրենց աշխատանքային ուղին սկսելու Ամերիաբանկում:

Բանկի համար առանցքային նշանակություն ունի հայրենադարձությունը: Խրախուսելով **տաղանդավոր հայ երիտասարդների վերադարձը Հայաստան** արտերկրում կրթություն ստանալուց կամ աշխատելուց հետո՝ բանկն ակտիվորեն համագործակցում է զանազան հիմնադրամների հետ և պրակտիկայի ու աշխատանքի հնարավորություն ստեղծում վերոնշյալ թիրախային խմբի համար: Միջուռքից մասնագետների ներգրավելու պատճառներից մեկն է նաև Հայաստան բերել միջազգային փորձը և գիտելիքը, որոնց արդյունավետ կիրառումը կարող է հավելյալ արժեք ստեղծել մեր տնտեսության համար:

Եվ վերջապես, Ամերիաբանկը, հետամուտ լինելով բոլորին համահավասար հնարավորություններ ընձեռելու քաղաքականությանը, լայնորեն համագործակցում է կազմակերպությունների հետ, որոնք զբաղվում են սահմանափակ կարողություններ ունեցող անձանց ադապտացման և աշխատանքի ընդունման խնդիրներով: Ամերիաբանկը միշտ պատրաստ է իր թիմում ողջունել տաղանդավոր անձանց, թեկուզ նրանք ունենան հենաշարժողական և այլ խնդիրներ:

Հատկանշական է, որ անձնակազմի համալրման գործընթացում, բացի **ՀՀ ֆինանսական համակարգի լավագույն մասնագետների ներգրավումից**, բանկն առաջնահերթ ուշադրություն է դարձնում **ներքին առաջխաղացմանը**՝ իր աշխատակիցներին ընձեռելով ինչպես պաշտոնի առաջխաղացման, այնպես էլ ցանկության դեպքում մասնագիտացումը փոփոխելու հնարավորություններ: 2017թ. մեր աշխատակիցների մոտ 4%-ն առաջխաղացման արդյունքում ստանձնել է ղեկավար պաշտոններ:

Արտոնությունների փաթեթ


Կարևորելով երիտասարդ սերնդի մուտքը թիմ՝ միաժամանակ կարևորում ենք լավագույն աշխատակիցների մոտիվացումը, որը երկարատև աշխատանքային հարաբերություններ ունենալու գրավականն է: Այս գործում առանցքային է խրախուսման համակարգի և շուկայում մշտապես մրցունակ սոցիալական փաթեթ ունենալու անհրաժեշտությունը: Մրցունակ լինելու համար բանկը 2012թ-ից սկսած մասնակցել է առաջատար աուդիտորական ընկերությունների կողմից կազմակերպվող՝ աշխատավարձերի և հատուցումների վերաբերյալ հարցմանը: Իրականացվել են նաև բավարարվածության և մոտիվացիոն համակարգի վերաբերյալ ներքին հարցումներ, և արդյունքների հիման վրա վերանայվել է բանկում գործող սոցիալական փաթեթը: Ներկայում գործում է **արտոնությունների լայն փաթեթ**՝ արտոնյալ պայմաններով բանկային ծառայություններ մատուցում, որը հնարավորություն է ընձեռում նվազագույն ֆինանսական

ներդրման կամ ամբողջովին անվճար օգտվել վերոնշյալ ծառայություններից, բժշկական, ճանապարհորդային և դժբախտ պատահարների ապահովագրություն, վերապատրաստման և մասնագիտական որակավորման հնարավորություն, տարվա ընթացքում 40 ժամ վճարովի բացակայության հնարավորություն և այլն):


Հայացք մեր թիմին

Աշխատակիցների ընդհանուր քանակ





- Խորհուրդ
- Դեկլարություն
- Միջին օրակի ղեկավարներ
- Գլխավոր և ավագ մասնագետներ
- Մասնագետներ
- Կրտսեր մասնագետներ
- Տեխնիկական անձնակազմ



- մինչև 25 տարեկան
- 25-35 տարեկան
- 35-45 տարեկան
- 45-60 տարեկան
- 60-ից բարձր




61%



39%

ՄՏԵՂԵԼ

ՄԵԿ ԲԱՅԼ ԱՌԱՋ, ԲԱՅԼԵԼ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ
ՀԱՄԸՆԹԱՑ ԵՎ ՄՏԵՂԵԼ ԱՊԱՀՈՎՈՒԹՅՈՒՆ
ՑԱՆԿԱՑԱԾ ՄԻՋԱՎԱՅՐՈՒՄ



ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ՄԿՋԲՈՒՆՔՆԵՐԸ

Ամերիաբանկի **ռիսկերի կառավարման քաղաքականությունը** սահմանում է հետևյալը՝

- ▶ Նվազագույն պահանջները, որոնք անհրաժեշտ են ռիսկերի կառավարման համակարգի ներդրման համար
- ▶ Ռիսկերի կառավարման նպատակները և սկզբունքները
- ▶ Բանկի որոշումներ ընդունող մարմինների և պաշտոնատար անձանց իրավասությունների բաշխումը՝ ռիսկ պարունակող գործառնությունների իրականացման մասով
- ▶ Գործառնությունների իրականացման հիմնական ուղենիշներն ու չափանիշները
- ▶ Վերջիններիս նկատմամբ հսկողության իրականացման պայմանները
- ▶ Այլ դրույթներ

Ռիսկերի կառավարումը բանկի տնօրենների խորհրդի, տնօրինության, ղեկավարների և այլ աշխատակիցների կողմից իրականացվող գործընթաց է՝ սկսած բանկի ռազմավարության մշակումից, ներառյալ բանկի գործունեության բոլոր ոլորտները: Այն ուղղված է բանկի գործունեության հետ կապված ռիսկերի բացահայտմանը, կառավարմանը և բանկի կողմից սահմանված «ռիսկերի ախորժակի» (բանկի համար ընդունելի ռիսկերի չափի) նկատմամբ հսկողության իրականացմանը: Ամերիաբանկի ռիսկերի կառավարման քաղաքականությունը բանկի զարգացման ծրագրերի բաղկացուցիչ մասերից է և հիմք է հանդիսանում բանկի ռիսկ պարունակող գործընթացների կարգավորման համար: Այն տնօրենների խորհրդի կողմից ընդունված սկզբունքների ամբողջություն է, որն ուղղված է բանկի գործունեությունն առավել արդյունավետ կերպով կազմակերպելուն՝ սահմանափակելով անբարենպաստ երևույթների ի հայտ գալու հավանականությունը: Ռիսկերի կառավարման քաղաքականության դրույթները կիրառվում են բանկի տնօրենների խորհրդի, տնօրինության, տնօրինության նախագահ-գլխավոր տնօրենի, գործող



կոմիտեների և բոլոր աշխատակիցների նկատմամբ: Ռիսկերի կառավարման քաղաքականությունը ենթակա է պարբերական վերանայման՝ կախված բանկի ռազմավարությունից և ձևավորվող տնտեսական միջավայրից:

Բանկի ռիսկերի կառավարման ստորաբաժանումը յուրաքանչյուր ամիս իրականացնում է ռիսկերի գնահատում և արդյունքները ներկայացնում բանկի տնօրինությանը կամ համապատասխան կոմիտեներին (վարկային, ակտիվների և պասիվների կառավարման և այլն), ինչպես նաև բանկի խորհրդին: Բանկում ռիսկերի կառավարման հիմնական **նպատակներն** են՝

- ▶ Բանկային գործիքների որակյալ պորտֆելների ձևավորումը, որը կնպաստի բանկի համար նվազագույն ռիսկերով առավելագույն արժեքի ստեղծմանը
- ▶ Հնարավոր ռիսկերով պայմանավորված կորուստները բացառելը կամ դրանք նվազագույնի հասցնելը
- ▶ Շահութաբերության, իրացվելիության և վճարունակության գործակիցների ընդունելի հարաբերակցության պահպանումը

Բանկում ռիսկերի կառավարման նպատակներին հասնելու համար անհրաժեշտ է հետևյալ **խնդիրների** լուծումը՝

- ▶ Ժամանակին բացահայտել բանկի գործունեության ընթացքում առաջացող հնարավոր ռիսկերը
- ▶ Բացահայտել ռիսկերի առանձին տեսակների վրա ազդող գործոնները
- ▶ Իրականացնել առանձին ռիսկերի որակական և քանակական գնահատում
- ▶ Հաստատել ռիսկերի ընդունելի սահմանաչափերը
- ▶ Հավաքել և ղեկավարությանը ներկայացնել հնարավոր ռիսկերի վերաբերյալ համապատասխան տեղեկատվություն
- ▶ Հաստատել ռիսկերի կառավարման ներքին հսկողության (մոնիթորինգի) ձևերը և մեթոդները
- ▶ Սահմանել ռիսկերի առանձին տեսակների կառավարման համար բանկի խորհրդի և գործադիր մարմնի անդամների պատասխանատվությունը
- ▶ Մշակել ռիսկերի կառավարման համապատասխան միջոցառումներ
- ▶ Վերահսկել այդ միջոցառումների իրականացման ընթացքը

Ռիսկերը ժամանակին բացահայտելու **կարևոր պայմաններն** են՝ բանկի ներքին հիմնական տնտեսական նորմատիվների և ռիսկերի ընդունելի սահմանաչափերի պահպանման պարբերական մոնիթորինգը, բանկի հաշվեկշռի փոփոխությունների պարբերական վերլուծությունը, ՀՀ Կենտրոնական բանկի կողմից սահմանված հիմնական տնտեսական նորմատիվների պահպանումը, տարբեր սթրես-սցենարների հաշվարկները, բանկում առանձին ռիսկերի կառավարումը կանոնակարգող ներքին իրավական ակտերի առկայությունը, որոնցում ներկայացվում են ռիսկերի բացահայտման, դրանց կառավարման մեթոդաբանությունը և մեխանիզմները, որոնք թույլ են տալիս բանկին ժամանակին արձագանքել տարբեր իրավիճակներին և կառավարել ռիսկերը:

Բանկի ռիսկերի կառավարման քաղաքականությունը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

- ▶ Բանկում պետք է ներդրվի ռիսկերի կառավարման միասնական համակարգ, որը պետք է հանդիսանա բանկի ռազմավարական կառավարման տարրերից մեկը:
- ▶ Ռիսկերի կառավարումը բանկում պետք է ունենա պրոակտիվ դեր, մշտական և շարունակական բնույթ: Բանկի բոլոր գործընթացներում ռիսկերը պետք է բացահայտվեն, գնահատվեն, և ռիսկերի պատշաճ կառավարման համար պետք է ձեռնարկվեն համապատասխան միջոցառումներ:
- ▶ Բանկի ռիսկերի կառավարման համակարգը պետք է հիմնվի հնարավորապես ճշգրիտ ռիսկ/եկամուտ հարաբերակցության վրա: Բանկը ռիսկ ձևավորող գործարքներից պետք է կարողանա ընտրել նրանք, որոնց ռիսկերը կարող է գնահատել և արդյունավետ կերպով կառավարել:
- ▶ Բանկը պետք է ձգտի ճանաչել հաճախորդին և պարզել նրա ֆինանսական կարիքները: Բանկը չպետք է համագործակցի հաճախորդի հետ, եթե չունի պատշաճ տեղեկություններ նրա ֆինանսական վիճակի մասին: Բանկը հաճախորդների հետ աշխատելիս պետք է հետևի KYC (Know Your Customer՝ ճանաչիր քո հաճախորդին) սկզբունքին:
- ▶ Բանկի ռիսկ առաջացնող գործիքների հաստատումն առանձին գործարքների համար պետք է հիմնվի «չորս աչքի» սկզբունքի վրա՝ որոշ դեպքերում ներառելով նաև ռիսկերի կառավարման մասնագետների անկախ (օրինակ՝ վարկային հայտերը հաստատվում են մեկ վարկային մասնագետի և ռիսկերի կառավարման՝ համապատասխան իրավասություն ունեցող մեկ մասնագետի կողմից): Հաստատման գործընթացը յուրաքանչյուր գործիքի համար սահմանվում է համապատասխան գործիքի քաղաքականությամբ և/կամ ընթացակարգով:
- ▶ Բանկի բոլոր գործիքների և գործընթացների համար պետք է հստակ սահմանվեն և փաստաթղթերով ամրագրվեն իրավասությունների և պատասխանատվության շրջանակները (ներառյալ հաստատումների սահմանաչափերը): Յուրաքանչյուր գործընթացի համար պետք է սահմանվեն և փաստաթղթերով ամրագրվեն ներքին հսկողության մեխանիզմները:
- ▶ Բանկի քաղաքականություններից և ներքին իրավական այլ ակտերից շեղումները պետք է հաստատվեն տվյալ քաղաքականությունը/իրավական ակտը հաստատող կամ համապատասխան լիազորություն ունեցող մարմնի կողմից (տնօրինություն, տնօրենների խորհուրդ):
- ▶ Գործունեության յուրաքանչյուր ուղղություն պատասխանատվություն է կրում առկա ռիսկերի բացահայտման և պարբերական մոնիթորինգի իրականացման համար:
- ▶ Պետք է մշակվեն համապատասխան կառավարչական տեղեկատվության համակարգեր (MIS), որոնք թույլ կտան առավել արդյունավետ կերպով կառավարել պորտֆելները:
- ▶ Յուրաքանչյուր բանկային գործիքի մասով ռիսկերի կառավարման մոտեցումները (հաստատումների սահմանաչափեր, ընդունելի պարամետրեր, պորտֆելների ծավալ, շեղումներ ընդունված քաղաքականությունից և այլն) պետք է սահմանվեն համապատասխան

գործընթացը կարգավորող ներքին իրավական ակտերով և/կամ քաղաքականությամբ, որոնք պետք է համաձայնեցվեն նաև ռիսկերի կառավարման ստորաբաժանման հետ:

▶ Ռիսկերի կառավարման համակարգի աշխատանքի արդյունավետությունը պարբերաբար պետք է գնահատվի բանկի ներքին աուդիտի ստորաբաժանման կողմից:

▶ Բանկի գործունեությունը պետք է պարբերաբար ուսումնասիրվի և գնահատվի բանկի կառավարման մարմինների կողմից:

Բանկի ռիսկերի կառավարման համակարգը բաղկացած է հետևյալ տարրերից.

Ռիսկի ախորժակ: Բանկի խորհուրդը սահմանում է ընդունելի կորուստների/ռիսկի չափը: Ռիսկի ախորժակը բաշխվում է ըստ ռիսկերի բոլոր տեսակների՝ վարկային, շուկայական և գործառնական: Յուրաքանչյուր ռիսկի տեսակին բաժին հասնող ռիսկի ախորժակից ելնելով՝ սահմանվում են կառավարման ենթակա ռիսկերի պարամետրերը և սահմանափակումները:

▶ **Չափանիշներ և հաշվետվողականություն:** Այս տարրը ներառում է գործիքների հաստատման չափանիշների, ռիսկերի դասակարգման, առանձին գործիքների և կառավարչական հաշվետվությունների համար չափանիշների սահմանում (ստանդարտացում):

▶ **Սահմանաչափեր և կանոններ:** Բանկի բոլոր գործիքների համար պետք է սահմանվեն հաստատումների, պորտֆելի սահմանաչափեր և համապատասխան կանոններ:

▶ **Ներդրումների ուղեցույցներ և ռազմավարություններ:** Պետք է սահմանվեն բանկի ներդրումային գործունեության ռազմավարությունները, չափանիշները, շեղումների թույլատրելի չափերը: Նշված ուղեցույցները հիմք են հանդիսանում բանկի հեջավորման, ակտիվների ու պասիվների կառավարման և այլ քաղաքականությունների համար:

▶ **Ռիսկ/եկամուտ հարաբերակցություն:** Բանկի բոլոր գործիքները պետք է հիմնվեն ռիսկ/եկամուտ հարաբերակցության վրա՝ ինչպես բանկի, այնպես էլ նշված գործընթացում ներգրավված աշխատակիցների համար: Պետք է սահմանվեն աշխատակիցների խթանման համապատասխան մոտեցումներ:

ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

ՌԻՍԿԻ ԱԽՈՐԺԱԿ

Ռիսկի ախորժակը բանկի հնարավոր կորուստների/ռիսկի չափն է, որը կարող է կառավարվել, և որի սահմաններում կորուստը կարող է վերականգնվել առկա ռեսուրսների հաշվին կարճ ժամանակահատվածում՝ առանց բանկի կարճաժամկետ/միջնաժամկետ նպատակները ձախողելու: Կորուստի վերականգնման համար ընդունելի ժամկետ է համարվում 6 ամիսը: Բանկի ռիսկի ախորժակը ընդունելի կորուստի չափն է, որը չի կարող գերազանցել հաշվեկշռային կապիտալի 10%-ը, ընդ որում՝ այն բաշխվում է վարկային, շուկայական և գործառնական ռիսկերի միջև համապատասխանաբար 60%, 30% և 10% մասնաբաժիններով: **Վարկային ռիսկի ախորժակը** վարկային ներդրումների գծով առաջացող հնարավոր զուտ կորուստներն են (վարկերի հնարավոր կորուստների գծով զուտ մասհանումները): **Շուկայական ռիսկի ախորժակը** ներառում է արտարժույթային բաց դիրքից բացասական վերագնահատումը (կորուստը)՝ արժույթային ռիսկի մասով, տոկոսադրույքների փոփոխությունից բխող հնարավոր կորուստները՝ լողացող տոկոսադրույքի ռիսկի, ակտիվների ու պարտավորությունների ժամկետային ճեղքվածքի մասով, եկամտաբերության կորի փոփոխության արդյունքում արժեթղթերի պորտֆելի վերագնահատումներից կորուստը՝ ներդրումային ռիսկի մասով: **Գործառնական ռիսկի ախորժակը** վերաբերում է բանկի գործընթացների/SS համակարգերի խափանմամբ պայմանավորված կորուստի ռիսկին:

Ռիսկի ախորժակը կառավարում է ակտիվների և պարտավորությունների կառավարման կոմիտեն/մեծ վարկային կոմիտեն ցածր և միջին ռիսկի գոտում, տնօրինությունը՝ բարձր ռիսկի գոտում, տնօրենների խորհուրդը՝ սահմանաչափի գերազանցման դեպքում:



ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

ՀԻՄՆԱԿԱՆ ՌԻՍԿԵՐԸ ԵՎ ՌԻՍԿԵՐԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

«Ռիսկ/եկամուտ» մոտեցման և ռիսկի ախորժակի բաշխման շրջանակներում բանկը կիրառում է ռիսկի գնահատման և նվազեցման տարբեր գործիքներ և մեթոդներ: Ռիսկը սահմանվում է որպես ապագա անբարենպաստ պատահարների անորոշություն: Այն արտահայտվում է բանկի գործունեության և ռազմավարական նպատակների իրականացման վրա ազդեցություն ունեցող պատահարների ի հայտ գալու հավանականության և հնարավոր վնասների միջոցով: Ռիսկերը, որոնց ենթարկված է կամ կարող է ենթարկվել բանկը, ներառում են ներքին և արտաքին հանգամանքներ, որոնք կարող են սպառնալ բանկի գործունեության անընդհատությանը կամ բացասական ազդեցություն ունենալ բանկի կապիտալի կամ շահույթի վրա:

Բանկի ռիսկերը դասակարգվում են տարբեր խմբերում՝ վարկային, շուկայական, գործառնական և այլ ռիսկեր:

Վարկային ռիսկ: Բանկը ենթարկվում է ֆինանսական կորուստ կրելու ռիսկի, երբ բանկի հաճախորդները կամ պայմանագրի կողմերը խախտում են սահմանված ժամկետներում վճարում կատարելու իրենց պարտավորությունները: Վարկային ռիսկը բանկի ամենաէական ռիսկն է, քանի դեռ բանկի հիմնական գործունեությունը ավանդական վարկավորումն է, որն էլ կազմում է հաշվեկշռային ցուցանիշների հիմնական մասը: Հաշվի առնելով տնտեսության դադարացման բարձր մակարդակը՝ ընդհանուր վարկային ռիսկի էական տարրերից է փոխարժեքների տատանումով պայմանավորված վարկային ռիսկը, որն առաջանում է չերաշխավորված վարկառուների արտարժույթով վարկերի տրամադրման հետևանքով: Վարկային ռիսկը պարունակում է նաև կենտրոնացման ռիսկը՝ վարկային պորտֆելի որակի վատթարացման հավանականությունը, որը կարող է առաջանալ մեկ վարկառուի կամ փոխկապակցված վարկառուներին խոշոր վարկերի տրամադրման արդյունքում:

Հաշվեկշռված վարկային պորտֆել և կայուն եկամուտ ապահովելու համար շատ կարևոր է վարկային ռիսկերի կառավարման կուռ համակարգի առկայությունը: Այդ նպատակով բանկում ստեղծվել է ռիսկերի շրջահայաց կառավարման համակարգ, որը հիմնվում է վարկային ռիսկերի բացահայտման, չափման և մոնիթորինգի արդյունավետ գործընթացների վրա: Վարկային ռիսկերի կառավարման համապատասխան ստորաբաժանումները գնահատում և կառավարում են մանրաձախ և կորպորատիվ գործառնությունների ռիսկերը թե՛ առանձին գործարքների, թե՛ պորտֆելի մակարդակով: Վարկային ռիսկերի կառավարման բաժիններն իրականացնում են գործարքների ռիսկերի վերլուծությունը, ռեյթինգավորում վարկերի ռիսկերը և հաստատում գործարքները՝ կիրառելով ռիսկերի գնահատման և ռեյթինգավորման հատուկ ներքին մեթոդաբանություններ: Վարկային ռիսկի կառավարման նպատակն է պորտֆելի վերահսկումը, որակի մոնիթորինգը, ինչպես նաև վարկային ռիսկի կառավարման մեխանիզմների մշակումը և կիրառումը՝ սթրես-թեստերի, վաղ ահազանգման և ռիսկի հիմնական ցուցանիշների ու պարամետրերի, ոլորտային վերլուծության և մոնիթորինգի հիման վրա:

Բանկի մոնիթորինգի համակարգի հիմքում է ռիսկերի բացահայտումը, որը թույլ է տալիս ժամանակին արձագանքել շուկայական պայմանների փոփոխություններին, բացահայտել վարկային պորտֆելի թույլ կողմերը և նախանշել լուծումներ՝ հիմնավորված որոշումներ կայացնելու համար: Մոնիթորինգի են ենթարկվում առանձին վարկերը, ընդհանուր պորտֆելի կատարողականը, ինչպես նաև արտաքին միտումները, որոնք կարող են ազդել պորտֆելի ռիսկայնության մակարդակի վրա: Վաղ ահազանգման ազդակները կարևոր դեր են խաղում վարկերի որակի վատթարացումը վաղ փուլում հայտնաբերելու և ռիսկի ազդեցությունը զսպող քայլեր ձեռնարկելու համար: Վարկային պորտֆելի մոնիթորինգի ընթացքում կիրառվում է վիճակագրական վերլուծություն: Վարկային պորտֆելի մոնիթորինգը և ընտրանքային վերլուծությունն իրականացվում են վարկային ռիսկի կառավարման թիմի կողմից պարբերաբար: Կորպորատիվ վարկային ռիսկի կառավարման բաժինը պատասխանատու է այցելությունների միջոցով առևտրային վարկերի մոնիթորինգի համար: Այս գործընթացը թույլ է տալիս վաղ փուլում արագ բացահայտել ռիսկային վարկերը և համապատասխան քայլեր ձեռնարկել:

Վարկային ռիսկերի կառավարման բաժինը պարբերաբար վերլուծում է պորտֆելի միտումները, ներառյալ ընդհանուր վարկային պորտֆելի հնարավոր կորուստները, պորտֆելի որակը, իրականացնում է վարկերի դասակարգման դինամիկայի, պորտֆելի կենտրոնացման և որակի վերլուծությունը և ամսական հաշվետվություն ներկայացնում Վարկային կոմիտեին իր եզրակացությունների վերաբերյալ: Ընդ որում, վարկային պորտֆելի որակի մասին հաշվետվություններն ամսական կտրվածքով ներկայացվում են տնօրինությանը և տնօրենների խորհրդին: Վարկային ռիսկերի կառավարման համակարգի շնորհիվ բանկը կարողանում է բացահայտել և նվազեցնել ռիսկերը՝ ժամանակին վերանայելով իր քաղաքականությունները:

Շուկայական ռիսկեր: Շուկայական ռիսկի գնահատումն ու կառավարումը հիմնվում են նույն «ռիսկ/եկամուտ» հարաբերության և ռիսկի ախորժակի վրա, որը սահմանվում և բաշխվում է ռիսկի հետևյալ ենթատեսակների միջև՝ տոկոսադրույքի, գնային, արժույթային և բաժնետոմսերի գնի ռիսկեր: Շուկայական ռիսկն առաջանում է շուկայի տատանումների պատճառով ակտիվների և պարտավորությունների ժամկետայնության, արժույթի և տոկոսադրույքների անհամապատասխանության արդյունքում, ինչպես նաև արժեթղթերի գնի, անշարժ գույքի, բանկին պատկանող կամ որպես գրավ ընդունված ակտիվների գնի փոփոխության արդյունքում:

Շուկայական ռիսկերի կառավարման համար պատասխանատու է ակտիվների և պարտավորությունների կառավարման կոմիտեն (ԱՊԿԿ): Բանկի նպատակն է կառավարել շուկայական ռիսկերը, սահմանել ընդունելի շեմեր և կիրառել որոշումների կայացման համապատասխան համակարգ՝ հնարավոր կորուստները ռիսկի ախորժակի նախանշված սահմաններում պահելու համար: Կիրառվող վաղ ահազանգման և ռիսկի հիմնական ցուցանիշների համակարգը, տարատեսակ սթրես-թեստերը նպատակ ունեն հաշվարկելու շուկայական տարբեր զարգացումների ազդեցությունը բանկի վրա, հասկանալ՝ որն է շուկայական ռիսկի թույլատրելի բաց դիրքն ըստ շուկայական ռիսկի բոլոր աղբյուրների: Իրականացվող սթրես-թեստերի սցենարները պարբերաբար վերանայվում են՝ շուկայի պայմաններն արտացոլելու նպատակով: Ռիսկերի պարամետրերի համակարգը սահմանում է պարտադիր գործողությունները, պատասխանատու անձանց, ռիսկի գոտիները, հաշվետվողականության և որոշումների կայացման կանոնները: Շուկայական ռիսկերի կառավարման համակարգը պարբերաբար վերանայվում է և փոփոխվում բանկի կողմից առաջարկվող ծառայությունների և շուկայի զարգացմանը զուգահեռ:

Արժութային ռիսկ: Արտարժույթով (հիմնականում ԱՄՆ դոլարով) արտահայտված ակտիվների և պարտավորությունների մեծ ծավալը տեղական շուկայի ցածր իրացվելիության հետ մեկտեղ բանկի համար առաջացնում է արտարժութային ռիսկը և դառնում բաց արտարժութային դիրքի հիմնական պատճառը: Նման պայմաններում փոխարժեքի ցանկացած տատանում կարող է հանգեցնել ռիսկով կշռված ակտիվների արժեքի փոփոխության, ավելին, ճնշման տակ դնել բանկի կապիտալի և կապիտալի համարժեքության ցուցանիշները: Արտարժութային ռիսկը նվազեցնելու նպատակով բանկը կիրառում է ռիսկի ենթարկված արժեքի (VaR) մեթոդաբանությունը՝ դիտարկելով 250 օրվա փոխարժեքները և դրանց հարաբերակցությունը: Ռիսկերի պարամետրերի համակարգը ներառում է նաև ընդհանուր արտարժութային բաց դիրքի պարամետրերը, որոնք սահմանվում են ըստ ռիսկի գոտիների, որոշում կայացնողների և սահմանաչափերի խախտման դեպքում ձեռնարկվող միջոցառումների: Արտարժութային ռիսկը, բաց դիրքի արդյունքում կորուստը, ռիսկով կշռված ակտիվների աճը վաղ փուլում կանխատեսելու և բանկի կապիտալի, կապիտալի համարժեքության ցուցանիշի և իրացվելիության վրա դրանց ազդեցությունը չափելու համար կիրառվում են մի շարք սթրես-թեստեր՝ 3 հիմնական սցենարով: Բացի դրանից, բանկը կիրառում է լրացուցիչ՝ առավելագույն արժեքի մոտեցում, որը հիմնվում է սիմուլյացիոն սխեմայի վրա և ապահովում արժութային ռիսկի վստահելի գնահատումներ: Այս մոտեցումը կիրառվում է ռիսկի և ակնկալվող կորուստի օպերատիվ գնահատման և կառավարման համար:

Տոկոսադրույքի ռիսկը սահմանված ժամանակաշրջանում զուտ տոկոսային եկամտի նվազման ռիսկն է՝ պայմանավորված շուկայական տոկոսադրույքների փոփոխությամբ: Տոկոսադրույքի ռիսկին է ենթարկվում նաև ներդրումային պորտֆելը, քանի որ արժեթղթերի մի մասը զգայուն է տոկոսադրույքի փոփոխության նկատմամբ, իսկ պարտքային գործիքների եկամտաբերության շուկայական տատանումները կարող են հանգեցնել կորուստների: Տոկոսադրույքի ռիսկի մեկ այլ աղբյուր է լողացող տոկոսադրույքով (հիմնականում ԼԻԲՈՐ) ներգրավված և տեղաբաշխված միջոցների միջև ոչ գրոյական տարբերությունը: Քանի որ լողացող տոկոսադրույքով վարկատեսակները տեղական շուկայում լավ չեն զարգացած, լողացող տոկոսադրույքի տատանումները կարող են անդրադառնալ բաց դիրքի վրա:

Տոկոսադրույքի ռիսկի վերահսկման և նվազեցման համար սահմանված են բազմաթիվ պարամետրեր, որոնք կարգավորում են հաստատուն տոկոսադրույքների փոփոխությամբ պայմանավորված ճեղքվածքը, լողացող տոկոսադրույքի դիրքի չհեջավորված մասը և արժեթղթերի պորտֆելը: Տոկոսադրույքի ռիսկի պարամետրերի համակարգը բաղկացած է ավելի քան 30 տարբեր տարրերից: Արժեթղթերի ռիսկը կառավարվում է առանձին քաղաքականությամբ, որն ընդգրկում է պորտֆելի պարամետրերը, սթրես-թեստերը, ակտիվների տեղաբաշխման վերաբերյալ որոշումների կայացման սահմանաչափերը և վաղ ահազանգման ազդակները, որոնք պարբերաբար վերանայվում են բանկի գործունեության ընդլայնմանը զուգահեռ: Տնօրենների խորհրդի կողմից սահմանվող և ԱՊԿԿ-ի և տնօրինության կողմից իրականացվող քաղաքականությունը նախատեսում է տոկոսադրույքի ռիսկի սահմանափակում՝ ռիսկի ախորժակի նախանշված չափով, և հնարավոր կորուստների գնահատում սթրես-թեստերի հիման վրա:

Գնային ռիսկ: Բանկը ենթարկվում է վարկերի ապահովման ծածկույթի նվազեցման ռիսկին՝ ապահովման միջոցների և բաժնային գործիքների շուկայական գների տատանման արդյունքում: Գնային ռիսկի հիմնական աղբյուրներից է գրավադրված անշարժ գույքի արժեզրկման ռիսկը: Գնային ռիսկը կարող է առաջանալ նաև բաժնային գործիքների, ապրանքների, հիմնական միջոցների,

գրավադրված շարժական գույքի և գնային ռիսկին ենթարկվող այլ ֆինանսական գործիքների շուկայական գների փոփոխության արդյունքում:

Գնային ռիսկը կարող է էական ազդեցություն ունենալ վարկային ռիսկի մակարդակի վրա, քանի որ գնային տատանումներն անշարժ գույքի շուկայում կարող են հանգեցնել չապահովված վարկերի մեծ ծավալի՝ պայմանավորված «վարկ/գրավ» հարաբերակցության բարձրացմամբ: Վարկային ռիսկի մեկ այլ տարր, որը փոխկապակցված է գնային ռիսկի հետ, միջազգային առևտրով զբաղվող վարկառուների վճարունակության անկման ռիսկն է, քանի որ նրանք կարող են տուժել տարբեր ապրանքների շուկայական գնի տատանումից: Մակրոմիջավայրի ռիսկի մոնիթորինգի ներքո պարբերաբար վերլուծվում է տեղական ընկերությունների վճարունակությունը: Ի պատասխան այդ ռիսկերին խստացվում են վարկավորման պայմանները, շեղումների սահմանաչափերը, ռիսկերի պարամետրերի ընդհանուր համակարգում ներառվում է որոշումների կայացման սահմանաչափերի հիերարխիկ համակարգ: Բանկը մշակել է գործողությունների ծրագրեր բիզնես-գործընթացների անընդհատությունն ապահովելու և հնարավոր գնային ցնցումների արդյունքում առաջացող ռիսկերին վաղ փուլում արձագանքելու նպատակով: Տվյալ գործողությունների ծրագրերը գնահատվում են սթրես-թեստավորման ընդհանուր համակարգի շրջանակներում:

Իրացվելիության ռիսկ՝ ռիսկ, որ բանկը չի կարողանա կատարել իր պարտավորությունները՝ առանց մեծ վնաս կրելու: Իրացվելիության ռիսկը կարող է էապես բարձրանալ ակտիվների և պարտավորությունների ժամկետայնության զգալի անհամապատասխանության դեպքում, հաշվեկշռի թույլ դիվերսիֆիկացման, խոշոր ավանդատուների և վարկառուների կենտրոնացման բարձր մակարդակի դեպքում, ավանդների դուրսբերմանը կամ արտարժույթի փոխարկմանը հանգեցնող՝ արժույթային շուկայի ցնցումների դեպքում, ֆինանսական շուկայում իրացվելիության պակասի, արժեթղթերի պորտֆելի որակի վատթարացման, ֆինանսական գործիքներից (ռեպո, սվոփ, օվերնայթ և այլն) օգտվելու անսպասելի դժվարությունների դեպքում: Բանկը ձգտում է ապահովել բարձր իրացվելի ակտիվների բավարար մակարդակ՝ ելնելով ցպահանջ ու կարճաժամկետ պարտավորությունների և ընդհանուր ակտիվների մեծությունից: Եկամտաբերության տեսանկյունից՝ տեղաբաշխված երկարաժամկետ ակտիվները պետք է ապահովեն առավելագույն իրացվելիություն նվազագույն վնասի պարագայում: Բարձր իրացվելի ակտիվների կառուցվածքն ըստ արժույթների, կանխիկ/անկանխիկ միջոցների որոշվում է՝ ելնելով բանկի պարտավորությունների կառուցվածքից: Բանկը միջոցներ տեղաբաշխելիս ձգտում է ապահովել գործիքների բազմազանություն և կենտրոնացումների շարունակական նվազեցում: Դա ենթադրում է տեղաբաշխված միջոցների դիվերսիֆիկացում ըստ հաճախորդների կամ հաճախորդների խմբերի, գործիքների, տնտեսության տարբեր ճյուղերի և այլ չափանիշների, ինչպես նաև բանկի ընդհանուր ակտիվներում տեղաբաշխված միջոցների տեսակարար կշռի սահմանում ու հսկողություն: Իրացվելիության ռիսկի պարամետրերը (օր.՝ կենտրոնացումը, ակտիվների և պարտավորությունների միջև ճեղքվածքը, տոկոսադրույքի ճեղքվածքը, բարձր իրացվելի ակտիվների ցուցանիշները և այլն) սահմանված են ռիսկերի պարամետրերի համակարգում: Դրանց կառավարումը, այդ թվում՝ ռիսկի մակարդակի սահմանափակումը, հաշվետվողականության սկզբունքները, գործողությունների ծրագրերը, որոշումների կայացման քաղաքականությունները, պատասխանատու անձանց նշանակումը և սթրես-թեստերի սկզբունքների կիրառումը, իրականացվում է ռիսկերի կառավարման ընդհանուր համակարգի շրջանակներում:

Գործառնական ռիսկ՝ ներքին գործընթացների, համակարգերի խափանման, մարդկային գործունի կամ արտաքին գործոնների արդյունքում կորուստի առաջացման հավանականությունն է: Այն ներառում է իրավական ռիսկերը, բայց ոչ ռազմավարական ռիսկը և հեղինակության ռիսկերը:

Բանկում անընդհատ իրականացվում է գործառնական ռիսկերի բացահայտմանը և գնահատմանն ուղղված հետևողական աշխատանք: Ռիսկերի կառավարումն իրականացվում է մեկ միասնական համակարգի միջոցով:

Նոր գործընթաց կամ ծառայություն ներդնելուց առաջ բանկը գնահատում է դրա կարևորությունը և համապատասխան գործառնական ռիսկերի նկատմամբ իր զգայունությունը: Ուսումնասիրության գործընթացում ներգրավվում են ներդրվող գործընթացի/պրոդուկտի հետ առնչություն ունեցող բոլոր կողմերը և/կամ ստորաբաժանումները: Բիզնես-գործընթացները և/կամ նոր պրոդուկտները մշակվում են այս գնահատման արդյունքների հիման վրա: Գործընթացների և համակարգերի ռիսկերի գնահատման մեջ առանցքային դեր է խաղում տարբեր դեպքերի հավանականության և դրանց ազդեցության հաշվարկը, որի ճշգրտությունն ապահովվելու նպատակով բանկը վարում է գործառնական պատահարների և կորուստների տվյալների շտեմարան: Այն թույլ է տալիս վերլուծել ռիսկի աղբյուրները, դրանց բնույթը, պատճառները և միտումները, հաշվարկել հնարավոր գործառնական կորուստների վերականգնման համար անհրաժեշտ կապիտալի ծավալը: Բանկը նաև ներդրել է կապիտալի՝ ըստ պրոդուկտների բաշխման մոդելը՝ սեփական մեթոդաբանությամբ, որը թույլ է տալիս սահմանել տվյալ պրոդուկտի հետ առնչվող գործընթացների և համակարգերի գնահատման խնդիրներն ըստ առաջնահերթության:

Խոշոր պատահարներից պաշտպանվելու նպատակով բանկը լավագույն փորձին համապատասխան ապահովագրել է իր ակտիվները, գործառնությունները, պարտավորությունները և աշխատակիցներին: Բանկն իր ակտիվները ապահովագրել է մի շարք ռիսկերից, այդ թվում՝ հրդեհից, կայծակից, ջրհեղեղից, հափշտակումից և վանդալիզմից, ինչպես նաև իր հաճախորդների համար ձեռք բերել երրորդ կողմի պատասխանատվության ապահովագրություն: Բանկը նաև ունի ֆինանսական հաստատությունների համապարփակ ապահովագրություն (Bankers' Blanket Bond) և իր տնօրենների ու ղեկավարների պատասխանատվության ապահովագրություն:

Ռազմավարական ռիսկ՝ շուկայական վիճակի, հաճախորդի վարքագծի և տեխնոլոգիաների փոփոխությունները նույնպես կարող են բացասաբար անդրադառնալ բանկի արդյունքների վրա, եթե բանկը ձկուն չլինի փոփոխվող արտաքին միջավայրի պայմաններում: Հետևաբար, բանկը ենթարկվում է նաև ռազմավարական ռիսկերի:

Ռազմավարական ռիսկերի կառավարման համակարգի հիմքում են պարբերական ռազմավարական քննարկումները, պլանավորումը, հաշվետվությունների ներկայացումը տնօրենների խորհրդին և տնօրինությանը, ինչպես նաև զարգացման բոլոր առանձին ուղղությունների շարունակական վերահսկողությունը: Բանկում ռազմավարական պլանավորման գործընթացը կանոնակարգվում է Ռազմավարական վերլուծությունների իրականացման և գործարար ծրագրերի մշակման և մոնիթորինգի ընթացակարգով:

Տարեկան երկու անգամ բանկում կազմակերպվում է ռազմավարական նիստ, որտեղ ուսումնասիրվում և տնօրենների խորհրդին են ներկայացվում բանկի ռազմավարությունը, նպատակները և խնդիրները հաջորդող տարիների համար: Ռազմավարական նիստերից հետո սկսվում է եռամյա գործարար ծրագրի մշակումը, իսկ ծրագրի հաստատումից հետո այն կարող է վերանայվել միայն էական փոփոխությունների անհրաժեշտության դեպքում:

Միննույն ժամանակ եռամսյակային պարբերականությամբ կատարվում է գործարար ծրագրի կատարողականի վերլուծություն, որը քննարկվում է համապատասխան ուղղության տնօրենի հետ և ապա ներկայացվում տնօրինությանը կամ տնօրենների խորհրդին:

Շրջակա միջավայրի ռիսկ` ընկերության գործունեության արդյունքում առաջացող կեղտաջրերի, արտանետումների, թափոնների բացասական ազդեցությունը, ռեսուրսների սպառման արդյունքում շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցությունը կամ դրա հավանականությունը, ինչպես նաև որոշակի գործունեության արդյունքում շրջակա բնական միջավայրի քայքայման վտանգը: Շրջակա միջավայրի ռիսկերի կառավարումը ենթադրում է շրջակա միջավայրի առկա ռիսկերի բացահայտումը և դրանց կառավարման եղանակների ընտրությունը` մարդկանց առողջությունը և շրջակա միջավայրը լավագույն ձևով պաշտպանելու համար: Հաճախորդի/վարկառուի գործունեության վայրում կարող են առաջանալ սոցիալական խնդիրներ, որոնք հետզհետե կարող են ազդել նաև մոտակայքում գտնվող համայնքների վրա: Իր գործունեության ընթացքում ղեկավարվելով շրջակա միջավայրի և սոցիալական ռիսկերի կառավարման լավագույն միջազգային սկզբունքներով` Ամերիաբանկը հետամուտ է նաև իր հաճախորդների կողմից շրջակա միջավայրի և հանրության հանդեպ իրենց պարտականությունների պատշաճ կատարումն ապահովելուն: Շրջակա միջավայրի և սոցիալական ռիսկերի կառավարման հիմնական տարրերն են.

- ▶ Շրջակա միջավայրի և սոցիալական ռիսկերի կառավարման քաղաքականությունը
- ▶ Շրջակա միջավայրի և սոցիալական ռիսկերի կառավարման հրահանգը
- ▶ Տվյալ ռիսկերի կառավարման գործընթացը ներդնելու և իրականացնելու համար անհրաժեշտ գործիքները

Բանկն ունի շրջակա միջավայրի և սոցիալական ռիսկերի համակարգող, շրջակա միջավայրի և սոցիալական ռիսկերի կառավարման համակարգի ներդրման, վարման և ընթացիկ կիրառման համար պատասխանատու մասնագետ:

Բանկը ենթարկվում է նաև **այլ ռիսկերի**, որոնց թվում են հեղինակության ռիսկը, օրենսդրական և իրավական պահանջների խախտման ռիսկը, փողերի լվացման ռիսկը:

Հեղինակության ռիսկը հեղինակության անկման հավանականությունն է, որի արդյունքում նվազում է ընկերության ընդհանուր արժեքը, և/կամ ավելանում են իրավական պահանջների պահպանման և այլ ծախսերը: Այն ընդգրկում է բանկի էթիկայի, ապահովության, անվտանգության, կայունության, որակի և նորամուծությունների հետ կապված բացասական զարգացումները: Հեղինակության ռիսկը կառավարվում է տնօրինության մակարդակում, սակայն հաճախորդների հետ հարաբերությունների կառավարման, հասարակության հետ կապերի, անվտանգության բաժինները և այլ շահագրգիռ կողմեր ևս ներգրավվում են որոշումների կայացման գործընթացում` առավել ճիշտ որոշում կայացնելու համար:

Հեղինակության ռիսկի զսպումն իրականացվում է առանձնացված կառույցի` տեղեկությունների բացահայտման կոմիտեի միջոցով: Կոմիտեն որակում է տեղեկատվությունը` որպես ներքին հանդիսացող կամ չհանդիսացող, հաստատում խոսնակների ցանկը, ինսայդերների ցուցակները, ներդրողների հետ փոխհարաբերությունների բաժնի` հրապարակման ենթակա հայտարարությունները, դիրքորոշում է հայտնում հրապարակային հարցումների և ասեկոսների պատասխանների վերաբերյալ:

Քանի որ բանկի գործունեությունը կարգավորվում է ազգային օրենսդրությամբ և վարկատուների հետ կնքված պայմանագրերի պահանջներով, բանկը ենթարկվում է օրենսդրական և իրավական պահանջների խախտման ռիսկի: Օրենսդրական և իրավական պահանջների խախտման ռիսկը կառավարվում է համապատասխան ստորաբաժանման, իրավաբանական ծառայության և Ֆինանսական դիտարկումների ծառայության կողմից: Բանկն իր գործունեությունը իրականացնում է կարգավորող մարմնի պահանջներին համաձայն՝ միևնույն ժամանակ կիրառելով միջազգային չափանիշները՝ ներքին իրավական ակտերում հնարավոր թերությունները բացառելու համար:

Նշված ռիսկերը կառավարվում են ներքին իրավական ակտերի, որոշումների կայացման և վերահսկողության եռաստիճան համակարգի միջոցով, այն է՝ ռիսկերի կառավարումն իրականացվում է համապատասխան ստորաբաժանման, մասնագիտացած կոմիտեների և տնօրինության կողմից:

Մակրոտնտեսական գործոններ

Հաշվետու ժամանակահատվածում ՀՀ տնտեսության և բանկային համակարգի աճը զսպում էին հետևյալ գործոնները՝ կապիտալի թույլ ձևավորում և ցածր ներքին պահանջարկ (անգամ 2017թ. վերականգնման միտումների պարագայում), օտարերկրյա ուղղակի ներդրումների սակավություն, բնակչության և բիզնեսի սպասումների անկում (ՀՀ մակրոտնտեսական ցուցանիշների մասին առավել մանրամասն իմանալու համար տե՛ս «Արտաքին միջավայր», «Ռեզումեարական հաշվետվություն» բաժինները):

Նախորդ 3 տարվա համեմատ՝ մակրոտնտեսական միջավայրը բարելավվել էր, և 2017թ. Ամերիաբանկը գործում էր չափավոր ռիսկի պայմաններում՝ պահպանելով բոլոր ռիսկերը, այդ թվում՝ վարկային ռիսկը, ընդունելի սահմաններում: Մինչև տարեվերջ վարկային ռիսկի (խնդրահարույց վարկերի) ցուցանիշն զգալիորեն բարելավվեց և շատ ավելի ցածր էր, քան ՀՀ բանկային համակարգի միջին ցուցանիշը:

2017թ. բանկային համակարգի վարկային պորտֆելի որակի վրա ազդող հիմնական գործոններն էին ցածր ներքին պահանջարկը, մասնավոր տրանսֆերտների և ուղղակի օտարերկրյա ներդրումների սակավությունը, դրամի արժեզրկման ռիսկերը, որոնք իրենց հերթին կարող են ազդած լինել պահանջարկի, աշխատավարձերի և վարկերի սպասարկման գործակցի վրա:

2017թ. էական ռիսկերը կապված էին նավթի և մետաղների գների տատանումների, Ռուսաստանի տնտեսական ճգնաժամի, լարված աշխարհաքաղաքական իրավիճակը, ԱՄՆ քաղաքական ուղղվածությունը, պարտքային ֆինանսավորման միջազգային շուկայի անորոշությունը: Հայաստանում տնտեսական ակտիվության ինդեքսը 2016-2017թթ. կազմեց 110.2%, ՀՆԱ-ի աճը 2017թ.՝ 7.5%: Տարածաշրջանում զինված հակամարտության ռիսկը համեմատաբար նվազեց, բայց առաջվա պես առկա է և կարող է ազդել ֆինանսական հատվածի վրա:

ՀՀ ԿԲ հաշվարկային դրույքը նվազեց մինչև 6.5% (0.25%-ով). պարտադիր պահուստների պահանջներն առաջվա պես խիստ էին: Առկա էր շուկայական տոկոսադրույքների նվազման ակնհայտ միտում, որն անդրադարձավ նաև մեր բանկի ցուցանիշների վրա: Պարտադիր

պահուստավորման ռեժիմի շնորհիվ ՀՀ դրամի փոխարժեքը կայուն էր, սակայն թե ինչպիսի փոփոխություններ կլինեն հետագայում, կանխատեսել դժվար է: LIBOR տոկոսադրույքն աճի ակնհայտ միտում է դրսևորել, ինչին նպաստել են հիմնականում դաշնային պահուստային ֆոնդի դրույքաչափի սպասումները և 2017թ. աճը: Սա անդրադարձել է բանկի եկամտաբերության ներքին նորմայի վրա:

2017թ. բանկը չգերազանցեց նախանշված ռիսկի ախորժակը: Ավելին, չօգտագործված պաշարը կազմել է ընդհանուր սահմանաչափի 24%-ը, փաստացի վնասը ամբողջությամբ փոխհատուցվել է բանկի կապիտալի հաշվին, և կապիտալի համարժեքության ցուցանիշը ողջ տարի ընդունելի մակարդակի վրա էր: 2017թ. ռիսկի հիմնական աղբյուրը վարկային ռիսկն էր: Ռիսկի այլ աղբյուրներով պայմանավորված վնասը շատ չնչին էր:

Մակրոմիջավայրի ռիսկեր

<p>Ռիսկեր և անորոշություններ</p> <p>Հաշվետու ժամանակահատվածում ՀՀ տնտեսության և բանկային համակարգի վրա ազդող գործոններն էին ցածր ներքին պահանջարկը՝ պայմանավորված ռուսական տնտեսության վիճակով, օտարերկրյա ուղղակի ներդրումների պակասը, մասնավոր փոխանցումների կրճատումը, տարածաշրջանում զինված հակամարտության վտանգը:</p>	<p>Մակրոտնտեսական ցուցանիշներ</p> <p>ՀՆԱ-ի աճ 7.5%</p> <p>Սպառողական գների ինդեքս 2.7%</p> <p>Ուղղակի օտարերկրյա ներդրումների նվազում՝ 2008թ-ից ի վեր ներդրումները նվազել են շուրջ 3 անգամ</p> <p>Զուտ մասնավոր փոխանցումների աճ 2.1%-ով</p> <p>ՀՀ բանկային համակարգի ցուցանիշները</p> <p>Չաշխատող վարկեր՝ 5.0%</p> <p>Կապիտալի համարժեքության գործակից՝ 18.6%</p> <p>Կապիտալի եկամտաբերություն՝ 5.7%</p> <p>Իրացվելիության գործակիցները համարյա երկու անգամ գերազանցել են նորմատիվները:</p> <p>Ընդհանուր կապիտալն աճել է 8.2%-ով:</p>	<p>Ռիսկերի նվազեցման ուղղությամբ ձեռնարկված քայլերը</p> <p>Ելնելով 2017թ. միտումներից և սպասումներից՝ բանկը.</p> <ul style="list-style-type: none"> ▶ Սահմանեց մակրո ռիսկերի և մակրոտնտեսական միջավայրի պայմաններում վարկավորման առավել նպատակահարմար ռեժիմներ՝ 2017թ. 2-րդ կիսամյակի համար նախանշելով լավատեսական ռեժիմ ▶ Պարզեցրեց վարկավորման գործընթացը պարտաճանաչ վարկառուների համար ▶ Ջանքերն ուղղեց խնդրահարույց վարկերի վերադարձին և ռիսկային վարկերի մոնիթորինգին ▶ Փորձեց ընդլայնել վարկային պրոդուկտների տեսականին, ավելի բազմազան դարձնել այն և ներգրավել հաճախորդների նոր խմբեր
--	--	--

Վարկային ռիսկ

<p>Ռիսկեր և անորոշություններ</p> <p>2017թ. բանկը գործում էր լավատեսական գործառնական ռեժիմի և միջին վարկային ռիսկի պայմաններում: Սկսած 2016թ. 2-րդ կեսից բանկի վարկային ռիսկի ցուցանիշները դրսևորում էին բարելավման միտում:</p>	<p>Ռիսկի հիմնական ցուցանիշներ</p> <p>Ամերիաբանկի չաշխատող վարկերից ցուցանիշը բարելավվեց՝ տարեվերջին կազմելով 3.5%՝ ավելի ցածր, քան բանկային համակարգի միջին ցուցանիշը՝ 5.3%: Կորպորատիվ խնդրահարույց վարկերի ցուցանիշը 3.4% էր, մանրածախ վարկերինը՝ շուրջ 4.3%:</p> <p>Վարկային ռիսկի արժեքը կազմեց վարկային պորտֆելի 1.2%-ը: Վարկերի հնարավոր կորուստների պահուստները ծածկել են խնդրահարույց վարկերի 80.7%-ը (առանց գրավադրված գույքի արժեքի ճշգրտումների): Ոլորտային կենտրոնացման մակարդակը ցածր էր, մեկ ոլորտում կենտրոնացման առավելագույն ցուցանիշը մանրածախ առևտրի ոլորտում էր և չէր գերազանցում վարկային պորտֆելի 19%-ը: Վարկային պորտֆելների որակը տարվա ընթացքում բարելավվեց բոլոր ոլորտներում, բացառությամբ արդյունաբերության և առողջապահության ոլորտների (մեկ վարկառուի պատճառով):</p> <p>Ռիսկի հիմնական ցուցանիշներն անփոփոխ էին: Ժամկետանց վարկերի ծավալն զգալիորեն նվազեց և տարվա ընթացքում դրսևորեց դրական միտում:</p>	<p>Ռիսկերի նվազեցման ուղղությամբ ձեռնարկված քայլերը</p> <ul style="list-style-type: none"> ▶ Կայուն ֆինանսական ցուցանիշներ ունեցող հաճախորդների վարկավորման խրախուսում, ցածր ռիսկային հաճախորդներ ներգրավելու նպատակով որոշ պարամետրերի պարզեցում ▶ Վարկավորման գործընթացում ռիսկերի վրա հիմնված գնագոյացման սկզբունքի ներդրում ▶ Սքորինգի վրա հիմնված մանրածախ վարկավորման նոր համակարգի ներդրում՝ թվային կապուլիններով վարկավորում իրականացնելու համար, և համապատասխան ռիսկի ախորժակի սահմանում
---	--	--

Շուկայական ռիսկեր

<p>Ռիսկեր և անորոշություններ</p> <p>2017թ. իրավիճակը շուկայում բարելավվել էր, սակայն դեռ պահպանվում էր անորոշության բարձր մակարդակը: ՀՀ ԿԲ-ի գործողությունների շնորհիվ ՀՀ դրամի փոխարժեքը բավականին կայուն էր, սակայն դրամի արժեզրկման վտանգը դեռ չի անցել: ՀՀ բանկային համակարգում կապիտալի ներհոսքը նպաստեց նաև տեղական շուկայում արտարժույթի առաջարկի կարգավորմանը: Այդուհանդերձ, վստահության և արագ իրացվելիության պակասի պատճառով գնման և վաճառքի սփրեղը մնում է բարձր:</p> <p>Տոկոսադրույքների վարքագիծը ՀՀ շուկայում տարբերվում էր միջազգային տոկոսադրույքների վարքագծից: Դաշնային պահուստի քաղաքականությունը հանգեցրեց նրան, որ միջազգային շուկայում տոկոսադրույքները բարձրացան, ինչի արդյունքում LIBOR-ի դրույքն արձանագրել է ամենաբարձր մակարդակը 2009թ-ից ի վեր: Տնտեսական վիճակի և մրցակցության արդյունքում թե՛ ավանդների, թե՛ վարկերի տոկոսադրույքները տեղական շուկայում</p>	<p>Ռիսկի հիմնական ցուցանիշներ</p> <p>Շուկայական ռիսկերից առաջացող կորուստը/ախորժակը 2017թ. զրոյական էր: Տարվա ընթացքում բաց արտարժույթային դիրքը երկար էր՝ պայմանավորված դոլարի արժևորման ակնկալիքներով, խնդրահարույց վարկերի աճի ռիսկերով և վարկային պորտֆելի դոլարացման բարձր մակարդակով: Արտարժույթային դիրքի վերագնահատման արդյունքը դրական էր:</p> <p>Տոկոսադրույքի, այդ թվում՝ լողացող (LIBOR-ի նկատմամբ զգայուն) տոկոսադրույքի ճեղքվածքը բանկի համար շուկայական ռիսկերի առաջացման հիմնական աղբյուրն էր: Սակայն սթրես-թեստերի հիման վրա հաշվարկված վնասը և փաստացի ցուցանիշները չզերազանցեցին սահմանված ռիսկի ախորժակը:</p> <p>Արժեթղթերի պորտֆելի շուկայական ռիսկն ընդունելի էր և</p>	<p>Ռիսկերի նվազեցման ուղղությամբ ձեռնարկված քայլերը</p> <ul style="list-style-type: none"> ▶ Ռիսկի ախորժակի/հնարավոր կորուստների կառավարումն իրականացվում էր հատուկ սթրես-թեստերի, առկա միտումների մոնիթորինգի և գնահատումների միջոցով: ▶ Օրական կտրվածքով հատուկ հսկողության տակ էին պահվում բաց արտարժույթային դիրքերը: ▶ Ներքին եկամտաբերության նորման կառավարվում էր ճեղքվածքի սահմանաչափերի և սթրես-թեստերի հիման վրա որոշված վնասի սահմաններում: Պարբերաբար հաշվարկվում էին և մոնիթորինգի ենթարկվում տոկոսադրույքների ակնկալվող բացասական փոփոխությունները: Հեջավորման բարձր արժեքի հետևանքով ռիսկի նվազեցման հնարավորությունները սահմանափակ էին, բայց և այդպես, ռիսկը նվազեցվում էր սվոփերի, վարկավորման և ֆինանսավորման տոկոսադրույքների ակտիվ կառավարման միջոցով: ▶ Բանկը մշակեց և ներդրեց արժեթղթերի պորտֆելի նոր
--	--	---

<p>նվազման միտում էին դրսևորում, ինչն ուղղակիորեն անդրադառնում էր բանկի ներքին եկամտաբերության նորմայի վրա, քանի որ առաջանում էր հայկական բանկերին բնորոշ բացասական ճեղքվածք: Հեջավորման հնարավորությունները սահմանափակ էին հեջավորման և տեղական շուկայում առկա գործիքների գնի պատճառով: Չնայած դրան՝ բաց դիրքերը պահպանվում էին բանկի ռիսկի ախորժակի սահմաններում և կառավարվում էին համապատասխան ձևով: Պարտքային շուկայում գործող տոկոսադրույքները գտնվում էին ԱՄՆ դոլարի փոխարժեքի անկման, դաշնային պահուստային ֆոնդերի դրույքի բարձրացման և դեպի արժեթղթերի շուկա կապիտալի հոսքի ազդեցության տակ: Դրամի կայուն փոխարժեքի և ՀՀ ԿԲ-ի կողմից վարվող՝ հիմնական տոկոսադրույքների իջեցման քաղաքականության պայմաններում հայկական արժեթղթերը բարձր արդյունավետություն էին դրսևորում, ինչպես և նախորդ երկու տարվա ընթացքում:</p>	<p>ռիսկի ախորժակի սահմաններում՝ շնորհիվ կարճ դյուրացիայի (~3 տարի) և ծավալի: Բանկի արժեթղթերի պորտֆելը հիմնականում բաղկացած է ՀՀ պետական պարտատոմսերից (82%): Պորտֆելի 12%-ը կազմում են բարձր վարկանիշ ունեցող արտասահմանյան սուվերեն պարտատոմսերը:</p>	<p>կառուցվածք՝ ձգտելով բարելավել իրացվելիության ցուցանիշները, ավելի բազմազան դարձնել պորտֆելը և բարձրացնել եկամտաբերությունը: Բանկը կարողացավ նաև հավելյալ իրացվելիությունը բաշխել արտասահմանյան բարձր իրացվելի կարճաժամկետ և միջնաժամկետ սուվերեն արժեթղթերում:</p>
--	---	--

Գործառնական ռիսկեր

<p>Ռիսկեր և անորոշություններ</p> <p>Բանկային համակարգում ամբողջ աշխարհով մեկ զգալիորեն աճել է կիրբերհանցագործությունների թիվը, ինչը կարող է խոշոր ֆինանսական վնասի պատճառ դառնալ, ինչպես նաև խաթարել գործառնությունների իրականացումը և վտանգել գործունեության անընդհատությունը: Համացանցի և բջջային հավելվածների միջոցով իրականացվող առևտրի ծավալի աճին զուգահեռ ողջ աշխարհով մեկ աճում է նաև քարտային խարդախությունների թիվը: Անվտանգությունը դառնում է հիմնախնդիր աշխարհի բոլոր ֆինանսական հաստատությունների համար:</p>	<p>Ռիսկի հիմնական ցուցանիշներ</p> <p>Գործընթացների կարգավորման և վերահսկման շնորհիվ բանկը գործառնական ռիսկը պահում է ցածր մակարդակի վրա:</p> <p>2017թ. կրած ընդհանուր գործառնական վնասը չի գերազանցել կապիտալի 0.011%-ը: Վնասի 88%-ը գրանցվել է արտաքին գեղծարարությունների խմբում, ընդ որում, գրանցված դեպքերի թիվը 2016թ. համեմատ նվազել է 30%-ով: Տարեցտարի ավելանում է Ամերիաբանկի՝ հեռահար բանկային ծառայություններից օգտվող հաճախորդների և քարտապանների թիվը: Գործառնական վնասն ընդունելի մակարդակում էր, և ցուցանիշի վատթարացում չի</p>	<p>Ռիսկերի նվազեցման ուղղությամբ ձեռնարկված քայլերը</p> <p>Գործառնական ռիսկերի կառավարման նպատակով բանկում գնահատվել և վերագնահատվել են մի շարք գործընթացներ և համակարգեր: Գնահատումների արդյունքում առանձնացված բարձր ռիսկերի համար առաջարկվել և ներդրվել են ռիսկերը կանխարգելող և/կամ նվազեցնող լուծումներ՝ վիրտուալ POS տերմինալներով կատարվող գեղծարարությունների հնարավորության սահմանափակում, բանկումատների անվտանգության բարձրացում: Ավարտվեց գործառնական ռիսկերի/պատահարների և կորուստների տվյալների շտեմարանի ավտոմատացան գործընթացը: Բանկի գործառնական ռիսկերը վերահսկվում էին համապարփակ և համակարգված ձևով: Ուշադրության կենտրոնում էին ներքին SS</p>
--	--	---

	<p>ակնկալվում: Բանկի բոլոր համակարգերը գործում են ցածր ռիսկի պայմաններում:</p>	<p>համակարգի անվտանգությունը, անձնակազմի ուսուցումը, որոշումների կայացման աստիճանակարգումը և իրավասությունների բաշխումը:</p> <p>Բանկը ձեռք է բերել համապարփակ և արդյունավետ ապահովագրություն (ֆինանսական հաստատությունների համապարփակ ապահովագրություն, կանխիկ միջոցների, գույքի, բանկոմատների, երրորդ անձանց պատասխանատվության ապահովագրություն և այլն):</p>
--	--	---

Իրացվելիության ռիսկ

<p>Ռիսկեր և անորոշություններ</p> <p>Իրացվելիության մակարդակը ՀՀ բանկային համակարգում շատ բարձր է: Դրան նպաստեց կապիտալի ներհոսքը ի պատասխան ՀՀ ԿԲ-ի պահանջի, որի նպատակն էր բանկային համակարգի հուսալիությունը բարձրացնելն ու դրամի պահանջարկը բարելավելը:</p> <p>Իրացվելիության ավելցուկն անդրադարձավ՝ ներգրավված, թե՛</p>	<p>Ռիսկի հիմնական ցուցանիշներ</p> <p>Իրացվելիության բոլոր գործակիցներն անգամ ամենաբացասական սթրես-սցենարների դեպքում համապատասխանում էին ՀՀ ԿԲ-ի կողմից սահմանված պահանջներին:</p> <p>2017թ. իրացվելիության ռիսկը չնչին էր և զսպվում էր ընդհանուր ռիսկի</p>	<p>Ռիսկերի նվազեցման ուղղությամբ ձեռնարկված քայլերը</p> <p>Բարձր իրացվելի ակտիվները տեղաբաշխման ուղիները բազմազանեցվում են բարձր վարկանիշ ունեցող գործընկերների լայն ցանցի միջոցով, ինչպես նաև ներդրումային պորտֆելի մանրամասն կառուցված սահմանելու միջոցով: Բանկն ընդլայնեց իր գործընկերների ցանցը՝ կապեր հաստատելով արտասահմանյան</p>
---	---	---

<p>տեղաբաշխված միջոցների տոկոսադրույքների վրա , ինչպես նաև վարկային ռիսկի պարամետրերի վրա: Ռիսկի նկատմամբ զգայուն ակտիվների երկար դիրքը և ռիսկի նկատմամբ զգայուն պարտավորությունների կարճ դիրքը բանկերի համար մեծ խնդիրներ կստեղծեն, եթե տոկոսադրույքը նվազեցվի:</p>	<p>պարամետրերի համակարգի շրջանակներում:</p> <p>Ավելին, սթրես-թեստերի ժամանակ իրացվելիության ճեղքվածքն անգամ ամենառիսկային սցենարների դեպքում շատ դրական արդյունքներ է ցույց տվել:</p>	<p>Ֆինանսական հաստատությունների հետ, ինչի շնորհիվ բանկի համար հասանելի են դառնում մեծ թվով ֆինանսական գործիքներ և իրացվելիությունն ապահովող մեխանիզմներ:</p> <p>Ավանդային բազայի կայունությունը և հետագա աճն ապահովելու համար բանկը սահմանում էր ավանդների տոկոսադրույքները՝ հիմք ընդունելով շուկայում գործող տոկոսադրույքները: Բանկն աշխատում էր նաև այլ աղբյուրներից (միջազգային հաստատություններ) ռեսուրսների ներգրավման ուղղությամբ:</p>
--	---	--

Շրջակա միջավայրի և սոցիալական ռիսկեր

<p>Ռիսկեր և անորոշություններ</p> <p>Շրջակա միջավայրի և սոցիալական ռիսկերի կառավարումը գնալով ավելի կարևոր դեր է խաղում հաջողակ ընկերություն հիմնելու և պահպանելու համար: Այն կարևոր է թե՛ բաժնետերերի, թե՛ հաճախորդների, թե՛ ներդրողների, աշխատակիցների ու համայնքի և, իհարկե, շրջակա միջավայրի համար: Ամերիաբանկի գլխավոր նպատակն է համագործակցել այն հաճախորդների հետ, որոնք պատշաճ կերպով կառավարում են շրջակա միջավայրի և սոցիալական ռիսկերը: Ավելին, բանկն աջակցում է իր</p>	<p>Ռիսկի հիմնական ցուցանիշներ</p> <p>Բանկի վարկային պորտֆելի շրջակա միջավայրի և սոցիալական ռիսկերը գնահատվել են որպես ընդունելի: Շրջակա միջավայրի և սոցիալական ռիսկերի ավելի քան 85%-ը գտնվում է ցածր և միջին ռիսկի գոտում: «Բարձր Ա» դասի ռիսկային վարկառուներ բանկի վարկային պորտֆելում առկա չեն: Շրջակա միջավայրի և սոցիալական ռիսկերի կառավարման և վարկային քաղաքականությունները նպատակ ունեն նվազեցնել ֆինանսավորվող ծրագրերի</p>	<p>Ռիսկերի նվազեցման ուղղությամբ ձեռնարկված քայլերը</p> <p>Շրջակա միջավայրի և սոցիալական ռիսկերը կառավարվում էին բանկի վարկային ընթացակարգերին և շրջակա միջավայրի ու սոցիալական ռիսկերի կառավարման գործող համակարգին համաձայն, որը մշակվել է լավագույն միջազգային փորձի հիման վրա (ՎՋԵԲ-ի, ՄՖԿ-ի և ԱՋԲ-ի գործունեության չափանիշներ/պահանջներ): Ցանկացած ծրագիր ֆինանսավորելիս Ամերիաբանկը գնահատում էր տվյալ ծրագրի շրջակա միջավայրի և սոցիալական ռիսկերը,</p>
---	--	--

<p>հաճախորդներին շրջակա միջավայրի և սոցիալական ռիսկերի համակարգ ներդնելու գործում: Ամերիաբանկի շրջակա միջավայրի և սոցիալական ռիսկերի կառավարման համակարգերը խրախուսում են հաճախորդներին, որ նրանք էլ իրենց բիզնեսը վարեն կայուն և պատասխանատու կերպով: Համակարգը հիմնվում է ՄՖԿ-ի, ՎՋԵԲ-ի և ԱՋԲ-ի գործունեության պահանջների և չափանիշների վրա, որոնք դարձել են վարկավորման ընթացքում շրջակա միջավայրի և սոցիալական ռիսկերի գնահատման գլխավոր չափանիշը: Ռիսկերը բացահայտելու համար բանկը կիրառում է տեխնիկական փաստաթղթեր, որոնցով սահմանվում են ընդհանուր և տնտեսության առանձին ճյուղերին բնորոշ օրինակելի գործունեության չափանիշները:</p>	<p>բացասական ազդեցությունը՝ ֆինանսավորման պայմանների, հրահանգների և նախապայմանների, խորհրդատվության և շրջակա միջավայրի և սոցիալական ռիսկերի կառավարման բարձրակարգ մասնագետների ներգրավման միջոցով:</p>	<p>ուսումնասիրում իրավական փաստաթղթերը, բացահայտում, հսկում և նվազեցնում ռիսկերը և կազմում համապատասխան հաշվետվություններ: Գնահատման արդյունքները և բացահայտված անհամապատասխանությունները ներկայացվում են եզրակացության տեսքով, որի հիման վրա վարկային պայմանագրերում ներառվում են պարտադիր պահանջներ շրջակա միջավայրի և սոցիալական ռիսկերի կառավարման վերաբերյալ:</p> <p>Վարկառուների համապատասխանությունը շրջակա միջավայրի և սոցիալական ռիսկերի կառավարման լավագույն փորձին ապահովելու նպատակով 2017թ. բանկը շարունակաբար կիրառում է բարձր և «բարձր Ա» դասի ռիսկային ծրագրերի (ներառյալ ՀԷԿ-երի) շրջակա միջավայրի և սոցիալական ռիսկերի կառավարման համակարգ, որով սահմանվում են այն նորմերը և պահանջները, որոնցով վարկառուները պետք է առաջնորդվեն իրենց գործունեության ընթացքում:</p>
--	--	--

Կապիտալի համարժեքության գնահատման ներքին գործընթաց

Կապիտալի համարժեքության գնահատման նպատակն է ապահովել բանկի ստանձնած ռիսկերին համարժեք կապիտալի մեծություն և սահմանել ռիսկերի միջավայրին համարժեք կապիտալի նպատակային մակարդակ: Կապիտալի համարժեքության գործակիցը հաշվարկվում է որպես ընդհանուր նորմատիվային կապիտալի հարաբերությունը ռիսկով կշռված ակտիվներին: Կապիտալի համարժեքության նվազագույն սահմանաչափը 12% է: Հնարավոր ռիսկերից կորուստի չափը հաշվարկելու համար կիրառվում են միաժամանակյա սթրես-թեստեր. այսպես դիտարկվում է բոլոր ռիսկերի՝ միաժամանակ ի հայտ գալու հավանականությունը: Բանկը գնահատում է կապիտալը և դրա համարժեքության գործակիցը որոշակի ժամանակային հորիզոնի համար, հաշվարկում նվազագույն անհրաժեշտ կապիտալը, որը բանկը պետք համալրի՝ հաշվի առնելով ռիսկերից առաջացող կորուստները, կապիտալի թիրախային ցուցանիշը և ռիսկով կշռված ակտիվների մեծությունները: Առանձնացվում են ռիսկերի հետևյալ տեսակները, որոնց ի հայտ գալու դեպքում բանկը կարող է վնաս կրել՝ վարկային ռիսկ (պորտֆելի ռիսկ, կենտրոնացման ռիսկ), շուկայական ռիսկ (լողացող տոկոսադրույք, եկամտաբերության կոր, ներքին եկամտաբերության ճեղքվածք, արտարժույթային և բաժնային գործիքների գնային ռիսկ), գործառնական վնաս, ռիսկով կշռված ակտիվների աճ (արժույթային սթրես) և այլ ռիսկեր, առկայության դեպքում: Կապիտալի փոփոխությունները հաշվարկելու համար կիրառվում են չորս տարբեր սցենարներ՝ սկսած առանց ռիսկի բազային սցենարից մինչև ամենահոռոտեսական սցենարը: Եթե գնահատման արդյունքում կապիտալի համարժեքության կանխատեսվող մեծությունը



ամենահավանական սցենարի դեպքում (միջինից մեծ սպասումներ) չի բավարարում ՀՀ ԿԲ-ի սահմանած նվազագույն պայմանները, բանկը պետք է քայլեր ձեռնարկի՝ կապիտալի համարժեքության գործակիցը բավարար մակարդակի վրա պահելու համար: Ամենահավանական սցենարի դեպքում կապիտալի համարժեքության կանխատեսվող գործակիցը 2018թ. կլինի 13% (ՀՀ ԿԲ նորմատիվը 12% է): Այս ցուցանիշը խստորեն վերահսկվում է բանկի ղեկավարության կողմից, քանի որ առաջիկա երեք տարվա համար բանկը որդեգրել է աճի ռազմավարություն, որով նախատեսվում է կապիտալի համալրում և ակտիվների աճ:

Մթերես-թեստեր Կապիտալի ցուցանիշը կումուլյատիվ սցենարի դեպքում

<i>հազ. ՀՀ դրամ</i>	Դեկտ-17	Հուն-18	Դեկտ-18
Կապիտալ (առանց ռիսկի ճշգրտման)	84,123	96,448	110,849
1-ին մակարդակ (ՀՀ ԿԲ)	58,192	78,208	92,609
2-րդ մակարդակ (ՀՀ ԿԲ)	25,931	17,990	17,989
Ռիսկով կշռված ակտիվներ	659,671	688,356	699,752
Կապիտալի համարժեքություն (բազ. սցենար)	12.8%	14.0%	15.8%
Կապիտալի համարժեքություն (ցածր ռիսկային սցենար՝ ամենահավանականը)	12.8%	12.5%	12.8%

ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

ՌԻՍԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՌԻՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ռիսկերի ավելի արդյունավետ կառավարման համար 2017թ. բանկը վերանայեց ռիսկերի գնահատման և նվազեցման բոլոր սկզբունքները, ընթացակարգերը և մեթոդաբանությունները:

Վարկային ռիսկերի կառավարման բնագավառում 2017թ. բանկը ներդրեց.

- ▶ Վարկերի մոնիթորինգի նոր՝ ռիսկերի վրա հիմնված սկզբունքներ
- ▶ Մեծ աշխատանք է կատարվում հնարավոր կորուստների դիմաց մասհանումներ կատարելու մոտեցումը ՖՀՄՍ 9-ին համապատասխան վերանայելու ուղղությամբ:
- ▶ Նոր մոտեցումներ սթրես-թեստերի սցենարներին
- ▶ Ռիսկերի վրա հիմնված գնագոյացման համակարգ
- ▶ Ռիսկի գնահատման հատուկ մեթոդաբանություններ նոր՝ սքորինգային վարկային պրոդուկտի և ապառիկ ֆինանսավորման համար Վարկային ռիսկերի վերաբերյալ ամսական հաշվետվությունների միջոցով բանկի ղեկավարությունը մշտապես տեղեկացվում է վարկային պորտֆելի որակի, տնտեսության ճյուղերի, վարկային պրոդուկտների, ռիսկերի հիմնական ցուցանիշների և այլ ռիսկային գործոնների և դրանց դինամիկայի մասին և տալիս համապատասխան հանձնարարականներ ռիսկերի գնահատման և նվազեցման ուղղությամբ: Արտահերթ մոնիթորինգի միջոցով մշտապես ուշադրության կենտրոնում են պահվում բարձր ռիսկային վարկերը, ինչի շնորհիվ տարեվերջում դրանց ծավալն զգալիորեն նվազել էր: Ռիսկերի բացահայտման, գնահատման և կառավարման գործող մեխանիզմների շնորհիվ հնարավոր եղավ 2017թ. ընթացքում էապես նվազեցնել վարկային ռիսկի մակարդակը և այն դարձնել հնարավորապես վերահսկելի:

Շուկայական ռիսկերի կառավարման բնագավառում 2017թ. բանկը.

- ▶ Ավելցուկային իրացվելիության և հավելյալ եկամտաբերության ապահովման նպատակով ներդրեց արժեթղթերի պորտֆելի ձևավորման և կառավարման նոր հայեցակարգ
- ▶ Վերանայեց առևտրային գործառնությունների սահմանաչափերի ամբողջ համակարգը
- ▶ Վերանայեց գործընկեր ֆինանսական հաստատությունների սահմանաչափերի հաշվարկման և հաստատման մեթոդաբանությունները: Ելնելով կորպորատիվ պարտատոմսերի ներքին շուկայի նոր պահանջներից՝ ներդրվեցին երկարաժամկետ ներդրումների սահմանաչափերի հաշվարկման և կառավարման նոր մոտեցումներ:

- ▶ Վերանայեց կիրառվող բոլոր սթրես-թեստերի սցենարները՝ համապատասխանեցնելով դրանք տնտեսական միջավայրի միտումներին
- ▶ Բարելավեց բրոքերային գործառնությունների ռիսկերի կառավարումը՝ ներդնելով պորտֆելների և հաճախորդների գնահատման մոտեցումներ և կասեցնելով բարձր ռիսկային առևտրային հարթակի և գործիքների կիրառումը: Մշակվեց ռիսկերի կառավարման հատուկ մոտեցում կրիպտոարժույթներով գործառնություններ իրականացնող հաճախորդների համար:
- ▶ Նոր ՖՀՄՄ 9-ին համապատասխան մշակեց ակտիվների հնարավոր կորուստների դիմաց մասհանումներ կատարելու նոր մոտեցում՝ հիմնված ակնկալվող կորուստի և մակրոտնտեսական կանխատեսումների վրա:

Գործառնական ռիսկերի կառավարման բնագավառում 2017թ. քանկը.

- ▶ Գնահատեց և վերագնահատեց մի շարք ներքին գործընթացներ և համակարգեր, այդ թվում՝ նոր սերնդի թվային պրոդուկտներ՝ գործառնական ռիսկերի պատշաճ կառավարումն ապահովելու նպատակով
- ▶ Առանձին բարձր ռիսկերի համար մշակեց և կիրառեց ռիսկերը կանխարգելող և/կամ նվազեցնող համապատասխան լուծումներ
- ▶ Ավտոմատացրեց գործառնական պատահարների և կորուստների տվյալների շտեմարանը
- ▶ Հաշվի առնելով կիրքերհանցագործությունների աճը՝ դիտարկեց կիրքերիսկերի ապահովագրությունը, գրավի ապահովագրության բարելավումը, գնահատեց գործընկեր ապահովագրական ընկերությունների վերաապահովագրման ծածկույթները

Բանկի ռիսկի ախորժակ

Բանկի ռիսկերի կառավարման քաղաքականությունը

Բանկի ռիսկերի կառավարման քաղաքականությունը	Շուկայային ՌԿ քաղաքականություն	Գործառնական ՌԿ քաղաքականություն	Շրջակա միջավայրի և սոց. ՌԿ քաղաքականություն	Իրացվելիության ՌԿ քաղաքականություն
--	--------------------------------	---------------------------------	---	------------------------------------

Ուղղվածություն, բիզնեսի պլանավորում

Ակտիվների և պարտավորությունների կառավարում

Կապիտալի համարժեքության ներքին զննահատում (տնտեսական կապիտալ, սթրես-սցենարներ)

Մակրոռիսկերի (շուկայի) մոնիթորինգի համակարգ

Ռիսկի ներքին պարամետրեր, ռիսկի հիմնական ցուցանիշներ, վաղ ահազանգման ազդակների համակարգ

Սթրես-թեստավորման համակարգ

Ռիսկերի կառավարման մոդելներ

Որոշումների կայացման սահմանաչափերի համակարգ (Տնօրենների խորհուրդ, Տնօրինություն, Վարկային կոմիտեներ, ԱՊԿԿ, ՓԼ/ԱՖ կոմիտե, անձնակազմ)

Գործառնական սահմանաչափեր (վարկավորում, առևտրային, կանխիկով գործառնություններ...)

Որոշումների կահացման իրավասություններ ռիսկի պարամետրերի/հիմնական ցուցանիշների վերաբերյալ

Շեղումների սահմանաչափերի կառավարում

Բիզնես-գործընթացներ

Վարկավորման գործընթաց
(ղիմում, որոշման կայացում, զննահատում, ռեյթինգավորում, մոնիթորինգ)

Ակտիվների, պարտավորությունների և իրացվելիության կառավարում
(ԱՊԿ, Գանձապետարանի, ԱՊԿԿ գործընթացներ)

Բանկային գործառնություններ
(ընթացակարգեր, սահմանաչափեր)

Հաշվետվություններ և վերլուծություններ

Ներքին աուդիտ, ներքին վերահսկողություն և հսկողություն

Ստորև ներկայացված է քանկի ռիսկերի կառավարման համակարգի ընդհանուր տրամաբանությունը: Այն ունի լավ մշակված կառուցվածք, որը նախատեսում է արտաքին և ներքին աղբյուրներից առաջացող ռիսկերից պաշտպանվելու մի քանի մակարդակ:

Վարկային ռիսկի կառավարման հոսքագիր



Առևտրային ռիսկի կառավարման հոսքագիր



Գործառնական ռիսկի կառավարման հոսքագիր



ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

Ռիսկերի կառավարումը բանկում իրականացվում է բոլոր մակարդակներում: Մասնավորապես, ռիսկերի կառավարման և ռիսկ ստանձնելու իրավասությունները սահմանվում են՝ որպես հիմք ընդունելով բանկի ռիսկի ախտրժակը:

Տնօրենների խորհուրդը հաստատում է բանկի ռազմավարությունը, վերջինիս իրականացման համար անհրաժեշտ ռիսկերի կառավարման, վարկային և այլ քաղաքականությունները, ներքին իրավական ակտերը, սահմանում է բանկի ռիսկի ախտրժակը (ռիսկերի ընդունելի չափանիշները և սահմանը), ներառյալ ռիսկերի կառավարման պարամետրերի և ներքին նորմատիվների հրահանգի հաստատումը, վերահսկում է ռիսկերի կառավարման համակարգի արդյունավետությունը, բանկի ընդունած ռիսկերի մակարդակը, դրանց համապատասխանությունն ընդունված ռիսկի ախտրժակին, հաստատում է բանկի տնօրինության իրավասություններից դուրս գտնվող բանկային գործիքները:



Տնօրինությունը, տնօրինության նախագահ-գլխավոր տնօրենը և տնօրինության անդամներն իրականացնում են տնօրենների խորհրդի կողմից հաստատված քաղաքականությունների ներքո ռիսկերի ընդունում և ընթացիկ կառավարում՝ համակարգելով ստորաբաժանումների աշխատանքը, խորհրդի կողմից սահմանված ռիսկերի կառավարման պարամետրերի և ներքին նորմատիվների ներքո իրականացնում են ռիսկի կառավարումը և հաշվետու են տնօրենների խորհրդին: Տնօրինությունը կարող է վերոնշյալ լիազորությունները փոխանցել մասնագիտացած կոլեգիալ մարմիններին՝ կոմիտեներին (ակտիվների և պարտավորությունների կառավարման կոմիտե, վարկային կոմիտե և այլն):



Բանկում հիմնադրվել է մասնագիտացած կոմիտեների համակարգ, որոնց փոխանցվել է տնօրինության իրավասությունների մի մասը, ինչը թույլ է տալիս կառավարել այն ռիսկերը, որոնք բխում են բանկի հիմնական գործունեությունից:

Մեծ վարկային կոմիտե

Կոմիտեի գործունեության հիմնական նպատակը բանկի վարկային քաղաքականության իրականացումն է և եկամտաբեր վարկային ակտիվների ձևավորումը՝ մինչև ժամանակ ապահովելով վարկային ռիսկի ընդունելի մակարդակը: Մեծ վարկային կոմիտեն որոշումներ է կայացնում բանկի հաշվեկշռային ընդհանուր կապիտալի մինչև 10% չափով վարկերի տրամադրման վերաբերյալ՝ հիմք ընդունելով համապատասխան ստորաբաժանումների, ռիսկերի կառավարման կենտրոնի և անվտանգության ծառայության եզրակացությունները: Հաստատված պայմաններից շեղումով վարկերը նույնպես քննարկվում են մեծ վարկային կոմիտեի կողմից:

Փոքր վարկային կոմիտե

Փոքր վարկային կոմիտեն ունի նույն նպատակները, ինչ մեծ վարկային կոմիտեն, սակայն որոշումների կայացման իրավասությունները և սահմանաչափերն ավելի ցածր են: Կոմիտեն քննարկում և որոշումներ է կայացնում մանրածախ և ՓՄՁ վարկերի վերաբերյալ: Փոքր վարկային կոմիտեն իրավասու չէ քննարկել պատասխանատու ստորաբաժանումներից որևէ մեկի բացասական եզրակացությունն ստացած վարկերը:

Ակտիվների և պարտավորությունների կառավարման կոմիտե (ԱՊԿԿ)

Ակտիվների և պարտավորությունների կառավարման կոմիտեն բանկում մշտապես գործող կոլեգիալ մարմին է, որն ունի որոշումներ կայացնելու իրավունք՝ ակտիվների և պարտավորությունների կառավարման քաղաքականության



շրջանակներում: Կոմիտեի նպատակն է բանկի ակտիվների և պարտավորությունների փոխհամաձայնեցված կառավարման համար նախադրյալների ստեղծումը, որը հնարավորություն կտա բանկի ստորաբաժանումներին ապահովել առավելագույն շահութաբերություն՝ իրացվելիության, արժույթային և տոկոսադրույքի ռիսկերի ընդունելի սահմաններում: Կոմիտեի իրավասությունների շրջանակը ներառում է նաև ներդրումային քաղաքականության, տոկոսադրույքների, արտարժույթի, իրացվելիության, կապիտալի համարժեքության և ռիսկի պարամետրերի կառավարումը:

Խնդրահարույց վարկերի կառավարման կոմիտե

Կոմիտեն ձևավորվել է 2014թ.՝ նավթի գների անկման արդյունքում ֆինանսական շուկայում առաջացած ճգնաժամից հետո: Կոմիտեն ունի նույն նպատակները, ինչ մեծ վարկային կոմիտեն՝ իր ուշադրության կենտրոնում պահելով հատկապես խնդրահարույց և ռիսկային վարկերը, գրավի օտարումը և խնդրահարույց վարկերի վերադարձը:

Փողերի լվացման/ահաբեկչության դեմ պայքարի կոմիտե

Կոմիտեի հիմնական նպատակը բանկի հեղինակության և բարի համբավի պահպանումն է, որի համար ձեռնարկվում են ողջամիտ քայլեր՝ պայքարելու համար ահաբեկչության ֆինանսավորման և հանցավոր ճանապարհով ձեռք բերված միջոցների դեմ ինչպես Հայաստանի Հանրապետությունում, այնպես էլ նրա սահմաններից դուրս, և խուսափելու համար հեղինակության ռիսկից ու ֆինանսական ռիսկերից: Կոմիտեի հիմնական խնդիրն է ահաբեկչության ֆինանսավորման և փողերի լվացման դեմ պայքարը և նման գործունեության բացառումը բանկի գործառնություններում:

Վարկավորման վերաբերյալ որոշումների կայացման սահմանաչափերը բաշխվում են կոլեգիալ մարմինների և առանձին որոշում կայացնողների միջև: Սահմանաչափերը հաստատվում են ըստ տարբեր իրավասու մարմինների միջև ռիսկի ախորժակի բաշխման ընդհանուր հայեցակարգի և պարբերաբար վերանայվում են:

Հաստատված պարամետրերից շեղումները ևս կարգավորվում են նույն սկզբունքով՝ կախված վարկի տեսակից և գումարից. վարկավորման վերաբերյալ որոշումները կայացվում են քվեարկության համապատասխան կարգով (պարզ մեծամասնություն, ճնշող մեծամասնություն): Տնօրինության հաստատած՝ շեղումներով վարկերի ուսումնասիրության 4 ընթացակարգերից մեկն ունի առավել խիստ սահմանաչափեր և նախատեսված է ռիսկային մակրոտնտեսական իրավիճակի համար:

Ռիսկերի կառավարման կենտրոնն ունի իրավասությունների լայն շրջանակ, որը ներառում է, սակայն չի սահմանափակվում հետևյալով՝

- ▶ Ռիսկերի կառավարման քաղաքականության և կառուցվածքի մշակում
- ▶ Բիզնես-գործընթացների մակարդակով ռիսկերի կառավարման (ներքին հսկողության) համակարգի ներդրում
- ▶ Նոր ներդրվող գործիքների համար ռիսկերի կառավարման առաջարկությունների ներկայացում
- ▶ Հաստատված սահմանաչափերի ներքո բանկային գործարքների վերաբերյալ եզրակացությունների տրամադրում
- ▶ Ռիսկերի կառավարման հաշվետվությունների կազմում և ներկայացում բանկի ղեկավարությանը
- ▶ Բանկում ռիսկերի կառավարման վերաբերյալ իրազեկության բարձրացում, կրթում

Ներքին աուդիտի ստորաբաժանումը գնահատում է բանկում ներդրված ռիսկերի կառավարման համակարգի արդյունավետությունը, դրա պահանջների և չափանիշների պահպանումը բանկի ստորաբաժանումների կողմից, ներկայացնում առաջարկներ արդյունավետության բարձրացման համար, բացահայտված ռիսկերի վերաբերյալ հաշվետվություններ է ներկայացնում բանկի ղեկավարներին և տնօրենների խորհրդին:

Ռիսկերի կառավարման համակարգի արդյունավետության համար բանկում ներդրվել է համապատասխան կառավարչական տեղեկատվության համակարգ, որի միջոցով որոշումների կայացման համար ապահովվում են անհրաժեշտ ուղղահայաց և հորիզոնական տեղեկատվական հոսքերը:

Կառավարչական տեղեկատվական համակարգը բանկի ղեկավարությանը ներկայացնում է առաջանցիկ, համընկնող և հետևորդ ինդիկատորներ բանկի վարկային և այլ պորտֆելների վերաբերյալ: Կառավարչական տեղեկատվության համակարգի ներքո բանկի տնօրենների խորհուրդը և տնօրինությունն ստանում են բոլոր հաշվետվությունները ռիսկերի և դրանց հնարավոր հետևանքների, ինչպես նաև հսկողական մեխանիզմների ցանկացած խափանման մասին:

Մասնավորապես, առանձին գործիքների մատվ տարբեր եղանակներով բանկի գծային և հորիզոնական ղեկավարներին ներկայացվում են հետևյալ տեղեկությունները՝

- ▶ Գործիքների պորտֆելների/ներդրումների կառուցվածքը
- ▶ Գործիքների եկամտաբերությունը և ժամկետայնության կառուցվածքը
- ▶ Ժամկետանց ակտիվների և պարտավորությունների կառուցվածքը
- ▶ Գրավադրված ակտիվների և ընդունված գրավների կառուցվածքը
- ▶ Խնդրահարույց վարկերի և կենտրոնացումների վերաբերյալ տեղեկատվություն
- ▶ Դեֆոլտի ենթարկված վարկերի վերադարձելիությունը
- ▶ Այլ տեղեկատվություն արդյունավետության վերաբերյալ



«Ամերիաբանկ» ՓԲԸ

Ֆինանսական հաշվետվություններ

*2017թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար
Անկախ աուդիտորական եզրակացության հետ միասին*

Բովանդակություն

Անկախ աուդիտորական եզրակացություն

Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն	1
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն	2
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն	3
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն	4

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

1. Ներածություն	5
2. Պատրաստման հիմունքներ	5
3. Հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականությունների ամփոփում	7
4. Սեզմենտների վերաբերյալ տեղեկատվություն	22
5. Ջուտ տոկոսային եկամուտ	25
6. Միջնորդավճարների գծով եկամուտ	25
7. Միջնորդավճարների գծով ծախս	25
8. Ցեսիայից օգուտ	26
9. Ջուտ (վնաս)/ օգուտ իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներից	26
10. Արտարժույթային գործառնություններից զուտ օգուտ	26
11. Այլ գործառնական եկամուտ	26
12. Այլ գործառնական ծախսեր	27
13. Արժեզրկումից կորուստներ	27
14. Այլ ընդհանուր վարչական ծախսեր	27
15. Շահութահարկի գծով ծախս	28
16. Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	29
17. Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներ	30
18. Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ	31
19. Բանկերին տրված վարկեր և փոխատվություններ	32
20. Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ	32
21. Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ	33
22. Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ	45
23. Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ	45
24. Այլ ակտիվներ	46
25. Բանկերի ավանդներ և մնացորդներ	46
26. Հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ	46
27. Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	47
28. Թողարկված պարտքային արժեթղթեր	48
29. Այլ փոխառու միջոցներ և ստորադաս փոխառություններ	48
30. Այլ պարտավորություններ	49
31. Բաժնետիրական կապիտալ և պահուստներ	49
32. Ռիսկերի կառավարում	50
33. Կապիտալի կառավարում	64
34. Վարկային պարտավորվածություններ	65
35. Գործառնական վարձակալություն	65
36. Պայմանական և պայմանագրային պարտավորություններ	66
37. Գործարքներ կապակցված կողմերի հետ	66
38. Ֆինանսական ակտիվներ և պարտավորություններ. իրական արժեք և հաշվապահական հաշվառման դասակարգում	68
39. Ֆինանսավորման գործունեության հետևանքով առաջացող պարտավորությունների փոփոխություններ	72
40. Հաշվետու ժամակաշրջանից հետո տեղի ունեցած դեպքեր	72

Անկախ աուդիտորական եզրակացություն

«Ամերիաբանկ» փակ բաժնետիրական ընկերության
Բաժնետերերին և Տնօրենների խորհրդին

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «Ամերիաբանկ» փակ բաժնետիրական ընկերության (Բանկ) ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2017թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունը, 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, նույն ամսաթվին ավարտված տարվա համար դրամական միջոցների հոսքերի և սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ՝ հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականությունների ամփոփ նկարագիրը:

Մեր կարծիքով, կից ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում Բանկի ֆինանսական վիճակը 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքները և դրամական միջոցների հոսքերը՝ համաձայն ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ-ներ):

Կարծիքի հիմքեր

Մենք աուդիտն անցկացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը նկարագրված է այս եզրակացության «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում:

Մենք անկախ ենք խմբից՝ համաձայն Հաշվապահների Էթիկայի Միջազգային Ստանդարտների Խորհրդի կողմից հրապարակված *Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրքի* (ՀԷՄՍԻ կանոնագիրք), և պահպանել ենք էթիկայի այլ պահանջները՝ համաձայն ՀԷՄՍԻ կանոնների: Մենք համոզված ենք, որ մեր կողմից ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար:

Աուդիտի առանցքային հարցեր

Աուդիտի առանցքային հարցերն այն հարցերն են, որոնք, մեր մասնագիտական դատողության համաձայն, առավել նշանակալի էին ընթացիկ ժամանակաշրջանի ֆինանսական հաշվետվությունների աուդիտի ընթացքում: Այդ հարցերը դիտարկվել են ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համատեքստում՝ որպես մեկ ամբողջություն, և հաշվետվությունների վերաբերյալ կարծիք ձևավորելու նպատակով: Մենք չենք տրամադրում առանձին կարծիք այդ հարցերի վերաբերյալ: Մեր նկարագրությունը, թե ինչպես է ստորև նշված յուրաքանչյուր հարցը դիտարկվել մեր աուդիտի ընթացքում, ներկայացված է այդ համատեքստում:

Մենք կատարել ենք մեր պարտականությունները, որոնք նկարագրված են «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում, այդ թվում այդ հարցերի վերաբերյալ: Համապատասխանաբար, մեր աուդիտը ներառել է ընթացակարգերի իրականացում՝ մշակված ի պատասխան ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկի մեր գնահատմանը: Մեր աուդիտորական ընթացակարգերի արդյունքները, այդ թվում ստորև ներկայացված հարցերը դիտարկելիս իրականացրած ընթացակարգերը, հիմք են հանդիսանում կից ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ աուդիտորական կարծիք արտահայտելու համար:

Աուդիտի առանցքային հարց

Ինչպես է այն դիտարկվել մեր աուդիտի ընթացում

Վարկերի արժեզրկման գծով պահուստ

Վարկերի արժեզրկման գծով պահուստը դեկավարության համար հանդիսանում է առանցքային դատողությունների առարկա: Արժեզրկման բացահայտումն ու փոխհատուցվող գումարի որոշումը իր բնույթով անորոշ գործընթաց է, որը ներառում է տարբեր ենթադրություններ և գործոններ, ներառյալ գործընկերոջ ֆինանսական վիճակը, սպասվող ապագա դրամական հոսքերը, գրավի իրացման սպասվող զուտ գները և իրացման ժամանակահատվածը: Մոդելավորման տարբեր մեթոդների և ենթադրությունների կիրառումը կարող է հանգեցնել վարկերի արժեզրկման գծով պահուստի գնահատման էականորեն տարբեր արդյունքների: Սա կարող է էական ազդեցություն ունենալ Բանկի ֆինանսական արդյունքների վրա: Վարկերի արժեզրկման գծով պահուստը հանդիսանում է աուդիտի առանցքային հարց հաճախորդներին տրված վարկերի և փոխատվությունների գումարի նշանակալի լինելու (Բանկի ընդհանուր ակտիվների 70.8%՝ 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ) և արժեզրկման գնահատման հիմքում ընկած ենթադրությունների սուբյեկտիվության պատճառով:

Մենք գնահատել ենք խմբային արժեզրկման հաշվարկների նկատմամբ վերահսկողության միջոցները: Մենք թեսթավորել ենք խմբային արժեզրկման հաշվարկի հիմքում ընկած մոդելներն ու ենթադրությունները, մոդելների բանաձևերն ու մուտքային տվյալները, ինչպիսիք են վարկերի զուտ դուրսգրումներն ու ժամկետանց օրերը: Անհատական հիմունքներով հաշվարկված արժեզրկման գծով կորուստների համար մենք թեսթավորել ենք արժեզրկման բացահայտման և քանակական գնահատման հիմքում ընկած ենթադրությունները, ներառյալ հաշվարկի հիմքում ընկած գրավի առարկայի գնահատումը ու ապագա դրամական հոսքերի կանխատեսումը: Մենք ուշադրությունը կենտրոնացրել ենք հաշվետու ամսաթվի դրությամբ արժեզրկման հայտանիշեր ունեցող իրավաբանական անձանց տրված նշանակալի վարկերի վրա: Մենք նաև իրականացրել ենք ընթացակարգեր Բանկի՝ վարկային ռիսկին ենթարկվածությունը և արժեզրկման գծով պահուստի գնահատման համար կատարված առանցքային ենթադրություններն ու դատողությունները նկարագրող բացահայտումների նկատմամբ (Ծանոթագրություն 21):

Բանկի 2017թ. Տարեկան հաշվետվության մեջ ներառված այլ տեղեկատվություն

Այլ տեղեկատվությունը ներառում է Տարեկան հաշվետվության մեջ ներառված տեղեկատվությունը, բացի ֆինանսական հաշվետվություններից և դրանց վերաբերյալ մեր աուդիտորական եզրակացությունից: Ղեկավարությունը պատասխանատու է այլ տեղեկատվության համար: Տարեկան հաշվետվությունը ենթադրաբար մեզ կտրամադրվի աուդիտորական եզրակացության ամսաթվից հետո:

Ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ մեր կարծիքը չի տարածվում այլ տեղեկատվության վրա, և մենք այդ տեղեկատվության վերաբերյալ չենք տրամադրում կարծիք, որը որևէ ձևով կարտահայտի հավաստիացում տվյալ տեղեկատվության վերաբերյալ:

Ֆինանսական հաշվետվությունների աուդիտի հետ կապված, մեր պարտավորությունն է ծանոթանալ այլ տեղեկատվությանը, երբ այն տրամադրվի մեզ, և դրանով դիտարկել, թե արդյոք առկա են էական անհամապատասխանություններ այլ տեղեկատվության և ֆինանսական հաշվետվությունների կամ աուդիտի ընթացքում ձեռք բերված մեր գիտելիքների միջև, և թե արդյոք այլ տեղեկատվությունը պարունակում է այլ էական խեղաթյուրումներ:

Ղեկավարության և Տնօրենների խորհրդի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ-ների համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման և այնպիսի ներքին հսկողության համար, որը, ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է Բանկի անընդհատ գործելու կարողությունը գնահատելու համար, համապատասխան դեպքերում անընդհատության հետ կապված հարցերը բացահայտելու և կազմակերպության գործունեության անընդհատության ենթադրության հիման վրա հաշվետվությունները պատրաստելու համար, բացառությամբ այն դեպքերի, երբ ղեկավարությունը մտադիր է լուծարել Բանկը, ընդհատել դրա գործունեությունը, կամ երբ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Տնօրենների խորհուրդը պատասխանատու է Բանկի ֆինանսական հաշվետվությունների պատրաստման գործընթացի նկատմամբ վերահսկողության համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները, ամբողջությամբ վերցրած, զերծ են էական խեղաթյուրումներից՝ անկախ դրանց խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորական եզրակացություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ Աուդիտի միջազգային ստանդարտներին համաձայն իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի արդյունքում և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք, առանձին կամ միասին վերցրած, կազդեն ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ այս ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

- հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չբացահայտման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չբացահայտման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության համակարգի չարաշահում:
- ձեռք ենք բերում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, և ոչ թե Բանկի ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:
- գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը:
- եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության սկզբունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա՝ գնահատում ենք, թե արդյոք առկա է ղեկաբերի կամ հանգամանքների հետ կապված էական անորոշություն, որը կարող է էական կասկած հարուցել Բանկի անընդհատ գործելու կարողության վրա: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորական եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, երբ այդ բացահայտումները համապատասխան չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր աուդիտորական եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Սակայն, ապագա իրադարձություններն ու հանգամանքները կարող են հանգեցնել Բանկի գործունեության անընդհատության դադարեցմանը:

- գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքն ու բովանդակությունը, ներառյալ՝ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Տնօրենների խորհրդին, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

Տնօրենների խորհրդին նաև տրամադրում ենք հավաստիացում, որ պահպանել ենք անկախության վերաբերյալ էթիկայի պահանջները, ինչպես նաև նրանց տեղեկացնում ենք բոլոր հարաբերությունների կամ այլ հարցերի մասին, որոնք ըստ ողջամիտ ենթադրության, կարող են անդրադառնալ մեր անկախության վրա, և որտեղ կիրառելի է, անկախության պահպանմանն ուղղված միջոցառումների վերաբերյալ:

Տնօրենների խորհրդին հաղորդակցված հարցերից որոշում ենք այն հարցերը, որոնք համարվել են առավել նշանակալի ընթացիկ ժամանակաշրջանի ֆինանսական հաշվետվությունների աուդիտի ընթացքում, և հետևաբար հանդիսանում են աուդիտի առանցքային հարցեր: Մենք նկարագրում ենք այդ հարցերը մեր աուդիտորական եզրակացությունում, բացառությամբ այն դեպքերի, երբ օրենքով կամ կարգավորող ակտերով արգելված է այդպիսի հարցերի հրապարակային բացահայտումը, կամ, երբ, խիստ բացառիկ հանգամանքներում, որոշում ենք, որ տվյալ հարցը չպետք է ներկայացվի աուդիտորի եզրակացությունում, քանի որ կարող է ողջամտորեն ակնկալվել, որ դրա ներկայացման հետ կապված բացասական հետևանքները ավելի շատ կլինեն, քան դրա ներկայացումից հանրային օգուտը:

Այս աուդիտի առաջադրանքի պատասխանատուն էրիկ Հայրապետյանն է:

«Էրնսթ ընդ Յանգ» ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան

Գլխավոր տնօրեն՝ Լ. Սարգսյան՝
Ի դեմս լիազորված անձ է. Հայրապետյանի
(գործող 2016թ. օգոստոսի 1-ին տրված լիազորագրի
հիման վրա)
Աուդիտի բաժնի հիմնադիր գործընկեր՝

20 մարտի, 2018թ.



Էրիկ Հայրապետյան



Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն

2017 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

	<i>Ծան.</i>	<i>2017 հազ. դրամ</i>	<i>2016 հազ. դրամ</i>
Տոկոսային եկամուտ	5	49,297,198	42,624,265
Տոկոսային ծախս	5	(30,932,889)	(27,749,228)
Զուտ տոկոսային եկամուտ		18,364,309	14,875,037
Միջնորդավճարների գծով եկամուտ	6	3,577,025	2,866,115
Միջնորդավճարների գծով ծախս	7	(791,890)	(610,329)
Միջնորդավճարների գծով զուտ եկամուտ		2,785,135	2,255,786
Ցեսիայից օգուտ	8	-	1,096,824
Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներից զուտ (վնաս)/օգուտ	9	(1,976,234)	1,055,909
Արտարժույթային գործառնություններից զուտ օգուտ	10	5,815,335	2,465,343
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներից զուտ օգուտ		424,708	736,347
Այլ գործառնական եկամուտ	11	2,159,541	1,561,640
Այլ գործառնական ծախսեր	12	(1,892,480)	(1,461,489)
Գործառնական եկամուտ		25,680,314	22,585,397
Արժեզրկումից կորուստներ	13	(5,811,644)	(5,434,401)
Գործառնական եկամուտ արժեզրկումից հետո		19,868,670	17,150,996
Անձնակազմի գծով ծախսեր		(6,240,813)	(5,675,290)
Այլ ընդհանուր վարչական ծախսեր	14	(4,091,161)	(3,746,410)
Շահույթ մինչև շահութահարկ		9,536,696	7,729,296
Շահութահարկի գծով ծախս	15	(1,886,709)	(1,522,610)
Հաշվետու տարվա շահույթ		7,649,987	6,206,686
Այլ համապարփակ եկամուտ հարկումից հետո			
<i>Հաջորդող ժամանակաշրջաններում որպես շահույթ կամ վնաս վերադասակարգվող այլ համապարփակ ֆինանսական արդյունքներ</i>			
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների վերագնահատման պահուստ			
- Իրական արժեքի զուտ փոփոխություն		462,604	1,435,355
- Շահույթ կամ վնաս փոխանցված իրական արժեքի զուտ փոփոխություն		(424,708)	(736,347)
- Շահութահարկի ազդեցություն		(7,579)	(139,802)
Ընդամենը հաջորդող ժամանակաշրջաններում որպես շահույթ կամ վնաս վերադասակարգվող այլ համապարփակ ֆինանսական արդյունքներ		30,317	559,206
Այլ համապարփակ եկամուտ հարկումից հետո		30,317	559,206
Ընդամենը հաշվետու տարվա համապարփակ եկամուտ		7,680,304	6,765,892

1-ից 72-րդ էջերում ներկայացված ֆինանսական հաշվետվությունները վավերացվել են ղեկավարության կողմից 2018թ. մարտի 20-ին և ստորագրվել են վերջինիս անունից՝

Տնօրինության նախագահ – Գլխավոր տնօրենի պաշտոնակատար և ֆինանսական տնօրեն

Գևորգ Թառումյան

Գլխավոր հաշվապահ

Գոհար Խաչատրյան

Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող ծանոթագրությունների հետ մեկտեղ:



Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

2017 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ

	<i>Ծան.</i>	<i>2017 հազ. դրամ</i>	<i>2016 հազ. դրամ</i>
Ակտիվներ			
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	16	107,616,368	135,280,872
Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներ	17	3,968,064	3,130,071
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ	18	9,888,078	12,408,292
Բանկերին տրված վարկեր և փոխատվություններ	19	10,842,890	4,853,302
Հակադարձ հետզնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ	20	8,675,394	6,446,797
Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ	21	479,640,981	513,218,709
Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ			
- Բանկի կողմից պահվող	22	37,337,539	36,255,642
- Հետզնման պայմանագրերով գրավադրված	22	5,968,305	-
Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ	23	7,126,916	3,651,239
Ընթացիկ հարկային ակտիվներ		-	1,321,801
Այլ ակտիվներ	24	6,657,562	2,796,698
		<u>677,722,097</u>	<u>719,363,423</u>
Ընդամենը ակտիվներ			
Պարտավորություններ			
Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներ	17	686,306	2,535,283
Բանկերի ավանդներ և մնացորդներ	25	40,004,001	71,834,882
Հետզնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ	26	6,121,693	-
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	27	375,170,779	414,608,686
Թողարկված պարտքային արժեթղթեր	28	40,932,595	18,124,500
Այլ փոխառու միջոցներ	29	98,128,094	102,735,039
Ստորադաս փոխառություններ	29	40,919,768	40,811,255
Ընթացիկ հարկային պարտավորություններ		990,256	-
Հետաձգված հարկային պարտավորություններ	15	1,025,103	1,442,872
Այլ պարտավորություններ	30	3,841,631	2,873,138
		<u>607,820,226</u>	<u>654,965,655</u>
Ընդամենը պարտավորություններ			
Կապիտալ			
Կանոնադրական կապիտալ	31	32,087,360	32,087,360
Էմիսիոն եկամուտ		7,755,179	7,755,179
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների վերազնահատման պահուստ		338,214	307,897
Զբաղիված շահույթ		29,721,118	24,247,332
		<u>69,901,871</u>	<u>64,397,768</u>
Ընդամենը կապիտալ			
Ընդամենը կապիտալ և պարտավորություններ		<u>677,722,097</u>	<u>719,363,423</u>

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մաս կազմող ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվության

2017 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

	<i>2017</i>	<i>2016</i>
Ծան.	հազ. դրամ	հազ. դրամ
Դրամական միջոցների հոսքեր գործառնական գործունեությունից		
Ստացված տոկոսներ	45,679,533	40,931,425
Վճարված տոկոսներ	(28,386,448)	(23,817,560)
Ստացված միջնորդավճարներ	3,577,025	2,866,115
Վճարված միջնորդավճարներ	(791,890)	(610,329)
Զուտ (վճարումներ)/նուտքեր իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներից	(1,933,348)	676,407
Զուտ (վճարումներ)/նուտքեր արտարժույթով գործառնականություններից	3,601,374	2,724,237
Ելքեր այլ գործառնական ծախսերի գծով	(1,892,480)	(1,461,489)
Մուտքեր այլ գործառնական եկամտի գծով	2,159,541	1,427,995
Աշխատավարձ և աշխատակազմին վճարված այլ գումարներ	(5,726,848)	(5,754,347)
Ելքեր այլ ընդհանուր վարչական ծախսերի գծով	(3,223,321)	(2,967,916)
Գործառնական ակտիվների զուտ (ավելացում)/նվազում		
Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներ	(814,603)	(2,665,582)
Բանկերին տրված վարկեր և փոխատվություններ	(5,003,619)	2,754,468
Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ	(2,223,000)	(464,617)
Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ	34,518,400	(193,906,455)
Այլ ակտիվներ	(3,934,632)	(704,138)
Գործառնական պարտավորությունների ավելացում / (նվազում)		
Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներ	(1,894,376)	2,330,730
Բանկերի ավանդներ և մնացորդներ	(31,378,969)	50,005,742
Հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ	6,096,286	(18,999,995)
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	(46,389,246)	119,077,450
Այլ պարտավորություններ	359,730	(239,818)
Զուտ դրամական միջոցների հոսքեր գործառնական գործունեությունից (մինչև շահութահարկը)	(37,600,891)	(28,797,677)
Վճարված շահութահարկ	-	(930,000)
Զուտ դրամական միջոցների հոսքեր գործառնական գործունեությունից	(37,600,891)	(29,727,677)
Դրամական միջոցների հոսքեր ներդրումային գործունեությունից		
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերումներ	(4,345,562)	(1,373,907)
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների վաճառք	2,048	145,298
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների ձեռքբերումներ	(17,533,115)	(15,698,772)
Մուտքեր վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներից	20,417,703	15,036,412
Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումների ձեռքբերումներ	(79,345,696)	(38,114,289)
Մուտքեր մինչև մարման ժամկետը պահվող ներդրումների մարումներից	72,727,616	21,633,698
Հայկական բանկերի և վարկային կազմակերպությունների պարտատոմսերի ձեռքբերում	(612,754)	-
Զուտ դրամական միջոցների հոսքեր ներդրումային գործունեությունից	(8,689,760)	(18,371,560)
Դրամական միջոցների հոսքեր ֆինանսավորման գործունեությունից		
Վճարված շահաբաժիններ	31 (2,176,201)	(1,685,286)
Մուտքեր այլ փոխառու միջոցներից	67,496,831	77,618,450
Այլ փոխառու միջոցների մարում	(72,097,598)	(53,479,054)
Մուտքեր թողարկված պարտքային արժեթղթերից	22,504,610	17,815,044
Զուտ դրամական միջոցների հոսքեր ֆինանսավորման գործունեությունից	15,727,642	40,269,154
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ նվազում	(30,563,009)	(7,830,083)
Փոխարժեքային տարբերությունների ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա	2,898,505	397,638
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ հաշվետու տարվա սկզբում	135,280,872	142,713,317
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ հաշվետու տարվա վերջում	16 107,616,368	135,280,872

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մաս կազմող ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն

2017 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

<i>(հազ. դրամ)</i>	<i>Ծան.</i>	<i>Կանոնադրական կապիտալ</i>	<i>Էմիսիոն եկամուտ</i>	<i>Վաճառքի համար մատչելի ֆին. ակտիվների վերագնահատման պահուստ</i>	<i>Չբաշխված շահույթ</i>	<i>Ընդամենը կապիտալ</i>
Մնացորդն առ 2016թ. հունվարի 1		32,087,360	7,755,179	(251,309)	19,725,932	59,317,162
Ընդամենը համապարփակ ֆինանսական արդյունքներ						
Հաշվետու տարվա շահույթ		-	-	-	6,206,686	6,206,686
Հաշվետու տարվա այլ համապարփակ ֆինանսական արդյունքներ		-	-	559,206	-	559,206
Ընդամենը հաշվետու տարվա համապարփակ եկամուտ		-	-	559,206	6,206,686	6,765,892
Կապիտալում ուղղակիորեն գրանցված գործարքներ սեփականատերերի հետ						
Շահաբաժիններ	31	-	-	-	(1,685,286)	(1,685,286)
Ընդամենը գործարքներ սեփականատերերի հետ		-	-	-	(1,685,286)	(1,685,286)
Մնացորդը 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ		32,087,360	7,755,179	307,897	24,247,332	64,397,768
Մնացորդն առ 2017թ. հունվարի 1		32,087,360	7,755,179	307,897	24,247,332	64,397,768
Ընդամենը համապարփակ ֆինանսական արդյունքներ						
Հաշվետու տարվա շահույթ		-	-	-	7,649,987	7,649,987
Հաշվետու տարվա այլ համապարփակ ֆինանսական արդյունքներ		-	-	30,317	-	30,317
Ընդամենը հաշվետու տարվա համապարփակ եկամուտ		-	-	30,317	7,649,987	7,680,304
Կապիտալում ուղղակիորեն գրանցված գործարքներ սեփականատերերի հետ						
Շահաբաժիններ	31	-	-	-	(2,176,201)	(2,176,201)
Ընդամենը գործարքներ սեփականատերերի հետ		-	-	-	(2,176,201)	(2,176,201)
Մնացորդը 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ		32,087,360	7,755,179	338,214	29,721,118	69,901,871

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունը պետք է ընթացվի ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մաս կազմող ծանոթագրությունների հետ մեկտեղ:

1. Ներածություն

(ա) Կազմակերպչական կառուցվածքը և հիմնական գործունեությունը

«Ամերիաբանկ» ՓԲԸ-ն (նախկին «Հայնեբարտբանկ» ՓԲԸ) (այսուհետ «Բանկ») հիմնադրվել է 1992թ. սեպտեմբերի 8-ին ՀՀ օրենսդրության համաձայն: 2007թ-ին Բանկը ձեռք բերվեց «Թի-Ղի-Էյ Հոլդինգս Լիմիթիդ» ընկերության կողմից, որը գնեց Բանկի բաժնետիրական կապիտալի 96.15%-ը: 2011թ. ընթացքում «Թի-Ղի-Էյ Հոլդինգս Լիմիթիդ» ընկերությունը վերանվանվեց «Ամերիա Գրուպ» (Սի-Ուայ): 2013թ-ին «Ամերիա Գրուպ» (Սի-Ուայ) ընկերությունը ձեռք բերեց Բանկի բաժնետիրական կապիտալի 100%-ը: 2015թ. դեկտեմբերի 23-ին Կերակառուցման և Զարգացման Եվրոպական Բանկը (այսուհետ՝ «ՎԶԵԲ») ամբողջովին գնեց Բանկի կողմից լրացուցիչ թողարկված 20,749 բաժնետոմսերը:

2016թ. դեկտեմբերի 21-ին «Ի-ԷՍ-Փի-ԷՍ Հոլդինգ Լիմիթիդ» ընկերությունը «Ամերիա Գրուպ» (Սի-Ուայ) ընկերությունից գնեց Բանկի բաժնետոմսերի 13.5%-ը:

2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի բաժնետերերն են «Ամերիա Գրուպ»-ը (Սի-Ուայ) ընկերությունը, «ՎԶԵԲ»-ը և «Ի-ԷՍ-Փի-ԷՍ Հոլդինգ Լիմիթիդ» ընկերությունը, որոնց համապատասխանաբար պատկանում է Բանկի 65.8%, 20.7% և 13.5% բաժնետոմսերը:

Բանկի հիմնական գործունեությունն է հանդիսանում ավանդների ներգրավումը, հաճախորդների հաշիվների սպասարկումը, վարկերի ու երաշխիքների տրամադրումը, դրամավճարային գործառնությունների իրականացումը, ինչպես նաև արժեթղթերով ու արտարժույթով գործարքների իրականացումը: Բանկի գործունեությունը կարգավորվում է ՀՀ կենտրոնական բանկի (ՀՀ ԿԲ) կողմից: Բանկն ունի բանկային գործունեություն իրականացնելու լիցենզիա և հանդիսանում է Հայաստանի Հանրապետության ավանդների երաշխավորման համակարգի անդամ: Բանկի ակտիվների և պարտավորությունների մեծամասնությունը տեղակայված է Հայաստանի Հանրապետությունում:

Բանկն ունի տասնչորս մասնաճյուղ, որոնց միջոցով իրականացնում է իր գործունեությունը Հայաստանի Հանրապետությունում: Բանկի գլխամասային գրասենյակի իրավաբանական հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, Երևան 0015, Գրիգոր Լուսավորչի փ. 9: Բանկի աշխատողների միջին քանակը 2017թ. 667 է (2016թ.՝ 597):

Կապակցված կողմերի հետ գործարքների մանրամասները ներկայացված են Ծանոթագրություն 37-ում:

(բ) Հայաստանի գործարար միջավայրը

2017 թվականը բավականին դրական էր Հայաստանի տնտեսության համար: ՀՆԱ-ի աճը գերազանցել է նախորդ տարվա կանխատեսումները գրեթե երկու անգամ և ակնկալվում է, որ այն կլինի 7% -ի տարվա համար: Աճը հիմնականում պայմանավորված է առևտրի, արտադրության և ֆինանսական միջնորդությունների գծով աճի հետ: ՍԳԻ- ն ամբողջ տարվա ընթացքում շատ կայուն է եղել՝ 2017թ.-ի համար մոտ 1%: Նույնը կարելի է ասել դրամ / ԱՄՆ դոլար փոխարժեքի մասին: Արտաքին առևտուրն արձանագրվել է 20% -ից ավել աճ, ինչպես արտահանման, այնպես էլ ներմուծման համար: 2016 թվականին որոշակի անկումից հետո դրամական փոխանցումները նույնպես գրանցեցին երկնիշ աճ: Արտաքին պահուստներում գրանցվել է մոտ 5% աճ:

Հաշվի առնելով բոլոր վերը նշված հանգամանքները, ղեկավարությունը գտնում է, որ համապատասխան միջոցներ է ձեռնարկում Բանկի բիզնեսի կայունության ապահովման համար, ինչպես ներկայիս պայմաններում, այնպես էլ առաջիկայում հնարավոր պոտենցիալ ցնցումների դեպքում:

2. Պատրաստման հիմունքներ

(ա) Համապատասխանության մասին հայտարարություն

Սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (այսուհետ՝ «ՖՀՄՍ») պահանջների համաձայն:

(բ) Չափման հիմունքներ

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են սկզբնական արժեքի հիմունքով: Բացառություն են կազմում իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքները և վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվները, որոնք ներկայացված են իրական արժեքով:

2. Պատրաստման հիմունքներ (շարունակություն)

(գ) Ֆունկցիոնալ և ներկայացման արժույթ

Ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են ՀՀ դրամով, որը Բանկի ֆունկցիոնալ և ներկայացման արժույթն է: Ֆինանսական տեղեկատվությունը՝ ներկայացված ՀՀ դրամով, կլորացված է մինչև մոտակա հազար ՀՀ դրամ: 2017 թ. դեկտեմբերի 31-ի և 2016 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ ԿԲ-ի պաշտոնական փոխարժեքներն են համապատասխանաբար 484.10 ՀՀ դրամ և 483.94 ՀՀ դրամ 1 ԱՄՆ դոլարի համար և 580.10 ՀՀ դրամ և 512.20 ՀՀ դրամ 1 եվրոյի համար:

(դ) Գնահատումների և դատողությունների օգտագործում

Այս ֆինանսական հաշվետվությունները ՖՀՄՍ-ի պահանջներին համապատասխան պատրաստելու համար դեկավարությունը պետք է կատարի դատողություններ, գնահատումներ և ենթադրություններ, որոնք ազդեցություն ունեն հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման, ինչպես նաև ակտիվների, պարտավորությունների, եկամտի և ծախսերի գծով ներկայացված գումարների վրա: Փաստացի արդյունքները կարող են տարբերվել այդ գնահատումներից:

Գնահատումները և համապատասխան ենթադրությունները շարունակաբար վերանայվում են: Հաշվապահական գնահատումների վերանայումները ճանաչվում են այն ժամանակաշրջանում, որում վերանայվել են և այն ապագա ժամանակաշրջաններում, որոնց վրա կարող են ազդեցություն ունենալ:

Հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման ժամանակ գնահատման և կարևոր դատողությունների հետ կապված զգալի անորոշությունների վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է Ծանոթագրություն 21-ում՝ «Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ» և Ծանոթագրություն 38-ում՝ «Ֆինանսական ակտիվներ և պարտավորություններ. իրական արժեք և հաշվապահական հաշվառման դասակարգում»:

(ե) Հաշվապահական հաշվառման քաղաքականության և ներկայացման փոփոխություններ

Փոփոխություններ հաշվապահական հաշվառման քաղաքականության մեջ

Բանկը կիրառել է հետևյալ վերանայված ՖՀՄՍ-ները, որոնք ուժի մեջ են մտնում 2017 թվականի հունվարի 1-ին կամ այդ ամսաթվից հետո սկսվող հաշվետու ժամանակաշրջանների համար: Բանկը չի կիրառել որևէ ստանդարտ կամ փոփոխություն, որը նախկինում ընդունվել է, բայց ներկայումս դեռ գործող չէ: Փոփոխությունների էությունը և ազդեցությունները նկարագրված են ստորև.

Փոփոխություններ ՀՀՄՍ 7-ում՝ «Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն». բացահայտման նախաձեռնություն

Ըստ նոր պահանջների՝ ընկերությունները պետք է բացահայտեն տեղեկատվություն ֆինանսավորման գործունեության հետևանքով իրենց ֆինանսական պարտավորությունների փոփոխությունների վերաբերյալ, ներառյալ փոփոխությունները ինչպես դրամական հոսքերից, այնպես էլ ոչ դրամական հոդվածներից (օր.՝ փոխարժեքային տարբերությունից օգուտներն ու վնասները): Բանկը 39-րդ ծանոթագրությունում տրամադրել է տեղեկատվությունը ինչպես ընթացիկ, այնպես էլ համեմատական ժամանակաշրջանի համար:

Փոփոխություններ ՀՀՄՍ 12-ում՝ «Շահութահարկ». չիրացված կորուստների գծով հետաձգված հարկային ակտիվների ճանաչումը

Փոփոխությունները հստակեցնում են, որ ընկերությունը պետք է հաշվի առնի, թե արդյոք հարկային օրենսդրությունը սահմանափակում է հարկվող շահույթի աղբյուրները, որոնց նկատմամբ այն կարող է նվազեցումներ կատարել չիրացված կորուստներին վերաբերող նվազեցվող ժամանակավոր տարբերությունները վերականգնելիս: Ավելին, փոփոխությունները տրամադրում են ուղեցույց, թե ինչպես ընկերությունը պետք է որոշի ապագա հարկվող շահույթը, և բացատրում այն հանգամանքները, երբ հարկվող շահույթը կարող է ներառել որոշ ակտիվների վերադարձը իրենց հաշվեկշռային արժեքից ավելի մեծ արժեքով: Փոփոխությունների կիրառումը չի ազդում Բանկի ֆինանսական վիճակի և արդյունքների վրա, քանի որ Բանկը չունի նվազեցվող ժամանակավոր տարբերություններ կամ ակտիվներ, որոնք գտնվում են փոփոխությունների շրջանակում:

3. Հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականությունների ամփոփում

Ստորև ներկայացված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը հետևողականորեն կիրառվում է սույն ֆինանսական հաշվետվություններում ներկայացված բոլոր ժամանակաշրջանների համար, բացառությամբ Ծանոթագրություն 2-ի (ե) կետում ներկայացված հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունների:

(ա) Արտարժույթով գործարքներ

Արտարժույթով իրականացվող գործարքները վերահաշվարկվում են Բանկի համապատասխան ֆունկցիոնալ արժույթի՝ գործարքների կատարման օրվա դրությամբ սահմանված փոխարժեքներով: Հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով արտահայտված դրամային ակտիվները և պարտավորությունները վերահաշվարկվում են ֆունկցիոնալ արժույթի այդ օրվա դրությամբ սահմանված փոխարժեքով: Դրամային հոդվածների գծով փոխարժեքային օգուտը կամ վնասն իրենից ներկայացնում է ժամանակաշրջանի սկզբում ֆունկցիոնալ արժույթով արտահայտված, արդյունավետ տոկոսադրույքի ու ժամանակաշրջանի վճարումների ճշգրտմամբ ամորտիզացված արժեքի և հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ գործող փոխարժեքով վերահաշվարկված ֆունկցիոնալ արժույթով արտահայտված ամորտիզացված արժեքի միջև տարբերությունը: Արտարժույթով արտահայտված ոչ դրամային ակտիվները և պարտավորությունները, որոնք չափվում են իրական արժեքով, վերահաշվարկվում են ֆունկցիոնալ արժույթի իրական արժեքի որոշման ամսաթվի դրությամբ սահմանված փոխարժեքով: Սկզբնական արժեքով չափվող, արտարժույթով արտահայտված ոչ դրամային ակտիվները և պարտավորությունները վերահաշվարկվում են ֆունկցիոնալ արժույթի գործարքի օրվա դրությամբ սահմանված փոխարժեքով: Վերահաշվարկի արդյունքում առաջացած արտարժույթային տարբերությունները ճանաչվում են շահույթում կամ վնասում, բացառությամբ վաճառքի համար մատչելի բաժնային գործիքների վերահաշվարկման արդյունքում առաջացած տարբերությունների, բացի այն դեպքերից, երբ տարբերությունն առաջանում է արժեզրկման պատճառով, որի դեպքում այլ համապարփակ ֆինանսական արդյունքի կազմում ճանաչված արտարժույթային տարբերությունները վերադասակարգվում են որպես շահույթ կամ վնաս, կամ դրամական միջոցների հոսքերի հեջավորման գործիքներ որակված դրամային հոդվածների գծով փոխարժեքային տարբերությունների, որոնք ճանաչվում են այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում:

(բ) Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Դրամական միջոցներ և դրանց համարժեքները ներառում են կանխիկ թղթադրամները և մետաղադրամները, ՀՀ ԿԲ-ում պահվող միջոցները՝ ներառյալ պարտադիր պահուստները, և այլ բանկերում պահվող սահմանափակումներ չունեցող մնացորդները (նոստրո հաշիվներ): Դրամական միջոցները և դրանց համարժեքները հաշվառվում են ամորտիզացված արժեքով ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում:

(գ) Ֆինանսական գործիքներ

(i) Դասակարգում

Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքը, իրենից ներկայացնում է ֆինանսական ակտիվ կամ ֆինանսական պարտավորություն, որը՝

- ձեռք է բերվել կամ ստանձնվել է հիմնականում կարճ ժամանակամիջոցում վաճառելու կամ հետգնելու նպատակով, կամ
- միասին կառավարվող ֆինանսական գործիքների պորտֆելի մի մաս է, որի համար առկա է վկայություն կարճ ժամկետում շահույթ ստանալու արդիական փաստացի պատկերի վերաբերյալ, կամ
- ածանցյալ ֆինանսական գործիք է (բացառությամբ այնպիսի ածանցյալ գործիքի, որը ֆինանսական երաշխավորության պայմանագիր է կամ նախատեսված է որպես արդյունավետ հեջավորման գործիք), կամ
- սկզբնական ճանաչման ժամանակ կազմակերպության կողմից նախատեսվել է որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող:

Բանկը ֆինանսական ակտիվները և պարտավորությունները կարող է նախատեսել որպես շահույթի կամ վնասի միջոցով չափվող ստորև ներկայացված պայմաններից մեկի բավարարման դեպքում.

- ▶ ակտիվների կամ պարտավորությունների ներքին կառավարումը, գնահատումը և ներկայացումը իրականացվում է իրական արժեքի հիմունքով,
- ▶ այն վերացնում կամ էապես նվազեցնում է չափման կամ ճանաչման անհետևողականությունը, որը այլապես կառաջանար, կամ
- ▶ ակտիվը կամ պարտավորությունը ներառում է պարունակվող ածանցյալ գործիք, որը էականորեն ձևափոխում է դրամական միջոցների հոսքերը, որոնք այլապես կպահանջվեին պայմանագրի համաձայն:

3. Հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականությունների ամփոփում (շարունակություն)

(գ) Ֆինանսական գործիքներ (շարունակություն)

Պոտենցիալ բարենպաստ պայմաններ ենթադրող (դրական իրական արժեք) առևտրական նպատակներով պահվող բոլոր ածանցյալ գործիքները, ինչպես նաև ձեռք բերված օպցիոնները, ներկայացվում են որպես ակտիվ: Պոտենցիալ ոչ բարենպաստ պայմաններ ենթադրող (բացասական իրական արժեք) առևտրական նպատակներով պահվող բոլոր ածանցյալ գործիքները, ինչպես նաև տրամադրված օպցիոնները, ներկայացվում են որպես պարտավորություն:

Ֆինանսական գործիքների համապատասխան դասակարգումը ղեկավարությունը որոշում է սկզբնական ճանաչման ժամանակ: Ածանցյալ ֆինանսական գործիքները և իրական արժեքով շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքները սկզբնական ճանաչման պահին չեն վերադասակարգվում իրական արժեքով շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքների դասից: Ֆինանսական ակտիվները, որոնք համապատասխանում են վարկերի և դեբիտորական պարտքերի սահմանմանը, կարող են վերադասակարգվել իրական արժեքով շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքների կամ վաճառքի համար մատչելի ֆինանսական գործիքների դասից, եթե Բանկը մտադիր է և ի վիճակի է պահել այդ գործիքները մոտ ապագայում կամ մինչև մարման ժամկետը:

Այլ ֆինանսական գործիքները կարող են վերադասակարգվել իրական արժեքով շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքների դասից հազվագյուտ հանգամանքներում: Հազվագյուտ հանգամանքներն ի հայտ են գալիս եզակի արտասովոր դեպքի արդյունքում, երբ գրեթե անհավանական է, որ այն կրկին տեղի կունենա մոտ ապագայում:

Վարկերը և դեբիտորական պարտքերը ֆիքսված կամ որոշելի վճարումներով ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներն են, որոնք գնանշված չեն գործող շուկայում, բացառությամբ այն ակտիվների, որոնք Բանկը:

- մտադիր է անմիջապես կամ կարճ ժամկետում վաճառել,
- սկզբնական ճանաչման ժամանակ նախատեսել է որպես իրական արժեքով շահույթի կամ վնասի միջոցով չափվող,
- սկզբնական ճանաչման պահին նախատեսում է որպես վաճառքի համար մատչելի, կամ
- կարող է չփոխհատուցել ըստ էության ողջ իր սկզբնական ներդրումը այլ պատճառով, քան վարկային ռիսկի վատթարացումը:

Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումները ֆիքսված կամ որոշելի վճարումներով և ֆիքսված մարման ժամկետով ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներն են, որոնք Բանկը հստակ մտադրված է և ի վիճակի է պահել մինչև մարման ժամկետի լրանալը, բացառությամբ նրանց՝

- որոնք Բանկը սկզբնական ճանաչման ժամանակ նախատեսում է որպես իրական արժեքով շահույթի կամ վնասի միջոցով չափվող, կամ
- որոնք Բանկը դասակարգում է որպես վաճառքի համար մատչելի, կամ
- որոնք բավարարում են վարկերի կամ դեբիտորական պարտքերի սահմանմանը:

Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներն իրենցից ներկայացնում են ոչ ածանցյալ գործիք հանդիսացող ֆինանսական ակտիվներ, որոնք Բանկի կողմից նախատեսված են որպես վաճառքի համար մատչելի, կամ որոնք դասակարգված չեն որպես փոխառություններ ու դեբիտորական պարտքեր, մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ կամ իրական արժեքով շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ:

(ii) Ճանաչում

Բանկը ֆինանսական ակտիվը կամ ֆինանսական պարտավորությունն իր ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչում է այն և միայն այն դեպքում, երբ դառնում է գործիքի պայմանագրային կողմ: Ֆինանսական ակտիվների կանոնավոր կերպով գնումները կամ վաճառքները հաշվառվում են գործարքի ամսաթվի դրությամբ:

3. Հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականությունների ամփոփում (շարունակություն)

(գ) Ֆինանսական գործիքներ (շարունակություն)

(iii) Չափում

Ֆինանսական ակտիվի կամ պարտավորության սկզբնական ճանաչման պահին այն չափվում է իրական արժեքով՝ գումարած՝ այն դեպքում, երբ դա իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական ակտիվ կամ ֆինանսական պարտավորություն չէ, գործարքի հետ կապված այն ծախսումները, որոնք ուղղակիորեն վերագրելի են ֆինանսական ակտիվի կամ պարտավորության ձեռքբերմանը կամ թողարկմանը:

Սկզբնական ճանաչումից հետո ֆինանսական ակտիվները, ներառյալ ակտիվ հանդիսացող ածանցյալ գործիքները, չափվում են իրենց իրական արժեքներով՝ առանց կատարելու որևէ նվազեցում գործարքի հետ կապված այն ծախսումների գծով, որոնք Բանկը կարող է կրել վաճառքի կամ այլ ձևով օտարման ժամանակ, բացառությամբ հետևյալ ֆինանսական ակտիվների՝

- վարկեր և դեբիտորական պարտքեր, որոնք չափվում են անորոշագույն արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը,
- մինչև մարման ժամկետը պահվող ներդրումները, որոնք չափվում են անորոշագույն արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը, և
- բաժնային գործիքների մեջ ներդրումներ, որոնք գործող շուկայում չունեն գնանշված շուկայական գին, և որոնց իրական արժեքը չի կարող արժանահավատորեն չափվել, որոնք չափվում են սկզբնական արժեքով:

Բոլոր ֆինանսական պարտավորությունները չափվում են անորոշագույն արժեքով, բացառությամբ իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական պարտավորությունների և այն ֆինանսական պարտավորությունների, որոնք առաջանում են, երբ իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվի փոխանցումը չի որակվում որպես ապաճանաչման ենթակա:

(iv) Անորոշագույն արժեք

Ֆինանսական ակտիվի կամ պարտավորության անորոշագույն արժեքն իրենից ներկայացնում է այն գումարը, որով ֆինանսական ակտիվը կամ պարտավորությունը չափվում է սկզբնական ճանաչման պահին՝ հանած հիմնական գումարի ցանկացած մարումներ, գումարած կամ հանած սկզբնական ճանաչված գումարի և մարման գումարի միջև ցանկացած տարբերության կուտակված անորոշագույն՝ հաշվարկված արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով՝ հանած ֆինանսական ակտիվի արժեքի ցանկացած նվազեցում: Հավելավճարները և գեղչերը, ներառյալ գործարքի հետ կապված սկզբնական ծախսումները, ընդգրկված են համապատասխան գործիքի հաշվեկշռային արժեքում և անորոշագույն են՝ կիրառելով գործիքի արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

(v) Իրական արժեքի չափման սկզբունքներ

Իրական արժեքն այն գինն է, որը չափման ամսաթվի դրությամբ, ընթացիկ շուկայական պայմաններում, հիմնական, կամ դրա բացակայության դեպքում՝ ամենաբարենպաստ շուկայում կստացվեր շուկայի մասնակիցների միջև սովորական գործարքում ակտիվը վաճառելու կամ կվճարվեր պարտավորությունը փոխանցելու դիմաց: Պարտավորության իրական արժեքն արտացոլում է վերջինիս չկատարման ռիսկը:

Հնարավորության դեպքում, Բանկը չափում է գործիքի իրական արժեքը՝ կիրառելով այդ գործիքի համար ակտիվ շուկայում գնանշվող գները: Շուկան համարվում է ակտիվ, եթե ակտիվի կամ պարտավորության գծով գործարքները տեղի են ունենում բավարար հաճախականությամբ և բավարար ծավալով՝ շարունակական հիմունքով գնային տեղեկատվություն տրամադրելու համար:

Ակտիվ շուկայում գնանշվող գնի բացակայության դեպքում, Բանկը կիրառում է գնահատման մեթոդներ՝ դիտարկելի տվյալների օգտագործումն առավելագույնի և ոչ դիտարկելի տվյալների օգտագործումը նվազագույնի հասցնելու նպատակով: Ընտրված գնահատման մեթոդը ներառում է բոլոր այն գործոնները, որոնք շուկայի մասնակիցները հաշվի կառնեն նման հանգամանքներում:

3. Հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականությունների ամփոփում (շարունակություն)

(գ) Ֆինանսական գործիքներ (շարունակություն)

Սկզբնական ճանաչման ժամանակ ֆինանսական գործիքի իրական արժեքի լավագույն վկայությունը սովորաբար գործարքի գինն է, այսինքն՝ տրված կամ ստացված հատուցման իրական արժեքը: Եթե Բանկը որոշում է, որ սկզբնական ճանաչման պահին իրական արժեքը տարբերվում է գործարքի գնից, և իրական արժեքը չի հիմնավորվում ակտիվ շուկայում նմանատիպ ակտիվի կամ պարտավորության համար գնանշվող գնով կամ հիմնված չէ գնահատման այնպիսի մեթոդի վրա, որն օգտագործում է միայն դիտարկելի տվյալները, ապա ֆինանսական գործիքի սկզբնական չափումն իրականացվում է իրական արժեքով՝ ճշգրտված սկզբնական ճանաչման պահին իրական արժեքի և գործարքի գնի միջև տարբերության հետաձգմամբ: Հետագայում, տարբերությունը ճանաչվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ գործիքի օգտակար ծառայության ժամկետի ընթացքում՝ համապատասխան հիմունքով, սակայն ոչ ուշ այն պահից, երբ գնահատումն ամբողջովին հիմնավորվում է շուկայի դիտարկելի տվյալներով կամ երբ գործարքն ավարտվում է:

Եթե իրական արժեքով չափվող ակտիվը կամ պարտավորությունն ունի պահանջարկի և առաջարկի գին, ապա Բանկը չափում է ակտիվները և երկար դիրքերը պահանջարկի գնով, իսկ պարտավորությունները և կարճ դիրքերը՝ առաջարկի գնով:

Բանկի՝ շուկայական և վարկային ռիսկին ենթակա ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների պորտֆելները կառավարվում են շուկայական կամ վարկային ռիսկի զուտ ենթարկվածության սկզբունքով և չափվում են՝ հիմք ընդունելով զուտ երկար դիրքի վաճառքի գինը (կամ այն գինը, որը կվճարվեր զուտ կարճ դիրքը փոխանցելու դիմաց): Պորտֆելի մակարդակով կատարվող այս ճշգրտումները բաշխվում են առանձին ակտիվների և պարտավորությունների միջև՝ պորտֆելի յուրաքանչյուր առանձին գործիքի համապատասխան ռիսկերի ճշգրտման հիման վրա:

(vi) Հետագա չափման հետևանքով առաջացած շահույթ և վնաս

Ֆինանսական ակտիվների կամ պարտավորության իրական արժեքի փոփոխությունից առաջացած շահույթը կամ վնասը ճանաչվում է հետևյալ կերպ.

- շահույթում կամ վնասում ճանաչվում է այն ֆինանսական գործիքի գծով շահույթը կամ վնասը, որը դասակարգված է որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող: Շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական ակտիվների գծով տոկոսային եկամուտը ճանաչվում է շահույթում կամ վնասում՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը.
- վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների գծով շահույթը կամ վնասը ճանաչվում է կապիտալում՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում (բացառությամբ արժեզրկումից կորուստների և վաճառքի համար մատչելի պարտքային ֆինանսական գործիքների գծով փոխարժեքային տարբերություններից առաջացած շահույթի և վնասի), մինչև որ նշված ակտիվն ապաճանաչվում է, և այդ պահին կուտակված շահույթը կամ վնասը, որը նախկինում ճանաչվել էր կապիտալում, ճանաչվում է շահույթում կամ վնասում: Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվի գծով տոկոսները ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների և պարտավորությունների գծով շահույթը կամ վնասը ճանաչվում է շահույթում կամ վնասում, երբ ֆինանսական ակտիվը կամ պարտավորությունն ապաճանաչվում է կամ արժեզրկվում է, ինչպես նաև ամորտիզացիայի հաշվարկի ընթացքում:

(vii) Ապաճանաչում

Բանկն ապաճանաչում է ֆինանսական ակտիվն այն դեպքում, երբ ֆինանսական ակտիվից առաջացող դրամական միջոցների հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները կորցնում են իրենց ուժը, կամ երբ փոխանցում է ֆինանսական ակտիվն այնպիսի գործարքում, որում փոխանցվում են ֆինանսական ակտիվի սեփականության հետ կապված ըստ էության բոլոր ռիսկերն ու օգուտները, կամ որում Բանկը ոչ պահպանում, ոչ էլ փոխանցում է սեփականության հետ կապված ըստ էության բոլոր ռիսկերն ու օգուտները և չի պահպանում ֆինանսական ակտիվի նկատմամբ վերահսկողությունը: Ապաճանաչման պայմաններին բավարարող փոխանցված ֆինանսական ակտիվի գծով տոկոսները, որոնք առաջացել կամ պահպանվել են Բանկի կողմից, ճանաչվում են որպես առանձին ակտիվ կամ պարտավորություն ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում: Բանկն ապաճանաչում է ֆինանսական պարտավորությունը, երբ պայմանագրային պարտականությունները կատարվում են, կամ չեղյալ են համարվում, կամ ուժը կորցնում են:

3. Հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականությունների ամփոփում (շարունակություն)

(գ) Ֆինանսական գործիքներ (շարունակություն)

Եթե գոյություն ունեցող ֆինանսական պարտավորությունը փոխարինվում է նույն փոխատուի՝ էականորեն տարբերվող պայմաններով տրամադրած այլ ֆինանսական պարտավորությունով, կամ առկա պարտավորության պայմանները էականորեն փոփոխվում են, ապա դա դիտվում է որպես սկզբնական պարտավորության ապաճանաչում և նոր պարտավորության ճանաչում:

Բանկը կատարում է գործարքներ, որոնցով փոխանցում է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչված ակտիվները, սակայն պահպանում է փոխանցված ակտիվների սեփականության հետ կապված բոլոր ռիսկերն ու օգուտները կամ դրանց մի մասը: Եթե ակտիվի սեփականության հետ կապված բոլոր կամ ըստ էության բոլոր ռիսկերն ու օգուտները պահպանվում են, ապա փոխանցված ակտիվները չեն ապաճանաչվում:

Գործարքներում, որոնցում Բանկը ոչ փոխանցում է, ոչ էլ պահպանում է ֆինանսական ակտիվի սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերն ու օգուտները, այն ապաճանաչում է ակտիվը, եթե կորցնում է դրա նկատմամբ վերահսկողությունը:

Փոխանցումների այն գործարքներում, որոնցում Բանկը պահպանում է ակտիվի նկատմամբ վերահսկողությունը, Բանկը շարունակում է ճանաչել ֆինանսական ակտիվը այնքանով, որքանով շարունակվում է իր ներգրավվածությունը ֆինանսական ակտիվի մեջ, որն այն չափն է, որով նա ենթարկված է փոխանցված ակտիվի արժեքի փոփոխությունների ազդեցությանը:

Բանկը դուրս է գրում անհավաքագրելի համարվող ակտիվները:

(viii) Հետզնման և հակադարձ հետզնման պայմանագրեր

Հետզնման պայմանագրերով (ռեպո) վաճառված արժեթղթերը հաշվառվում են որպես գրավով ապահովված ֆինանսավորման գործարքներ, որի դեպքում արժեթղթերն արտացոլվում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, իսկ պայմանագրային կողմի նկատմամբ պարտավորությունը ներառվում է հետզնման գործարքների գծով վճարվելիք գումարների կազմում: Վաճառքի և հետզնման գների տարբերությունը դիտվում է որպես տոկոսային ծախս և ճանաչվում է շահույթում կամ վնասում հետզնման պայմանագրի գործողության ժամկետի ընթացքում՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Վերավաճառքի նպատակով հակադարձ հետզնման պայմանագրերով (հակադարձ ռեպո) ձեռք բերված արժեթղթերը գրանցվում են որպես հակադարձ հետզնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ: Ձեռքբերման և վերավաճառքի գների տարբերությունը դիտվում է որպես տոկոսային եկամուտ և ճանաչվում է շահույթում կամ վնասում հետզնման պայմանագրի գործողության ժամկետի ընթացքում՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Եթե հակադարձ վաճառք նախատեսող պայմանագրի շրջանակներում գնված ակտիվները վաճառվում են երրորդ անձանց, ապա արժեթղթերը վերադարձնելու պարտավորությունն արտացոլվում է որպես առևտրական նպատակներով պահվող պարտավորություն և չափվում է իրական արժեքով:

(ix) Ածանցյալ ֆինանսական գործիքներ

Ածանցյալ ֆինանսական գործիքները ներառում են սվոպերը, ֆորվարդները, ֆյուչերսները, տոկոսադրույքների, արտարժույթների փոխարժեքների, թանկարժեք մետաղների՝ բորսաներում շրջանառվող օպցիոնները, ինչպես նաև այս գործիքների ցանկացած համակցություն:

Ածանցյալ գործիքների սկզբնական ճանաչումը կատարվում է ածանցյալ գործիքի պայմանագրի կնքման օրը գործող իրական արժեքով: Հետագայում ածանցյալ գործիքները վերաչափվում են իրական արժեքով: Բոլոր ածանցյալ գործիքները հաշվառվում են որպես ակտիվ՝ դրական իրական արժեքի դեպքում և որպես պարտավորություն՝ բացասական իրական արժեքի դեպքում:

Ածանցյալ գործիքների իրական արժեքի փոփոխությունները ճանաչվում են անմիջապես շահույթում կամ վնասում:

Թեև Բանկն ածանցյալ գործիքների առք ու վաճառք իրականացնում է ռիսկի հեջավորման նպատակով, այս գործիքները չեն համապատասխանում հեջի հաշվառման պահանջներին:

3. Հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականությունների ամփոփում (շարունակություն)

(գ) Ֆինանսական գործիքներ (շարունակություն)

(x) Հաշվանցում

Ֆինանսական ակտիվները և պարտավորությունները հաշվանցվում են՝ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում արտացոլվելով զուտ գումարով, եթե գոյություն ունի ճանաչված գումարները հաշվանցելու իրավաբանորեն անրագրված իրավունք, ինչպես նաև հաշվարկը զուտ հիմունքով իրականացնելու կամ միաժամանակ ակտիվն իրացնելու և պարտավորությունը մարելու մտադրություն:

(դ) Հիմնական միջոցներ

(i) Սեփական ակտիվներ

Հիմնական միջոցների միավորները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները:

Երբ հիմնական միջոցի միավորը բաղկացած է օգտակար ծառայության տարբեր ժամկետ ունեցող խոշոր բաղկացուցիչներից, այդ բաղկացուցիչները հաշվառվում են որպես հիմնական միջոցների առանձին միավորներ:

(ii) Մաշվածություն

Մաշվածությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում՝ կիրառելով գծային մեթոդը առանձին ակտիվների օգտակար ծառայության ժամկետի ընթացքում: Մաշվածության հաշվարկը սկսվում է հիմնական միջոցի ձեռք բերման պահից, իսկ սեփական ուժերով կառուցված ակտիվների դեպքում՝ վերջիններիս կառուցումն ավարտելու և շահագործման հանձնելու պահից: Օգտակար ծառայության գնահատված ժամկետները հետևյալն են.

վարձակալված գույքի բարելավումներ	5-ից 10 տարի
համակարգիչներ և հեռահաղորդակցման սարքեր	5-ից 10 տարի
տնտեսական գույք	5-ից 10 տարի
փոխադրամիջոցներ	7 տարի

Վարձակալված միջոցների բարելավումների գծով մաշվածությունը հաշվարկվում է ակտիվի օգտակար ծառայության ժամկետից և վարձակալության գործողության ժամկետից նվազագույնի ընթացքում:

(ե) Ոչ նյութական ակտիվներ

Ձեռք բերված ոչ նյութական ակտիվները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիան և արժեզրկումից կորուստները:

Համակարգչային ծրագրերի, լիցենզիաների ձեռքբերման ծախսերը կապիտալացվում են որպես առանձին ծրագրի ձեռքբերման և ներդրման գծով ծախսումներ: Ամորտիզացիան ճանաչվում է որպես ծախս շահույթում կամ վնասում՝ կիրառելով գծային մեթոդը ոչ նյութական ակտիվների օգտակար ծառայության ժամկետի ընթացքում: Ոչ նյութական ակտիվների օգտակար ծառայության գնահատված ժամկետը կազմում է 1-ից 10 տարի:

(զ) Վաճառքի համար պահվող ակտիվներ

Ոչ ընթացիկ ակտիվները կամ ակտիվներից և պարտավորություններից բաղկացած օտարման ենթակա խմբերը, որոնց վերականգնումն ակնկալվում է հիմնականում վաճառքի, այլ ոչ՝ շարունակական օգտագործման միջոցով, դասակարգվում են որպես վաճառքի համար պահվող ակտիվներ: Ամփոփապես նախքան որպես վաճառքի համար պահվող դասակարգումը, ակտիվները կամ օտարման ենթակա խմբերի բաղադրիչները վերաչափվում են Բանկի հաշվապահական հաշվառման քաղաքականության համաձայն: Այնուհետև ակտիվները կամ օտարման ենթակա խմբերը չափվում են հետևյալ արժեքներից նվազագույնով՝ հաշվեկշռային արժեք և իրական արժեք՝ հանած վաճառքի ծախսերը:

3. Հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականությունների ամփոփում (շարունակություն)

(է) Արժեզրկում

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ Բանկը գնահատում է, թե արդյոք առկա է որևէ հայտանիշ, ըստ որի ֆինանսական ակտիվը կամ ֆինանսական ակտիվների խումբը կարող է արժեզրկված լինել: Նման վկայության առկայության դեպքում, Բանկը որոշում է արժեզրկումից կորստի գումարը:

Ֆինանսական ակտիվը կամ ֆինանսական ակտիվների խումբն արժեզրկվում է, և արժեզրկումից կորուստները ճանաչվում են այն և միայն այն դեպքում, երբ առկա է որևէ հայտանիշ ֆինանսական ակտիվի արժեզրկման մասին, որը հանդիսանում է սկզբնական ճանաչումից հետո տեղի ունեցած մեկ կամ ավելի դեպքերի արդյունք (կորստի դեպք), և այդ դեպքը (կամ դեպքերը) ազդեցություն է ունեցել ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական ակտիվների խմբի գծով դրամական միջոցների գնահատված ապագա հոսքերի վրա, որոնք հնարավոր է արժանահավատորեն չափել:

Ֆինանսական ակտիվների արժեզրկման վկայությունը կարող է ներառել պարտավորությունների չկատարումը կամ վճարումների հետաձգումը վարկառուի կողմից, վարկային պայմանագրի պայմանների խախտումները վարկառուի կողմից, ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական ակտիվների խմբի պայմանների այնպիսի վերանայումը, որը Բանկն այլ հանգամանքներում չէր դիտարկի, վարկառուի կամ թողարկողի սնանկացման հայտանիշները, արժեթղթի համար գործող շուկայի վերացումը, գրավի արժեքի նվազումը կամ ակտիվների խմբին վերաբերող այլ դիտարկելի տվյալները, ինչպիսիք են խմբի կազմի մեջ մտնող վարկառուների վճարունակության վատթարացումը կամ տվյալ խմբի կազմի մեջ մտնող վարկառուների կողմից պարտականությունների չկատարման հետ փոխկապակցված տնտեսական պայմանների փոփոխությունը:

Բացի այդ, վաճառքի համար մատչելի բաժնային արժեքում ներդրման իրական արժեքի՝ իր սկզբնական արժեքից նշանակալի կամ տևողական նվազումը նույնպես հանդիսանում է արժեզրկման օբյեկտիվ հայտանիշ:

(i) Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական գործիքներ

Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվները հիմնականում ներառում են վարկերը և այլ դեբիտորական պարտքերը («վարկեր և դեբիտորական պարտքեր»): Բանկը վերանայում է իր վարկերը և դեբիտորական պարտքերը՝ արժեզրկումը կանոնավոր հիմունքով գնահատելու նպատակով:

Բանկը նախ գնահատում է, թե արդյոք գոյություն ունի արժեզրկման օբյեկտիվ հայտանիշ այն առանձին վարկերի ու դեբիտորական պարտքերի գծով, որոնք առանձին վերցված նշանակալի են, և ապա առանձին կամ հավաքական հիմունքով՝ այն վարկերի ու դեբիտորական պարտքերի գծով, որոնք առանձին վերցված նշանակալի չեն: Եթե Բանկը որոշում է, որ առանձին գնահատված վարկի կամ դեբիտորական պարտքի գծով՝ լինի այն նշանակալի կամ ոչ նշանակալի, արժեզրկման օբյեկտիվ հայտանիշ չկա, ապա Բանկը ներառում է այդ վարկը կամ դեբիտորական պարտքը պարտքային ռիսկի համանման բնութագրերով վարկերի և դեբիտորական պարտքերի խմբում և դրանք հավաքական հիմունքով գնահատում արժեզրկման տեսանկյունից: Այն վարկերը և դեբիտորական պարտքերը, որոնք առանձին են գնահատվում արժեզրկման տեսանկյունից, և որոնց գծով արժեզրկումից կորուստը ճանաչվում կամ շարունակվում է ճանաչվել, չեն ներառվում արժեզրկման հավաքական հիմունքով գնահատման մեջ:

Եթե առկա է օբյեկտիվ հայտանիշ, որ վարկի կամ դեբիտորական պարտքի գծով արժեզրկումից կորուստ է տեղի ունեցել, ապա կորստի գումարը չափվում է որպես վարկի կամ դեբիտորական պարտքի հաշվեկշռային արժեքի և ապագա գնահատված դրամական միջոցների հոսքերի ներկա արժեքի միջև տարբերություն, ներառյալ սպասվող դրամական հոսքերը երաշխիքներից և գրավներից, զեղչված վարկի նախնական արդյունավետ տոկոսադրույքով:

Պայմանագրով նախատեսված դրամական միջոցների հոսքերը և նախկին փորձի վրա հիմնված վնասները, որոնց գծով ներկա տնտեսական պայմաններն արտացոլող առկա տեղեկատվության հիման վրա կատարվել են ճշգրտումներ, հանդիսանում են դրամական միջոցների ակնկալվող հոսքերի գնահատման հիմք:

Որոշ դեպքերում դիտարկելի տվյալները, որոնք պահանջվում են վարկի կամ դեբիտորական պարտքի գծով արժեզրկումից կորստի չափը գնահատելու համար, կարող են լինել սահմանափակ կամ այլևս ոչ ամբողջությամբ առնչվող տվյալ հանգամանքներին: Դա կարող է տեղի ունենալ, երբ վարկառուն ֆինանսական դժվարությունների մեջ է, և համանման վարկառուների վերաբերյալ քիչ պատմական տվյալներ կան: Այդպիսի դեպքերում արժեզրկումից կորստի չափը գնահատելու համար Բանկն օգտագործում է իր փորձը և դատողությունները:

3. Հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականությունների ամփոփում (շարունակություն)

(է) Արժեզրկում (շարունակություն)

Վարկի և դեբիտորական պարտքերի գծով արժեզրկումից կորուստները ճանաչվում են շահույթում կամ վնասում և հակադարձվում են այնքանով, որքանով փոխհատուցվող գումարի հետագա աճը կարելի է անկողմնակալորեն վերագրել արժեզրկումից կորստի ճանաչումից հետո տեղի ունեցած իրադարձությանը:

Այն դեպքերում, երբ վարկի հավաքագրումը հնարավոր չէ, վարկը դուրս է գրվում ի հաշիվ արժեզրկման գծով ձևավորված համապատասխան պահուստի: Բանկը վարկի մնացորդը (և արժեզրկման գծով ձևավորված համապատասխան պահուստները) դուրս է գրում, երբ ղեկավարությունը որոշում է, որ վարկը ենթակա չէ հավաքագրման, և ձեռնարկվել են վարկի վերադարձի հետ կապված բոլոր անհրաժեշտ քայլերը:

Վերանայված վարկեր

Հնարավորության դեպքում Բանկը ձգտում է վերանայել վարկերը, այլ ոչ թե բռնազանձել գրավադրված գույքը: Դա կարող է լինել վճարումների ժամկետները երկարաձգելու կամ նոր պայմաններով վարկային պայմանագրի կնքման միջոցով:

Նման վերակազմակերպումների հաշվապահական հաշվառման մոտեցումը հետևյալն է

- Եթե վարկի արժույթը փոխում է, ապա հին վարկը ապաճանաչվում է, և նոր վարկ է ճանաչվում.
- Եթե վարկի վերանայումը պայմանավորված չէ վարկառուի ֆինանսական դժվարություններով, ապա Բանկը կիրառում է նույն մոտեցումը, ինչ ֆինանսական պարտավորությունների դեպքում, ինչպես նկարագրված է վերևում:
- Եթե վերանայումը պայմանավորված է վարկառուի ֆինանսական դժվարություններով, և վարկը համարվում է արժեզրկված վերանայումից հետո, Բանկը նոր պայմաններին համապատասխան ապագա դրամական հոսքերի բերված արժեքի՝ զեղչված սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով, և մինչև վերանայումը հաշվեկշռային արժեքի միջև տարբերությունը ճանաչում է որպես արժեզրկումից կորուստներ հաշվետու ժամանակաշրջանում: Եթե վարկը վերանայումից հետո արժեզրկված չէ, Բանկը վերահաշվարկում է արդյունավետ տոկոսադրույքը:

Պայմանները վերանայվելուց հետո վարկը այլևս ժամկետանց չի համարվում: Ղեկավարությունը շարունակաբար վերանայում է վերակազմակերպված վարկերը, հավաստիանալու համար, որ բոլոր չափանիշները բավարարված են և, որ ապագա վճարումները կատարվելու են: Վարկերը շարունակում են ենթարկվել անհատական կամ կոլեկտիվ արժեզրկման գնահատման, որը հաշվարկվում է վարկի սկզբնական կամ ընթացիկ արդյունավետ տոկոսադրույքի հիման վրա:

Երբ վարկի պայմանները վերանայված են, վարկն այլևս չի համարվում ժամկետանց: Ղեկավարությունը շարունակաբար հետևում է վերանայված վարկերին՝ համոզվելու համար, որ բոլոր համաձայնությունները պահպանված են, և ապագա վճարումների կատարումը հավանական է: Վարկերը շարունակում են մնալ արժեզրկման անհատական կամ խմբային գնահատման առարկա՝ օգտագործելով վարկի սկզբնական կամ ընթացիկ արդյունավետ տոկոսադրույքը:

(ii) Սկզբնական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներ

Սկզբնական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվները ներառում են վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներում ընդգրկված չզննանշվող բաժնային գործիքները, որոնք չեն հաշվառվում իրական արժեքով, քանի որ դրանց արժեքը հնարավոր չէ արժանահավատորեն չափել: Եթե առկա է այդ ներդրումների գծով արժեզրկումից կորստի օբյեկտիվ հայտանիշ, ապա կորստի գումարը չափվում է որպես ներդրման հաշվեկշռային արժեքի և համանման ֆինանսական ակտիվների՝ ներկա շուկայական տոկոսադրույքով զեղչված դրամական միջոցների ակնկալվող ապագա հոսքերի ներկա արժեքի միջև տարբերություն:

Այս ներդրումների գծով արժեզրկումից կորուստները ճանաչվում են շահույթում կամ վնասում և ենթակա չեն հակադարձման:

3. Հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականությունների ամփոփում (շարունակություն)

(ե) Արժեզրկում (շարունակություն)

(iii) Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ

Վաճառքի համար մատչելի ակտիվների գծով արժեզրկումից կորուստները ճանաչվում են՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչված կուտակված վնասը փոխանցելով շահույթի կամ վնասի կազմ՝ որպես վերադասակարգման ճշգրտում: Կուտակված վնասը, որը այլ համապարփակ եկամտից վերադասակարգվում է շահույթի կամ վնասի կազմ, հանդիսանում է ձեռքբերման արժեքի՝ հանած մայր գումարի մարումները ու ամորտիզացիան, և ընթացիկ իրական արժեքի՝ հանած նախկինում շահույթի կամ վնասի կազմում ճանաչված արժեզրկումից կորուստները, միջև տարբերությունը: Ժամանակի արժեքին վերագրելի արժեզրկման գծով պահուստի փոփոխություններն արտացոլվում են որպես տոկոսային եկամտի բաղադրիչ:

Եթե հետագա ժամանակաշրջանում արժեզրկված վաճառքի համար մատչելի պարտքային արժեթղթի իրական արժեքն աճում է, և այդ աճը հնարավոր է անկողմնակալորեն վերագրել շահույթի կամ վնասի կազմում արժեզրկումից կորստի ճանաչումից հետո տեղի ունեցած իրադարձությանը, ապա արժեզրկումից կորուստը հակադարձվում է, իսկ հակադարձված գումարը ճանաչվում է շահույթում կամ վնասում: Այնուհանդերձ, արժեզրկված վաճառքի համար մատչելի բաժնային արժեթղթի իրական արժեքի ցանկացած հետագա վերականգնումը ճանաչվում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում:

(iv) Ոչ ֆինանսական ակտիվներ

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ այլ ոչ ֆինանսական ակտիվները, բացառությամբ հետաձգված հարկերի, գնահատվում են արժեզրկման հայտանիշները բացահայտելու նպատակով: Ոչ ֆինանսական ակտիվների փոխհատուցվող գումարը որոշվում է որպես նրանց իրական արժեքից՝ նվազեցված վաճառքի ծախսերով, ու օգտագործման արժեքից առավելագույնի տարբերություն: Օգտագործման արժեքը գնահատելիս դրամական միջոցների գնահատված ասպագա հոսքերը գեղչվում են՝ օգտագործելով մինչև հարկումը գեղչման այն դրույքը, որն արտացոլում է ժամանակի մեջ փողի արժեքի շուկայի ներկա գնահատականը և ակտիվին բնորոշ ռիսկերը: Այլ ակտիվներից առաջացող դրամական միջոցների ներհոսքից մեծապես անկախ և դրամական միջոցների ներհոսք չառաջացնող ակտիվների փոխհատուցվող գումարը որոշվում է այն դրամաստեղծ միավորի համար, որին պատկանում է տվյալ ակտիվը: Արժեզրկումից կորուստը ճանաչվում է, երբ ակտիվի կամ նրա դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը գերազանցում է նրա փոխհատուցվող գումարը:

Ոչ ֆինանսական ակտիվների գծով արժեզրկումից կորուստը ճանաչվում է շահույթում կամ վնասում և հակադարձվում է միայն այն դեպքում, եթե փոխվել են փոխհատուցվող գումարը որոշելու համար օգտագործվող գնահատումները: Արժեզրկումից կորուստը հակադարձվում է միայն այն չափով, որ ակտիվի հաշվեկշռային արժեքը չգերազանցի այն հաշվեկշռային արժեքը, որը որոշված կլինի՝ առանց համապատասխան մաշվածության և ամորտիզացիայի, եթե արժեզրկումից կորուստ ճանաչված չլինի: Գուղվիլի արժեզրկումը չի հակադարձվում:

(ը) Պահուստներ

Պահուստը ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչվում է, երբ Բանկը, որպես անցյալ դեպքերի արդյունք, ունի իրավական կամ կառուցողական պարտականություն, և հավանական է, որ այդ պարտականությունը մարելու նպատակով կպահանջվի տնտեսական օգուտների արտահոսք: Եթե ազդեցությունն էական է, պահուստները որոշվում են՝ զեղչելով ակնկալվող դրամական հոսքերը՝ օգտագործելով զեղչման՝ մինչև հարկումը գործող այն դրույքը, որն արտացոլում է ժամանակի մեջ փողի արժեքի շուկայի ներկա գնահատականը և, կիրառելիության դեպքում՝ պարտավորությանը բնորոշ ռիսկերը:

Վերակազմավորման գծով պահուստը ճանաչվում է, երբ Բանկը հաստատում է վերակազմավորման մանրամասն պաշտոնական պլանը, և երբ սկսվում է վերակազմավորումը կամ դրա մասին հայտարարվում է հանրությանը: Ապագա գործառնական ծախսերի գծով պահուստ չի ձևավորվում:

(թ) Փոխառու միջոցներ

Թողարկված ֆինանսական գործիքները կամ դրանց բաղկացուցիչները դասակարգվում են որպես պարտավորություններ, եթե պայմանագրային համաձայնության արդյունքում Բանկն ունի պարտավորություն փոխանցելու դրամական միջոցներ կամ այլ ֆինանսական ակտիվներ, կամ այլ կերպ կատարելու պարտավորությունները, բացի հաստատուն գումարով դրամական միջոցների կամ այլ ֆինանսական ակտիվների՝ սեփական բաժնետնասային գործիքների հաստատուն քանակով փոխարինելը:

3. Հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականությունների ամփոփում (շարունակություն)

(թ) Փոխառու միջոցներ (շարունակություն)

Նման գործիքները իրենց մեջ ներառում են ՀՀ ԿԲ-ի նկատմամբ պարտավորությունները, բանկերի միջոցները, հաճախորդների հաշիվները, այլ փոխառու միջոցները, թողարկված պարտատոմսերը:

Սկզբնական ճանաչումից հետո փոխառու միջոցները հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ արդյունավետ տոկոսադրույքի մեթոդի կիրառման միջոցով: Պարտավորության ապահովման դեպքում, ինչպես նաև ամորտիզացիայի ընթացքում, եկամուտներն ու ծախսերը ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում:

(ժ) Վարկային պարտավորվածություններ

Բնականոն գործունեության ընթացքում Բանկը հանձն է առնում վարկային պարտավորվածություններ, որոնք ներառում են վարկավորման չօգտագործված պարտավորվածությունները, ակրեդիտիվները և երաշխիքները, ինչպես նաև տրամադրում է վարկային ապահովագրման այլ տեսակներ:

Ֆինանսական երաշխավորության պայմանագրերը իրենցից ներկայացնում են պայմանագրեր, որոնք պարտավորեցնում են Բանկին կատարել սահմանված վճարումներ, փոխհատուցելու համար վնասը, որը կրում է այդ պայմանագրի տիրապետողը՝ որոշակի պարտապանի կողմից պարտքային գործիքի պայմանների համաձայն վճարումը ժամանակին չկատարելու հետևանքով:

Ֆինանսական երաշխավորության գծով պարտավորությունն ի սկզբանե ճանաչվում է իրական արժեքով՝ հանած գործարքի հետ կապված ծախսումները, և հետագայում չափվում է երկու մեծություններից առավելագույնով՝ ի սկզբանե ճանաչված գումարը՝ հանած կուտակված ամորտիզացիան, կամ երաշխավորության գծով ցանկացած կորուստների պահուստը: Ֆինանսական երաշխավորության գծով կորուստների պահուստը և վարկային այլ պարտավորվածությունները ճանաչվում են, երբ գոյություն ունի վնաս կրելու հավանականություն, և այդ վնասը հնարավոր է արժանահավատորեն չափել:

Ֆինանսական երաշխավորության գծով պարտավորությունները և վարկային այլ պարտավորվածությունների գծով պահուստները ներառվում են այլ պարտավորությունների կազմում:

Վարկային պարտավորվածությունները չեն ճանաչվում, բացառությամբ հետևյալ պարտավորվածությունների.

- վարկային պարտավորվածություններ, որոնք Բանկը դասակարգում է որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական պարտավորություններ,
- եթե Բանկն ունի իր վարկային պարտավորվածություններից առաջացող ակտիվների՝ դրանց առաջացումից կարճ ժամանակ անց վաճառելու նախկին փորձ, ապա նույն դասում գտնվող բոլոր վարկային պարտավորվածությունները դիտվում են որպես ածանցյալ գործիքներ,
- վարկային պարտավորվածություններ, որոնք կարող են մարվել զուտ հիմունքով՝ դրամական միջոցներով կամ մեկ այլ ֆինանսական գործիք մատակարարելով կամ թողարկելով,
- շուկայականից ցածր տոկոսադրույքով վարկ տրամադրելու պարտավորվածություններ:

(ի) Բաժնետիրական կապիտալ

Սովորական բաժնետոմսերը դասակարգվում են որպես կապիտալ: Սովորական բաժնետոմսերի և բաժնետոմսերի օպցիոնների թողարկմանն ուղղակիորեն վերագրելի լրացուցիչ ծախսերը ճանաչվում են որպես կապիտալի նվազեցում՝ առանց հարկային հետևանքների:

(i) Էմիսիոն եկամուտ

Թողարկված բաժնետոմսերի անվանական արժեքից ավել վճարվող ցանկացած գումար ճանաչվում է որպես էմիսիոն եկամուտ:

(ii) Բաժնետիրական կապիտալի հետզնում

Երբ որպես կապիտալ ճանաչված բաժնետիրական կապիտալը հետ է գնվում, վճարված հատուցման գումարը, ներառյալ ուղղակիորեն վերագրելի ծախսերը, ճանաչվում է որպես կապիտալի նվազում:

3. **Հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականությունների ամփոփում (շարունակություն)**

(հ) Բաժնետիրական կապիտալ (շարունակություն)

(iii) Շահաբաժիններ

Շահաբաժիններ հայտարարելու և վճարելու Բանկի կարողությունը կարգավորվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

Սովորական բաժնետոմսերի շահաբաժիններն արտացոլվում են որպես չբաշխված շահույթի բաշխում այն ժամանակահատվածում, երբ հայտարարվում են:

(լ) Սեզմենտային հաշվետվություն

Բանկի սեզմենտային հաշվետվությունները հիմնված են հետևյալ գործառնական սեզմենտների վրա՝ Մանրաձախ բանկային գործունեություն, Կորպորատիվ բանկային գործունեություն, Առևտրային և Ներդրումային բանկային գործունեություն:

(խ) Հարկում

Շահութահարկը բաղկացած է ընթացիկ և հետաձգված հարկերից: Շահութահարկը ճանաչվում է շահույթում կամ վնասում, բացառությամբ հարկի այն մասի, որը վերաբերում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միավորներին կամ ուղղակիորեն կապիտալում ճանաչված՝ բաժնետերերի հետ իրականացված գործառնություններին, որի դեպքում շահութահարկը ճանաչվում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում կամ ուղղակիորեն կապիտալում:

Ընթացիկ հարկը ժամանակաշրջանի հարկվող շահույթի գծով վճարման ենթակա ակնկալվող շահութահարկի գումարն է, որը հաշվարկվում է՝ կիրառելով հարկերի այն դրույքները, որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ժամանակաշրջանի դրությամբ, ինչպես նաև նախորդ տարիների վճարման ենթակա հարկերի գծով կատարված ճշգրտումները:

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները ճանաչվում են ֆինանսական հաշվետվությունների նպատակների համար օգտագործվող ակտիվների ու պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և հարկային նպատակների համար օգտագործվող գումարների ժամանակավոր տարբերությունների գծով: Հետաձգված հարկային ակտիվներ և պարտավորություններ չեն ճանաչվում հետևյալ ժամանակավոր տարբերությունների համար՝ գուղվիլ, որը չի նվազեցվում հարկային նպատակներով, ակտիվների կամ պարտավորությունների սկզբնական ճանաչում, որոնք ազդեցություն չունեն ոչ հաշվապահական, ոչ հարկվող շահույթի վրա, ինչպես նաև այն դուստր ընկերություններում կատարած ներդրումներին վերաբերող ժամանակավոր տարբերություններ, որտեղ մայր ընկերությունն ի վիճակի է վերահսկել ժամանակավոր տարբերության հակադարձումը, և հավանական է, որ ժամանակավոր տարբերությունը չի հակադարձվի մոտ ապագայում:

Հետաձգված հարկային ակտիվների և պարտավորությունների չափումն արտացոլում է այն հարկային հետևանքները, որոնք կարող են առաջանալ, եթե Բանկը կիրառի այն մոտեցումը, որով ակնկալվում է վերականգնել կամ մարել իր ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքը հաշվետու ժամանակաշրջանի վերջում:

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները չափվում են՝ կիրառելով հարկերի այն դրույքները, որոնք ակնկալվում է, որ կկիրառվեն ժամանակավոր տարբերությունների նկատմամբ վերջինները հակադարձելիս՝ հիմք ընդունելով այն օրենքների դրույթները, որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ժամանակաշրջանի վերջում:

Հետաձգված հարկային ակտիվները ճանաչվում են միայն այն չափով, որքանով հավանական է, որ առկա կլինի ապագա հարկվող շահույթ, որի դիմաց կարող են օգտագործվել ժամանակավոր տարբերությունները, չօգտագործված հարկային վնասները և արտոնությունները: Հետաձգված հարկային ակտիվները նվազեցվում են այնքանով, որքանով հավանական չէ, որ առկա կլինի հարկվող շահույթ, որի դիմաց կարող են օգտագործվել ժամանակավոր հարկային տարբերությունները:

3. Հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականությունների ամփոփում (շարունակություն)

(ծ) Եկամտի և ծախսի ճանաչում

Տոկոսային եկամուտը և ծախսը ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Վարկերի տրամադրման, սպասարկման և այլ վճարները, որոնք գործարքի հետ կապված ծախսերի հետ միասին դիտարկվում են որպես վարկի ընդհանուր շահութաբերության անբաժան մաս, հետաձգվում են և ամորտիզացվում են տոկոսային եկամտի կազմում ֆինանսական գործիքի օգտակար ծառայության ժամկետի ընթացքում՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Այլ վճարները, միջնորդավճարների գծով եկամուտը և ծախսը ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ համապատասխան ծառայությունը տրամադրելիս:

Շահաբաժինների տեսքով եկամուտը ճանաչվում է շահույթում կամ վնասում՝ շահաբաժնի հայտարարման ամսաթվին:

Գործառնական վարձակալության գծով կատարած վճարները ճանաչվում են շահույթում կամ վնասում գծային մեթոդով՝ վարձակալության ժամկետի ընթացքում: Վարձակալության գծով ստացված խրախուսող պայմանները ճանաչվում են որպես վարձակալության գծով ընդհանուր ծախսի անբաժան մաս վարձակալության ժամկետի ընթացքում:

(կ) Վարձակալություն

Ֆինանսական վարձակալություն՝ Բանկը որպես ֆինանսական վարձակալ

Բանկը ճանաչում է ֆինանսական վարձակալությունը որպես ակտիվներ և պարտավորություններ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում վարձակալության պայմանների ուժի մեջ մտնելու պահից վարձակալվող գույքի իրական արժեքի չափով, կամ, ցածր լինելու դեպքում, նվազագույն վարձակալական վճարների ընթացիկ արժեքով: Նվազագույն վարձակալական վճարների ընթացիկ արժեքը հաշվարկելու համար որպես գեղչման գործակից օգտագործվում է վարձակալության ներքին տոկոսադրույքը, երբ այն հնարավոր է կիրառել, հակառակ դեպքում՝ Բանկի լրացուցիչ փոխառության տոկոսադրույքը: Սկզբնական ուղղակի ծախսումները ներառվում են ակտիվի արժեքի մեջ: Վարձակալական վճարները համաչափորեն բաշխվում են ֆինանսական ծախսերի և չնարված պարտավորության նվազեցման միջև: Ֆինանսական ծախսը տարածվում է վարձակալության ողջ ժամանակահատվածի վրա այնպես, որ հաշվարկվի հաստատուն դրույքաչափ պարտավորության յուրաքանչյուր ժամանակաշրջանի մնացորդային արժեքի նկատմամբ:

Վարձակալի կողմից ֆինանսական վարձակալության գործունեությանը ուղղակիորեն վերագրելի ծախսումներն արտացոլվում են վարձակալված ակտիվների կազմում:

Ֆինանսական վարձակալություն՝ Բանկը որպես ֆինանսական վարձատու

Բանկը ճանաչում է վարձակալության գծով դեբիտորական պարտքերը վարձակալության գուտ ներդրման գումարի չափով՝ վարձակալության պայմանների ուժի մեջ մտնելու պահից սկսած: Ֆինանսական եկամուտը հիմնված է գուտ չնարված ներդրման հաստատուն եկամտաբերության գործակցի օգտագործման մոդելի վրա: Սկզբնական ուղղակի ծախսումները ներառվում են վարձակալությունից դեբիտորական պարտքի հաշվարկման մեջ:

Գործառնական վարձակալություն՝ Բանկը որպես վարձակալ

Ակտիվների վարձակալությունը, որի ժամանակ ռիսկերը և հատույցները ըստ էության պահվում են վարձակալի կողմից, դասակարգվում է որպես գործառնական վարձակալություն: Գործառնական վարձակալության գծով վարձավճարները ճանաչվում են որպես ծախս հավասարաչափ մասհանումների միջոցով վարձակալության ժամկետի ընթացքում և ընդգրկվում այլ գործառնական ծախսերի մեջ:

3. **Հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականությունների ամփոփում (շարունակություն)**

Գործառնական վարձակալություն՝ Բանկը որպես վարձատու

Բանկը ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներկայացնում է գործառնական վարձակալության առարկա հանդիսացող ակտիվը՝ ըստ ակտիվի բնույթի: Գործառնական վարձակալությունից ստացվող վարձակալական եկամուտը ճանաչվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում հավասարաչափ վարձակալության ժամկետի ընթացքում՝ որպես այլ եկամուտ: Վարձակալներին տրամադրված զեղչերի համախառն գումարը արտացոլվում է որպես վարձակալությունից եկամտի նվազեցում՝ հավասարաչափ վարձակալության ժամկետի ընթացքում: Գործառնական վարձակալության պայմանագրի հետ կապված սկզբնական ուղղակի ծախսումները ավելացվում են վարձակալության առարկա հանդիսացող ակտիվի հաշվեկշռային արժեքին:

(h) Դեռևս չկիրառվող նոր ստանդարտներ և մեկնաբանություններ

Ստորև ներկայացված են ստանդարտները և մեկնաբանությունները, որոնք թողարկվել են, բայց Բանկի ֆինանսական հաշվետվությունների հրապարակման օրվա դրությամբ դեռևս ուժի մեջ չեն մտել: Բանկը մտադիր է կիրառել այդ ստանդարտները ուժի մեջ մտնելուց հետո:

ՖՀՄՍ 9 «Ֆինանսական գործիքներ»

2014 թ. հուլիսին ՀՀՄՍԽ-ն թողարկեց ՖՀՄՍ 9 «Ֆինանսական գործիքներ» ստանդարտի վերջնական տարբերակը, որն արտացոլում է ֆինանսական գործիքներին վերաբերող նախագծի բոլոր փոփոխությունները և փոխարինում է ՀՀՄՍ 39-ին՝ «Ֆինանսական գործիքներ. ճանաչումը և չափումը», և ՖՀՄՍ 9-ի բոլոր նախկին տարբերակներին: Ստանդարտը ներկայացնում է դասակարգման, չափման, ինչպես նաև արժեզրկման և հեջավորման հաշվառման նոր պահանջներ:

ՖՀՄՍ 9-ը ուժի մեջ է մտնում 2018 թ.-ի հունվարի 1-ին կամ այդ ամսաթվից հետո սկսվող հաշվետու ժամանակաշրջանների համար: Բացի հեջավորման հաշվառումից, հետադարձ կիրառումը պահանջվում է, սակայն համադրելի տեղեկատվության վերահաշվարկը պարտադիր չէ:

Բանկը նախատեսում է կիրառել նոր ստանդարտը՝ ճանաչելով անցման կուտակային ազդեցությունը հաշվետու տարվա սկզբի բաշխված շահույթում և առանց համեմատական տեղեկատվությունը վերահաշվարկելու:

Բանկը գտնվում է ՖՀՄՍ 9-ի կիրառման ազդեցությունը գնահատելու փուլում, սակայն այդ ազդեցության որևէ ողջամիտ գնահատում դեռևս առկա չէ:

(ա) Դասակարգում և չափում

ՖՀՄՍ 9-ի համաձայն, բոլոր պարտքային ֆինանսական ակտիվները, որոնք չեն համապատասխանում «բացառապես հիմնական գումարի և տոկոսների վճարման» չափանիշին (SPPI), սկզբնական ճանաչման ժամանակ դասակարգվում են որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող: Այս չափանիշի համաձայն՝ պարտքային գործիքները, որոնք չեն համապատասխանում «վարկավորման հիմնական պայմաններին», ինչպիսիք են պարունակվող փոխարկման օպցիոնով գործիքները կամ առանց ռեգրեսի իրավունքի վարկերը, գնահատվում են իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով: SPPI չափանիշին համապատասխանող պարտքային ֆինանսական ակտիվների համար սկզբնական ճանաչման ժամանակ դասակարգումը որոշվում է բիզնես մոդելի հիման վրա, որի համաձայն այդ գործիքները կառավարվում են.

- գործիքները, որոնք պահվում են պայմանագրով նախատեսված դրամական հոսքերը ստանալու նպատակով, չափվում են ամորտիզացված արժեքով.
- գործիքները, որոնք պահվում են պայմանագրով նախատեսված դրամական հոսքերը ստանալու և վաճառքի նպատակով, չափվում են իրական արժեքով՝ այլ համապարփակ եկամտի միջոցով.
- այլ նպատակով պահվող գործիքները, ներառյալ առևտրային ֆինանսական ակտիվները, գնահատվում են իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով:

Սկզբնական ճանաչման ժամանակ բաժնային ֆինանսական ակտիվները պետք է դասակարգվեն որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող, բացառությամբ այն դեպքերի, երբ որոշում է կայացվել, առանց հետագայում վերանայելու իրավունքի, դրանք դասակարգել որպես իրական արժեքով՝ այլ համապարփակ եկամտի միջոցով չափվող: Իրական արժեքով՝ այլ համապարփակ եկամտի միջոցով չափվող բաժնային գործիքներից ողջ իրացված և չիրացված շահույթն ու վնասն, բացառությամբ շահաբաժինների, ճանաչվում են այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում, առանց շահույթում կամ վնասում հետագա վերադասակարգման:

3. Հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականությունների ամփոփում (շարունակություն)

(h) Դեռևս չկիրառվող նոր ստանդարտներ և մեկնաբանություններ (շարունակություն)

Ֆինանսական պարտավորությունների դասակարգումը և չափումը հիմնականում մնում են անփոփոխ ՀՀՄՍ 39-ի պահանջների համեմատ: Ածանցյալներ գործիքները կշարունակեն չափվել իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով:

Բանկը ակնկալում է, որ այն ակտիվները, որոնք չափվում են իրական արժեքով կշարունակի չափել իրական արժեքով:

Ակնկալվում է, որ պարտքային արժեթղթերը, որոնք ներկայումս դասակարգված են որպես վաճառքի համար մատչելի, ՖՀՄՍ 9-ով կչափվեն իրական արժեքով՝ այլ համապարփակ եկամտի միջոցով, քանի որ Բանկը ակնկալում է ոչ միայն պահել այդ ակտիվները պայմանագրային դրամական հոսքերը հավաքագրելու համար, այլ նաև համեմատաբար հաճախակիորեն իրականացնել էական գումարով վաճառքներ: Սպասվում է, որ բոլոր վարկերը պետք է բավարարեն «բացառապես մայր գումարի և տոկոսների վճարման» չափանիշին և կշարունակվեն չափվել ամորտիզացված արժեքով:

բ) Արժեզրկում

ՖՀՄՍ 9-ը պահանջում է Բանկից ճանաչել պահուստ ամորտիզացված արժեքով կամ իրական արժեքով՝ այլ համապարփակ եկամտի միջոցով չափվող բոլոր պարտքային ֆինանսական ակտիվների, ինչպես նաև վարկային պարտավորվածությունների և երաշխիքների գծով ակնկալվող վարկային կորուստների (ԱՎԿ) համար: Պահուստը որոշվում է ԱՎԿ-ի հիման վրա, որը կապված է հաջորդ 12 ամիսների ընթացքում դեֆոլտի հավանականության հետ, բացառությամբ այն դեպքերի, երբ ակտիվի սկզբնական ճանաչումից հետո տեղի է ունեցել վարկային ռիսկի նշանակալի աճ: Այդ դեպքում պահուստը հիմնված է ակտիվի ամբողջ ժամկետի ընթացքում ԱՎԿ-ի վրա:

Եթե ֆինանսական ակտիվը համապատասխանում է գնված կամ ստեղծած արժեզրկված ֆինանսական ակտիվի սահմանմանը, ապա պահուստը հաշվարկվում է ակտիվի ամբողջ ժամկետի ընթացքում ԱՎԿ-ի փոփոխության հիման վրա: Այս փուլում Բանկը ավարտել է սեզմենտավորումը, համաձայն որի վարկային պորտֆելը կբաժանվի երեք մասերի ԱՎԿ-ի հաշվարկման համար՝ իրավաբանական անձանց տրված վարկեր, հիփոթեք և այլ մանրածախ/սպառողական վարկեր: PD, EAD and LDG մոդելները ավարտական փուլում են: Մակրոտնտեսական ցուցանիշները, որոնք պետք է օգտագործվեն PD մոդելներում, ևս համաձայնեցված են և ներկայումս վերջնական թեստավորման փուլում են: ԱՎԿ-ի կանխատեսման համար Բանկը հաշվի կառնի երեք սցենարներ՝ հիմնական, լավատեսական և վատատեսական:

ՖՀՄՍ 15 «Հաճախորդների հետ պայմանագրերից հասույթ»

ՖՀՄՍ 15-ը հրապարակել է 2014 թ. -ի մայիսին և փոփոխվել 2016 թ. -ի ապրիլին: Այն կփոխարինի հասույթի ճանաչման ՖՀՄՍ-ների ներկայիս բոլոր պահանջներին: 2018 թվականի հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար պահանջվում է լիարժեք հետընթաց կիրառություն կամ փոփոխված հետընթաց կիրառություն: Բանկը նախատեսում է ընդունել նոր ստանդարտը՝ փոփոխված հետընթաց կիրառման եղանակով՝ ճանաչելով անցման կուտակային ազդեցությունը տարեսկզբի չբաշխված շահույթում 2018 թվականի հունվարի 1-ին, առանց վերահաշվարկելու համեմատական տեղեկատվությունը:

ՖՀՄՍ 15-ը սահմանում է հինգ քայլերի մոդել՝ հաճախորդների հետ պայմանագրերից հասույթի հաշվառման համար: ՖՀՄՍ 15-ի համաձայն՝ հասույթը պետք է ճանաչվի փոխհատուցման գումարի չափով, որի նկատմամբ ընկերությունն ակնկալում է ստանալ իրավունք՝ հաճախորդին ապրանքներ և ծառայություններ փոխանցելու դիմաց: Սակայն, տոկոսային եկամուտները և միջնորդավճարները, որոնք ֆինանսական գործիքների և վարձակալության անբաժան մաս են կազմում, կշարունակեն գտնվել ՖՀՄՍ 15-ի շրջանակներից դուրս և կկարգավորվեն այլ կիրառելի ստանդարտներով (օր.՝ ՖՀՄՍ 9 և ՖՀՄՍ 16՝ «Վարձակալություն»): Արդյունքում նոր ստանդարտի ընդունումը ազդեցություն չի ունենա Բանկի հասույթի մեծ մասի վրա:

Բանկը ներկայումս չի ակնկալում էական ազդեցություն ՖՀՄՍ 15-ի ընդունման գծով:

3. Հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականությունների ամփոփում (շարունակություն)

(h) Դեռևս չկիրառվող նոր ստանդարտներ և մեկնաբանություններ (շարունակություն)

ՖՀՄՍ 2 Բաժնետոմսերի վրա հիմնված վճարումների գործարքների դասակարգումը և չափումը.

Փոփոխություններ ՖՀՄՍ 2-ում:

ՀՀՄՄ-ն թողարկել է ՖՀՄՍ 2 «Բաժնետոմսերի վրա հիմնված վճարումներ» ստանդարտի փոփոխությունները, որոնք վերաբերում են երեք հիմնական ոլորտների. իրավունքի առաջացման պայմանների ազդեցությունը դրամական միջոցներով մարվող բաժնետոմսերի վրա հիմնված վճարման գործարքների վրա, ոչ ռեզիդենտի շահութահարկի գծով պարտավորությունների հաշվանցման հնարավորությամբ բաժնետոմսերի վրա հիմնված վճարման գործարքների դասակարգումը, և հաշվառումը, երբ բաժնետոմսերի վրա հիմնված վճարման գործարքների պայմանների փոփոխության հետևանքով դրանց դասակարգումը փոխվում է դրամական միջոցներով մարվողից բաժնային գործիքներով մարվողների:

Ընկերությունները պետք է կիրառեն փոփոխություններն առանց նախորդ ժամանակաշրջանների վերահաշվարկման, սակայն հետընթաց կիրառությունը թույլատրվում է, եթե փոփոխությունները կիրառվում են բոլոր երեք ոլորտների նկատմամբ, և այլ պահանջները բավարարվում են:

Փոփոխությունն ուժի մեջ է մտնում 2018թ. -ի հունվարի 1-ից հետո սկսվող հաշվետու ժամանակաշրջանների համար: Վաղաժամկետ կիրառումը թույլատրելի է: Բանկը ներկայումս չի ակնկալում էական ազդեցություն փոփոխությունների ընդունման հետևանքով:

ՖՀՄՍ 16 «Վարձակալություն»

ՖՀՄՍ 16-ը թողարկվել է 2016 թ. -ի հունվարին և փոխարինում է ՀՀՄՍ 17-ին՝ «Վարձակալություն», ՖՀՄՄ 4-ին՝ «Համաձայնություններում վարձակալության առկայության որոշում», ՄՄԿ 15-ին՝ «Գործառնական վարձակալություն. խրախուսող պայմաններ» և ՄՄԿ 27-ին՝ «Վարձակալության իրավական ձև ներառող գործարքների բովանդակության գնահատումը»: ՖՀՄՍ 16-ը սահմանում է վարձակալության ճանաչման, չափման, ներկայացման և բացահայտման սկզբունքները և պահանջում է վարձակալներին հաշվառել բոլոր վարձակալությունները հաշվեկշռային միասնական մոդելի հիման վրա՝ ՀՀՄՍ 17-ի ֆինանսական վարձակալության հաշվառման նման: Ստանդարտը ներառում է վարձակալության ճանաչման երկու բացառություն՝ ցածրարժեք ակտիվների վարձակալություններ և կարճաժամկետ վարձակալություններ (այսինքն, 12 ամիս կամ պակաս ժամկետով վարձակալություններ): Վարձակալության ժամկետի մեկնարկի ամսաթվի դրությամբ վարձակալը պետք է ճանաչի պարտավորություն՝ վարձակալության վճարումները կատարելու համար (այսինքն, վարձակալության պարտավորություն) և ակտիվ, որը ներկայացնում է վարձակալության ժամկետի ընթացքում ակտիվի օգտագործման իրավունքը (այսինքն, ակտիվը՝ օգտագործման իրավունքի ձևով): Վարձակալները պետք է առանձին ճանաչեն վարձակալության պարտավորության գծով տոկոսները և օգտագործման իրավունքի ձևով ակտիվի ամորտիզացիայի գծով ծախսերը:

Վարձակալներից նաև կպահանջվի վերագնահատել վարձակալության գծով պարտավորությունները որոշակի իրադարձությունների տեղի ունենալու դեպքում (օրինակ, վարձակալության ժամկետի փոփոխություն, ապագա վարձակալության վճարների փոփոխություն, որը պայմանավորված է այդ վճարումների որոշման համար օգտագործվող ինդեքսի կամ փոխարժեքի փոփոխությամբ): Դեպքերի մեծ մասում վարձակալը պետք է ճանաչի վարձակալության պարտավորության վերագնահատումը՝ որպես օգտագործման իրավունքի ձևով ակտիվի ճշգրտում:

ՖՀՄՍ 16-ով վարձատուների կողմից հաշվառումը զգալիորեն չի փոխվել ներկայիս ՀՀՄՍ 17-ի համեմատ: Վարձատուները կշարունակեն դասակարգել բոլոր վարձակալությունները՝ օգտագործելով ՀՀՄՍ 17-ի դասակարգման սկզբունքները, և առանձնացնել վարձակալության երկու տեսակ՝ գործառնական և ֆինանսական վարձակալություններ:

ՖՀՄՍ 16-ը նաև պահանջում է վարձակալներին և վարձատուներին բացահայտել ավելի շատ տեղեկատվություն, քան ՀՀՄՍ 17-ը:

ՖՀՄՍ 16-ը ուժի մեջ է մտնում 2019 թվականի հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող հաշվետու ժամանակաշրջանների համար: Վաղաժամկետ կիրառումը թույլատրվում է, բայց ոչ նախքան կազմակերպությունը կսկսի կիրառել ՖՀՄՍ 15-ը: Վարձակալը կարող է կիրառել ստանդարտը ամբողջական հետընթաց կամ փոփոխված հետընթաց մոտեցմամբ:

3. Հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականությունների ամփոփում (շարունակություն)

(h) Դեռևս չկիրառվող նոր ստանդարտներ և մեկնաբանություններ (շարունակություն)

2018 թ. -ին Բանկը կշարունակի գնահատել \$ՀՄՍ 16-ի հնարավոր ազդեցությունը իր ֆինանսական հաշվետվությունների վրա:

Տարեկան բարելավումներ 2014-2016 ժամանակահատված (թողարկված 2016թ. դեկտեմբերին)

Բարելավումները ներառում են.

\$ՀՄԿԿ Մեկնաբանություն 22 – «Արտարժույթով գործարքներ և կանխավճարված փոխհատուցում»

Մեկնաբանությունը հստակեցնում է, որ ոչ դրամային ակտիվի և ոչ դրամային պարտավորության ապաճանաչման ժամանակ կանխավճարի ստացման կամ փոխանցման արդյունքում առաջացող համապատասխան ակտիվի, ծախսերի և եկամուտների (կամ դրանց մի մասի) սկզբնական ճանաչման համար օգտագործվող սկիզբ փոխարժեքը որոշելիս գործարքի ամսաթիվն այն ամսաթիվն է, երբ կազմակերպությունը սկզբնապես ճանաչում է կանխավճարված փոխհատուցումից առաջացող ոչ դրամային ակտիվը կամ ոչ դրամային պարտավորությունը: Մեկնաբանությունը ուժի մեջ է մտնում 2018 թվականի հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող հաշվետու ժամանակաշրջանի համար: Քանի որ Բանկի ընթացիկ մոտեցումը համապատասխանում է մեկնաբանությանը, Բանկը չի ակնկալում էական ազդեցություն իր ֆինանսական հաշվետվությունների վրա:

\$ՀՄՄԿ մեկնաբանություն 23՝ «Անորոշություն շահութահարկի հաշվարկման կանոնների վերաբերյալ»

Մեկնաբանությունը վերաբերում է շահութահարկի հաշվառմանը, երբ հարկի հաշվարկը պարունակում է անորոշություն, որն ազդում է ՀՀՄՍ 12-ի կիրառման վրա: Մեկնաբանությունը չի կիրառվում ՀՀՄՍ 12-ի շրջանակից դուրս հարկերի կամ հավաքագրումների վրա, ինչպես նաև չի պարունակում կոնկրետ պահանջներ անորոշ հարկային մեկնաբանությունների հետ կապված տոկոսների և տույժերի վերաբերյալ:

Կազմակերպությունը պետք է որոշի. արդյոք յուրաքանչյուր անորոշ հարկային մեկնաբանություն պետք է դիտարկել առանձին թե մեկ կամ մի քանի այլ անորոշ հարկային մեկնաբանությունների հետ միասին: Պետք է կիրառել այն մոտեցումը, որն ավելի լավ է կանխատեսում անորոշության հստակեցման արդյունքը: Մեկնաբանությունը նաև վերաբերում է հարկային մարմինների կողմից կատարված հարկային մեկնաբանությունների դիտարկումներին վերաբերող ելթադրություններին, որոնք արվում են կազմակերպության կողմից, ինչպես նաև այն հանգամանքին, թե ինչպես է կազմակերպությունը դիտարկում փաստերի և հանգամանքների փոփոխությունները:

Մեկնաբանությունն ուժի մեջ է մտնում 2019 թվականի հունվարի 1-ից կամ դրանից հետո սկսվող հաշվետու ժամանակաշրջանների համար, սակայն գոյություն ունեն որոշակի անցումային պարզեցումներ: Բանկը կսկսի կիրառել մեկնաբանությունը գործողության մեջ մոտեցում օրվանից: Քանի որ Բանկը գործում է բարդ հարկային միջավայրում, մեկնաբանության կիրառումը կարող է ազդել նրա ֆինանսական հաշվետվությունների և պահանջվող ծանոթագրությունների վրա: Բացի այդ, Բանկին կարող է անհրաժեշտ լինել մշակել գործընթացներ և ընթացակարգեր տեղեկատվություն ստանալու համար, որն անհրաժեշտ է մեկնաբանությունը ժամանակին կիրառելու համար:

4. Սեզմենտների վերաբերյալ տեղեկատվություն

Կառավարչական նպատակներով և հիմնվելով մատուցվող ապրանքների և ծառայությունների տարատեսակների վրա՝ Բանկը բաժանվում է հետևյալ երեք սեզմենտների.

Մանրաձախ բանկային գործունեություն	Ֆիզիկական անձանց և փոքր ու միջին ձեռնարկությունների ավանդներ, սպառողական վարկերի տրամադրում, օվերդրաֆտների, վարկային քարտերի սպասարկում, փոքր և միկրո վարկեր:
Կորպորատիվ բանկային գործունեություն	Կորպորատիվ և ինստիտուցիոնալ հաճախորդներին վարկերի տրամադրում, ավանդների և ընթացիկ հաշիվների բացում և սպասարկում:
Առևտրային և ներդրումային բանկային գործունեություն	Գանձապետական և ֆինանսական, ներդրումային բանկային ծառայություններ և այլ կենտրոնական գործառնություններ:

4. **Սեզմենտների վերաբերյալ տեղեկատվություն (շարունակություն)**

Ռեսուրսների բաշխման և գործունեության գնահատման նպատակով դեկավարությունը հետևում է իր բիզնես միավորների գործառնական արդյունքներին առանձին-առանձին: Շահութահարկը կառավարվում է նախքան շահութահարկը շահույթի հիման վրա և բաշխվում է գործառնական սեզմենտների մեջ:

Գործառնական սեզմենտների միջև ներքին փոխանցումների գները համապատասխանում են շուկայական պայմաններին, ինչպես երրորդ կողմերի հետ գործարքներում:

2017 և 2016թթ. ընթացքում արտաքին գործընկերոջից կամ հաճախորդից ստացված և Բանկի ընդհանուր հասույթի 10% և ավելի գերազանցող հասույթով որևէ գործարք չի գրանցվել:

Ստորև նշված աղյուսակները ներկայացնում են Բանկի գործառնական սեզմենտների գծով եկամտի և շահույթի, ինչպես նաև առանձին ակտիվների և պարտավորությունների վերաբերյալ տեղեկատվություն:

	<i>Մանրաձախ բանկային գործունեու- թյուն հազ. դրամ</i>	<i>Կորպորատիվ բանկային գործունեու- թյուն հազ. դրամ</i>	<i>Առևտրային և ներդրումային բանկային գործունեու- թյուն հազ. դրամ</i>	<i>Ընդամենը հազ. դրամ</i>
2017				
Զուտ տոկոսային եկամուտ (ծախս)	(2,737,694)	16,375,403	4,726,600	18,364,309
Զուտ ոչ տոկոսային եկամուտ	1,482,223	2,833,507	3,000,275	7,316,005
Միջսեզմենտային եկամուտ (ծախս)	12,066,784	(8,034,602)	(4,032,182)	-
Գործառնական շահույթ	10,811,313	11,174,308	3,694,693	25,680,314
Արժեզրկումից կորուստներ	(703,438)	(5,108,206)	-	(5,811,644)
Մաշվածություն և ամորտիզացիա	(647,915)	(108,856)	(111,072)	(867,843)
Անձնակազմի գծով և այլ ընդհանուր վարչական ծախսեր	(5,941,305)	(2,356,313)	(1,166,513)	(9,464,131)
Շահույթ մինչև շահութահարկ	3,518,655	3,600,933	2,417,108	9,536,696
Շահութահարկի գծով ծախս	(696,119)	(712,397)	(478,193)	(1,886,709)
Հաշվետու տարվա շահույթ	2,822,536	2,888,536	1,938,915	7,649,987
	<i>Մանրաձախ բանկային գործունեու- թյուն հազ. դրամ</i>	<i>Կորպորատիվ բանկային գործունեու- թյուն հազ. դրամ</i>	<i>Առևտրային և ներդրումային բանկային գործունեու- թյուն հազ. դրամ</i>	<i>Ընդամենը հազ. դրամ</i>
2017				
Տոկոսակիր ֆինանսական ակտիվներ	78,557,262	412,689,748	74,240,375	565,487,385
Տոկոսակիր ֆինանսական պարտավորություններ	248,023,707	335,400,570	17,535,534	600,959,811

Տոկոսակիր ակտիվները ներառում են վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվները, բանկերին տրված տոկոսակիր վարկերն և փոխառությունները, հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարները, հաճախորդներին տրված համախառն վարկերը և փոխատվությունները և մինչև մարման ժամկետը պահվող ներդրումները:

Տոկոսակիր պարտավորությունները ներառում են բանկերի ավանդներն ու մնացորդները (բացառությամբ ոստրո հաշիվների), հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարները, հաճախորդների ընթացիկ հաշիվներն ու ավանդները, թողարկված պարտքային արժեթղթերը, այլ փոխառու միջոցները ու ստորադաս փոխառությունները:

4. **Սեզմենտների վերաբերյալ տեղեկատվություն (շարունակություն)**

2017թ. -ին Բանկը վերանայել է ներքին միջոցների տրանսֆերային գնագոյացման քաղաքականությունը (սեփական կապիտալի բաշխումը սեզմենտների միջև փոխվել է) : Այս փոփոխությունը իր ազդեցությունն է ունեցել 2017թ.-ի միջսեզմենտային եկամտի/(ծախսի) վրա: 2016թ.-ի սեզմենտային տեղեկատվությունը վերաներկայացվել է՝ նոր մեթոդոլոգիայով համադրելի լինելու համար:

2016	<i>Մանրաձախ բանկային գործունեություն հազ. դրամ</i>	<i>Կորպորատիվ բանկային գործունեություն հազ. դրամ</i>	<i>Առևտրային և ներդրումային բանկային գործունեություն հազ. դրամ</i>	<i>Ընդամենը հազ. դրամ</i>
Զուտ տոկոսային եկամուտ (ծախս)	(2,052,253)	13,801,679	3,125,611	14,875,037
Զուտ ոչ տոկոսային եկամուտ	1,470,570	3,058,723	3,181,067	7,710,360
Միջսեզմենտային եկամուտ (ծախս)	8,899,636	(6,742,078)	(2,157,558)	–
Գործառնական շահույթ	8,317,953	10,118,324	4,149,120	22,585,397
Արժեզրկումից կորուստներ	(749,239)	(4,685,162)	–	(5,434,401)
Մաշվածություն և ամորտիզացիա	(633,600)	(85,826)	(59,068)	(778,494)
Անձնակազմի գծով և այլ ընդհանուր վարչական ծախսեր	(4,941,067)	(2,427,731)	(1,274,408)	(8,643,206)
Շահույթ մինչև շահութահարկ	1,994,047	2,919,605	2,815,644	7,729,296
Շահութահարկի գծով ծախս	(100,195)	(867,756)	(554,659)	(1,522,610)
Հաշվետու տարվա շահույթ	1,893,852	2,051,849	2,260,985	6,206,686

2016	<i>Մանրաձախ բանկային գործունեություն հազ. դրամ</i>	<i>Կորպորատիվ բանկային գործունեություն հազ. դրամ</i>	<i>Առևտրային և ներդրումային բանկային գործունեություն հազ. դրամ</i>	<i>Ընդամենը հազ. դրամ</i>
Տոկոսակիր ֆինանսական ակտիվներ	60,254,233	461,773,974	58,613,279	580,641,486
Տոկոսակիր ֆինանսական պարտավորություններ	172,461,524	472,310,438	3,108,720	647,880,682

Տոկոսակիր ակտիվները ներառում են վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվները, բանկերին տրված տոկոսակիր վարկերն և փոխառությունները, հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարները, հաճախորդներին տրված համախառն վարկերը և փոխատվությունները և մինչև մարման ժամկետը պահվող ներդրումները:

Տոկոսակիր պարտավորությունները ներառում են բանկերի ավանդներն ու մնացորդները (բացառությամբ ոստրո հաշիվների), հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարները, հաճախորդների ընթացիկ հաշիվներն ու ավանդները, այլ փոխառու միջոցները ու ստորադաս փոխառությունները:

Աշխարհագրական տեղեկատվություն

Բանկն իր հիմնական գործունեությունը իրականացնում է Հայաստանի Հանրապետությունում: Բացի ֆինանսական գործիքներից, Բանկը չունի ՀՀ-ից տարածքից դուրս այլ ոչ ընթացիկ ակտիվներ:

5. Զուտ տոկոսային եկամուտ

	<i>2017</i> <i>հազ. դրամ</i>	<i>2016</i> <i>հազ. դրամ</i>
Տոկոսային եկամուտ		
Իրավաբանական և ֆիզիկական անձանց տրված վարկեր	43,010,061	36,883,039
Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ	3,016,721	1,853,537
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ	1,059,197	1,228,587
Հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ	581,451	611,213
Ֆակտորինգի գծով ստացվելիք գումարներ	538,402	768,153
Ակրեդիտիվների գծով ստացվելիք գումարներ	519,822	752,499
Բանկերին տրված վարկեր և փոխատվություններ	308,430	265,806
Շահույթի կամ վնասի միջոցով չափվող պարտքային ֆինանսական գործիքներ	40,496	-
Այլ	76,079	44,421
	<u>49,150,659</u>	<u>42,407,255</u>
Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարներ	146,539	217,010
	<u>49,297,198</u>	<u>42,624,265</u>
Տոկոսային ծախս		
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	15,143,588	15,765,834
Այլ փոխառու միջոցներ և ստորադաս փոխառություններ	10,045,393	8,766,471
Բանկերի ավանդներ և մնացորդներ	3,504,848	1,672,840
Թողարկված պարտքային արժեթղթեր	1,770,695	552,984
Ակրեդիտիվների գծով վճարվելիք գումարներ	408,406	445,940
Հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ	30,182	520,236
Այլ	29,777	24,923
	<u>30,932,889</u>	<u>27,749,228</u>
Զուտ տոկոսային եկամուտ	<u>18,364,309</u>	<u>14,875,037</u>

6. Միջնորդավճարների գծով եկամուտ

	<i>2017</i> <i>հազ. դրամ</i>	<i>2016</i> <i>հազ. դրամ</i>
Պլաստիկ քարտերի սպասարկման ծառայություններ	1,618,717	1,274,114
Դրամական փոխանցումներ	755,527	519,754
Կանխիկացման, հաշիվների սպասարկման և հեռահար համակարգային սպասարկման ծառայություններ	687,960	465,820
Երաշխիքների և ակրեդիտիվների թողարկում	258,080	319,171
Բրոկերային ծառայություններ	132,355	184,142
Հաշվարկային գործառնություններ	83,937	54,782
Այլ	40,449	48,332
	<u>3,577,025</u>	<u>2,866,115</u>

7. Միջնորդավճարների գծով ծախս

	<i>2017</i> <i>հազ. դրամ</i>	<i>2016</i> <i>հազ. դրամ</i>
Պլաստիկ քարտերի սպասարկման ծառայություններ	592,739	407,321
Դրամական փոխանցումներ	120,513	104,680
Երաշխիքների և ակրեդիտիվների թողարկում	48,203	71,176
Այլ	30,435	27,152
	<u>791,890</u>	<u>610,329</u>

8. Գեսիայից օգուտ

2016 թվականի ընթացքում Բանկը պահանջի իրավունքի զիջման (ցեսիայի) պայմանագրեր է կնքել չորս գործընկերոջ հետ և նրանց փոխանցել տասը պարտատիրոջ գծով վարկեր և այլ ստացվելիք գումարներ (այդ թվում՝ ամբողջապես դուրս գրված մնացորդներ) 2,130,029 հազար ՀՀ դրամ ընդհանուր համախառն անվանական արժեքով՝ 1,801,635 հազար ՀՀ դրամ իրական արժեքով ապագայում ստացվելիք հատուցման դիմաց:

Ղեկավարությունը եզրակացրել է, որ Բանկը փոխանցված վարկերի և այլ ստացվելիք գումարների գծով փոխանցել է բոլոր ռիսկերն ու օգուտները և այդ վարկերի և այլ ստացվելիք գումարների հաշվեկշռային արժեքի (704,811 հազար ՀՀ դրամ) ու ցեսիայի պայմանագրերի կնքման ամսաթվերի դրությամբ ստացվելիք հատուցման իրական արժեքի միջև տարբերությունը ճանաչել է որպես ցեսիայից օգուտ՝ 1,096,824 հազար ՀՀ դրամ գումարի չափով: Այս ֆինանսական հաշվետվությունների ստորագրման ամսաթվի դրությամբ Բանկին վճարվել է ստացվելիք հատուցման մի մասը՝ 1,582,855 հազար ՀՀ դրամ գումարի չափով:

9. Զուտ (վնաս)/ օգուտ իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներից

Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներից զուտ վնասը՝ 1,976,234 հազար ՀՀ դրամ գումարով (2016թ.՝ զուտ օգուտ՝ 1,055,909 հազար ՀՀ դրամ) ներառում է արտարժույթի և տոկոսադրույքի գծով ածանցյալ գործիքների վերազնահատում, որոնք օգտագործվում են բաց արժույթային և տոկոսադրույքների դիրքերը տնտեսապես հեջավորելու համար:

10. Արտարժույթային գործառնություններից զուտ օգուտ

	<i>2017</i> <i>հազ. դրամ</i>	<i>2016</i> <i>հազ. դրամ</i>
Սփոթ գործարքներից զուտ օգուտ	3,601,374	2,724,237
Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների վերազնահատումից զուտ օգուտ/(վնաս)	2,213,961	(258,894)
	<u>5,815,335</u>	<u>2,465,343</u>

11. Այլ գործառնական եկամուտ

	<i>2017</i> <i>հազ. դրամ</i>	<i>2016</i> <i>հազ. դրամ</i>
Տույժերի և տուգանքների գծով եկամուտ	1,276,206	1,337,303
Եկամուտ խորհրդատվական ծառայություններից	511,270	24,900
Այլ եկամուտ	372,065	199,437
	<u>2,159,541</u>	<u>1,561,640</u>

12. Այլ գործառնական ծախսեր

	<i>2017</i> հազ. դրամ	<i>2016</i> հազ. դրամ
Վճարային համակարգերի գծով ծախսեր	487,142	359,890
Երաշխիքային վճարներ ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամին	408,010	311,351
Ծրագրային ապահովման սպասարկում	288,189	250,323
Գործակալական վճարներ	172,030	72,267
Բրոքերային համակարգերի օգտագործման միջնորդավճարներ	94,384	125,533
Ֆինանսական համակարգի հաշտարար	71,545	51,380
Ինկասացիա	52,318	48,134
Մոնիթորինգի ծառայություններ	39,694	47,800
Այլ ծախսեր	279,168	194,811
	1,892,480	1,461,489

13. Արժեզրկումից կորուստներ

	<i>2017</i> հազ. դրամ	<i>2016</i> հազ. դրամ
Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ	5,688,706	5,396,448
Այլ ակտիվներ	122,938	37,953
	5,811,644	5,434,401

14. Այլ ընդհանուր վարչական ծախսեր

	<i>2017</i> հազ. դրամ	<i>2016</i> հազ. դրամ
Գործառնական վարձակալության գծով ծախսեր	1,042,965	1,019,034
Մաշվածություն և ամորտիզացիա	867,843	778,494
Գովազդ և մարքեթինգ	674,755	631,039
Վերանորոգման և պահպանման ծախսեր	316,976	258,883
Անձնակազմի գծով այլ ծախսեր	189,304	163,086
Մասնագիտական ծառայություններ	157,877	98,849
Անվտանգության ծառայություն	136,252	113,331
Գործուղման ծախսեր	117,628	87,173
Կապի և տեղեկատվական ծառայություններ	106,513	102,925
Էլեկտրականության և կոմունալ ծախսերի վճարներ	94,490	87,427
Բարեգործություն և հովանավորություն	90,384	118,550
Ուսուցում և կրթություն	39,044	33,370
Գրասենյակային ծախսեր	30,770	28,421
Ապահովագրություն	30,106	29,501
Հարկեր (բացառությամբ աշխատավարձին վերաբերող հարկերի և շահութահարկի)	25,497	32,081
Ներկայացուցչական ծախսեր	16,902	20,532
Այլ	153,855	143,714
	4,091,161	3,746,410

15. Շահութահարկի գծով ծախս

	2017 <i>հազ. դրամ</i>	2016 <i>հազ. դրամ</i>
Ընթացիկ շահութահարկի գծով ծախս		
Ընթացիկ հարկային ծախս	2,353,859	765,182
Նախորդ ժամանակաշրջանի շահութահարկի ճշգրտում	(41,802)	(66,398)
Հետաձգված հարկի գծով ծախս		
Հետաձգված հարկային ակտիվների և պարտավորությունների շարժ` ժամանակավոր տարբերությունների առաջացման և հակադարձման հետևանքով	(425,348)	823,826
Ընդամենը ծախս շահութահարկի գծով	1,886,709	1,522,610

2017թ. ընթացիկ և հետաձգված հարկերի գծով կիրառելի հարկային դրույքը կազմում է 20% (2016թ-ին` 20%):

Արդյունավետ հարկային դրույքի համաձայնեցում

	2017 <i>հազ. դրամ</i>	%	2016 <i>հազ. դրամ</i>	%
Շահույթ մինչև հարկումը	9,536,696		7,729,296	
Շահութահարկ` կիրառելի հարկային դրույքով	1,907,339	20%	1,545,859	20%
Նախորդ տարիների շահութահարկի զուտ արժեքի ճշգրտում	(41,802)		(66,398)	
Զուտ օգուտ ֆինանսական ակտիվների և պարտավորությունների վերազնահատումից և զուտ վնաս իրական արժեքով` շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներից (չհարկվող մաս)	10,338		(17,932)	
Չնվազեցվող ծախսեր	10,834		61,081	
Ընդամենը ծախս շահութահարկի գծով	1,886,709		1,522,610	

(i) Հետաձգված հարկային ակտիվներ և պարտավորություններ

Ֆինանսական հաշվետվությունների պատրաստման նպատակներով օգտագործվող ակտիվների ու պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և հարկային նպատակներով օգտագործվող զուտարների միջև ժամանակավոր տարբերություններն առաջացնում են զուտ հետաձգված հարկային պարտավորություններ 2017թ. և 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

Գործող հարկային օրենսդրության համաձայն նվազեցվող ժամանակավոր տարբերությունները մարման ժամկետ չունեն:

15. **Շահութահարկի գծով ծախս (շարունակություն)**

Արդյունավետ հարկային դրույքի համաձայնեցում (շարունակություն)

Ստորև ներկայացված է ժամանակավոր տարբերությունների շարժը 2017թ. և 2016թ. ընթացքում:

2017 հազ. դրամ	Մնացորդն առ 2017թ. հունվարի 1	Շահույթում կամ վնասում ճանաչված	Այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում ճանաչված	Մնացորդն առ 2017թ. դեկտեմբերի 31
Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներ	(102,874)	72,593	-	(30,281)
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ	(76,977)	-	(7,579)	(84,556)
Այլ ստացվելիք գումարների գծով պահուստներ և այլ պահուստներ	(197,664)	(91)	-	(197,755)
Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ	(1,336,197)	260,909	-	(1,075,288)
Հիմնական միջոցներ	(45,152)	(23,182)	-	(68,334)
Այլ ակտիվներ	10,500	14,743	-	25,243
Այլ պարտավորություններ	362,234	86,324	-	448,558
Այլ փոխառություններ	(56,742)	14,052	-	(42,690)
Ընդամենը հետաձգված հարկային պարտավորություններ	(1,442,872)	425,348	(7,579)	(1,025,103)
2016 հազ. դրամ	Մնացորդն առ 2016թ. հունվարի 1	Շահույթում կամ վնասում ճանաչված	Այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում ճանաչված	Մնացորդն առ 2016թ. դեկտեմբերի 31
Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներ	20,694	(123,568)	-	(102,874)
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ	62,825	-	(139,802)	(76,977)
Այլ ստացվելիք գումարների գծով պահուստներ և այլ պահուստներ	65,746	(263,410)	-	(197,664)
Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ	(1,010,351)	(325,846)	-	(1,336,197)
Հիմնական միջոցներ	14,379	(59,531)	-	(45,152)
Այլ ակտիվներ	13,104	(2,604)	-	10,500
Այլ պարտավորություններ	354,359	7,875	-	362,234
Այլ փոխառություններ	-	(56,742)	-	(56,742)
Ընդամենը հետաձգված հարկային պարտավորություններ	(479,244)	(823,826)	(139,802)	(1,442,872)

16. **Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ**

	2017 հազ. դրամ	2016 հազ. դրամ
Կանխիկ միջոցներ	18,139,767	12,826,023
Նոստրո հաշիվներ ՀՀ ԿԲ-ում՝ ներառյալ պարտադիր պահուստները	76,917,450	104,878,940
Նոստրո հաշիվներ այլ բանկերում		
- «ԱԱ-»-ից «ԱԱ+» վարկանիշով	12,922	17,767
- «Ա-»-ից «Ա+» վարկանիշով	7,406,733	10,125,848
- «ԲԲ-»-ից «ԲԲԲ+» վարկանիշով	5,095,603	7,210,640
- վարկանիշ չունեցող	43,893	221,654
Ընդամենը նոստրո հաշիվներ այլ բանկերում	12,559,151	17,575,909
Ընդամենը դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	107,616,368	135,280,872

16. Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ (շարունակություն)

Բանկերը պարտավոր են ունենալ դեպոզիտներով դրամական միջոցներ (պարտադիր պահուստ) ՀՀ ԿԲ-ում ՀՀ դրամով ներգրավված գումարների 2%-ի չափով և արտարժույթով ներգրավված գումարների 18%-ի չափով: Օրենսդրությամբ չի սահմանափակվում այդ միջոցների ելքագրումը, սակայն եթե Բանկը չի ապահովում ՀՀ դրամով ներգրավված գումարների գծով նվազագույն միջին ամսական գումարը և արտարժույթով ներգրավված գումարների գծով նվազագույն երկշաբաթյա գումարը, ապա կարող են կիրառվել պատժամիջոցներ:

2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ ԿԲ-ում նուստրո հաշիվների մեջ ներառված պարտադիր պահուստի գումարը կազմում է 66,516,596 հազար ՀՀ դրամ (2016թ.՝ 48,969,250 հազար ՀՀ դրամ):

Բանկերի վերոնշյալ վարկանիշները նշված են ըստ Fitch rating agency-ի վարկանշման:

2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկը ունի մեկ այլ բանկում դրամական միջոցներ, որի մնացորդը գերազանցում է կապիտալի 10%-ը (2016թ.՝ մեկ): Այդ մնացորդի համախառն արժեքը 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմում է 7,406,733 հազար ՀՀ դրամ (2016թ.՝ 7,041,151 հազար ՀՀ դրամ):

2017թ. դեկտեմբերի 31-ի և 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ ԿԲ-ում Բանկի մնացորդները գերազանցում են կապիտալի 10%:

17. Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներ

	<i>2017 հազ. դրամ</i>	<i>2016 հազ. դրամ</i>
Ակտիվներ		
Պարտատոմսեր և ֆիքսված եկամուտով այլ առևտրային գործիքներ		
ՀՀ պետական արժեթղթեր	1,443,746	-
ՀՀ պետական եվրոպարտատոմսեր	521,780	-
Հայկական կազմակերպությունների կորպորատիվ պարտատոմսեր	1,049,673	-
Ածանցյալ ֆինանսական գործիքներ		
Տոկոսադրույքի սվոպեր	62,835	40,590
Արտարժույթի սվոպեր	890,030	3,089,481
	<u>3,968,064</u>	<u>3,130,071</u>
Պարտավորություններ		
Ածանցյալ ֆինանսական գործիքներ		
Արտարժույթի սվոպեր	686,306	2,535,283
	<u>686,306</u>	<u>2,535,283</u>

Տոկոսադրույքի սվոպեր

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված են տոկոսադրույքի սվոպի պայմանագրերի գումարները 2017թ. և 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ ներառյալ իրական արժեքը և անվանական գումարը: Ստորև ներկայացված արտարժույթով արտահայտված գումարները փոխարկվում են հաշվետու ժամանակաշրջանի դրությամբ գործող փոխարժեքներով: Այս՝ դեռևս չմարված պայմանագրերի գծով չիրացված օգուտը և վնասը ճանաչվում է համապատասխանաբար շահույթում կամ վնասում:

<i>Իրական արժեք</i>		<i>Անվանական գումար</i>	
<i>2017</i>	<i>2016</i>	<i>2017</i>	<i>2016</i>
<i>հազ. դրամ</i>	<i>հազ. դրամ</i>	<i>հազ. դրամ</i>	<i>հազ. դրամ</i>

ԱՄՆ դոլարով ֆիքսված տոկոսադրույքի վճարում, ԱՄՆ դոլարով լողացող տոկոսադրույքի ստացում	62,835	40,590	6,931,432	11,218,609
--	--------	--------	-----------	------------

2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկն ունի տոկոսադրույքի սվոպի չորս պայմանագիր: Այս պայմանագրերի համաձայն՝ Բանկը վճարում է 2.1350%, 1.3125%, 0.9450% և 1.5850% ֆիքսված տոկոսադրույքներ և ստանում է 6 ամիս USD-LIBOR-BBA (Բրիտանիայի բանկիրների ասոցիացիա) լողացող տոկոսադրույքներ՝ համապատասխանաբար յուրաքանչյուր պայմանագրի համար: Տոկոսադրույքի սվոպի պայմանագրերի մարման ժամկետը լրանում է 2018-2022թթ.:

17. Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներ (շարունակություն)

Արտարժույթի սվոպեր

2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկն ունի արտարժույթի սվոպի 30 (2016թ.՝ 19) պայմանագրեր 9 (2016թ.՝ 8) գործընկերների հետ ՀՀ դրամ և ԱՄՆ դոլար, Եվրո և Ռուսական ռուբլի արժույթներով: Այս պայմանագրերի անվանական գումարը ՀՀ դրամով արտահայտված կազմում է 91,882,316 հազար ՀՀ դրամ (2016թ.՝ 161,717,608 հազար ՀՀ դրամ):

18. Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ

	2017 <i>հազ. դրամ</i>	2016 <i>հազ. դրամ</i>
Բանկի կողմից պահվող Պարտքային և ֆիքսված եկամտով այլ գործիքներ		
- Պետական պարտատոմսեր		
ՀՀ պետական արժեթղթեր	4,712,578	7,174,650
ՀՀ պետական եվրոպարտատոմսեր	1,083,830	-
Այլ երկրների եվրոպարտատոմսեր	2,942,639	1,066,963
- Կորպորատիվ պարտատոմսեր		
Օտարերկրյա ընկերությունների կորպորատիվ պարտատոմսեր	-	3,418,111
Հայկական կազմակերպությունների կորպորատիվ պարտատոմսեր	1,042,573	642,110
Բաժնային ներդրումներ		
- Չգնանշվող բաժնային արժեթղթեր	106,458	106,458
	9,888,078	12,408,292

Վաճառքի համար մատչելի ակտիվներում ներառված են ստորև ներկայացվող չգնանշվող բաժնային արժեթղթերը:

<i>Անվանումը</i>	<i>Պրանցման երկիրը</i>	<i>Հիմնական գործունեությունը</i>	<i>Վերահսկվող %</i>		<i>2017 հազ. դրամ</i>	<i>2016 հազ. դրամ</i>
			<i>2017</i>	<i>2016</i>		
Արցախ Բանկ ՓԲԸ	Հայաստանի Հանրապետություն	Բանկային գործունեություն	1.06%	1.06%	69,250	69,250
ԱրՔա	Հայաստանի Հանրապետություն	Վճարային համակարգ	3.76%	3.76%	36,429	36,429
ՍԿԻՖՏ	Բելգիա	Դրամական փոխանցումներ	0.00%	0.00%	779	779
					106,458	106,458

Որոշելի իրական արժեք չունեցող ներդրումներ

Սկզբնական արժեքով հաշվառվող վաճառքի համար մատչելի բաժնային ներդրումները ներառում են չգնանշվող բաժնային արժեթղթերը: Այս ներդրումների համար ակտիվ շուկա գոյություն չունի, և վերջերս տեղի չեն ունեցել այնպիսի գործարքներ, որոնք կարող էին վկայություն տրամադրել դրանց ընթացիկ իրական արժեքի մասին: Ի լրումն, զեղչված դրամական միջոցների հոսքերի մեթոդի կիրառման արդյունքում ձևավորվում են մի շարք իրական արժեքներ, ինչը պայմանավորված է այս ոլորտում դրամական միջոցների ապագա հոսքերի հետ կապված անորոշությամբ:

19. Բանկերին տրված վարկեր և փոխատվություններ

	<i>2017</i> <i>հազ. դրամ</i>	<i>2016</i> <i>հազ. դրամ</i>
Պահանջներ ՀՀ ԿԲ-ի նկատմամբ		
Վարկային քարտերով գործառնությունների իրականացման գծով դեպոզիտային միջոցներ ՀՀ ԿԲ –ում	1,423,500	1,220,000
Հայկական բանկերի և վարկային կազմակերպություններ պարտքային գործիքներ		
Հայկական բանկերի և վարկային կազմակերպություններ պարտատուներ	628,936	–
Վարկեր և ավանդներ այլ բանկերի հետ		
Հայկական բանկեր	8,726,923	2,500,839
ՏՀԶԿ երկրների բանկեր	63,531	1,078,322
Օտարերկրյա այլ բանկեր	–	54,141
Ընդամենը այլ բանկերին տրված վարկեր և բանկերի ավանդներ	<u>8,790,454</u>	<u>3,633,302</u>
Ընդամենը բանկերին տրված վարկեր և փոխատվություններ	<u>10,842,890</u>	<u>4,853,302</u>

Բանկերին տրված վարկերը և փոխատվություններն արժեզրկված կամ ժամկետանց չեն:

ՏՀԶԿ երկրների բանկերի և այլ օտարերկրյա բանկերի հետ վարկերի և ավանդների մեջ ներառված 62,933 հազար ՀՀ դրամ (2016 թ.՝ 117,053 հազար ՀՀ դրամ) գումարն իրենից ներկայացնում է ակրեդիտիվների, երաշխիքների և վարկային քարտերի դիմաց գրավադրված ավանդներ:

Բանկերին տրված վարկերի և փոխատվությունների կենտրոնացում

2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկը ունի մեկ բանկում տեղաբաշխված միջոցներ (2016 թ.՝ ոչ մի բանկում), որոնց մնացորդները գերազանցում են կապիտալի 10%-ը: 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ տեղաբաշխված միջոցները կազմում են 8,726,923 հազար ՀՀ դրամ:

20. Հակադարձ հետզնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ

	<i>2017</i> <i>հազ. դրամ</i>	<i>2016</i> <i>հազ. դրամ</i>
Հայկական բանկերից և ֆինանսական կազմակերպություններից ստացվելիք գումարներ	8,675,394	6,446,797
Ընդամենը հետզնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ	<u>8,675,394</u>	<u>6,446,797</u>

Գրավ

2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հակադարձ հետզնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարների դիմաց գրավադրված էին պետական արժեթղթեր 9,112,667 հազար ՀՀ դրամ իրական արժեքով (2016 թ.՝ 6,814,064 հազար ՀՀ դրամ):

21. Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ

	2017 <i>հազ. դրամ</i>	2016 <i>հազ. դրամ</i>
Իրավաբանական անձանց տրված վարկեր	416,715,125	461,278,112
Ֆիզիկական անձանց տրված վարկեր	61,889,809	46,996,782
Ակրեդիտիվների գծով ստացվելիք գումարներ	4,129,748	7,722,748
Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարներ	1,759,470	2,101,716
Ֆակտորինգի գծով ստացվելիք գումարներ	6,752,241	4,191,244
Ընդամենը հաճախորդներին տրված համախառն վարկեր և փոխատվություններ	491,246,393	522,290,602
Արժեզրկման պահուստ	(11,605,412)	(9,071,893)
Ընդամենը հաճախորդներին տրված զուտ վարկեր և փոխատվություններ	479,640,981	513,218,709

(ա) Իրավաբանական և ֆիզիկական անձանց և տրված վարկեր

<i>Իրավաբանական անձանց տրված վարկեր</i>	2017 <i>հազ. դրամ</i>	2016 <i>հազ. դրամ</i>
Խոշոր ընկերություններին տրված վարկեր	333,102,167	384,267,796
Վարկեր փոքր և միջին ընկերություններին	83,612,958	77,010,316
Ընդամենը իրավաբանական անձանց տրված վարկեր	416,715,125	461,278,112
Ֆիզիկական անձանց տրված վարկեր		
Հիփոթեքային վարկեր	28,601,855	20,051,103
Վարկային քարտեր	19,024,780	18,403,846
Սպառողական վարկեր	11,167,704	5,454,847
Ավտոմեքենայի ձեռքբերման վարկեր	2,040,600	2,043,068
Անհատներին տրված բիզնես վարկեր	1,054,870	1,043,918
Ընդամենը ֆիզիկական անձանց տրված վարկեր	61,889,809	46,996,782
Հաճախորդներին տրված համախառն վարկեր	478,604,934	508,274,894
Արժեզրկում	(11,294,203)	(8,986,372)
Հաճախորդներին տրված զուտ վարկեր	467,310,731	499,288,522

Ստորև ներկայացված աղյուսակում բարձր վարկանիշ ունեցող վարկերը իրավաբանական անձանց տրված վարկերն են, որոնք ունեն նվազագույն մակարդակի վարկային ռիսկ, սովորաբար ապահովված բարձրակարգ գրավով (որպես գրավ են հանդիսանում դրամական միջոցներ կամ պետական երաշխիքներ): Լավ ֆինանսական վիճակ և պարտքի սպասարկման լավ պատմություն ունեցող այլ վարկառուները ընդգրկվում են ստանդարտ վարկանիշի մեջ: Ստանդարտ վարկանիշից ցածր վարկերը կազմում են անհատապես չարժեզրկված, ստանդարտից ցածր գնահատական ունեցող վարկերը:

<i>հազ. դրամ</i>	Չարժեզրկված և ոչ ժամկետանց					
	<i>Բարձր վարկանիշ 2017</i>	<i>Ստանդարտ վարկանիշ 2017</i>	<i>Ստանդարտից ցածր վարկանիշ 2017</i>	<i>Ժամկետանց, բայց չարժեզրկված 2017</i>	<i>Անհատապես արժեզրկված 2017</i>	<i>Ընդամենը 2017</i>
Իրավաբանական անձանց տրված զուտ վարկեր	34,145,112	358,105,168	579,047	3,811,355	9,298,154	405,938,836
<i>հազ. դրամ</i>	Չարժեզրկված և ոչ ժամկետանց					
	<i>Բարձր վարկանիշ 2016</i>	<i>Ստանդարտ վարկանիշ 2016</i>	<i>Ստանդարտից ցածր վարկանիշ 2016</i>	<i>Ժամկետանց, բայց չարժեզրկված 2016</i>	<i>Անհատապես արժեզրկված 2016</i>	<i>Ընդամենը 2016</i>
Իրավաբանական անձանց տրված զուտ վարկեր	145,465,085	291,807,705	2,052,570	2,871,395	10,591,029	452,787,784

21. **Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ (շարունակություն)**

(ա) Իրավաբանական և ֆիզիկական անձանց տրված վարկեր (շարունակություն)

2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ իրավաբանական անձանց տրված վարկերը ներառում են 32,150,069 հազար ՀՀ դրամի չափով կապակցված կողմերին տրամադրված վարկեր (2016թ.՝ 72,955,885 հազար ՀՀ դրամ), որոնք ապահովված են 32,204,509 հազար ՀՀ դրամի չափով ավանդներով (2016թ.՝ 73,171,153 հազար ՀՀ դրամ):

Ստորև ներկայացված է 2017թ. ընթացքում արժեզրկման գծով պահուստի շարժը՝ ըստ իրավաբանական անձանց և ֆիզիկական անձանց տրված վարկերի տեսակների.

	<i>Իրավաբանական անձանց տրված վարկեր հազ. դրամ</i>	<i>Ֆիզիկական անձանց տրված վարկեր հազ. դրամ</i>	<i>Ընդամենը հազ. դրամ</i>
Մնացորդը հաշվետու տարվա սկզբին	8,490,328	496,044	8,986,372
Զուտ ծախս	5,081,973	375,824	5,457,797
Նախկինում դուրս գրված վարկերի վերականգնում	161,236	188,483	349,719
Դուրսգրումներ	(2,957,248)	(542,437)	(3,499,685)
Մնացորդը հաշվետու տարվա վերջին	<u>10,776,289</u>	<u>517,914</u>	<u>11,294,203</u>

Ստորև ներկայացված է 2016թ. ընթացքում արժեզրկման գծով պահուստի շարժը՝ ըստ իրավաբանական անձանց և ֆիզիկական անձանց տրված վարկերի տեսակների.

	<i>Իրավաբանական անձանց տրված վարկեր հազ. դրամ</i>	<i>Ֆիզիկական անձանց տրված վարկեր հազ. դրամ</i>	<i>Ընդամենը հազ. դրամ</i>
Մնացորդը հաշվետու տարվա սկզբին	4,907,173	333,710	5,240,883
Զուտ ծախս	4,505,096	579,397	5,084,493
Նախկինում դուրս գրված վարկերի վերադարձ	188,461	179,374	367,835
Դուրսգրումներ	(894,856)	(596,437)	(1,491,293)
Վարկերի օտարում	(215,546)	–	(215,546)
Մնացորդը հաշվետու տարվա վերջին	<u>8,490,328</u>	<u>496,044</u>	<u>8,986,372</u>

21. **Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ (շարունակություն)****(ա) Իրավաբանական և ֆիզիկական անձանց տրված վարկեր (շարունակություն)****(i) Իրավաբանական և ֆիզիկական անձանց տրված վարկերի որակական ցուցանիշներ**

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է տեղեկատվություն հաճախորդներին տրված վարկերի որակական ցուցանիշների վերաբերյալ 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

	<i>Համախառն վարկեր հազ. դրամ</i>	<i>Արժեզրկման պահուստ հազ. դրամ</i>	<i>Զուտ վարկեր հազ. դրամ</i>	<i>Համախառն վարկերի արժեզրկման պահուստ %</i>
Իրավաբանական անձանց տրված վարկեր				
Վարկեր խոշոր ընկերություններին				
Չարժեզրկված վարկեր				
- ոչ ժամկետանց	321,466,902	2,951,032	318,515,870	0.92%
- 90 օրից ավել ժամկետանց	127,085	1,296	125,789	1.02%
Ընդամենը չարժեզրկված վարկեր	321,593,987	2,952,328	318,641,659	0.92%
Արժեզրկված վարկեր`				
- ոչ ժամկետանց	5,832,937	1,386,725	4,446,212	23.77%
- 90 օրից ավել ժամկետանց	5,675,243	3,171,094	2,504,149	55.88%
Ընդամենը արժեզրկված վարկեր	11,508,180	4,557,819	6,950,361	39.61%
Ընդամենը վարկեր խոշոր ընկերություններին	333,102,167	7,510,147	325,592,020	2.25%
Վարկեր փոքր և միջին ընկերություններին				
Չարժեզրկված վարկեր`				
- ոչ ժամկետանց	75,594,081	1,280,622	74,313,459	1.69%
- մինչև 30 օր ժամկետանց	1,595,583	27,764	1,567,819	1.74%
- 31-90 օր ժամկետանց	616,922	10,734	606,188	1.74%
- 90 օրից ավել ժամկետանց	1,538,325	26,767	1,511,558	1.74%
Ընդամենը չարժեզրկված վարկեր	79,344,911	1,345,887	77,999,024	1.70%
Արժեզրկված վարկեր`				
- 90 օրից ավել ժամկետանց	4,268,047	1,920,255	2,347,792	44.99%
Ընդամենը արժեզրկված վարկեր	4,268,047	1,920,255	2,347,792	44.99%
Ընդամենը վարկեր փոքր և միջին ընկերություններին	83,612,958	3,266,142	80,346,816	3.91%
Ընդամենը վարկեր իրավաբանական անձանց	416,715,125	10,776,289	405,938,836	2.59%

21. **Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ (շարունակություն)****(ա) Իրավաբանական և ֆիզիկական անձանց տրված վարկեր (շարունակություն)**

	<i>Համախառն վարկեր հազ. դրամ</i>	<i>Արժեզրկման պահուստ հազ. դրամ</i>	<i>Ջուտ վարկեր հազ. դրամ</i>	<i>Համախառն վարկերի արժեզրկման պահուստ %</i>
Ֆիզիկական անձանց տրված վարկեր				
Հիփոթեքային վարկեր				
- ոչ ժամկետանց	27,823,344	55,646	27,767,698	0.20%
- մինչև 30 օր ժամկետանց	21,143	1,717	19,426	8.12%
- 31-90 օր ժամկետանց	137,186	52,000	85,186	37.90%
- 90 օրից ավել ժամկետանց	620,182	139,441	480,741	22.48%
Ընդամենը հիփոթեքային վարկեր	28,601,855	248,804	28,353,051	0.87%
Վարկային քարտեր				
- ոչ ժամկետանց	17,531,427	37,611	17,493,816	0.21%
- մինչև 30 օր ժամկետանց	52,436	6,033	46,403	11.51%
- 31-90 օր ժամկետանց	45,328	14,822	30,506	32.70%
- 90 օրից ավել ժամկետանց	1,395,589	36,721	1,358,868	2.63%
Ընդամենը վարկային քարտեր	19,024,780	95,187	18,929,593	0.50%
Բիզնես վարկեր				
- ոչ ժամկետանց	957,333	15,222	942,111	1.59%
- 31-90 օր ժամկետանց	97,537	1,550	95,987	1.59%
Ընդամենը բիզնես վարկեր	1,054,870	16,772	1,038,098	1.59%
Ավտովարկեր				
- ոչ ժամկետանց	2,011,391	4,023	2,007,368	0.20%
- մինչև 30 օր ժամկետանց	6,847	523	6,324	7.64%
- 31-90 օր ժամկետանց	2,216	170	2,046	7.67%
- 90 օրից ավել ժամկետանց	20,146	42	20,104	0.21%
Ընդամենը ավտոմեքենայի վարկեր	2,040,600	4,758	2,035,842	0.23%
Սպառողական վարկեր				
- ոչ ժամկետանց	10,839,229	21,679	10,817,550	0.20%
- մինչև 30 օր ժամկետանց	6,009	475	5,534	7.90%
- 31-90 օր ժամկետանց	71,366	11,245	60,121	15.76%
- 90 օրից ավել ժամկետանց	251,100	118,994	132,106	47.39%
Ընդամենը սպառողական վարկեր	11,167,704	152,393	11,015,311	1.36%
Ընդամենը ֆիզիկական անձանց տրված վարկեր	61,889,809	517,914	61,371,895	0.84%
Ընդամենը իրավաբանական և ֆիզիկական անձանց տրված վարկեր	478,604,934	11,294,203	467,310,731	2.36%

2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ խոշոր կազմակերպություններին տրված չարժեզրկված վարկերը ներառում են արժեզրկման առանձին հայտանիշ ունեցող մեկ վարկ՝ 127,085 հազար ՀՀ դրամ համախառն հաշվեկշռային արժեքով և 1,296 հազար ՀՀ դրամ արժեզրկման պահուստով:

2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ փոքր և միջին կազմակերպություններին տրված չարժեզրկված վարկերը ներառում են արժեզրկման առանձին հայտանիշ ունեցող ութ վարկ՝ 2,747,775 հազար ՀՀ դրամ համախառն հաշվեկշռային արժեքով և 47,811 հազար ՀՀ դրամ արժեզրկման պահուստով:

21. **Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ (շարունակություն)**

(ա) Իրավաբանական և ֆիզիկական անձանց տրված վարկեր (շարունակություն)

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է տեղեկատվություն հաճախորդներին տրված վարկերի որակական ցուցանիշների վերաբերյալ 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

	<i>Համախառն վարկեր հազ. դրամ</i>	<i>Արժեզրկման պահուստ հազ. դրամ</i>	<i>Զուտ վարկեր հազ. դրամ</i>	<i>Համախառն վարկերի արժեզրկման պահուստ %</i>
Իրավաբանական անձանց տրամադրված վարկեր				
Վարկեր խոշոր ընկերություններին				
Հարժեզրկված վարկեր				
- ոչ ժամկետանց	373,157,051	2,435,727	370,721,324	0.65%
- 90 օրից ավել ժամկետանց	742,450	7,795	734,655	1.05%
Ընդամենը չարժեզրկված վարկեր	<u>373,899,501</u>	<u>2,443,522</u>	<u>371,455,979</u>	<u>0.65%</u>
Արժեզրկված վարկեր`				
- ոչ ժամկետանց	4,162,141	277,347	3,884,794	6.66%
- 90 օրից ավել ժամկետանց	6,206,154	2,955,182	3,250,972	47.62%
Ընդամենը արժեզրկված վարկեր	<u>10,368,295</u>	<u>3,232,529</u>	<u>7,135,766</u>	<u>31.18%</u>
Ընդամենը վարկեր խոշոր ընկերություններին	<u>384,267,796</u>	<u>5,676,051</u>	<u>378,591,745</u>	<u>1.48%</u>
Վարկեր փոքր և միջին ընկերություններին				
Հարժեզրկված վարկեր`				
- ոչ ժամկետանց	69,646,205	1,042,169	68,604,036	1.50%
- մինչև 30 օր ժամկետանց	567,198	8,734	558,464	1.54%
- 31-90 օր ժամկետանց	996,740	15,350	981,390	1.54%
- 90 օրից ավել ժամկետանց	606,275	9,389	596,886	1.55%
Ընդամենը չարժեզրկված վարկեր	<u>71,816,418</u>	<u>1,075,642</u>	<u>70,740,776</u>	<u>1.50%</u>
Արժեզրկված վարկեր`				
- ոչ ժամկետանց	544,082	193,350	350,732	35.54%
- 31-90 օր ժամկետանց	29,384	9,253	20,131	31.49%
- 90 օրից ավել ժամկետանց	4,620,432	1,536,032	3,084,400	33.24%
Ընդամենը արժեզրկմած վարկեր	<u>5,193,898</u>	<u>1,738,635</u>	<u>3,455,263</u>	<u>33.47%</u>
Ընդամենը վարկեր փոքր և միջին ընկերություններին	<u>77,010,316</u>	<u>2,814,277</u>	<u>74,196,039</u>	<u>3.65%</u>
Ընդամենը իրավաբանական և ֆիզիկական անձանց տրված վարկեր	<u>461,278,112</u>	<u>8,490,328</u>	<u>452,787,784</u>	<u>1.84%</u>

21. **Հաճախորդներին տրված վարկեր և փոխառվածություններ (շարունակություն)**

(ա) **Իրավաբանական և ֆիզիկական անձանց տրված վարկեր (շարունակություն)**

	<i>Համախառն վարկեր հազ. դրամ</i>	<i>Արժեզրկման պահուստ հազ. դրամ</i>	<i>Ջուտ վարկեր հազ. դրամ</i>	<i>Համախառն արժեզրկման պահուստ %</i>
Մանրաձախ հաճախորդներին տրված վարկեր				
Հիփոթեքային վարկեր				
- ոչ ժամկետանց	19,186,161	48,445	19,137,716	0.25%
- մինչև 30 օր ժամկետանց	83,002	7,045	75,957	8.49%
- 31-90 օր ժամկետանց	80,329	15,462	64,867	19.25%
- 90 օրից ավել ժամկետանց	701,611	105,264	596,347	15.00%
Ընդամենը հիփոթեքային վարկեր	20,051,103	176,216	19,874,887	0.88%
Վարկային քարտեր				
- ոչ ժամկետանց	16,655,030	35,703	16,619,327	0.21%
- մինչև 30 օր ժամկետանց	59,964	9,041	50,923	15.08%
- 31-90 օր ժամկետանց	102,483	26,067	76,416	25.44%
- 90 օրից ավել ժամկետանց	1,586,369	131,825	1,454,544	8.31%
Ընդամենը վարկային քարտեր	18,403,846	202,636	18,201,210	1.10%
Բիզնես վարկեր				
- ոչ ժամկետանց	702,500	14,050	688,450	2.00%
- 90 օրից ավել ժամկետանց	341,418	7,968	333,450	2.33%
Ընդամենը բիզնես վարկեր	1,043,918	22,018	1,021,900	2.11%
Ավտովարկեր				
- ոչ ժամկետանց	1,975,608	3,951	1,971,657	0.20%
- մինչև 30 օր ժամկետանց	27,600	1,370	26,230	4.96%
- 31-90 օր ժամկետանց	23,413	1,162	22,251	4.96%
- 90 օրից ավել ժամկետանց	16,447	1,422	15,025	8.65%
Ընդամենը ավտովարկեր	2,043,068	7,905	2,035,163	0.39%
Սպառողական վարկեր				
- ոչ ժամկետանց	5,191,378	16,367	5,175,011	0.32%
- մինչև 30 օր ժամկետանց	14,058	1,799	12,259	12.80%
- 31-90 օր ժամկետանց	1,240	159	1,081	12.82%
- 90 օրից ավել ժամկետանց	248,171	68,944	179,227	27.78%
Ընդամենը այլ սպառողական վարկեր	5,454,847	87,269	5,367,578	1.60%
Ընդամենը ֆիզիկական անձանց տրված վարկեր	46,996,782	496,044	46,500,738	1.06%
Ընդամենը հաճախորդներին տրված վարկեր	508,274,894	8,986,372	499,288,522	1.77%

2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ խոշոր կազմակերպություններին տրված չարժեզրկված վարկերը ներառում են արժեզրկման առանձին հայտանիշ ունեցող չորս վարկ՝ 2,481,773 հազար ՀՀ դրամ համախառն հաշվեկշռային արժեքով և 26,059 հազար ՀՀ դրամ արժեզրկման պահուստով:

2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ փոքր և միջին կազմակերպություններին տրված չարժեզրկված վարկերը ներառում են արժեզրկման առանձին հայտանիշ ունեցող ինը վարկ՝ 1,166,677 հազար ՀՀ դրամ համախառն հաշվեկշռային արժեքով և 17,966 հազար ՀՀ դրամ արժեզրկման պահուստով:

(ii) **Վարկերի արժեզրկման գնահատման համար կիրառված հիմնական ենթադրությունները և դատողությունները**

Իրավաբանական անձանց տրված վարկեր

Վարկերի արժեզրկումը տեղի է ունենում վարկի սկզբնական ճանաչումից հետո տեղի ունեցած մեկ կամ մի քանի դեպքերի արդյունքում, որոնք ազդեցություն են ունենում վարկի հետ կապված դրամական միջոցների ապագա գնահատված հոսքերի վրա, որը կարելի է արժանահավատորեն գնահատել: Արժեզրկման առանձին հայտանիշ չունեցող վարկերի համար բացակայում են դրանց ուղղակիորեն վերագրելի արժեզրկման օբյեկտիվ հայտանիշերը:

21. Հաճախորդներին տրված վարկեր և փոխառություններ (շարունակություն)

(ա) Իրավաբանական և ֆիզիկական անձանց տրված վարկեր (շարունակություն)

Իրավաբանական անձանց տրված վարկերի արժեզրկման օբյեկտիվ հայտանիշ են հանդիսանում.

- վարկային պայմանագրի ժամկետանց վճարները,
- վարկառուի ֆինանսական վիճակի էական վատթարացումը,
- տնտեսական միջավայրի վատթարացումը, բացասական փոփոխությունները վարկառուի գործունեության շուկաներում:

Իրավաբանական անձանց տրված վարկերի արժեզրկման գծով պահուստը գնահատելիս՝ Բանկը հիմնվում է արժեզրկման առանձին հայտանիշ ունեցող վարկերի գծով դրամական միջոցների ապագա հոսքերի վերլուծության և արժեզրկման առանձին հայտանիշ չունեցող վարկերի գծով վնաս կրելու իր նախկին փորձի վրա:

Իրավաբանական անձանց տրված վարկերի գծով արժեզրկման պահուստը որոշելիս՝ ղեկավարությունն առաջնորդվում է հետևյալ հիմնական ենթադրություններով.

- Իրավաբանական և փոքր ու միջին կազմակերպություններին տրված աշխատող վարկերի համար կիրառվում է պատմական կորստի տարեկան դրույքը, որը գնահատվում է վարկերի միջին դուրսգրումների վիճակագրության և տնտեսական գործակցի հիման վրա:
- Արժեզրկման առանձին հայտանիշներով վարկերի փոխհատուցվող գումարը հաշվարկվում է հետևյալ ենթադրությունների հիման վրա՝
 - 1) Կիրառվում է 20% և 30% զեղչ գրավի գնահատված արժեքի նկատմամբ:
 - 2) Գրավի իրացումից մուտքերի ստացումը հետաձգվում է 12 ամսով:
 - 3) Վերանայված մարման գրաֆիկով վարկերից ստացվող դրամական հոսքերը գնահատվում են վերանայման համաձայնագրի պայմաններին համապատասխան:

Ֆիզիկական անձանց տրված վարկեր

Ֆիզիկական անձանց տրված վարկերի արժեզրկումը գնահատելիս Բանկը հիմնվում է վարկերի յուրաքանչյուր տեսակի գծով վնաս կրելու իր նախկին փորձի վրա: Ֆիզիկական անձանց տրված վարկերի գծով արժեզրկումից կորուստները որոշելիս ղեկավարությունն առաջնորդվում է հետևյալ հիմնական ենթադրություններով՝

- Կորստի միգրացիայի դրույքները գնահատվում են վերջին 24 ամիսների ընթացքում կրած կորստի միգրացիայի մոդելի հիման վրա: Կորստի միգրացիայի դրույքները կիրառվում են հիփոթեքային վարկերի, վարկային քարտերի, ավտոմեքենայի և սպառողական վարկերի համար:
- Պատմական կորստի տարեկան դրույքը գնահատվում է վարկերի դուրսգրումների վիճակագրության և տնտեսական գործակցի հիման վրա և կիրառվում է ֆիզիկական անձանց տրված աշխատող բիզնես վարկերի համար:

(iii) Անհատապես արժեզրկված վարկեր

Անհատապես արժեզրկված վարկերի գծով հաշվեգրված տոկոսային եկամուտը 2017թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար կազմել է 786,780 հազար ՀՀ դրամ (2016թ.՝ 740,969 հազար ՀՀ դրամ):

(iv) Գրավի վերլուծություն

Իրավաբանական անձանց տրված վարկեր

Իրավաբանական անձանց տրված վարկերը ենթակա են անհատական հիմունքով վարկային գնահատման և արժեզրկման ստուգման: Իրավաբանական անձանց վարկունակությունը նրան տրամադրված վարկի վարկային ռիսկի չափը բնութագրող ամենակարևոր ցուցանիշն է: Այնուամենայնիվ, գրավը լրացուցիչ ապահովվածություն է, և Բանկը, որպես կանոն, գրավ է պահանջում կորպորատիվ հաճախորդներին:

21. Հաճախորդներին տրված վարկեր և փոխառություններ (շարունակություն)

(ա) Իրավաբանական և ֆիզիկական անձանց տրված վարկեր (շարունակություն)

Ձեռքբերված գրավի հիմնական տեսակները հետևյալն են՝

- Արժեթղթային վարկերի և հակադարձ հետգնման գործարքների համար՝ դրամական միջոցներ կամ արժեթղթեր:
- Առևտրային վարկերի համար՝ անշարժ գույքի, պաշարների, դեբիտորական պարտքերի և դրամական միջոցների գրավադրում:
- Մանրածախ վարկավորման համար՝ անշարժ գույքի գրավադրում:

Բանկը նաև ձեռք է բերում երաշխիքներ մայր ընկերություններից՝ նրանց դուստր ընկերություններին վարկեր տրամադրելու համար:

Ղեկավարությունը հետևում է գրավի շուկայական արժեքին, պահանջում լրացուցիչ գրավ՝ դրա հիմքում ընկած պայմանագրի համաձայն, և հետևում է ձեռքբերված գրավի շուկայական արժեքին՝ վարկի արժեզրկման պահուստի բավարարության ստուգման ընթացքում:

Բանկի կողմից պահվող՝ արժեզրկման առանձին հայտանիշներով վարկերի գծով գրավների իրական արժեքը 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմում է 12,576,099 հազար ՀՀ դրամ (2016թ.՝ 10,835,708 հազար ՀՀ դրամ):

Ոչ ժամկետանց և չարժեզրկված վարկերի վերադարձելիությունը առավելապես կախված է վարկառուների վարկունակությունից, այլ ոչ գրավի արժեքից, և պարտադիր չէ, որ Բանկը թարմացնի գրավի գնահատումը բոլոր հաշվետու ժամանակաշրջանների դրությամբ:

Ֆիզիկական անձանց տրված վարկեր

Հիփոթեքային վարկերի դիմաց գրավադրվում է վարկի առարկա հանդիսացող անշարժ գույքը: Բանկի քաղաքականության համաձայն հիփոթեքային վարկերը տրամադրվում են առավելագույնը 70% վարկ/արժեք հարաբերակցությամբ:

Որպես գրավով ապահովված և վարկային քարտերով տրամադրված օվերդրաֆտների ապահովվածություն հիմնականում հանդես են գալիս անշարժ գույքը և ավտոմեքենաները: Վարկային քարտերով տրված այլ օվերդրաֆտների համար ապահովվածության միջոց է հանդիսանում աշխատավարձը: Բիզնես վարկերի համար որպես ապահովության միջոց են ծառայում անշարժ գույքը և կորպորատիվ բաժնետոմսերը: Ավտոմեքենաների վարկերի դիմաց գրավադրվում են գնված ավտոմեքենաները: 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ վարկերը ապահովված են եղել անշարժ գույքով, շարժական գույքով, աշխատավարձով, դրամական միջոցներով և երաշխիքներով: Ֆիզիկական անձանց տրված վարկեր տրված այլ վարկերը հիմնականում ապահովված են ոսկու գրավով:

Բռնագանձված գրավ

2017թ. ընթացքում Բանկը ձեռք է բերել որոշակի ակտիվներ՝ իրավաբանական անձանց տրված վարկերի դիմաց ընդունված գրավի նկատմամբ սեփականության իրավունք ստանալու միջոցով՝ 617,777 հազար ՀՀ դրամ զուտ հաշվեկշռային արժեքով (2016թ.՝ 244,754 հազար ՀՀ դրամ): 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ բռնագանձված գրավն իրենից ներկայացնում է անշարժ գույք և դասակարգվում է որպես այլ ակտիվներ:

Բանկի քաղաքականության համաձայն՝ նման ակտիվները պետք է վաճառվեն հնարավորինս կարճ ժամկետներում:

21. **Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ (շարունակություն)**

(ա) **Իրավաբանական և ֆիզիկական անձանց տրված վարկեր (շարունակություն)**

(v) **Վարկային պորտֆելի վերլուծություն՝ ըստ աշխարհագրական և տնտեսության ճյուղերի պատկանելության**

Վարկերը տրամադրվել են հիմնականում իրենց գործունեությունը տնտեսության հետևյալ ճյուղերում ծավալած հաճախորդներին՝

	2017 <i>հազ. դրամ</i>	2016 <i>հազ. դրամ</i>
Մեծածախ առևտուր	76,026,834	47,417,214
Ֆինանսներ և ներդրումներ	74,110,288	77,261,906
Հանքարդյունաբերություն/մետալուրգիա	51,048,122	28,408,361
Հյուրանոցային սպասարկման ոլորտ	32,463,343	25,468,851
Շինարարություն	30,072,853	84,189,991
Գյուղատնտեսություն, անտառապահություն և փայտամշակում	27,180,750	23,843,777
Մանրի և խմիչքի արտադրություն	21,641,394	20,163,246
Մանրածախ առևտուր	21,081,805	17,034,146
Էլեկտրաէներգիայի արտադրություն	17,184,852	25,620,351
Անշարժ գույք	13,297,236	50,249,429
Կապի ծառայություններ	13,161,817	22,310,945
Արդյունաբերություն	9,459,381	9,608,698
Տրանսպորտ	7,827,878	10,171,744
Մունիցիպալ մարմիններ	-	160,379
Այլ	22,158,572	19,369,074
Ֆիզիկական անձանց տրամադրված վարկեր	61,889,809	46,996,782
	<u>478,604,934</u>	<u>508,274,894</u>
Արժեզրկման գծով պահուստ	(11,294,203)	(8,986,372)
	<u>467,310,731</u>	<u>499,288,522</u>

Բանկի՝ իրավաբանական անձանց տրամադրված վարկերի (զուտ վարկեր) աշխարհագրական կենտրոնացումը բերված է հետևյալ աղյուսակում՝

	2017 <i>հազ. դրամ</i>	2016 <i>հազ. դրամ</i>
Հայաստան	312,607,979	266,046,599
ՏՀԶԿ և ԵՄ	46,222,319	141,973,028
Այլ երկրներ	47,108,538	44,768,157
	<u>405,938,836</u>	<u>452,787,784</u>

(vi) **Խոշոր վարկեր**

2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկն ունի տասնյոթ վարկառու կամ վարկառուների կապակցված խմբեր (2016թ.՝ տասներկու), որոնց տրամադրված վարկերի մնացորդները գերազանցում են Բանկի կապիտալի 10%-ը: 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ այս վարկերի ընդհանուր գումարը՝ դրամական միջոց հանդիսացող գրավով նվազեցրած, կազմում է 163,847,088 հազար ՀՀ դրամ (2016թ.՝ 108,667,191 հազար ՀՀ դրամ):

(vii) **Վարկերի ժամկետայնություն**

Վարկային պորտֆելի ժամկետայնության վերլուծությունը ներկայացված է Ծանոթագրություն 32-ի (դ) կետում, որտեղ արտացոլված է հաշվետու ժամանակաշրջանից մինչև վարկային պայմանագրով նախատեսված մարման ժամկետն ընկած ժամանակահատվածը:

21. Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ (շարունակություն)

բ) Ակրեդիտիվների գծով ստացվելիք գումարներ

	2017 հազ. դրամ	2016 հազ. դրամ
Ակրեդիտիվների գծով ստացվելիք գումարներ, համախառն արժեք	4,129,748	7,722,748
Արժեզրկման գծով պահուստ	(8,259)	(15,445)
	<u>4,121,489</u>	<u>7,707,303</u>

2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկը չունի ոչ մի հաճախորդ (2016թ.՝ ոչ մի հաճախորդ), որի մնացորդները գերազանցում են Բանկի կապիտալի 10%-ը:

2017թ. և 2016թ. արժեզրկման գծով պահուստում տեղի է ունեցել հետևյալ շարժը՝

	2017 հազ. դրամ	2016 հազ. դրամ
Հաշվետու տարվա սկզբի մնացորդ	15,445	1,246,423
Զուտ ծախս	(7,186)	280,364
Դուրսգրումներ	-	(1,511,342)
Հաշվետու տարվա վերջի մնացորդ	<u>8,259</u>	<u>15,445</u>

(i) Ակրեդիտիվների որակական վերլուծություն

2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկը ակրեդիտիվների գծով արժեզրկված կամ ժամկետանց ստացվելիք գումարներ չունի:

գ) Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարներ

	2017 հազ. դրամ	2016 հազ. դրամ
Համախառն ներդրումներ ֆինանսական վարձակալությունում		
Մինչև մեկ տարի ժամկետով	491,429	533,878
Մեկից հինգ տարի ժամկետով	947,298	1,158,994
Հինգ տարուց ավել ժամկետով	908,848	1,144,665
	<u>2,347,575</u>	<u>2,837,537</u>
Չվաստակաժ ֆինանսական եկամուտ	(588,105)	(735,821)
Արժեզրկման գծով պահուստ	(289,446)	(61,694)
Զուտ ներդրումներ ֆինանսական վարձակալությունում	<u>1,470,024</u>	<u>2,040,022</u>
Ֆինանսական վարձակալությունում զուտ ներդրումները ներառում են ներդրումները՝		
Մինչև մեկ տարի ժամկետով	423,387	482,222
Մեկից հինգ տարի ժամկետով	634,289	900,996
Հինգ տարուց ավել ժամկետով	412,348	656,804
	<u>1,470,024</u>	<u>2,040,022</u>

21. **Հաճախորդներին տրված վարկեր և փոխաստվություններ (շարունակություն)**

գ) Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարներ (շարունակություն)

(i) **Ֆինանսական վարձակալության որակական վերլուծություն**

Հետևյալ աղյուսակը տրամադրում է տեղեկություն 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վարձակալության որակական վերլուծության մասին՝

	<i>Համախառն վարկեր հազ. դրամ</i>	<i>Արժեզրկման պահուստ հազ. դրամ</i>	<i>Զուտ վարկեր հազ. դրամ</i>	<i>Համախառն վարկերի արժեզրկման պահուստ %</i>
Ֆինանսական վարձակալություն				
- ոչ ժամկետանց	1,194,992	111,583	1,083,409	9.34%
- մինչև 30 օր ժամկետանց	86,601	1,507	85,094	1.74%
- 31-90 օր ժամկետանց	6,374	111	6,263	1.74%
- 90 օրից ավել ժամկետանց	471,503	176,245	295,258	37.38%
Ընդամենը ֆինանսական վարձակալություն	1,759,470	289,446	1,470,024	16.45%

Հետևյալ աղյուսակը տրամադրում է տեղեկատվություն 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վարձակալության որակական վերլուծության մասին՝

	<i>Համախառն վարկեր հազ. դրամ</i>	<i>Արժեզրկման պահուստ հազ. դրամ</i>	<i>Զուտ վարկեր հազ. դրամ</i>	<i>Համախառն վարկերի արժեզրկման պահուստ %</i>
Ֆինանսական վարձակալություն				
- ոչ ժամկետանց	2,037,211	30,128	2,007,083	1.48%
- 31-90 օր ժամկետանց	24,881	409	24,472	1.64%
- 90 օրից ավել ժամկետանց	39,624	31,157	8,467	78.63%
Ընդամենը ֆինանսական վարձակալություն	2,101,716	61,694	2,040,022	2.94%

2017թ. և 2016թ. արժեզրկման գծով պահուստում տեղի է ունեցել հետևյալ շարժը՝

	<i>2017 հազ. դրամ</i>	<i>2016 հազ. դրամ</i>
Հաշվետու տարվա սկզբի մնացորդ		
Զուտ ծախս	61,694	42,009
Դուրսգրումներ	232,973	30,875
	(5,221)	(11,190)
Հաշվետու տարվա վերջի մնացորդ	289,446	61,694

(ii) **Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարների կենտրոնացում**

2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկը չունի այնպիսի հաճախորդներ, որոնց գծով ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարները գերազանցում են Բանկի կապիտալի 10%-ը (2016թ. նման հաճախորդներ չեն եղել)։

(iii) **Ֆինանսական վարձակալության ժամկետայնություն**

Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարների ժամկետայնության վերլուծությունը ներկայացված է Ծանոթագրություն 32-ի (դ) կետում, որտեղ ներկայացված է հաշվետու ժամանակաշրջանից մինչև ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարների պայմանագրային վերջնաժամկետն ընկած ժամանակահատվածը։

(iv) **Ֆինանսական վարձակալության պայմանագրերի աշխարհագրական վերլուծություն**

Ֆինանսական վարձակալության պայմանագրերի հիմնական մասը կնքվել են Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվող հաճախորդների հետ։

21. **Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ (շարունակություն)**

գ) Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարներ (շարունակություն)

(v) Գրավի վերլուծություն

Ֆինանսական վարձակալության պայմանագրերը ապահովված են անշարժ գույքով, սարքավորումներով և փոխադրամիջոցներով:

դ) Ֆակտորինգի գծով ստացվելիք գումարներ

	<i>2017</i> հազ. դրամ	<i>2016</i> հազ. դրամ
Ֆակտորինգի գծով ստացվելիք գումարներ	6,752,241	4,191,244
Արժեզրկման գծով պահուստ	(13,504)	(8,382)
	<u>6,738,737</u>	<u>4,182,862</u>

2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկը չունի այնպիսի հաճախորդներ, որոնց մնացորդները գերազանցում են կապիտալի 10%-ը (2016թ.՝ նման հաճախորդներ չեն եղել):

2017թ. և 2016թ. արժեզրկման գծով պահուստում տեղի է ունեցել հետևյալ շարժը՝

	<i>2017</i> հազ. դրամ	<i>2016</i> հազ. դրամ
Հաշվետու տարվա սկզբի մնացորդ	8,382	10,918
Զուտ ծախս	5,122	716
Դուրսգրումներ	-	(3,252)
Հաշվետու տարվա վերջի մնացորդ	<u>13,504</u>	<u>8,382</u>

(i) Ֆակտորինգի որակական վերլուծություն

2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկը չունի ֆակտորինգի գծով արժեզրկված կամ ժամկետանց գումարներ:

(ii) Ֆակտորինգի ժամկետայնություն

Ֆակտորինգի գծով ստացվելիք գումարների ժամկետայնության ներկայացված է Ծանոթագրություն 32-ի (դ) կետում, որտեղ ներկայացված է հաշվետու ժամանակաշրջանից մինչև ֆակտորինգի գծով ստացվելիք գումարների պայմանագրային վերջնաժամկետն ընկած ժամանակահատվածը:

(iii) Գրավի վերլուծություն

Ֆակտորինգի գծով ստացվելիք գումարներն ապահովված են անշարժ գույքով, սարքավորումներով և փոխադրամիջոցներով:

22. Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ

	<i>2017 հազ. դրամ</i>	<i>2016 հազ. դրամ</i>
Բանկի կողմից պահվող Պարտքային և ֆիքսված եկամտով այլ գործիքներ		
- Պետական պարտատոմսեր		
ՀՀ պետական արժեթղթեր	30,734,671	28,194,902
ՀՀ պետական եվրոպարտատոմսեր	2,520,028	6,967,102
Այլ երկրների պետական պարտատոմսեր	3,881,887	-
- Կորպորատիվ պարտատոմսեր		
Օտարերկրյա ընկերությունների կորպորատիվ պարտատոմսեր	-	803,989
ՀՀ ընկերությունների կորպորատիվ պարտատոմսեր	200,953	289,649
	<u>37,337,539</u>	<u>36,255,642</u>
Հետգնման պայմանագրերով գրավադրված		
- ՀՀ պետական եվրոպարտատոմսեր	5,968,305	-
	<u>5,968,305</u>	<u>-</u>

23. Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ

<i>(հազ.դրամ)</i>	<i>Վարձակալված գույքի բարելավումներ</i>	<i>Համակարգիչներ և հեռահաղորդակցման սարքեր</i>	<i>Տնտեսական գույք</i>	<i>Փոխադրամիջոցներ</i>	<i>Ոչ նյութական ակտիվներ</i>	<i>Ընդամենը</i>
Սկզբնական արժեք						
Մնացորդն առ 2017թ. հունվարի 1	1,676,965	3,300,113	609,279	256,026	2,068,706	7,911,089
Ավելացումներ	1,705,434	1,252,164	978,598	39	409,327	4,345,562
Օտարումներ/դուրսգրումներ	-	(44,547)	(49,723)	(50,554)	-	(144,824)
Մնացորդն առ 2017թ. դեկտեմբերի 31	<u>3,382,399</u>	<u>4,507,730</u>	<u>1,538,154</u>	<u>205,511</u>	<u>2,478,033</u>	<u>12,111,827</u>
Մաշվածություն և ամորտիզացիա						
Մնացորդն առ 2017թ. հունվարի 1	917,206	2,076,344	404,947	100,100	761,254	4,259,851
Տարվա մաշվածություն և ամորտիզացիա	217,725	319,512	40,589	24,861	265,156	867,843
Օտարումներ/դուրսգրումներ	-	(44,025)	(48,241)	(50,517)	-	(142,783)
Մնացորդն առ 2017թ. դեկտեմբերի 31	<u>1,134,931</u>	<u>2,351,831</u>	<u>397,295</u>	<u>74,444</u>	<u>1,026,410</u>	<u>4,984,911</u>
Հաշվեկշռային արժեքն առ 2017թ. դեկտեմբերի 31	<u>2,247,468</u>	<u>2,155,899</u>	<u>1,140,859</u>	<u>131,067</u>	<u>1,451,623</u>	<u>7,126,916</u>

<i>(հազ.դրամ)</i>	<i>Վարձակալված գույքի բարելավումներ</i>	<i>Համակարգիչներ և հեռահաղորդակցման սարքեր</i>	<i>Տնտեսական գույք</i>	<i>Փոխադրամիջոցներ</i>	<i>Ոչ նյութական ակտիվներ</i>	<i>Ընդամենը</i>
Սկզբնական արժեք						
Մնացորդն առ 2016թ. հունվարի 1	1,668,483	2,962,100	578,903	180,789	1,568,589	6,958,864
Ավելացումներ	142,492	498,347	82,686	150,723	500,117	1,374,365
Օտարումներ/դուրսգրումներ	(134,009)	(160,334)	(52,310)	(75,486)	-	(422,139)
Մնացորդն առ 2016թ. դեկտեմբերի 31	<u>1,676,966</u>	<u>3,300,113</u>	<u>609,279</u>	<u>256,026</u>	<u>2,068,706</u>	<u>7,911,090</u>
Մաշվածություն և ամորտիզացիա						
Մնացորդն առ 2016թ. հունվարի 1	772,770	1,920,098	382,172	160,660	527,461	3,763,161
Տարվա մաշվածություն և ամորտիզացիա	173,058	294,372	62,346	14,926	233,792	778,494
Օտարումներ/դուրսգրումներ	(28,622)	(138,126)	(39,570)	(75,486)	-	(281,804)
Մնացորդն առ 2016թ. դեկտեմբերի 31	<u>917,206</u>	<u>2,076,344</u>	<u>404,948</u>	<u>100,100</u>	<u>761,253</u>	<u>4,259,851</u>
Հաշվեկշռային արժեքն առ 2016թ. դեկտեմբերի 31	<u>759,760</u>	<u>1,223,769</u>	<u>204,331</u>	<u>155,926</u>	<u>1,307,453</u>	<u>3,651,239</u>

24. Այլ ակտիվներ

	<i>2017</i> հազ. դրամ	<i>2016</i> հազ. դրամ
Չավարտված գործարքների գծով դեբիտորական պարտքեր	1,100,692	396,889
Հաշիվներ քլիրինգային կազմակերպություններում՝ օգտագործման սահմանափակումներով	351,161	345,624
Բրոքերային հաշիվներ	56,458	115,385
Ընդամենը այլ ֆինանսական ակտիվներ	1,508,311	857,898
Կանխավճարներ մատակարարներին	2,162,958	479,686
Բռնագանձված ակտիվներ	1,479,534	1,118,947
Թանկարժեք մետաղների ստանդարտացված ձուլակտորներ	532,675	351,233
Այլ հարկային ակտիվներ	448,724	-
Պաշարներ	126,681	55,051
Այլ	524,894	23,045
Արժեզրկման գծով պահուստ	(126,215)	(89,162)
Ընդամենը այլ ոչ ֆինանսական ակտիվներ	5,149,251	1,938,800
Ընդամենը այլ ակտիվներ	6,657,562	2,796,698

2017թ. և 2016թ. այլ ոչ ֆինանսական ակտիվների արժեզրկման գծով պահուստում տեղի է ունեցել հետևյալ շարժը՝

	<i>2017</i> հազ. դրամ	<i>2016</i> հազ. դրամ
Հաշվետու տարվա սկզբի մնացորդ	89,162	65,522
Զուտ ծախս	122,938	37,953
Դուրսգրումներ	(85,885)	(14,313)
Հաշվետու տարվա վերջի մնացորդ	126,215	89,162

25. Բանկերի ավանդներ և մնացորդներ

	<i>2017</i> հազ. դրամ	<i>2016</i> հազ. դրամ
Կարճաժամկետ վարկեր և ժամկետային ավանդներ առևտրային բանկերից	24,360,593	1,637,334
Վարկեր ՀՀ ԿԲ-ից (Միջազգային ծրագրերով ստացված)	7,389,309	8,032,191
Պարտավորություններ ակրեդիտիվների գծով	6,012,307	8,664,321
Երկարաժամկետ վարկեր և ժամկետային ավանդներ առևտրային բանկերից	1,924,673	53,267,356
Ոստրո հաշիվներ	317,119	233,680
Ընդամենը բանկերի ավանդներ և մնացորդներ	40,004,001	71,834,882

Պայմանագրի համաձայն՝ ՀՀ ԿԲ-ն Բանկին ապահովում է վարկերով, իսկ Բանկն իր հերթին վարկեր է տրամադրում որակավորվող վարկառուներին: Վարկերի մոնիտորինգը և վարչարարությունը կատարվում է «Գերմանահայկական հիմնադրամ» ծրագրի կառավարման գրասենյակի կողմից:

2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկը չունի պայմանագրային կողմ (2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ երկու կողմ), որի մնացորդները գերազանցում են Բանկի կապիտալի 10%-ը:

26. Հետզնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ

	<i>2017</i> հազ. դրամ	<i>2016</i> հազ. դրամ
Պարտավորություններ բանկերի նկատմամբ	6,121,693	-
	6,121,693	-

26. Հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ (շարունակություն)

Բանկն իրականացնում է արժեթղթերի փոխառության, արժեթղթերը հետգնման պայմանագրերով վաճառելու գործարքներ և արժեթղթերը վերավաճառքի պայմանագրերով գնելու գործարքներ:

Հետգնման պայմանագրերով վաճառված կամ որպես փոխառություն տրամադրված արժեթղթերը փոխանցվում են երրորդ կողմերին, որի դիմաց Բանկը ստանում է դրամական միջոցներ: Այդ ֆինանսական ակտիվները կարող են կրկին գրավադրվել կամ վերավաճառվել գործընկերների կողմից Բանկի կողմից պարտավորությունների չկատարման պայմանների բացակայության դեպքում, սակայն պայմանագրի մարման ամսաթվին գործընկերը պարտավոր է վերադարձնել արժեթղթերը: Բանկը որոշել է, որ պահպանում է այդ արժեթղթերի հետ կապված բոլոր հիմնական ռիսկերն ու օգուտները և, հետևաբար չի ապաճանաչում դրանք: Ստացված դրամական միջոցները ճանաչվում են որպես ֆինանսական ակտիվ, իսկ գրավի գնման գնի վճարման պարտավորությունը ճանաչվում է որպես ֆինանսական պարտավորություն:

Այս գործարքները իրականացվում են ստանդարտ վարկավորման, արժեթղթերի փոխառության և վարկավորման գործընթացներին բնորոշ պայմաններին համաձայն:

Փոխանցված ֆինանսական ակտիվներ և գրավադրված կամ որպես գրավ պահվող ակտիվներ

Փոխանցված ֆինանսական ակտիվներ, որոնք ամբողջովին չեն ապաճանաչվել

2017 թ. -ի դեկտեմբերի 31-ի դրությամբ փոխանցված ֆինանսական ակտիվները, որոնք Բանկի կողմից չեն ապաճանաչվել ամբողջությամբ (2016 թ. -ի դեկտեմբերին նման ակտիվներ չեն եղել), ներկայացված են ՀՀ պետական եվրոպարտատոմսերով՝ 6,323,772 հազար ՀՀ դրամ իրական արժեքով, որոնք գրավադրվել են 6,121,693 հազար ՀՀ դրամ հաշվեկշռային արժեքով հետգնման պայմանագրերով վճարվելիք գումարների դիմաց: Այս փոխանցումը չի համապատասխանում ապաճանաչման չափանիշներին:

27. Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ

	2017 <i>հազ. դրամ</i>	2016 <i>հազ. դրամ</i>
Ընթացիկ հաշիվներ և ցպահանջ ավանդներ		
- Ֆիզիկական անձիք	47,010,214	32,809,388
- Իրավաբանական անձիք	113,246,453	155,773,778
Ժամկետային ավանդներ		
- Ֆիզիկական անձիք	133,849,820	121,592,267
- Իրավաբանական անձիք	81,064,292	104,433,253
	<u>375,170,779</u>	<u>414,608,686</u>

2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի հաճախորդների ընթացիկ հաշիվներից և ավանդներից 34,222,057 հազար ՀՀ դրամ գումարով մնացորդները ծառայում են որպես գրավ՝ Բանկի կողմից տրամադրված վարկերի և վարկային պարտավորվածությունների դիմաց (2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 145,465,084 հազար ՀՀ դրամ):

2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկն ունի երկու հաճախորդ (2016թ.՝ ութ հաճախորդ), որոնց միջոցների մնացորդները գերազանցում են Բանկի կապիտալի 10%-ը: 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ այս մնացորդները կազմում են 44,219,735 հազար ՀՀ դրամ (2016թ.՝ 127,255,616 հազար ՀՀ դրամ):

28. Թողարկված պարտքային արժեթղթեր

	2017 հազ. դրամ	2016 հազ. դրամ
Մուրհակներ	9,711,295	9,703,138
ՀՀ-ում թողարկված պարտատոմսեր	31,221,300	8,421,362
	<u>40,932,595</u>	<u>18,124,500</u>

2016թ. ընթացքում Բանկը տեղաբաշխել է դոլարային մուրհակներ շվեյցարական ResponsAbility Investments AG ընկերության կողմից կառավարվող 4 լյուքսեմբուրգյան ֆոնդերի մոտ՝ 20,000,000 ԱՄՆ դոլար ընդհանուր գումարով և 2021թ. մարման ժամկետով: Հասարակ մուրհակների հաշվեկշռային արժեքը 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմում է 9,711,295 հազար ՀՀ դրամ:

2017թ. դեկտեմբերի դրությամբ Բանկը թողարկել է պարտատոմսեր ՀՀ դրամով, դոլարով և եվրոյով: Պարտատոմսերը ունեն հետևյալ անվանական արժեքները՝ 2,500,000 հազար ՀՀ դրամ, 55 միլիոն դոլար, 3 միլիոն եվրո: 2017 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ պարտատոմսերը ունեն հետևյալ հաշվեկշռային արժեքները՝ 2,581,582 հազար ՀՀ դրամ, 26,886,359 հազար ՀՀ դրամ, 1,753,359 հազար ՀՀ դրամ:

Բանկի կողմից թողարկված պարտատոմսերը ցուցակված են ՆԱՍԴԱԶ ՕԷՄԷՔՍ Արմենիա ֆոնդային բորսայում:

29. Այլ փոխառու միջոցներ և ստորադաս փոխառություններ

	2017 հազ. դրամ	2016 հազ. դրամ
Ներգրավված միջոցներ միջազգային և այլ ֆինանսական կազմակերպություններից	98,128,094	102,303,900
Ներգրավված միջոցներ ՀՀ կառավարությունից	-	431,139
	<u>98,128,094</u>	<u>102,735,039</u>
Ստորադաս փոխառություններ	<u>40,919,768</u>	<u>40,811,255</u>

(ա) Միջազգային ֆինանսական հաստատություններից ներգրավված միջոցների կենտրոնացում

2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկն ունի ներգրավված միջոցներ վեց ֆինանսական կազմակերպություններից (2016թ.՝ վեց), որոնց մնացորդները գերազանցում են Բանկի կապիտալի 10%-ը: 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ այս մնացորդները կազմում են 66,673,975 հազար ՀՀ դրամ (2016թ.՝ 91,891,017 հազար ՀՀ դրամ):

(բ) ՀՀ կառավարությունից ներգրավված միջոցներ

ՀՀ կառավարությունից ներգրավված միջոցներն իրենցից ներկայացնում են փոխառություններ ՀՀ կառավարությունից (ՀՀ ԿԲ-ն հանդիսանում է ՀՀ կառավարության գործակալ): Պայմանագրի համաձայն՝ ՀՀ ԿԲ-ն փոխառություններ է տրամադրում Բանկին, որն իր հերթին վարկեր է տրամադրում որակավորվող վարկառուներին: Վարկերի վերահսկողությունը և վարչարարությունն իրականացնում է «Գերմանահայկական հիմնադրամ» ծրագրի կառավարման գրասենյակը:

Փոխառությունները տրամադրվում են ՀՀ դրամով, մինչև հինգ տարի ժամկետով, տոկոսադրույքները կազմում են 7.3-7.8%: Փոխառությունները ենթակա են մարման՝ մարման ժամկետի վերջում:

29. Այլ փոխառու միջոցներ և ստորադաս փոխառություններ (շարունակություն)

(գ) Ստորադաս փոխառություններ

2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ստորադաս փոխառություններն իրենցից ներկայացնում են՝

- ▶ Կերջնական վերահսկող կողմից ստացված փոխառություն (5,928,587 հազար ՀՀ դրամ), որը մարվում է 2021թ. հունվարի 11-ին:
- ▶ Միջազգային ֆինանսական հաստատություններից ստացած փոխառություն (25,079,819 հազար ՀՀ դրամ), որը մարվում է 2022թ. հունվարի 11-ին:
- ▶ Այլ ֆինանսական հաստատությունից ստացված փոխառություն (9,911,362 հազար ՀՀ դրամ), որը մարվում է 2020թ. սեպտեմբերի 23-ին:

Մասնկության դեպքում ստորադաս փոխառությունները կմարվեն Բանկի մյուս բոլոր պարտավորությունների ամբողջական մարումից հետո:

(դ) Պարտադիր պայմաններ

Համաձայն փոխառության պայմանագրերի՝ Բանկը պարտավոր է պահպանել որոշակի պարտադիր պայմաններ: 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկը պահպանում է բոլոր այդ պայմանները:

30. Այլ պարտավորություններ

	<i>2017 հազ. դրամ</i>	<i>2016 հազ. դրամ</i>
Կրեդիտորական պարտքեր աշխատակիցներին	2,173,129	1,725,164
Այլ կրեդիտորական պարտքեր	682,810	505,115
Այլ ֆինանսական պարտավորություններ	974,958	543,468
Ընդամենը այլ ֆինանսական պարտավորություններ	3,830,897	2,773,747
Հետաձգված եկամուտ	10,470	10,136
Այլ հարկային պարտավորություններ	264	89,255
Ընդամենը այլ ոչ ֆինանսական պարտավորություններ	10,734	99,391
Ընդամենը այլ պարտավորություններ	3,841,631	2,873,138

31. Բաժնետիրական կապիտալ և պահուստներ

(ա) Թողարկված կապիտալ և էմիսիոն եկամուտ

Հայտարարված, թողարկված և շրջանառության մեջ գտնվող բաժնետիրական կապիտալը բաղկացած է 100,273 սովորական բաժնետոմսից (2016թ.՝ 100,273): Բոլոր բաժնետոմսերի անվանական արժեքը կազմում է 320 հազար ՀՀ դրամ, և նրանք ամբողջությամբ վճարված են:

2017 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ բանկի բաժնետերերն են՝ Ամերիա գրուպ (65.8%), ՎԶԵԲ (20.7%) և «Ի-ԷՍ-Փի-ԷՍ Հոլդինգ Լիմիթիդ» (13.5%) ընկերությունները:

2018 թ. փետրվարի 14-ին Ասիական Զարգացման Բանկը (ԱԶԲ) ձեռք է բերել Բանկի կողմից լրացուցիչ թողարկված 16,291 բաժնետոմսերը 14,426,665 հազար ՀՀ դրամով:

Ֆինանսական հաշվետվությունների թողարկման օրվա դրությամբ բանկի բաժնետերերն են՝ Ամերիա գրուպ (56.60%), ՎԶԵԲ (17.80%), Ի-ԷՍ-Փի-ԷՍ Հոլդինգ Լիմիթիդ (11.62%) և ԱԶԲ (13.98%) ընկերությունները:

Սովորական բաժնետոմսերի սեփականատերերն իրավունք ունեն ժամանակ առ ժամանակ ստանալ հայտարարված շահաբաժինները և քվեարկել Բանկի բաժնետերերի տարեկան և ընդհանուր ժողովներում՝ մեկ բաժնետոմս՝ մեկ ձայն սկզբունքով:

31. Բաժնետիրական կապիտալ և պահուստներ (շարունակություն)

(բ) Պահուստների բնույթը և նպատակը

Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների վերագնահատման պահուստ

Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների վերագնահատման պահուստը ներառում է իրական արժեքի կուտակային զուտ փոփոխությունը՝ մինչև ակտիվների ապաճանաչումը կամ արժեզրկումը:

(գ) Շահաբաժիններ

Վճարման ենթակա շահաբաժինները սահմանափակվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված՝ Բանկի առավելագույն չբաշխված շահույթի չափով:

2017թ. ընթացքում Բանկի կողմից հայտարարված և վճարված շահաբաժինների գումարը կազմում է 2,176,201 հազար ՀՀ դրամ (2016թ.՝ 1,685,286 հազար ՀՀ դրամ): Շահաբաժինների հայտարարման և վճարման օրվա դրությամբ մեկ բաժնետոմսի համար վճարվող շահաբաժինը կազմել է 21,703 հազար ՀՀ դրամ (2016թ.՝ 16,807 հազար ՀՀ դրամ):

32. Ռիսկերի կառավարում

Ռիսկերի կառավարումը բնորոշ գործոն է բանկային ոլորտի համար և հանդիսանում է Բանկի գործառնությունների կարևոր տարր: Հիմնական ռիսկերը, որոնց ենթակա է Բանկը, շուկայական, վարկային և իրացվելիության ռիսկերն են:

(ա) Ռիսկերի կառավարման քաղաքականություն և ընթացակարգեր

Բանկի ռիսկերի կառավարման քաղաքականության նպատակն է՝ բացահայտել, վերլուծել և կառավարել այն ռիսկերը, որոնց ենթակա է Բանկը, սահմանել ռիսկերի համապատասխան սահմանաչափեր և վերահսկման մեխանիզմներ, ինչպես նաև շարունակաբար վերահսկել ռիսկերի մակարդակները և դրանց համապատասխանությունը սահմանված սահմանաչափերին: Ռիսկերի կառավարման քաղաքականությունը և ընթացակարգերը կանոնավոր կերպով վերանայվում են՝ շուկայական պայմանների, առաջարկվող արտադրանքի ու ծառայությունների և ընդունված լավագույն մոտեցման փոփոխություններն արտացոլելու նպատակով:

Տնօրինությունը պատասխանատու է ռիսկերի կառավարման համակարգի վերահսկման, հիմնական ռիսկերի կառավարման և ռիսկերի կառավարման քաղաքականության ու ընթացակարգերի վերանայման, ինչպես նաև խոշոր գործարքների հաստատման համար:

Ռիսկերի կառավարման կենտրոնը պատասխանատու է ռիսկերի նվազեցմանն ուղղված միջոցառումների վերահսկման և իրականացման ու ռիսկերի համար սահմանված համապատասխան սահմանաչափերում Բանկի գործունեությունն ապահովելու համար: Ռիսկերի կառավարման կենտրոնի ղեկավարը պատասխանատու է ռիսկերի ընդհանուր կառավարման համար. նա նաև վերահսկում է ֆինանսական և ոչ ֆինանսական ռիսկերի բացահայտման, չափման, կառավարման և ներկայացման համար ընդհանուր սկզբունքների ու մեթոդների կիրառումը: Ռիսկերի կառավարման կենտրոնի ղեկավարն ուղղակիորեն հաշվետու է Տնօրինությանը և անուղղակիորեն՝ Տնօրենների խորհրդին:

Վարկային, շուկայական և իրացվելիության ռիսկերը՝ թե պորտֆելի և թե առանձին գործառնությունների մակարդակով կառավարվում ու վերահսկվում են Վարկային կոմիտեների համակարգի և Ակտիվների և պարտավորությունների կառավարման կոմիտեի («ԱՊԿԿ») միջոցով: Որոշումների կայացման գործընթացի արդյունավետությունը բարձրացնելու նպատակով Բանկը ստեղծել է վարկային կոմիտեների հիերարխիա՝ կախված ռիսկին ենթարկվածության չափից ու տեսակից:

Ռիսկի թե արտաքին, թե ներքին գործոնները բացահայտվում և կիրառվում են Բանկի կազմակերպչական կառուցվածքի շրջանակներում: Բանկը հատուկ ուշադրություն է դարձնում ռիսկի բոլոր գործոնների բացահայտմանը և ռիսկի նվազեցմանն ուղղված միջոցառումների նպատակահարմարության աստիճանի որոշմանը: Բացի ստանդարտ վարկային և շուկայական վերլուծությունների իրականացումից, Ռիսկերի կառավարման կենտրոնը վերահսկում է ֆինանսական և ոչ ֆինանսական ռիսկերը՝ կազմակերպելով կանոնավոր հանդիպումներ գործառնական միավորների հետ՝ նրանց մասնագիտական կարծիքը իմանալու համար:

32. **Ռիսկերի կառավարում (շարունակություն)**

(բ) Շուկայական ռիսկ

Շուկայական ռիսկը ֆինանսական գործիքների ապագա դրամական հոսքերի կամ դրանց իրական արժեքի փոփոխության ռիսկն է շուկայական գների փոփոխության արդյունքում: Շուկայական ռիսկը ներառում է արտարժույթի, տոկոսադրույքի և այլ գնային ռիսկերը: Շուկայական ռիսկն առաջանում է պարտքային և բաժնային ֆինանսական գործիքների բաց դիրքերի գծով, որոնք ենթակա են շուկայի ընդհանուր և առանձին փոփոխություններին ու շուկայական գների և արտարժույթի փոխարժեքների փոփոխություններին:

Շուկայական ռիսկի կառավարման նպատակը ռիսկի այնպիսի կառավարումն ու վերահսկումն է, որը թույլ կտա ընդունելի սահմաններում պահպանել այս ռիսկին ենթակա լինելու աստիճանը՝ միաժամանակ ապահովելով ռիսկի դիմաց եկամտաբերության օպտիմալացումը:

Շուկայական ռիսկի կառավարման համար պատասխանատվություն է կրում ԱՊԿԿ-ն՝ Գլխավոր տնօրենի նախագահությամբ: Շուկայական ռիսկի սահմանաչափերը հաստատվում են Տնօրինության կողմից՝ Ռիսկերի կառավարման կենտրոնի առաջարկությունների հիման վրա:

Շուկայական ռիսկը Բանկը կառավարում է՝ սահմանելով ֆինանսական գործիքների բաց դիրքի, տոկոսադրույքի, ժամկետայնության և արտարժույթային դիրքերի գծով սահմանաչափեր, որոնք կանոնավոր կերպով վերանայվում և հաստատվում են Տնօրենների խորհրդի կողմից:

Ի լրումն, Բանկը կիրառում է բազմաթիվ սթրես-թեստեր՝ առանձին առևտրային պորտֆելների և Բանկի ընդհանուր վիճակի վրա մի շարք առանձնահատուկ շուկայական սցենարների հնարավոր ֆինանսական ազդեցությունը ձևավորելու համար: Սթրես թեստերը թույլ են տալիս որոշել հնարավոր վնասի չափը, որը կարող է առաջանալ ծայրահեղ իրավիճակներում:

(i) Տոկոսադրույքի ռիսկ

Տոկոսադրույքի ռիսկը ֆինանսական գործիքների ապագա դրամական հոսքերի կամ դրանց իրական արժեքի հնարավոր փոփոխության ռիսկն է տոկոսադրույքների փոփոխման արդյունքում: Բանկը ենթակա է իր ֆինանսական վիճակի և դրամական միջոցների հոսքերի վրա գերակայող շուկայական տոկոսադրույքների տատանումների ազդեցությանը: Նման տատանումները կարող են ավելացնել տոկոսային մարժան, սակայն կարող են նաև նվազեցնել այն կամ հանգեցնել վնասների՝ տոկոսադրույքների անսպասելի փոփոխության դեպքում:

32. **Ռիսկերի կառավարում (շարունակություն)**

(բ) Շուկայական ռիսկ (շարունակություն)

Տոկոսադրույքի ճեղքվածքի վերլուծություն

Տոկոսադրույքի ռիսկը հիմնականում կառավարվում է տոկոսադրույքների ճեղքվածքների մոնիտորինգի և վերազնանշման նախապես սահմանված սահմանաչափեր սահմանելու միջոցով: Նշված սահմանաչափերի հետ համապատասխանության մոնիտորինգն իրականացվում է ԱՊԿԿ-ի կողմից, որին մոնիտորինգի ամենօրյա գործունեությունում աջակցում է Ակտիվների և պարտավորությունների կառավարման բաժինը: Ստորև ամփոփ կերպով ներկայացված է տոկոսադրույքների վերանայման ժամկետների վերլուծությունը հիմնական ֆինանսական գործիքների համար: Լողացող տոկոսադրույքով գործիքները խմբավորվում են ըստ իրենց վերազնահատման ամսաթվերի:

<i>հազ. դրամ</i>	<i>Մինչև 3 ամիս</i>	<i>3-6 ամիս</i>	<i>6-12 ամիս</i>	<i>1-5 տարի</i>	<i>Ավելի քան 5 տարի</i>	<i>Անտոկոս կամ ժամկետանց</i>	<i>Ընդամենը</i>
2017թ. դեկտեմբերի 31							
Ակտիվներ							
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	-	-	-	-	-	107,616,368	107,616,368
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ	71,032	11,148	227,212	5,553,955	3,918,271	106,460	9,888,078
Բանկերին տրված վարկեր և փոխատվություններ	8,739,698	3,003	194,200	419,556	-	1,486,433	10,842,890
Հակադարձ հետզնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ	8,675,394	-	-	-	-	-	8,675,394
Իրավաբանական և ֆիզիկական անձանց տրված վարկեր	45,210,195	26,637,844	42,751,699	269,762,881	73,670,449	9,277,663	467,310,731
Ակրեդիտիվների գծով ստացվելիք գումարներ	538,877	2,677,960	54,827	849,825	-	-	4,121,489
Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարներ	80,569	82,547	148,088	363,572	499,991	295,257	1,470,024
Ֆակտորինգի գծով ստացվելիք գումարներ	5,112,354	1,626,383	-	-	-	-	6,738,737
Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ	3,976,655	6,283,038	-	30,779,169	2,266,982	-	43,305,844
	<u>72,404,774</u>	<u>37,321,923</u>	<u>43,376,026</u>	<u>307,728,958</u>	<u>80,355,693</u>	<u>118,782,181</u>	<u>659,969,555</u>
Պարտավորություններ							
Բանկերի ավանդներ և մնացորդներ	(11,315,455)	(10,279,331)	(9,743,119)	(7,566,112)	(1,099,984)	-	(40,004,001)
Հետզնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ	(6,121,693)	-	-	-	-	-	(6,121,693)
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	(49,540,771)	(33,847,623)	(72,872,974)	(58,579,433)	(73,308)	(160,256,670)	(375,170,779)
Թողարկված պարտքային արժեթղթեր	(10,044,318)	-	(9,768,608)	(21,119,669)	-	-	(40,932,595)
Ստորադաս փոխառություններ	(34,991,181)	-	-	(5,928,587)	-	-	(40,919,768)
Այլ փոխառու միջոցներ	(51,515,318)	(46,549,396)	(2,719)	(29,592)	(31,069)	-	(98,128,094)
	<u>(163,528,736)</u>	<u>(90,676,350)</u>	<u>(92,387,420)</u>	<u>(93,223,393)</u>	<u>(1,204,361)</u>	<u>(160,256,670)</u>	<u>(601,276,930)</u>
Ամանցյալ գործիքների ազդեցությունը	4,565,943	-	(1,045,216)	(3,520,727)	-	-	-
Զուտ դիրք	<u>(86,558,019)</u>	<u>(53,354,427)</u>	<u>(50,056,610)</u>	<u>210,984,838</u>	<u>79,151,332</u>	<u>(41,474,489)</u>	<u>58,692,625</u>

32. **Ռիսկերի կառավարում (շարունակություն)**

(բ) Շուկայական ռիսկ (շարունակություն)

հազ. դրամ	Մինչև 3 ամիս	3-6 ամիս	6-12 ամիս	1-5 տարի	Ավելի քան 5 տարի	Ատոկոս կամ ժամկետաց	Ընդամենը
2016թ. դեկտեմբերի 31							
Ակտիվներ							
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	-	-	-	-	-	135,280,872	135,280,872
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ	3,418,111	1,542,423	49,967	6,794,780	496,553	106,458	12,408,292
Բանկերին տրված վարկեր և փոխառություններ	3,516,249	-	-	-	-	1,337,053	4,853,302
Հակադարձ հետզնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ	6,446,797	-	-	-	-	-	6,446,797
Իրավաբանական և ֆիզիկական անձանց տրված վարկեր	49,987,719	70,035,996	63,011,550	239,247,172	65,826,585	11,179,500	499,288,522
Ակրեդիտիվների գծով ստացվելիք գումարներ	2,591,904	749,057	1,640,657	2,725,685	-	-	7,707,303
Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարներ	123,519	118,237	240,466	900,996	656,804	-	2,040,022
Ֆակտորինգի գծով ստացվելիք գումարներ	2,841,855	1,341,007	-	-	-	-	4,182,862
Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ	13,258,091	8,148,865	675,060	14,031,035	142,591	-	36,255,642
	<u>82,184,245</u>	<u>81,935,585</u>	<u>65,617,700</u>	<u>263,699,668</u>	<u>67,122,533</u>	<u>147,903,883</u>	<u>708,463,614</u>
Պարտավորություններ							
Բանկերի ավանդներ և մնացորդներ	(3,724,091)	(893,022)	(4,516,288)	(60,870,822)	(1,830,659)	-	(71,834,882)
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	(74,215,296)	(31,244,657)	(67,043,411)	(53,453,037)	(69,119)	(188,583,166)	(414,608,686)
Թողարկված պարտքային արժեթղթեր	(109,244)	(24,650)	-	(17,990,606)	-	-	(18,124,500)
Ստորադաս փոխառություններ	(35,010,155)	-	-	(5,801,100)	-	-	(40,811,255)
Այլ փոխառու միջոցներ	(59,734,053)	(42,510,773)	(396,597)	(47,470)	(46,146)	-	(102,735,039)
	<u>(172,792,839)</u>	<u>(74,673,102)</u>	<u>(71,956,296)</u>	<u>(138,163,035)</u>	<u>(1,945,924)</u>	<u>(188,583,166)</u>	<u>(648,114,362)</u>
Ածանցյալ գործիքների ազդեցությունը	9,293,848	-	(2,364,707)	(6,049,248)	(879,893)	-	-
Զուտ ռիսկ	<u>(81,314,746)</u>	<u>7,262,483</u>	<u>(8,703,303)</u>	<u>119,487,385</u>	<u>64,296,716</u>	<u>(40,679,283)</u>	<u>60,349,252</u>

Միջին արդյունավետ տոկոսադրույքներ

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված են Բանկի տոկոսակիր ակտիվների և պարտավորությունների միջին արդյունավետ տոկոսադրույքները 2017թ. և 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝

	2017			2016		
	Միջին արդյունավետ տոկոսադրույք, %			Միջին արդյունավետ տոկոսադրույք, %		
	ՀՀ դրամ	ԱՄՆ դոլար	Այլ արտարժույթ	ՀՀ դրամ	ԱՄՆ դոլար	Այլ արտարժույթ
Տոկոսակիր ակտիվներ						
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ	11.7%	3.8%	-	13.3%	1.9%	-
Բանկերին տրված վարկեր և փոխառություններ	12.1%	2.8%	-	6.1%	-	-
Հակադարձ հետզնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ	6.4%	2.8%	-	6.9%	3.5%	-
Հաճախորդներին տրված վարկեր	13.6%	9.0%	7.42%	12.1%	8.2%	9.9%
Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարներ	14.5%	8.1%	12.0%	14.7%	8.8%	12.0%
Ֆակտորինգի գծով ստացվելիք գումարներ	14.4%	9.3%	14.0%	15.5%	10.8%	-
Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ	9.6%	4.1%	-	8.6%	5.0%	-
Տոկոսակիր պարտավորություններ						
Բանկերի ավանդներ և մնացորդներ	6.2%	2.4%	1.0%	9.7%	2.7%	0.9%
Հետզնման պայմանագրերի գծով վճարելիք գումարներ	-	1.5%	-	-	-	-
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ						
- ժամկետային ավանդներ	11.3%	4.6%	3.1%	12.1%	5.8%	5.9%
Թողարկված պարտքային արժեթղթեր	10.0%	5.8%	3.3%	10.8%	5.6%	-
Ստորադաս փոխառություններ	-	8.5%	-	-	8.1%	-
Այլ փոխառու միջոցներ	8.9%	6.1%	-	9.0%	6.7%	-

32. **Ռիսկերի կառավարում (շարունակություն)**

(բ) Շուկայական ռիսկ (շարունակություն)

Տոկոսադրույքի ռիսկ

Տոկոսադրույքի ռիսկը առաջանում է տոկոսադրույքի փոփոխության հավանականությունից, որը ազդում է հետագա դրամական հոսքերի և ֆինանսական գործիքների իրական արժեքի վրա: Հետևյալ աղյուսակը ցույց է տալիս ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության զգայունությունը տոկոսադրույքների հնարավոր խելամիտ փոփոխությունների նկատմամբ, մնացած այլ փոփոխականները թողնելով անփոփոխ:

Ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության զգայունությունը տոկոսադրույքի ենթադրյալ փոփոխության ազդեցությունն է մեկ տարվա տոկոսային եկամտի վրա՝ հիմնված դեկտեմբերի 31-ին առկա լրղացող տոկոսադրույքով ոչ առևտրային ֆինանսական ակտիվների և պարտավորությունների վրա: Կապիտալի զգայունությունը հաշվարկվում է դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆիքսված տոկոսադրույքով վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների վերազնահատմամբ: Հաշվի են առնվում տոկոսադրույքների փոփոխությունները՝ հիմնված այն ենթադրության վրա, որ տեղի են ունենում եկամտաբերության կորերի զուգահեռ տեղաշարժեր:

<i>Արժույթ</i>	<i>Բազիսային կետի ավելացում 2017</i>	<i>Ջուտ տոկոսային եկամտի զգայունությունը 2017 հազ. դրամ</i>	<i>Կապիտալի և այլ համապարփակ եկամտի զգայունությունը 2017 հազ. դրամ</i>
ՀՀ դրամ	1.60%	(27,133)	(352,276)
ԱՄՆ դոլար	1.30%	(182,011)	(173,767)

<i>Արժույթ</i>	<i>Բազիսային կետի նվազում 2017</i>	<i>Ջուտ տոկոսային եկամտի զգայունությունը 2017 հազ. դրամ</i>	<i>Կապիտալի և այլ համապարփակ եկամտի զգայունությունը 2017 հազ. դրամ</i>
ՀՀ դրամ	3.50%	59,354	770,604
ԱՄՆ դոլար	0.50%	92,938	66,833

<i>Արժույթ</i>	<i>Բազիսային կետի ավելացում 2016</i>	<i>Ջուտ տոկոսային եկամտի զգայունությունը 2016 հազ. դրամ</i>	<i>Կապիտալի և այլ համապարփակ եկամտի զգայունությունը 2016 հազ. դրամ</i>
ՀՀ դրամ	3.70%	(226,335)	(517,173)
ԱՄՆ դոլար	1.00%	(135,074)	(34,336)

<i>Արժույթ</i>	<i>Բազիսային կետի նվազում 2016</i>	<i>Ջուտ տոկոսային եկամտի զգայունությունը 2016 հազ. դրամ</i>	<i>Կապիտալի և այլ համապարփակ եկամտի զգայունությունը 2016 հազ. դրամ</i>
ՀՀ դրամ	3.70%	226,335	517,173
ԱՄՆ դոլար	1.00%	135,074	34,336

Արտարժույթի ռիսկ

Բանկն ունի մի շարք արտարժույթներով արտահայտված ակտիվներ և պարտավորություններ:

Արտարժույթի ռիսկը արտարժույթի փոխարժեքների փոփոխության արդյունքում ֆինանսական գործիքի իրական արժեքի կամ դրանից ստացվող դրամական հոսքերի տատանման ռիսկն է:

Ստորև բերվող աղյուսակը ներկայացնում է արտարժույթային դիրքի կառուցվածքը ֆինանսական ակտիվների և պարտավորությունների համար առ 31 դեկտեմբերի 2017թ.:

32. **Ռիսկերի կառավարում (շարունակություն)**

(բ) Շուկայական ռիսկ (շարունակություն)

<i>(հազ.դրամ)</i>	<i>ԱՄՆ դոլար</i>	<i>Եվրո</i>	<i>Այլ արտարժույթ</i>	<i>Ընդամենը</i>
Ակտիվներ				
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	25,075,556	5,331,961	4,107,302	34,514,819
Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներ	1,155,334	176,446	–	1,331,780
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ	4,525,746	–	–	4,525,746
Բանկերին տրված վարկեր և փոխատվություններ	9,149,220	174,030	11,240	9,334,490
Հակադարձ հետզման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ	852,065	–	–	852,065
Իրավաբանական և ֆիզիկական անձանց տրված վարկեր	350,982,331	36,265,542	3,921,191	391,169,064
Ակրեդիտիվների գծով ստացվելիք գումարներ	3,126,451	1,003,297	–	4,129,748
Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարներ	1,366,918	183,331	–	1,550,249
Ֆակտորինգի գծով ստացվելիք գումարներ	5,403,801	–	707,154	6,110,955
Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ	12,370,220	–	–	12,370,220
Այլ ակտիվներ	1,530,736	198,305	588,828	2,317,869
Ընդամենը ակտիվներ	415,538,378	43,332,912	9,335,715	468,207,005
Պարտավորություններ				
Բանկերի ավանդներ և մնացորդներ	24,179,459	5,976,771	53,642	30,209,872
Հակադարձ հետզման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ	6,121,693	–	–	6,121,693
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	226,317,577	26,725,025	6,629,080	259,671,682
Թողարկված պարտքային արժեթղթեր	36,597,654	1,753,359	–	38,351,013
Ստորադաս փոխառություններ	40,919,768	–	–	40,919,768
Այլ փոխառու միջոցներ	88,171,140	–	–	88,171,140
Այլ պարտավորություններ	573,228	145,807	76,951	795,986
Ընդամենը պարտավորություններ	422,880,519	34,600,962	6,759,673	464,241,154
Զուտ դիրքը	(7,342,141)	8,731,950	2,576,042	3,965,851
Ածանցյալ գործիքների ազդեցությունը	11,962,384	(8,701,500)	(2,043,075)	1,217,809
Զուտ դիրքը՝	4,620,243	30,450	532,967	5,183,660

Ստորև բերվող աղյուսակը ներկայացնում է արտարժույթային դիրքի կառուցվածքը ֆինանսական ակտիվների և պարտավորությունների համար առ 31 դեկտեմբերի 2016թ.:

<i>(հազ.դրամ)</i>	<i>ԱՄՆ դոլար</i>	<i>Եվրո</i>	<i>Այլ արտարժույթ</i>	<i>Ընդամենը</i>
Ակտիվներ				
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	60,519,867	16,343,707	1,286,790	78,150,364
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ	5,046,032	–	–	5,046,032
Բանկերին տրված վարկեր և փոխատվություններ	183,897	2,197,338	62,810	2,444,045
Հակադարձ հետզման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ	1,196,793	–	–	1,196,793
Իրավաբանական և ֆիզիկական անձանց տրված վարկեր	360,368,545	14,339,351	13,550	374,721,446
Ակրեդիտիվների գծով ստացվելիք գումարներ	4,995,759	2,711,546	–	7,707,305
Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարներ	1,585,355	226,224	–	1,811,579
Ֆակտորինգի գծով ստացվելիք գումարներ	3,927,965	–	–	3,927,965
Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ	7,771,091	–	–	7,771,091
Այլ ակտիվներ	722,995	26,648	381,770	1,131,413
Ընդամենը ակտիվներ	446,318,299	35,844,814	1,744,920	483,908,033
Պարտավորություններ				
Բանկերի ավանդներ և մնացորդներ	9,911,600	2,725,678	174,652	12,811,930
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	278,789,515	33,005,620	2,533,880	314,329,015
Թողարկված պարտքային արժեթղթեր	17,106,596	–	–	17,106,596
Ստորադաս փոխառություններ	40,811,255	–	–	40,811,255
Այլ փոխառու միջոցներ	88,947,284	–	–	88,947,284
Այլ պարտավորություններ	436,779	113,422	7,192	557,393
Ընդամենը պարտավորություններ	436,003,029	35,844,720	2,715,724	474,563,473
Զուտ դիրքը	10,315,270	94	(970,804)	9,344,560
Ածանցյալ գործիքների ազդեցությունը	(404,937)	–	1,377,911	972,974
Զուտ դիրքը	9,910,333	94	407,107	10,317,534

32. Ռիսկերի կառավարում (շարունակություն)

(բ) Շուկայական ռիսկ (շարունակություն)

2017թ. և 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ դրամի փոխարժեքի արժևորումը հետևյալ արտարժույթների նկատմամբ կավելացնեն/կնվազեցնեն (կնվազեցնեն) կապիտալը և շահույթը կամ վնասը ստորև ներկայացված գումարների չափով (պայմանավորված փոխարժեքի նկատմամբ զգայուն դրամային ակտիվների և պարտավորությունների իրական արժեքով): Այս վերլուծությունը հիմնված է արտարժույթների փոխարժեքների տատանումների վրա, որոնք Բանկը դիտարկում է որպես հնարավոր՝ հաշվետու ժամանակաշրջանի վերջում: Վերլուծությունը ենթադրում է, որ մյուս բոլոր փոփոխականները, մասնավորապես տոկոսադրույքները, կմնան անփոփոխ:

	2017		2017	
	Արժևորում	Շահույթ կամ վնաս հազ. դրամ	Արժեզրկում	Շահույթ կամ վնաս հազ. դրամ
ՀՀ դրամը ԱՄՆ դոլարի նկատմամբ	3.50%	(161,709)	3.50%	161,709
ՀՀ դրամը Եվրոյի նկատմամբ	13.70%	(4,172)	6.30%	1,918
	2016		2016	
	Արժևորում	Շահույթ կամ վնաս հազ. դրամ	Արժեզրկում	Շահույթ կամ վնաս հազ. դրամ
ՀՀ դրամը ԱՄՆ դոլարի նկատմամբ	6.00%	(594,620)	6.00%	594,620
ՀՀ դրամը Եվրոյի նկատմամբ	11.00%	(10)	11.00%	10

2017թ. և 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ դրամի փոխարժեքի արժեզրկումը վերոնշյալ արտարժույթների նկատմամբ կունենար գումարային առումով նույն, սակայն հակառակ ազդեցություն՝ ելնելով այն ենթադրությունից, որ մյուս բոլոր փոփոխականները կմնան անփոփոխ:

(գ) Վարկային ռիսկ

Վարկային ռիսկը ֆինանսական վնաս կրելու ռիսկն է, երբ փոխառուն կամ ֆինանսական գործիքի պայմանագրային կողմն ի վիճակի չի լինում կատարել իր պայմանագրային պարտականությունները Բանկի նկատմամբ: Բանկը մշակել է քաղաքականություն և ընթացակարգեր վարկային ռիսկը կառավարելու համար (ինչպես ճանաչված ֆինանսական ակտիվների, այնպես էլ չճանաչված պայմանագրային պարտավորվածությունների համար), ներառյալ պորտֆելի կենտրոնացվածության սահմանափակմանը վերաբերող ցուցումները և Վարկային կոմիտեի ու Ռիսկերի կառավարման կենտրոնի ստեղծումը, որոնք ակտիվորեն վերահսկում են վարկային ռիսկը: Բանկի վարկային քաղաքականությունն ուսումնասիրվում և հաստատվում է Տնօրինության կողմից:

Վարկային քաղաքականությունը սահմանում է՝

- ▶ վարկային դիմումների դիտարկման և հաստատման ընթացակարգերը,
- ▶ վարկառուների (իրավաբանական և ֆիզիկական անձանց) վճարունակության գնահատման մեթոդաբանությունը,
- ▶ գրավի գնահատման մեթոդաբանությունը,
- ▶ վարկային փաստաթղթերի նկատմամբ պահանջները,
- ▶ վարկերի և այլ վարկային գործիքների շարունակական վերահսկման և մոնիտորինգի ընթացակարգերը:

Իրավաբանական անձանց տրված վարկերի դիմումները պատրաստվում և վերլուծվում են Կորպորատիվ բանկային ծառայությունների վարչության համապատասխան աշխատակիցների կողմից: Կորպորատիվ բանկային ծառայությունների վարչությունը պատասխանատու է իրավաբանական անձանց վարկային պորտֆելի համար: Վերլուծական հաշվետվությունները հիմնված են հաճախորդի գործունեության և գործունեության ֆինանսական արդյունքների կառուցվածքային վերլուծության վրա: Այնուհետև, վարկային դիմումը և հաշվետվությունն անցնում են անկախ ուսումնասիրություն Ռիսկերի կառավարման վարչության կողմից, որը տալիս է երկրորդ եզրակացությունը՝ ստուգելով համապատասխանությունը վարկային քաղաքականության պահանջներին: Վարկային կոմիտեն ստուգում է վարկի դիմումը Վարկավորման բաժնի կողմից ներկայացված նյութերի հիման վրա: Նախքան վարկային կոմիտեի վերջնական հաստատումը, առանձին գործարքներն ուսումնասիրվում են նաև Իրավաբանական բաժնի կողմից՝ կախված ռիսկերի առանձնահատկություններից:

32. **Ռիսկերի կառավարում (շարունակություն)**

(գ) Վարկային ռիսկ (շարունակություն)

Բանկը շարունակաբար վերահսկում է առանձին վարկերի վիճակը և կանոնավոր կերպով վերազնահատում է իր հաճախորդների վճարունակությունը: Ուսումնասիրությունն իրականացվում է հաճախորդի ամենավերջին ֆինանսական հաշվետվությունների և վարկառուի կողմից տրամադրված կամ Բանկի կողմից այլ կերպ ձեռք բերված տեղեկատվության հիման վրա: Ֆիզիկական անձանց կողմից ներկայացվող վարկի դիմումներն ուսումնասիրվում են մանրաձախ վարկավորման ստորաբաժանումների կողմից:

Բացի առանձին հաճախորդների վերլուծությունից, որչ վարկային պորտֆելը գնահատվում է Ռիսկերի կառավարման բաժնի կողմից՝ վարկերի կենտրոնացման և շուկայական ռիսկերի տեսանկյունից:

Բանկի վարկային ռիսկի առավելագույն չափը, որպես կանոն, արտացոլվում է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում՝ ֆինանսական ակտիվների հաշվեկշռային արժեքներում և չճանաչված պայմանագրային պարտավորվածություններում: Ակտիվների և պարտավորությունների հնարավոր հաշվանցումն էական ազդեցություն չունի պոտենցիալ վարկային ռիսկի նվազեցման վրա:

Սովորաբար գրավ չի պահանջվում ածանցյալ ֆինանսական գործիքների գծով պահանջների, արժեթղթերում կատարած ներդրումների և բանկերին տրված վարկերի և փոխատվությունների դիմաց, բացառությամբ այն դեպքերի, երբ արժեթղթերը պահվում են՝ որպես հակադարձ հետզնման պայմանագրերի և արժեթղթերի փոխառության գործարքների մաս:

Հաճախորդներին տրված վարկերի և փոխատվությունների գրավի և վերջիններիս գծով վարկային ռիսկի կենտրոնացման վերլուծությունը ներկայացված է Ծանոթագրություն 21-ում:

Զճանաչված պայմանագրային պարտավորվածությունների հետ կապված վարկային ռիսկին ենթակա լինելու առավելագույն չափը հաշվետու ժամանակաշրջանի դրությամբ ներկայացված է Ծանոթագրություն 34-ում:

Ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների հաշվանցում

Ստորև բերվող աղյուսակներում ներկայացված բացահայտումները ներառում են ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները, որոնք՝

- հաշվանցվում են Բանկի ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում կամ
- հանդիսանում են իրավաբանորեն ամրագրված հաշվանցման գլխավոր համաձայնագրի կամ նմանատիպ գործիքներին վերաբերող նմանատիպ պայմանագրերի առարկա՝ անկախ այն հանգամանքից, թե արդյոք այդ ֆինանսական գործիքները հաշվանցվում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, թե՛ ոչ:

Նմանատիպ պայմանագրերը ներառում են ածանցյալ հաշվանցման պայմանագրերը, հետզնման գլխավոր պայմանագրերը և արժեթղթերի փոխառության գլոբալ գլխավոր պայմանագրերը: Այնպիսի ֆինանսական գործիքներ, ինչպիսիք են վարկերը և ավանդները, չեն բացահայտվում ստորև ներկայացվող աղյուսակներում, բացառությամբ այն դեպքերի, երբ հաշվանցվում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում:

Բանկը ստանում և տրամադրում է գրավ շուկայում շրջանառվող արժեթղթերի տեսքով՝ հետզնման և հակադարձ հետզնման պայմանագրերի գծով:

Նման գրավի համար գործում են շուկայում ընդունված ստանդարտ պայմանները: Սա նշանակում է, որ որպես գրավ ստացված/տրամադրված արժեթղթերը կարող են գրավադրվել կամ վաճառվել գործարքի գործողության ժամկետի ընթացքում, սակայն պետք է վերադարձվեն մինչև գործարքի ավարտը: Այս պայմանները յուրաքանչյուր պայմանագրային կողմին իրավունք են տալիս նաև դադարեցնել համապատասխան գործարքը՝ պայմանագրային կողմի կողմից գրավ տրամադրելու անկարողության պատճառով:

Վերը նշված պայմանագրերը չեն բավարարում ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում հաշվանցման պայմաններին: Պատճառն այն է, որ այս պայմանագրերը տալիս են ճանաչված գումարները հաշվանցելու իրավունք, որն իրագործելի է միայն Բանկի կամ գործընկերոջ կողմից պարտականությունների չկատարման, անվճարունակ դառնալու կամ սնանկացման դեպքում: Բացի այդ, Բանկը և վերջինիս պայմանագրային կողմերը չունեն հաշվարկը զուտ հիմունքով իրականացնելու կամ միաժամանակ ակտիվն իրացնելու և պարտավորությունը մարելու մտադրություն:

32. **Ռիսկերի կառավարում (շարունակություն)**

(գ) Վարկային ռիսկ (շարունակություն)

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված են հաշվանցման ենթակա, իրավաբանորեն ամրագրված հաշվանցման գլխավոր համաձայնագրի կամ նմանատիպ պայմանագրերի առարկա հանդիսացող ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

Ֆինանսական ակտիվների/ պարտավորությունների տեսակները հազ. դրամ	Ճանաչված ֆինանսական ակտիվի/պարտավորության համախառն գումար	Ֆին. վիճակի մասին հաշվետվությունում հաշվանցված ճանաչված ֆինանսական ակտիվի/պարտավորության համախառն գումար	Ֆին. վիճակի մասին հաշվետվությունում ներկայացված ֆինանսական ակտիվի/պարտավորությունների զուտ գումար	Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում չհաշվանցված գումարներ	Ֆինանսական գործիքներ	Զուտ գումար
Հակադարձ հետզմման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ	8,675,394	-	8,675,394	(8,675,394)	-	-
Ընդամենը ֆինանսական ակտիվներ	8,675,394	-	8,675,394	(8,675,394)	-	-
Հետզմման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ	(6,121,693)	-	(6,121,693)	5,968,305	-	(153,388)
Ընդամենը ֆինանսական պարտավորություններ	(6,121,693)	-	(6,121,693)	5,968,305	-	(153,388)

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված են հաշվանցման ենթակա, իրավաբանորեն ամրագրված հաշվանցման գլխավոր համաձայնագրի կամ նմանատիպ պայմանագրերի առարկա հանդիսացող ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

Ֆինանսական ակտիվների/պարտավորությունների տեսակները հազ. դրամ	Ճանաչված ֆինանսական ակտիվի/պարտավորության համախառն գումար	Ֆին. վիճակի մասին հաշվետվությունում հաշվանցված ճանաչված ֆինանսական ակտիվի/պարտավորության համախառն գումար	Ֆին. վիճակի մասին հաշվետվությունում ներկայացված ֆինանսական ակտիվի/պարտավորությունների զուտ գումար	Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում չհաշվանցված գումարներ	Ֆինանսական գործիքներ	Զուտ գումար
Հակադարձ հետզմման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ	6,446,797	-	6,446,797	(6,446,797)	-	-
Ընդամենը ֆինանսական ակտիվներ	6,446,797	-	6,446,797	(6,446,797)	-	-
Հետզմման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ	-	-	-	-	-	-
Ընդամենը ֆինանսական պարտավորություններ	-	-	-	-	-	-

Վերը նշված աղյուսակում բացահայտված՝ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներկայացված ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների համախառն և զուտ գումարները ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում չափվում են ամորտիզացված արժեքով:

(դ) Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկը ենթադրում է, որ Բանկը կունենա դժվարություններ ֆինանսական գործիքների հետ կապված այն պարտականությունները կատարելիս, որոնք մարվում են դրամական միջոցների կամ մեկ այլ ֆինանսական ակտիվի միջոցով: Իրացվելիության ռիսկն առաջանում է ակտիվների և պարտավորությունների ժամկետայնության անհամապատասխանության դեպքում: Ակտիվների և պարտավորությունների ժամկետայնության և տոկոսադրույքների համապատասխանությունը և/կամ վերահսկվող անհամապատասխանությունն իրացվելիության կառավարման էական գործոն է: Ակտիվների և պարտավորությունների ժամկետայնության ամբողջական համապատասխանությունը բնորոշ չէ ֆինանսական կազմակերպություններին՝ պայմանավորված իրականացվող գործարքների տարաբնույթ լինելով և ժամկետների անորոշությամբ: Անհամապատասխանությունը հնարավորություն է տալիս բարձրացնել շահութաբերությունը, սակայն կարող է նաև մեծացնել իրացվելիության ռիսկը:

32. **Ռիսկերի կառավարում (շարունակություն)**

(դ) Իրացվելիության ռիսկ (շարունակություն)

Բանկի կողմից իրացվելիության ռիսկի կառավարման նպատակն է՝ ցանկացած պահի ապահովել բոլոր անհրաժեշտ միջոցները՝ դրամական միջոցների հոսքերի հետ կապված պարտավորությունները մարելու համար: Բանկի իրացվելիության ռիսկի կառավարման քաղաքականությունն ուսումնասիրվում և հաստատվում է Տնօրենների խորհրդի կողմից:

Բանկը ձգտում է ակտիվորեն պահպանել ֆինանսավորման աղբյուրների տարբերակված և կայուն կառուցվածքը, որը ներառում է այլ բանկերից ստացված երկարաժամկետ ու կարճաժամկետ վարկերը, հիմնական հաճախորդ իրավաբանական և ֆիզիկական անձանց ավանդները, ինչպես նաև բարձր իրացվելի ակտիվների տարբերակված պորտֆելը՝ իրացվելիության անկանխատեսելի պահանջներն արագ և հեշտությամբ բավարարելու համար:

Բանկի իրացվելիության ռիսկի կառավարման քաղաքականությունը պահանջում է՝

- ▶ դրամական միջոցների հոսքերի կանխատեսում ըստ հիմնական արտարժույթների և դրամական միջոցների այդ հոսքերի հետ կապված պահանջվող իրացվելի ակտիվների մակարդակի դիտարկում,
- ▶ ֆինանսավորման աղբյուրների տարբերակված կառուցվածքի պահպանում,
- ▶ պարտքերի կենտրոնացման և կառուցվածքի կառավարում,
- ▶ պարտավորությունների ֆինանսավորման ծրագրերի վարում,
- ▶ բարձր իրացվելիությամբ ակտիվների պորտֆելի վարում, որը կարելի է հեշտությամբ իրացնել՝ որպես ապահովություն դրամական միջոցների ներհոսքի դադարեցման դեպքում,
- ▶ իրացվելիության և ֆինանսավորման անընդհատության ծրագրերի ապահովում,
- ▶ օրենսդրական պահանջների հետ իրացվելիության ցուցանիշների համապատասխանության վերահսկում:

Ակտիվների և պարտավորությունների կառավարման բաժինը կառուցվածքային ստորաբաժանումներից ստանում է տեղեկատվություն վերջիններիս ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրացվելիության կառուցվածքի ու ապագայում պլանավորվող գործունեությունից ակնկալվող դրամական միջոցների հոսքերի կանխատեսումների վերաբերյալ: Այնուհետև, Ակտիվների և պարտավորությունների կառավարման բաժինը ձևավորում է կարճաժամկետ իրացվելի ակտիվների համապատասխան պորտֆել, որը հիմնականում բաղկացած է առևտրային նպատակներով պահվող կարճաժամկետ իրացվելի արժեթղթերից, բանկերին տրված վարկերից և այլ միջբանկային գործիքներից՝ նպատակ ունենալով ապահովել իրացվելիության բավարար մակարդակ Բանկում:

Ակտիվների և պարտավորությունների կառավարման բաժինը վերահսկում է իրացվելիության դիրքը օրական կտրվածքով և իրականացնում է կանոնավոր «սթրես-թեսթեր» իրացվելիության գծով՝ շուկայի սովորական և ավելի խիստ պայմանների ենթադրության կիրառմամբ: Սովորական շուկայական պայմաններում Բանկի իրացվելիության դիրքի վերաբերյալ տեղեկատվություն ներառող հաշվետվությունները ներկայացվում են վերադաս ղեկավարությանը շաբաթական կտրվածքով: Բանկի իրացվելիության կառավարման վերաբերյալ որոշումները ընդունում է ԱՊԿԿ-ն, իսկ Ակտիվների և պարտավորությունների կառավարման բաժինը իրականացնում է դրանք:

Ստորև ներկայացվում է դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի ֆինանսական պարտավորությունների բաշխումը՝ ըստ միևնույն մարումը մնացած ժամկետների՝ պայմանագրային չգեղջկված պարտավորությունների հիման վրա:

Բացառություն են կազմում համախառն մարվող ածանցյալ գործիքները, որոնք ներկայացված են ըստ պայմանագրային մարման ժամկետների: Պարտավորությունները, որոնք ենթակա են ցպահանջ մարման, դասակարգվում են այնպես, ինչպես եթե մարման պահանջը ներկայացված լիներ ամենավաղ հնարավոր ամսաթիվ: Սակայն Բանկը գտնում է, որ շատ հաճախորդներ չեն պահանջի վճարումը այն ամենավաղ հնարավոր ամսաթվի դրությամբ, որով Բանկը պարտավորված կլինի կատարել վճարումը, և աղյուսակը չի արտացոլում ակնկալվող դրամական հոսքերը՝ հաշվարկված Բանկի՝ անցյալ ժամանակաշրջաններում ավանդները պահանջելու պատմական վիճակագրության հիման վրա:

32. Ռիսկերի կառավարում (շարունակություն)

(դ) Իրացվելիության ռիսկ (շարունակություն)

Ստորև ներկայացված է ֆինանսական պարտավորությունների ժամկետայնության վերլուծությունը 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

(հազ. դրամ)	Ցպահանջ և մինչև 1 ամիս	1-ից 3 ամիս	3-ից 6 ամիս	6-ից 12 ամիս	1-ից 5 տարի	Ավելի քան 5 տարի	Արտահոսքի/ (ներհոսքի) ընդհանուր համախառն գումար	Հաշվեկշռային արժեք
Ոչ ածանցյալ պարտավորություններ								
Բանկերի ավանդներ և մնացորդներ	10,905,360	677,271	10,493,349	10,083,331	9,401,436	1,515,481	43,076,228	40,004,001
Հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ	6,121,693	-	-	-	-	-	6,121,693	6,121,693
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ թողարկված պարտքային արժեթղթեր	76,528,416	57,389,681	69,099,404	76,715,037	109,446,144	91,239	389,269,921	375,170,779
Ստորադաս փոխառություններ	396,789	557,928	599,124	10,660,872	32,697,239	-	44,911,952	40,932,595
Ստորադաս փոխառություններ	1,341,759	955,617	839,812	1,679,624	48,369,135	-	53,185,947	40,919,768
Այլ փոխառու միջոցներ	1,696,247	9,992,480	3,953,724	24,794,550	70,892,191	6,853,935	118,183,127	98,128,094
Այլ ֆինանսական պարտավորություններ	967,739	111,902	2,751,256	-	-	-	3,830,897	3,830,897
Ջուտ մարվող ածանցյալ պարտավորություններ	74,877	-	-	-	-	-	74,877	74,877
Համախառն մարվող ածանցյալ ֆինանսական գործիքներ								
-Վճարվելիք պայմանագրային գումարներ	-	(54,473,593)	-	-	-	-	(54,473,593)	(611,429)
- Ստացվելիք պայմանագրային գումարներ	-	54,480,970	-	-	-	-	54,480,970	484,540
Ընդամենը ֆինանսական պարտավորություններ	<u>98,032,880</u>	<u>69,692,256</u>	<u>87,736,669</u>	<u>123,933,414</u>	<u>270,806,145</u>	<u>8,460,655</u>	<u>658,662,019</u>	<u>605,055,815</u>
Վարկային պարտավորվածություններ	<u>42,899,097</u>	<u>-</u>	<u>-</u>	<u>-</u>	<u>-</u>	<u>-</u>	<u>42,899,097</u>	<u>42,899,097</u>

Ստորև ներկայացված է ֆինանսական պարտավորությունների ժամկետայնության վերլուծությունը 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

հազ. դրամ	Ցպահանջ և մինչև 1 ամիս	1-ից 3 ամիս	3-ից 6 ամիս	6-ից 12 ամիս	Ավելի քան 1 տարի	Ավելի քան 5 տարի	Արտահոսքի/ (ներհոսքի) ընդհանուր համախառն գումար	Հաշվեկշռային արժեք
Ոչ ածանցյալ պարտավորություններ								
Բանկերի ավանդներ և մնացորդներ	2,100,331	3,138,977	2,407,413	7,544,034	73,997,839	3,755,885	92,944,479	71,834,882
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ թողարկված պարտքային արժեթղթեր	177,880,935	44,547,002	80,066,279	75,153,976	73,936,195	372,751	451,957,138	414,608,686
Ստորադաս փոխառություններ	145,337	113,980	174,723	300,146	18,698,254	-	19,432,440	18,124,500
Ստորադաս փոխառություններ	1,287,282	922,310	804,708	1,609,415	27,985,181	28,181,381	60,790,277	40,811,255
Այլ փոխառություններ	4,249,206	13,524,822	5,206,334	11,539,299	91,124,295	12,413,978	138,057,934	102,735,039
Այլ ֆինանսական պարտավորություններ	545,421	165,393	2,062,933	-	-	-	2,773,747	2,773,747
Ջուտ մարվող ածանցյալ պարտավորություններ	2,645	-	-	-	-	-	2,645	2,645
Համախառն մարվող ածանցյալ ֆինանսական գործիքներ								
-Վճարվելիք պայմանագրային գումարներ	-	-	-	(92,312,915)	(72,559,894)	-	(164,872,809)	(2,532,638)
- Ստացվելիք պայմանագրային գումարներ	-	-	-	92,683,275	72,781,457	-	165,464,732	3,056,734
Ընդամենը ֆինանսական պարտավորություններ	<u>186,211,157</u>	<u>62,412,484</u>	<u>90,722,390</u>	<u>96,517,230</u>	<u>285,963,327</u>	<u>44,723,995</u>	<u>766,550,583</u>	<u>651,414,850</u>
Վարկային պարտավորվածություններ	<u>43,908,219</u>	<u>-</u>	<u>-</u>	<u>-</u>	<u>-</u>	<u>-</u>	<u>43,908,219</u>	<u>43,908,219</u>

Վերոնշյալ և ստորև ներկայացված աղյուսակներում հաճախորդներից ներգրավված միջոցների մեջ ներառված են ֆիզիկական անձանց ժամկետային ավանդները: ՀՀ օրենսդրության համաձայն, ֆիզիկական անձից կարող են ցանկացած պահի ետ պահանջել իրենց ժամկետային ավանդները: Այս ավանդները դասակարգվում են ըստ պայմանագրային մարման ժամկետների:

32. Ռիսկերի կառավարում (շարունակություն)

(դ) Իրացվելիության ռիսկ (շարունակություն)

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչված գումարների վերլուծությունն ըստ մարման ակնկալվող ժամկետների:

հազ. դրամ	Ցպահանջ և մինչև 1 ամիս	1-ից 3 ամիս	3-ից 12 ամիս	1-ից 5 տարի	Ավելի քան 5 տարի	Անժամկետ	Ժամկետանց	Ընդամենը
Ակտիվներ								
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	107,616,368	-	-	-	-	-	-	107,616,368
Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներ	116,092	836,773	5,190	2,598,278	411,731	-	-	3,968,064
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ	26,735	53,087	229,570	5,553,955	3,918,271	106,460	-	9,888,078
Բանկերին տրված վարկեր և փոխատվություններ	8,727,521	12,177	197,203	419,555	-	1,486,434	-	10,842,890
Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ	8,675,394	-	-	-	-	-	-	8,675,394
Իրավաբանական և ֆիզիկական անձանց տրված վարկեր	16,472,285	24,890,862	61,554,619	253,415,202	101,700,101	-	9,277,662	467,310,731
Ակրեդիտիվների գծով ստացվելիք գումարներ	63,936	474,941	2,732,786	849,826	-	-	-	4,121,489
Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարներ	33,729	46,840	230,635	363,572	499,991	-	295,257	1,470,024
Ֆակտորինգի գծով ստացվելիք գումարներ	1,605,775	3,506,579	1,626,383	-	-	-	-	6,738,737
Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ	250,184	3,726,470	6,283,038	30,779,169	2,266,983	-	-	43,305,844
Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ	-	-	-	-	-	7,126,916	-	7,126,916
Այլ ակտիվներ	1,649,866	677,400	3,442,533	-	-	887,763	-	6,657,562
Ընդամենը ակտիվներ	145,237,885	34,225,129	76,301,957	293,979,557	108,797,077	9,607,573	9,572,919	677,722,097
Պարտավորություններ								
Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներ	74,877	611,429	-	-	-	-	-	686,306
Հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ	6,121,693	-	-	-	-	-	-	6,121,693
Բանկերի ավանդներ և մնացորդներ	10,813,773	501,682	20,022,450	7,566,112	1,099,984	-	-	40,004,001
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	75,395,507	55,390,566	139,347,562	104,963,837	73,307	-	-	375,170,779
Թողարկված պարտքային արժեթղթեր	197,081	158,512	9,768,530	30,808,472	-	-	-	40,932,595
Ստորդաքս փոխառություններ	1,061,822	395,743	-	39,462,203	-	-	-	40,919,768
Այլ փոխառու միջոցներ	1,176,595	8,990,221	24,365,684	57,684,363	5,911,231	-	-	98,128,094
Ընթացիկ հարկային պարտավորություններ	-	-	990,256	-	-	-	-	990,256
Հետաձգված հարկային պարտավորություններ	-	-	-	1,025,103	-	-	-	1,025,103
Այլ պարտավորություններ	967,739	111,902	2,761,990	-	-	-	-	3,841,631
Ընդամենը պարտավորություններ	95,809,087	66,160,055	197,256,472	241,510,090	7,084,522	-	-	607,820,226
Զուտ դիրքը	49,428,798	(31,934,926)	(120,954,515)	52,469,467	101,712,555	9,607,573	9,572,919	69,901,871
Կուտակային զուտ դիրքը	49,428,798	17,493,872	(103,460,643)	(50,991,176)	50,721,379	-	-	-

32. Ռիսկերի կառավարում (շարունակություն)

(դ) Իրացվելիության ռիսկ (շարունակություն)

Վերը ներկայացված աղյուսակում առկա մարման վերլուծությունը չի արտացոլում ժամկետային ավանդների պատմական կայունությունը: Հիմնվելով նախկին փորձի ուսումնասիրության վրա, 1 տարի կամ պակաս մարման ժամկետ ունեցող ժամկետային ավանդների 45% -ը փաստացի երկարաձգվում է ժամկետի վերջում, այդ իսկ պատճառով դրանց մարման իրական ժամկետը մեկ տարուց ավել է: Աղյուսակում այդ մնացորդները ներառված են մինչև 1 տարի ժամկետայնություն ունեցող պարտավորությունների մեջ:

Հաշվետու ժամանակաշրջանից հետո բանկը ներգրավել է երկարաժամկետ փոխառություններ միջազգային ֆինանսական կազմակերպություններից 11,500 հազար ԱՄՆ դոլար արժեքով (համարժեք 5,567,150 հազար ՀՀ դրամ՝ հաշվարկված տարեվերջի դրամ/դոլար փոխարժեքով) և ստացել է հաստատում 90,000 հազար ԱՄՆ դոլարի չափով (համարժեք 43,569,000 հազար ՀՀ դրամ՝ հաշվարկված տարեվերջի դրամ/դոլար փոխարժեքով) վարկային միջոցների համար, որոնք դեռ չեն օգտագործվել տվյալ հաշվետվությունների ամսաթվի դրությամբ: 2018 թ. փետրվարի 14-ին Բանկը Ասիական Զարգացման Բանկից ներգրավել է բաժնետիրական կապիտալ 14,426,665 հազար ՀՀ դրամի չափով (Ծանոթագրություն 40):

Վերը նշված և ստորև նշված աղյուսակներում ներառված հաճախորդներին հաշիվները ներառում են ֆիզիկական անձանց ավանդներ: ՀՀ օրենսդրության համաձայն՝ Բանկը պարտավորվում է հետ վճարել ֆիզիկական անձանց կողմից ներդրված ավանդները ավանդատուի առաջին իսկ պահանջի դեպքում: Այդ ավանդները վերը ներկայացված աղյուսակում դասակարգված են ըստ պայմանագրային մարման ժամկետների:

32. Ռիսկերի կառավարում (շարունակություն)

(դ) Իրացվելիության ռիսկ (շարունակություն)

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչված գումարների վերլուծությունն ըստ մարման ակնկալվող ժամկետների:

հազ. դրամ	Ցայահանջ և մինչև 1 ամիս	1-ից 3 ամիս	3-ից 12 ամիս	1-ից 5 տարի	Ավելի քան 5 տարի	Անժամկետ	Ժամկետանց	Ընդամենը
Ակտիվներ								
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	135,280,872	-	-	-	-	-	-	135,280,872
Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներ	32,747	-	1,635,132	1,462,192	-	-	-	3,130,071
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ	235,398	3,182,714	1,592,389	6,794,780	496,553	106,458	-	12,408,292
Բանկերին տրված վարկեր և փոխատվություններ	3,516,249	-	-	-	-	1,337,053	-	4,853,302
Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ	6,446,797	-	-	-	-	-	-	6,446,797
Իրավաբանական և ֆիզիկական անձանց տրված վարկեր	16,403,038	28,527,041	125,809,682	236,921,824	80,447,437	-	11,179,500	499,288,522
Ակրեդիտիվների գծով ստացվելիք գումարներ	148,376	2,443,528	2,389,714	2,725,685	-	-	-	7,707,303
Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարներ	45,415	78,104	358,703	900,996	656,804	-	-	2,040,022
Ֆակտորինգի գծով ստացվելիք գումարներ	2,244,277	597,578	1,341,007	-	-	-	-	4,182,862
Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ	-	13,258,090	8,823,925	14,031,034	142,593	-	-	36,255,642
Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ	-	-	-	-	-	3,651,239	-	3,651,239
Ընթացիկ հարկային ակտիվներ	-	-	-	1,321,801	-	-	-	1,321,801
Այլ ակտիվներ	522,684	88,859	1,484,368	-	-	700,787	-	2,796,698
Ընդամենը ակտիվներ	164,875,853	48,175,914	143,434,920	264,158,312	81,743,387	5,795,537	11,179,500	719,363,423
Պարտավորություններ								
Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներ	2,081	-	1,554,643	978,559	-	-	-	2,535,283
Բանկերի ավանդներ և մնացորդներ	1,595,259	2,128,832	5,409,310	60,870,822	1,830,659	-	-	71,834,882
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	176,449,951	41,703,120	142,918,485	53,468,011	69,119	-	-	414,608,686
Թողարկված պարտքային արժեթղթեր	95,313	13,931	24,650	17,990,606	-	-	-	18,124,500
Ստորդրաս փոխառություններ	1,019,046	385,838	-	15,378,096	24,028,275	-	-	40,811,255
Այլ փոխառու միջոցներ	3,619,303	12,292,150	11,198,771	69,423,677	6,201,138	-	-	102,735,039
Հետաձգված հարկային պարտավորություններ	-	-	-	1,442,872	-	-	-	1,442,872
Այլ պարտավորություններ	545,421	165,393	2,162,324	-	-	-	-	2,873,138
Ընդամենը պարտավորություններ	183,326,374	56,689,264	163,268,183	219,552,643	32,129,191	-	-	654,965,655
Ջուտ դիրքը	(18,450,521)	(8,513,350)	(19,833,263)	44,605,669	49,614,196	5,795,537	11,179,500	64,397,768
Կուտակային զուտ դիրքը	(18,450,521)	(26,963,871)	(46,797,134)	(2,191,465)	47,422,731	-	-	-

32. Ռիսկերի կառավարում (շարունակություն)

(դ) Իրացվելիության ռիսկ (շարունակություն)

Իրացվելիության ռիսկի կառավարման համար Բանկի կողմից կիրառվող հիմնական ուղենիշը բարձր իրացվելի ակտիվների և ցպահանջ պարտավորությունների հարաբերակցությունն է: Այս նպատակով բարձր իրացվելի ակտիվները ներառում են դրամական միջոցները, Նոստրո հաշիվները, ՀՀ կառավարության ու ՀՀ ԿԲ-ի կողմից թողարկված արժեթղթերը և այն կորպորատիվ պարտքային արժեթղթերը, որոնց համար գործում է ակտիվ և իրացվելի շուկա, որոնք գրավադրված չեն, և որոնց օգտագործումը ոչ մի կերպ սահմանափակված չէ: Ցպահանջ պարտավորությունները ներառում են հաճախորդների ընթացիկ հաշիվները և ցպահանջ ավանդները, ինչպես նաև ըստ պահանջի վճարման ենթակա այլ պարտավորությունները:

Ստորև ներկայացված է բարձր իրացվելի ակտիվների և ցպահանջ պարտավորությունների հարաբերակցությունը հաշվետու ամսաթվի դրությամբ և տարվա ընթացքում.

	2017	2016
Դեկտեմբերի 31-ի դրությամբ	101%	128%
Դեկտեմբերի ամսվա միջին ցուցանիշ	93%	133%

Վերը ներկայացված հարաբերակցությունը կիրառվում է նաև ՀՀ ԿԲ-ի կողմից սահմանված իրացվելիության սահմանաչափերի հետ համապատասխանությունը որոշելու համար (ոչ պակաս, քան 60%):

33. Կապիտալի կառավարում

Բանկի կապիտալի կառավարման առաջնային նպատակներն են՝ ապահովել Բանկի՝ կապիտալի վերաբերյալ արտաքին պահանջներին համապատասխանությունը և, որ Բանկը պահպանի բարձր վարկային վարկանիշ ու կապիտալի լավ ցուցանիշներ՝ գործունեությանը աջակցելու և բաժնետիրական արժեքը առավելագույնի հասցնելու համար:

Բանկը կառավարում է իր կապիտալի կառուցվածքը և կատարում է ճշգրտումներ տնտեսական պայմանների փոփոխությունների ու իր գործունեության ռիսկային բնույթին համապատասխան: Կապիտալը պահպանելու կամ դրա մեջ ճշգրտումներ մտցնելու համար Բանկը կարող է ճշգրտել բաժնետերերին վճարվելիք շահաբաժինների գումարը, վերադարձնել կապիտալը բաժնետերերին կամ թողարկել արժեթղթեր: Նախկին տարիների համեմատությամբ ոչ մի փոփոխություն չի եղել կապիտալի կառավարման նպատակներում, քաղաքականություններում և ընթացակարգերում:

Բանկի կապիտալի չափի պահանջները սահմանվում և վերահսկվում են ՀՀ ԿԲ-ի կողմից:

Բանկը որպես կապիտալ ճանաչում է ՀՀ օրենսդրությամբ բանկերի կապիտալի համար սահմանված հոդվածները: ՀՀ ԿԲ-ի կողմից սահմանված կապիտալի ներկայիս պահանջների համաձայն, որոնք հիմնված են Բազելյան համաձայնագրի սկզբունքների վրա, բանկերը պետք է ապահովեն, որպեսզի կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների հարաբերակցության ցուցանիշը («կապիտալի համարժեքության ցուցանիշ») բարձր լինի սահմանված նվազագույն մակարդակից: 2017թ. և 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ սահմանված նվազագույն մակարդակը կազմում է 12%: 2017թ. և 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի կապիտալի համարժեքության ցուցանիշը համապատասխանում է սահմանված մակարդակին:

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է 1988թ. Բազելյան համաձայնագրի պահանջների համաձայն հաշվարկված կապիտալի կառուցվածքի վերլուծությունը 2017թ. և 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

	2017 <i>հազ. դրամ</i>	2016 <i>հազ. դրամ</i>
1-ին դասի կապիտալ	68,632,980	63,227,715
2-րդ դասի կապիտալ	26,738,055	31,613,858
Ընդհանուր կապիտալ	95,371,035	94,841,573
Ընդամենը ռիսկերով կշռված ակտիվներ	534,420,563	463,628,657
Ընդամենը կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների տոկոսային հարաբերակցություն (ընդհանուր կապիտալի գործակից)	17.85%	20.46%

Ռիսկով կշռված ակտիվները չափվում են ռիսկերի կշռման գործակիցների հիերարխիայի միջոցով, որոնք դասակարգված են ըստ բնույթի և արտացոլում են յուրաքանչյուր ակտիվի ու պայմանագրային կողմի հետ կապված վարկային, շուկայական և այլ ռիսկերի գնահատականները՝ հաշվի առնելով ցանկացած գրավ կամ երաշխիք: Նմանատիպ մոտեցում է կիրառվում չճանաչված պայմանագրային պարտավորվածությունների համար՝ որոշակի ճշգրտումներով՝ հնարավոր վնասի առավել պայմանական բնույթն արտացոլելու նպատակով:

34. Վարկային պարտավորվածություններ

Բանկն ունի վարկեր տրամադրելու պարտավորվածություններ: Դրանք իրենցից ներկայացնում են հաստատված վարկերի, վարկային քարտերի և օվերդրաֆտների տրամադրման պարտավորվածություններ:

Բանկը տրամադրում է ֆինանսական երաշխիքներ և ակրեդիտիվներ՝ հաճախորդների պարտավորությունների կատարումը երրորդ անձանց նկատմամբ երաշխավորելու նպատակով: Այս պայմանագրերն ունեն ֆիքսված ժամկետներ՝ սովորաբար մինչև հինգ տարի: Բանկը նաև տրամադրում է երաշխիքներ՝ գործելով որպես գործակալ արժեթղթերի փոխառության և վարկավորման գործարքներում:

Վարկային պարտավորվածությունների, ֆինանսական երաշխիքների և ակրեդիտիվների տրամադրման ժամանակ Բանկը կիրառում է վարկային ռիսկի կառավարման նույն քաղաքականությունը և ընթացակարգերը, որոնք կիրառվում են հաճախորդներին վարկեր տրամադրելիս:

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված են պարտավորվածությունների պայմանագրային գումարներն ըստ դասերի: Աղյուսակում արտացոլված պարտավորվածությունների գումարները ենթադրում են, որ գումարներն ամբողջովին տրամադրված են: Աղյուսակում երաշխիքների և ակրեդիտիվների գծով արտացոլված գումարները ներկայացնում են առավելագույն հաշվապահական վնասը, որը կգրանցվի հաշվետու ամսաթվի դրությամբ, եթե պայմանագրային կողմերը չկատարեն պայմանագրով ստանձնած պարտավորությունները:

	2017 <i>հազ. դրամ</i>	2016 <i>հազ. դրամ</i>
Պայմանագրային գումար		
Վարկերի և վարկային գծերի գծով պարտավորվածություններ	19,807,875	21,416,078
Երաշխիքներ և ակրեդիտիվներ	9,245,979	7,976,314
Վարկային քարտերի գծով պարտավորվածություններ	8,183,658	9,740,164
Զօգտագործված օվերդրաֆտներ	5,661,585	4,775,663
	42,899,097	43,908,219

Վերը ներկայացված ընդհանուր պարտավորվածությունները պարտադիր չէ, որ իրենցից ներկայացնեն դրամական միջոցների գծով ապագա պահանջներ, քանի որ այս պարտավորվածությունները կարող են ուժը կորցնել կամ դադարել գործել մինչև վերջիններիս կատարման ժամկետը:

35. Գործառնական վարձակալություն

(ա) Վարձակալություն, որտեղ Բանկը հանդես է գալիս որպես վարձակալ

Դեկտեմբերի 31-ի դրությամբ չխզվող գործառնական վարձակալության գծով վճարները հետևյալն են՝

	2017 <i>հազ. դրամ</i>	2016 <i>հազ. դրամ</i>
Մինչև մեկ տարի ժամկետով	1,419,525	1,952,090
Մեկից հինգ տարի ժամկետով	1,285,131	9,490,860
Ավելի քան հինգ տարի ժամկետով	361,451	6,676,219
	3,066,107	18,119,169

Բանկը վարձակալում է մի շարք տարածքներ և սարքավորումներ գործառնական վարձակալության պայմաններով: Վարձակալության սկզբնական ժամկետը սովորաբար կազմում է հինգից տաս տարի՝ այդ ժամկետից հետո վարձակալության պայմանագիրը նորացնելու հնարավորությամբ: Վարձավճարները սովորաբար բարձրացվում են տարեկան կտրվածքով՝ շուկայական դրույքներին համապատասխանելու համար: 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ գործառնական վարձակալությունը ներառում է կապակցված կողմի հանդեպ վարձակալություն, որը կազմում է 757,215 հազար ՀՀ դրամ և ենթակա չէ չեղարկման (2016թ.՝ 15,315,888 հազար ՀՀ դրամ):

2017 թ.-ին Բանկը վերանայել է վարձակալության պայմանները կապակցված կողմի հետ և նախկինում երկարաժամկետ, չեղարկվելի համարվող վարձակալության ժամկետը նվազեցվել է մինչև 6 ամիս:

36. Պայմանական և պայմանագրային պարտավորություններ

(ա) Ապահովագրություն

Հայաստանի Հանրապետությունում ապահովագրական համակարգը զարգացման փուլում է և ապահովագրության շատ տեսակներ, որոնք լայնորեն տարածված են մյուս երկրներում, դեռ չեն կիրառվում Հայաստանում: 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկն ապահովագրված է մինչև 7,021,000 հազար ՀՀ դրամի չափով՝ ապահովագրության յուրաքանչյուր տեսակի համար: Ապահովագրությունը ծածկում է Բանկի շենքերի և սարքավորումների, գործունեության ընդհատման և գույքին առնչվող երրորդ կողմերի նկատմամբ պարտավորությունները, որոնք կարող են առաջանալ Բանկի գույքի կամ գործունեության հետ կապված պատահարներից:

(բ) Ղատական վարույթներ

Քնականոն գործունեության ընթացքում Բանկը կարող է հանդես գալ որպես դատական վարույթների և հայցերի կողմ: Ղեկավարությունը գտնում է, որ նման վարույթների կամ հայցերի արդյունքում առաջացող պարտավորությունները, եթե այդպիսիք լինեն, զգալի բացասական ազդեցություն չեն ունենա ֆինանսական վիճակի կամ ապագա գործունեության արդյունքների վրա:

(գ) Հարկային պարտավորություններ

Հայաստանի հարկային համակարգը համեմատաբար նոր է և բնորոշվում է օրենսդրության, պաշտոնական պարզաբանումների և դատավճիռների հաճախակի փոփոխություններով, որոնք հաճախ հստակ չեն, հակասական են և ենթարկվում են տարբեր մեկնաբանությունների հարկային մարմինների կողմից: Հարկերը ենթակա են սուուզման և ուսումնասիրության մի շարք մարմինների կողմից, որոնք իրավասու են կիրառել էական տույժեր, տուգանքներ և տոկոսագումարներ: Հարկային օրենսդրության խախտման դեպքում հարկային մարմիններն իրավասու չեն առաջադրել հարկերի գծով լրացուցիչ պարտավորություններ, տույժեր կամ տուգանքներ, եթե խախտման ամսաթվից անցել է երեք տարի:

Այս հանգամանքները Հայաստանում կարող են այլ երկրների համեմատությամբ էական հարկային ռիսկ առաջացնել: Ղեկավարությունը գտնում է, որ համապատասխանորեն է գնահատել հարկային պարտավորությունները՝ Հայաստանի հարկային օրենսդրության իր մեկնաբանությունների, պաշտոնական հայտարարությունների և դատավճիռների՝ իր մեկնաբանությունների հիման վրա: Այնուամենայնիվ, համապատասխան իրավասու մարմինները կարող են ունենալ այլ մեկնաբանություններ, և հետևանքները կարող են էական լինել այս ֆինանսական հաշվետվությունների համար, եթե իրավասու մարմիններին հաջողվի գործադրել իրենց մեկնաբանությունները:

37. Գործարքներ կապակցված կողմերի հետ

(ա) Վերահսկողություն

Բանկի մայր կազմակերպությունն է «Ամերիա Գրուպ (Սի-Ուայ) Լիմիթիդ»-ը, որին պատկանում է Բանկի բաժնետիրական կապիտալի 65.8% -ը:

Բանկի վերջնական վերահսկող անձը պարոն Ռուբեն Վարդանյանն է:

Մայր կազմակերպությունը չի ներկայացնում հանրությանը մատչելի ֆինանսական հաշվետվություններ:

(բ) Գործարքներ Տնօրենների խորհրդի և Տնօրինության անդամների հետ

Ստորև ներկայացված է անձնակազմի գծով ծախսերում ներառված ընդհանուր վարձատրությունը դեկտեմբերի 31-ի դրությամբ:

	2017 հազ. դրամ	2016 հազ. դրամ
Կարճաժամկետ հատուցումներ աշխատակիցներին	1,972,902	2,271,649

37. **Գործարքներ կապակցված կողմերի հետ (շարունակություն)**

(բ) Գործարքներ Տնօրենների խորհրդի և Տնօրինության անդամների հետ (շարունակություն)

Ստորև ներկայացված են 2017թ. և 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Տնօրենների խորհրդի և Տնօրինության անդամների հետ գործարքների մնացորդները և միջին արդյունավետ տոկոսադրույքները:

	2017 հազ. դրամ	Միջին տոկոսադրույք, %	2016 հազ. դրամ	Միջին տոկոսադրույք, %
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն				
Տրված վարկեր	1,253,917	8.02%	956,059	6.96%
Այլ ակտիվներ	1,893	0.00%	1,135	0.00%
Ստացված ավանդներ	674,074	5.70%	422,061	6.58%
Ստորադաս փոխառություններ	5,928,587	6.00%	-	-
Այլ պարտավորություններ	1,077,633	0.00%	850,945	0.00%
Երաշխիքներ	16,944	0.00%	33,876	0.00%

Վարկերը և երաշխիքները հայկական դրամով և ԱՄՆ դոլարով են և պետք է մարվեն մինչև 2027թ.:

Ստորև ներկայացված են Տնօրենների խորհրդի և Տնօրինության անդամների հետ գործարքների գծով շահույթում կամ վնասում արտացոլված գումարները 2017թ. և 2016թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարիների համար:

	2017 հազ. դրամ	2016 հազ. դրամ
Շահույթ կամ վնաս		
Տոկոսային եկամուտ	66,568	62,275
Տոկոսային ծախս	(141,954)	(43,675)

Ստորև ներկայացված են 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ այլ կապակցված կողմերի հետ գործարքների մնացորդները և համապատասխան միջին արդյունավետ տոկոսադրույքները, ինչպես նաև 2017թ-ին շահույթում կամ վնասում արտացոլված գործարքների գումարները:

	Մայր կազմակերպություն		Նշանակալի ազդեցություն ունեցող բաժնետեր		Մայր կազմակերպության դուստր կազմակերպություններ		Ընդհանուր հսկողության տակ գտնվող ընկերություններ և այլ կապակցված կողմեր		
	հազ. դրամ	Միջին տոկոսադրույք, %	հազ. դրամ	Միջին տոկոսադրույք, %	հազ. դրամ	Միջին տոկոսադրույք, %	հազ. դրամ	Միջին տոկոսադրույք, %	Ընդամենը հազ. դրամ
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն									
Ակտիվներ									
Իրական արժեքով շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներ	-	-	-	-	-	-	645,001	-	645,001
Հաճախորդներին տրված վարկեր և փոխառություններ	-	-	-	-	-	-	34,916,760	13.27%	34,916,760
Այլ ակտիվներ	-	-	-	-	795,016	-	3,596	-	798,612
Պարտավորություններ									
Իրական արժեքով շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներ	-	-	-	-	-	-	611,430	-	611,430
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ՝									
- Ընթացիկ հաշիվներ և ցպահանջ ավանդներ	666,258	0.00%	1,172,117	0.00%	200,264	0.00%	1,980,570	0.00%	4,019,209
- Ժամկետային ավանդներ	-	-	-	-	513,431	4.66%	32,590,571	12.87%	33,104,002
Այլ փոխառու միջոցներ	-	-	9,890,487	8.90%	-	-	-	-	9,890,487
Այլ պարտավորություններ	-	-	10,316	0.00%	-	-	-	-	10,316
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում չձևաչված հոդվածներ									
Տրված երաշխիքներ	-	-	-	-	-	-	20,304	0.00%	20,304
Շահույթ (վնաս)									
Տոկոսային եկամուտներ	-	-	1,371	-	-	-	4,360,124	-	4,361,495
Տոկոսային ծախսեր	-	-	(1,135,191)	-	(21,325)	-	(3,864,603)	-	(5,021,119)
Այլ ծախսեր	-	-	-	-	(17,055)	-	(98,978)	-	(116,033)

37. Գործարքների կապակցված կողմերի հետ (շարունակություն)

(գ) Գործարքներ այլ կապակցված կողմերի հետ (շարունակություն)

Ստորև ներկայացված են 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ այլ կապակցված կողմերի հետ գործարքների մնացորդները և համապատասխան միջին արդյունավետ տոկոսադրույքները, ինչպես նաև 2016թ-ին շահույթում կամ վնասում արտացոլված գործարքների գումարները:

	Մայր կազմակերպություն		Նշանակալի ազդեցություն ունեցող բաժնետեր		Մայր կազմակերպության դուստր կազմակերպություններ		Ընդհանուր հսկողության տակ գտնվող ընկերություններ և այլ կապակցված կողմեր		
	Միջին տոկոսադրույք, %		Միջին տոկոսադրույք, %		Միջին տոկոսադրույք, %		Միջին տոկոսադրույք, %		Ընդամենը
	հազ. դրամ		հազ. դրամ		հազ. դրամ		հազ. դրամ		հազ. դրամ
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն Ակտիվներ									
Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներ	-	-	-	-	-	-	1,633,886	-	1,633,886
Մնացորդներ և հաշիվներ բանկերում	-	-	1,001,707	6.25%	-	-	-	-	1,001,707
Հաճախորդներին տրված վարկեր և փոխառություններ	-	-	-	-	-	-	82,599,050	6.25%	82,599,050
Այլ ակտիվներ	-	-	-	-	-	-	3,596	-	3,596
Պարտավորություններ									
Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներ	-	-	-	-	-	-	1,554,397	-	1,554,397
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	-	-	-	-	-	-	-	-	-
- Ընթացիկ հաշիվներ և ցլախանջ ավանդներ	70,859	0.00%	326,386	0.00%	964,541	0.00%	32,025,131	0.00%	33,386,917
- ժամկետային ավանդներ	-	-	-	-	1,227,222	3.20%	29,346,134	12.82%	30,573,356
Ստորադաս փոխառություններ	-	-	-	-	-	-	5,920,428	6.00%	5,920,428
Այլ փոխառություններ	-	-	14,103,304	9.08%	-	-	-	-	14,103,304
Այլ պարտավորություններ	-	-	20,765	0.00%	-	-	-	-	20,765
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում չճանաչված հոդվածներ									
Տրված երաշխիքներ	-	-	-	-	-	-	17,927	0.00%	17,927
Շահույթ (վնաս)									
Տոկոսային եկամուտ	-	-	1,706	-	-	-	4,166,018	-	4,167,724
Տոկոսային ծախս	(28,196)	-	(1,281,883)	-	(41,595)	-	(3,924,377)	-	(5,276,051)
Այլ ծախս	-	-	(35,706)	-	-	-	-	-	(35,706)

38. Ֆինանսական ակտիվներ և պարտավորություններ. իրական արժեք և հաշվապահական հաշվառման դասակարգում

(ա) Հաշվապահական հաշվառման դասակարգում և իրական արժեք

Իրական արժեքի գնահատականի նպատակն է՝ ներկայացնել այն մոտավոր գինը, որը շուկայի մասնակիցների միջև տվորական գործարքում կստացվեր ակտիվի վաճառքից կամ կվճարվեր պարտավորության փոխանցման դիմաց գնահատման ամսաթվի դրությամբ: Այնուամենայնիվ, հաշվի առնելով անորոշությունները և դատողությունների սուբյեկտիվությունը, իրական արժեքը չպետք է դիտվի որպես իրացման գին՝ անմիջապես ակտիվների վաճառքի կամ պարտավորությունների մարման ժամանակ:

Գնահատման մեթոդները ներառում են զուտ ներկա արժեքի և դրամական միջոցների զեղչված հոսքերի մոդելները, համեմատությունը նմանատիպ գործիքների հետ, որոնց համար առկա են շուկայական դիտարկելի տվյալներ և այլ գնահատման մոդելներ: Գնահատման մեթոդներում օգտագործվող ենթադրություններն ու տվյալները ընդգրկում են ոչ ռիսկային և բազիսային տոկոսադրույքներ, վարկային սփերդեր և այլ ցուցանիշներ, որոնք օգտագործվում են զեղչային դրույքների, պարտատոմսերի գների, արտարժույթի փոխարժեքի, պարտատոմսերի ինդեքսների գների չափման մեջ: Գնահատման մեթոդների նպատակն է՝ հասնել հաշվետու ժամանակաշրջանի դրությամբ ֆինանսական գործիքի գինը արտացոլող այն իրական արժեքի որոշմանը, որը կորոշվեր անկախ գործող շուկայի մասնակիցների կողմից:

Ավելի տարածված և պարզ ֆինանսական գործիքների, ինչպես, օրինակ՝ տոկոսադրույքի և արժույթային սվոպերի իրական արժեքները որոշելու համար Բանկը օգտագործում է լայնորեն ճանաչված գնահատման մոդելներ, որոնք օգտագործում են միայն դիտարկելի շուկայական տեղեկատվությունը և չեն պահանջում ղեկավարության լայն դատողություններ և գնահատումներ: Դիտարկելի գներն ու մոդելների տվյալները սովորաբար հասանելի են ցուցակված պարտատոմսերի և արժեթղթերի, բորսաներում շրջանառվող ածանցյալ գործիքների համար, ինչպիսիք են տոկոսադրույքի սվոպերը:

38. Ֆինանսական ակտիվներ և պարտավորություններ. իրական արժեք և հաշվապահական հաշվառման դասակարգում (շարունակություն)

(ա) Հաշվապահական հաշվառման դասակարգում և իրական արժեք (շարունակություն)

Բոլոր ֆինանսական գործիքների գնահատված իրական արժեքները, բացառությամբ վաճառքի համար մատչելի չգնանշվող բաժնային արժեթղթերի, հաճախորդներին տրված վարկերի, մինչև մարման ժամկետը պահվող ներդրումների և թողարկված պարտքային արժեթղթերի, մոտավորապես հավասար են դրանց հաշվեկշռային արժեքներին: 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 106,458 հազար ՀՀ դրամ (2016թ.՝ 106,458 հազար ՀՀ դրամ) հաշվեկշռային արժեքով վաճառքի համար մատչելի չգնանշվող բաժնային արժեթղթերի իրական արժեքը չի կարող չափվել:

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված են հաճախորդներին տրված վարկերի և փոխատվությունների, մինչև մարման ժամկետը պահվող ներդրումների և թողարկված տեղական պարտատոմսերի հաշվեկշռային և իրական արժեքները 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ.

	<i>Հաշվեկշռային արժեք հազ. դրամ</i>	<i>Իրական արժեք հազ. դրամ</i>
Հաճախորդներին տրված վարկեր	479,640,981	474,361,415
Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ	43,305,844	44,680,299
Թողարկված տեղական պարտատոմսեր	31,221,300	31,493,983
Ընդամենը	554,168,125	550,535,697

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված են հաճախորդներին տրված վարկերի և փոխատվությունների, մինչև մարման ժամկետը պահվող ներդրումների և թողարկված տեղական պարտատոմսերի հաշվեկշռային և իրական արժեքները 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

	<i>Հաշվեկշռային արժեք հազ. դրամ</i>	<i>Իրական արժեք հազ. դրամ</i>
Հաճախորդներին տրված վարկեր	513,218,709	506,319,981
Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ	36,255,642	36,889,889
Թողարկված տեղական պարտատոմսեր	8,421,362	8,623,327
Ընդամենը	557,895,713	551,833,197

Ֆինանսական գործիքների իրական արժեքը որոշելիս ղեկավարությունը առաջնորդվել է հետևյալ ենթադրություններով.

- 3.5% և 11.6-16.4% զեղչման դրույքներ են կիրառվում համապատասխանաբար բանկերին տրված վարկերից ու փոխատվություններից և հաճախորդներին տրված վարկերից և փոխատվությունների ակնկալվող դրամական միջոցների ապագա հոսքերը զեղչելու համար;
- 5.5-12% զեղչման դրույքներ են կիրառվում պարտավորություններից ակնկալվող դրամական միջոցների ապագա հոսքերը զեղչելու համար:

(բ) Իրական արժեքի հիերարխիա

Բանկն օգտագործում է ֆինանսական գործիքների իրական արժեքների բացահայտման և գնահատման մեթոդների հետևյալ հիերարխիկ կառուցվածքը, որն արտացոլում է չափումների կատարման ժամանակ օգտագործված ելակետային տվյալների նշանակալիությունը:

- 1-ին մակարդակ. ակտիվ շուկաներում համանման ակտիվների կամ պարտավորությունների գնանշումներ (չճշգրտված):
- 2-րդ մակարդակ. 1-ին մակարդակում ներառված գնանշվող գներից տարբեր ելակետային տվյալներ, որոնք դիտարկելի են ուղղակիորեն (այսինքն՝ որպես գներ) կամ անուղղակիորեն (այսինքն՝ գների հիման վրա ստացվող): Այս մակարդակը ներառում է այն գործիքները, որոնց գնահատման համար կիրառվել է հետևյալը՝ գնանշվող գները նմանատիպ գործիքների համար ակտիվ շուկայում կամ նմանատիպ գործիքների համար ակտիվ չհամարվող շուկաներում, կամ գնահատման այլ մեթոդ, որտեղ բոլոր նշանակալի ելակետային տվյալներն ուղղակիորեն կամ անուղղակիորեն դիտարկելի են շուկայական տվյալներից:

38. Ֆինանսական ակտիվներ և պարտավորություններ. իրական արժեք և հաշվապահական հաշվառման դասակարգում (շարունակություն)

(բ) Իրական արժեքի հիերարխիա (շարունակություն)

- 3-րդ մակարդակ. ոչ դիտարկելի ելակետային տվյալներ: Այս մակարդակը ներառում է բոլոր այն գործիքները, որոնք գնահատվում են դիտարկելի տվյալների վրա չհիմնված ելակետային տվյալներից ելնելով, իսկ ոչ դիտարկելի ելակետային տվյալներն էական ազդեցություն ունեն գործիքի գնահատման վրա: Այս կատեգորիան ներառում է այն գործիքները, որոնք գնահատվում են նմանատիպ գործիքների համար գնանշվող գների հիման վրա, որոնց գծով պահանջվում են նշանակալի դիտարկելի ճշգրտումներ կամ ենթադրություններ՝ գործիքների միջև տարբերություններն արտացոլելու նպատակով:

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքների վերլուծությունը՝ իրական արժեքի հիերարխիայի համապատասխան մակարդակների կտրվածքով: Գումարները հիմնված են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչված արժեքների վրա:

<i>հազ. դրամ</i>	<i>1-ին մակարդակ</i>	<i>2-րդ մակարդակ</i>	<i>3-րդ մակարդակ</i>	<i>Ընդամենը</i>
Իրական արժեքով չափվող ակտիվներ և պարտավորություններ				
Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներ				
- Պարտքային և այլ ֆիքսված եկամտով գործիքներ	-	3,015,199	-	3,015,199
- Ածանցյալ ակտիվներ	-	952,865	-	952,865
- Ածանցյալ պարտավորություններ	-	(686,306)	-	(686,306)
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ				
- Պարտքային գործիքներ	2,942,639	6,838,981	-	9,781,620
	<u>2,942,639</u>	<u>10,120,739</u>	<u>-</u>	<u>13,063,378</u>
Ակտիվներ, որոնց իրական արժեքը բացահայտվում է				
Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվությունների	-	-	474,361,415	474,361,415
Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ	3,881,042	40,799,257	-	44,680,299
Թողարկված տեղական պարտատոմսեր	-	31,493,983	-	31,493,983
	<u>3,881,042</u>	<u>72,293,240</u>	<u>474,361,415</u>	<u>550,535,697</u>

38. Ֆինանսական ակտիվներ և պարտավորություններ. իրական արժեք և հաշվապահական հաշվառման դասակարգում (շարունակություն)

(բ) Իրական արժեքի հիերարխիա (շարունակություն)

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքների վերլուծությունը՝ իրական արժեքի հիերարխիայի համապատասխան մակարդակների կտրվածքով: Գումարները հիմնված են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչված արժեքների վրա:

<i>հազ. դրամ</i>	<i>1-ին մակարդակ</i>	<i>2-րդ մակարդակ</i>	<i>3-րդ մակարդակ</i>	<i>Ընդամենը</i>
Իրական արժեքով չափվող ակտիվներ և պարտավորություններ				
Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներ				
- Ածանցյալ ակտիվներ	-	3,130,071	-	3,130,071
- Ածանցյալ պարտավորություններ	-	(2,535,283)	-	(2,535,283)
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ				
- Պարտքային գործիքներ	3,418,111	8,883,723	-	12,301,834
	<u>3,418,111</u>	<u>9,478,511</u>	<u>-</u>	<u>12,896,622</u>
Ակտիվներ, որոնք իրական արժեքը բացահայտվում է				
Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ				
	-	-	506,319,981	506,319,981
Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ	804,054	36,085,835	-	36,889,889
Թողարկված տեղական պարտատոմսեր	-	8,623,327	-	8,623,327
	<u>804,054</u>	<u>44,709,162</u>	<u>506,319,981</u>	<u>551,833,197</u>

Ածանցյալ գործիքներ

Ածանցյալ գործիքները, որոնք գնահատվում են շուկայական դիտարկելի ելակետային տվյալներ ներառող մոդելներով, հիմնականում ներառում են տոկոսադրույքի և արտարժույթի սվոպեր և արտարժույթային ֆորվարդ պայմանագրեր: Ամենահաճախ կիրառվող գնահատման մոդելները ֆորվարդների գնահատման և սվոփերի մոդելներն են, ներառյալ ներկա արժեքի հաշվարկները: Այս մոդելները հաշվի են առնում տարբեր տվյալներ, ինչպիսիք են՝ գործընկերների վարկունակությունը, փոխարժեքի սփոթ և ֆորվարդ դրույքները և տոկոսադրույքի կորը:

Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ

Վաճառքի համար մատչելի ներդրումային արժեթղթերը, որոնք գնահատվում են գնահատման մոդելի օգնությամբ, հիմնականում կազմված են ՀՀ պետական պարտատոմսերից: Այս արժեթղթերը գնահատվում են եկամտաբերության կորի միջոցով, որը ներառում է շուկայում դիտարկելի և ՀՀ կենտրոնական բանկի կողմից հրապարակված տվյալները:

39. Ֆինանսավորման գործունեության հետևանքով առաջացող պարտավորությունների փոփոխություններ

<i>հազ. դրամ</i>	<i>Թողարկված պարտատոմսեր</i>	<i>Այլ փոխառու միջոցներ</i>	<i>Ստորադաս փոխառություններ</i>	<i>Ֆինանսավորման գործունեությունից ընդամենը պարտավորություններ</i>
Հաշվեկշռային արժեք առ 31 դեկտեմբեր 2015	–	78,383,861	39,721,324	118,105,185
Թողարկումից մուտքեր	17,815,044	77,618,450	–	95,433,494
Մարումներ	–	(53,479,054)	–	(53,479,054)
Արտարժույթի փոխարկման տարբերություններ	175,875	193,843	4,518	374,236
Այլ	133,581	17,939	1,085,413	1,236,933
Հաշվեկշռային արժեքը առ 31 դեկտեմբեր 2016	18,124,500	102,735,039	40,811,255	161,670,794
Թողարկումից մուտքեր	22,504,610	67,496,831	–	90,001,441
Մարումներ	–	(72,097,598)	–	(72,097,598)
Արտարժույթի փոխարկման տարբերություններ	82,042	29,467	(4,111)	107,398
Այլ	221,443	(35,645)	112,624	298,422
Հաշվեկշռային արժեքը առ 31 դեկտեմբեր 2017	40,932,595	98,128,094	40,919,768	179,980,457

Այլ տողը ներառում է թողարկված պարտատոմսերի, այլ փոխառությունների և ստորադաս փոխառությունների գծով հաշվեգրված, բայց չվճարված տոկոսագումարները: Բանկը տոկոսագումարների վճարումները դասակարգում է՝ որպես դրամական հոսքեր գործառնական գործունեությունից:

40. Հաշվետու ժամակաշրջանից հետո տեղի ունեցած դեպքեր

2018 թ. փետրվարի 14-ին Ասիական Զարգացման Բանկը (ԱԶԲ) ձեռք է բերել Բանկի լրացուցիչ թողարկված բոլոր 16,291 բաժնետոմսերը 14,426,665 հազար ՀՀ դրամով: Գործարքի արդյունքում Բանկի բաժնետերերի կառուցվածքը փոխվել է հետևյալ կերպ՝ Ամերիա գրուպ (56.60%), ՎԶԲ (17.80%), և «Ի-ԷՍ-Փի-ԷՍ Հոլդինգ Լիմիթիդ» ընկերություն (11.62%) և ԱԶԲ (13.98%):

